

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԳՐՔԵՐԻ ՀԱՂ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԳՐՔԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**20**

ՎԱՐՂԱՆ ԱՐԵԻԵԼՑԻ  
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՑԻ  
ԹՈՎՄԱ ՄԵԾՈՓԵՑԻ

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆՔ  
ԴԱՆԻԷԼԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԵԱՆ**

Աշխատասիրողներ՝  
Հակոբ Քյոսեյան, Մարթա Արաբյան



Ս. ԷԶՄԻՍԻՆ – 2007

ՀՐԱՄԱՆԱԲ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ**

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տպագրվում է մեկեանասությամբ՝

.....

Library of Armenian Commentaries on the Books of the Holy Bible

Commentaries on the Books of the Old Testament

**20**

VARDAN AREVELTSI  
HOVHANNES TSORTSORETSI  
THOVMA METSOPETSI

**COMMENTARY  
ON THE BOOK OF DANIEL**

Holy Etchmiadzin - 2007

By order

**of His Holiness KAREKIN II**

Supreme Patriarch and  
Catholicos of All Armenians

*Printed by donations of*

.....



ՀՏԴ 25  
ԳՄԴ 86.37  
Վ - 301

ՎԱՐՂԱՆ ԱՐԵԻԵԼՏԻ ԵՒ ԱՅԼԸ  
Վ - 301 ՄԵԿՆՈՒԹԻՒՆՔ ԴԱՆԻԷԼԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԵԱՆ/ Աշխատասիրողներ՝ Հակոբ Քյոսեյան, Մարթա Արաբյան: -Ս. էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007, 360 էջ:

ԳՄԴ 86.37

ISBN 978-99930-75-44-8

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007 թ.

Մատենաշարի գլխավոր խմբագիր՝  
ԵԶՆԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Chief editor of the serial publication  
ARCHBISHOP YEZNIK PETROSSIAN





## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԳԱՆ ԱՐԵՎԵԼՅՈՒ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ԾՈՐԾՈՐԵՅՈՒ  
ԵՎ ԹՈՎՍԱ ՄԵԾՈՓԵՅՈՒ ԳԱՆԻԵԼԻ ՍԱՐԳԱՐԵՈՒԹՅԱՆ  
ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բնական ու հասկանալի է այն բուռն հետաքրքրությունը, որ միջնադարի քրիստոնեական միտքը ցուցաբերել է վախճանաբանական ակնարկներով ու պատկերներով հարուստ Գանիելի մարգարեության հանդեպ: Նեոի գործունեության, Աստծո Որդու երկրորդ գալստյան, աշխարհի վախճանի վերաբերյալ խորհրդածող աստվածաբանական միտքը արդեն նախանիկիական շրջանում վերլուծում, մեկնաբանում է այս մարգարեությունը: Այն բավական հանգամանալից մեկնաբանության է ենթարկվում Հիպոդիտոս Բոստրացու († 234) կողմից: Իր «Երկխոսություն Ազնոմոնի հետ» երկում Որոզինեսը († 253) օգտագործել է Գանիելի մարգարեության մաս կազմող Շուշանիկի պատմությունը: Այս կապակցությամբ Որոզինեսին հղած նամակում Հուլիոս Աֆրիկացին զարմանքով ասում է, որ այդ պատմությունը պարականոն է, քանզի բացակայում է եբրայական կանոնում, ուստի այն չէր կարելի վկայակոչել: Պատասխան նամակում Որոզինեսը նկատում է, որ պետք է գոյություն ունեցած լիներ նաև Շուշանիկի պատմության եբրայերեն բնագիրը, որովհետև առկա է դրա՝ Թեոդոտիոնի եբրայերենից կատարած հունարեն թարգմանությունը<sup>1</sup>: Հետնիկիական հայրերն ու վարդապետները նմանապես պատշաճ վերաբերմունք են ունեցել այս մարգարեության նկատմամբ: Այսօր հայտնի են Եվսեբիոս Կեսարացու († 339), Ս. Աթանաս Ալեքսանդրացու († 373), Գիղիմոս Կույրի († 398), Տիտոս Բոստրացու (Գ.դ.), Ս. Եփրեմ Ասորու († 376), Ապոդիմար Լաոդիկեցու, (Գ.դ.), Ս. Հովհան Ոսկեբերանի († 407) և այլոց Գանիելի մարգարեության ամբողջական և հատվածական մեկնությունները<sup>2</sup>: Հավատացյալ ընթերցողի հոգևոր պահանջմունքներին, մասնավորաբար վախճանաբանական ակնկալություններին գոհացում տալու նպատակով հայ հեղինակ-

<sup>1</sup> Եզնիկ Ծ. վրդ. (այժմ Արքեպս.) Պետրոսյան, Հայրաբանություն, Ա մաս (Բ-Գ դդ.), Ս. Էջմիածին, 1996, էջ 113, 150:

<sup>2</sup> CPG. 2141 (5), 2556, 3469(5), 3577, 3689, 4448, 4554:

ները ևս անդրադարձել են Դանիելի մարգարեությանը: Մեզ հայտնի առաջին հայ մատենագիրը, որ մեկնել է այս մարգարեությունը Ստեփանոս Սյունեցին († 735) է: Ցավոք մեզ հասել է նրա աշխատության միայն մի փոքրիկ մասը<sup>1</sup>: Դանիելի մեկնության հեղինակ է նաև Վարդան Արևելցին († 1271), որ նյութի նկատմամբ ունենալով գերազանցապես ինքնուրույն մոտեցում՝ երկը շարադրել է “շարք” մեկնության սկզբունքով՝ օգտագործելով Հիպոդիտոս Բոստրացու, Եփրեմ Ասորու, Ստեփանոս Սյունեցու և այլոց մեկնությունները<sup>2</sup>: Սակայն պետք է նկատել, որ Հիպոդիտոսի ու Եփրեմի անունով արձանագրված հատվածները չեն համապատասխանում նրանց համանուն երկերին: Այսպես, եթե եփրեմյան հատվածները սոսկ իմաստային վերապատումն են ասորերեն բնագրի համաբնույթ մասերի<sup>3</sup>, ապա հիպոդիտոսյան հատվածներն էապես զանազանվում են նրա Դանիելի մեկնության հունարեն բնագրից<sup>4</sup>: Վարդան Արևելցու մեկնությունը շարադրված է Աստվածաշնչի, պատմական անցյալի ռազմաքաղաքական անցուղարձի, մշակույթի, դիցաբանության, վարդապետական աստվածաբանության, հայրախոսական մատենագրության մեջ բավական լայնորեն բացատրված վախճանաբանական ըմբռնումների քաջ իմացությամբ:

Վարդան Արևելցու այս երկասիրության ստեղծումից (1267) 50 տարի չանցած Դանիելի մարգարեությունը մեկնաբանության նյութ է դառնում հայ եկեղեցական մատենագրության մեկ այլ նշանավոր ներկայացուցչի՝ Հովհաննես Երզնկացի-Ծործորեցու համար: Նա աշխատությունը շարադրել է 1316 թ. Ծործորի վանքում՝ Վարդան վարդապետի խնդրանքով: Այս մասին մեկնության հեղինակային հիշատակարանում կարդում ենք. «Ընդ որում և մեզ լիցի մասն անարժանի անձինս սակաւինչ վաստակողի ի բանս սրբոյս՝ նուաստ Յոհաննիսի Եզնկեցոյ, որ և Ծործորեցի կոչեցելոյ՝ վայելել ի փառս շնորհաց նորա հանդերձ կրկին ծնօղօք ի գործեան Հօր ամենակալին և յաւեժախաղաց պարզևս Որդոյն Միածնի Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ և յուխս սիրոյ մարդա-

<sup>1</sup> Հ. Զյուսեյան, Նշխարներ Ստեփանոս Սյունեցու Հորի և Դանիելի մեկնություններից, «Էջմիածին», 1998, Ա, էջ 95-105:

<sup>2</sup> «Արդիւնաւոր եւ սուրբ վարդապետին Վարդանայ, սակաւ ինչ վաստակ ի սուրբն Դանիէլ եւ ի նորին մեկնիչսն» տե՛ս հետևյալ հրատ. մեջ. Ներսես Լամբրոնացի, Մեկնութիւն ժԲ մարգարէից, աշխատ. Անդրեաս վրդ. Նարինեան, Կ. Պոլիս, 1825-1826, էջ 242-280 (=Վարդան):

<sup>3</sup> Տե՛ս և հմմտ. Տ. Եփրեմ Տիրին, Творения, т. 6, М., 1995, с. 51-89:

<sup>4</sup> Տե՛ս Святытель Исполит Римский, Толкование на книгу пророка Даниила, М., 1998:

սեր Հոգւոյն Աստուծոյ, որում վայել է փափք անեզրական և պատիւ վայելչական և գոհութիւն անվախճան այժմ և միշտ:

Եղև աշխատութիւնս մեր ի նպաստատրութենէ Հոգւոյն Սրբոյ և սրբոց հարցն մերոց վարդապետացն առաջնորդաց Հիպոդիտեայ, Եփրեմի և Վարդան վարդապետի և այլոց ի թվիս Հայոց ՉԿԵ (1316)\* և ի մարդեղութենէ ամաց Յիսուսի Քրիստոսի ՌՅ( 1300) և ԺՁ (16) ամին, գրեալ և յղկեալ ըստ չափու տարագու մտաց մերոց և կշիռ առ Բանին եղեալ զմեկնութիւն ի գաւառս հռչակատր Արտագ կոչեցեալ, ի վիճակ սուրբ առաքելոյն Թադէոսի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս Ծործորու կոչեցեալ, ձեռամբ նուաստ սպասատրի Յոհաննիսի Եզնկեցոյ ի խնդրոյ երբօր մերոյ բանի աշակերտելոյ Վարդան կոչեցեալ վարդապետի և յիշատակ ինձ՝ անարժանիս հոգւոյ և մարմնոյ, այլ և ձեզ մասն եղիցի ընդ յիշման յիշեցելոյս անմոռաց յիշումն Արարչին, որում փառք յաւիտեանս. ամէն»:

Ինչպես նկատում է հեղինակը, մեկնությունը շարադրված է Հիպոդիտես Բուստրացու, Եփրեմ Ասորու, Վարդան Արևելցու և այլոց համաբնույթ երկերի հետևողությամբ: Սակայն համեմատությունը պարզում է, որ Հովհաննես Ծործորեցին իր ձեռքի տակ ունեցել է միայն Վարդան Արևելցու վերոհիշյալ աշխատությունը և այդ հեղինակներից օգտագործել Վարդանի միջնորդությամբ: Փաստական նյութը շարադրելիս Հովհաննես վարդապետն առաջնորդվել է Վարդանի մեկնության մեջ բերված հարուստ նյութով, որդեգրել Վարդանի մտակառուցման կերպը և այլն\*\* : Աղբյուրի օգտագործման եղանակն առավել ակներև դարձնելու նպատակով հանդիպադրենք այս աշխատությունների երեք համապատասխան հատվածները.

\* Ինչպես արձանագրում է ակադ. Լ. Խաչիկյանը, «ձեռագրում ընդօրինակողի վրիպումով գրված ՉԿԵ (1318), ուղղում ենք Փրկչական թվականի, մյուս հիշատակարանում առկա տվյալի, ինչպես նաև Գ. Ջարբեհանայանի (Պատմութիւն հայ. դպր., էջ 765) հիման վրա»։ Արտագի հայկական իշխանությունը և Ծործորի դպրոցը, ԲՄ, № 11, 1973, էջ 182, ծնթ. 44:

\*\* Խոսելով այս մեկնության մասին՝ Լ. Խաչիկյանը նրանում բերված տարաբնույթ տվյալները ներկայացնում է իբրև «Յին Արևելքի պատմության և առասպելաբանության» վերաբերյալ Ծործորեցու իրազեկության արդյունք (նշվ. աշխ., էջ 181-182): Մինչդեռ դրանք, ինչպես կարելի է դյուրությամբ համոզվել, պարզ բանաբաղումներ են Վարդան Արևելցու համանուն մեկնությունից:

**Վարդան Արևելցի**

Եւ տարեալ յերկիրն Սենարայ, ուր աշտարակն շինեցին, յոր կայր տուն գանձի Աստուծոյն իւրոյ՝ պատկառելով յանուանէ Տեառն, ոչ առ ի պէտս սպասաւորութեան սեղանոյ իւրոյ, գոր յանդգնեցաւ առնել Բաղտասար որդի նորա, տարաւ զկնի զԴանիէլ որդի Յօհաննիսի՝ որդոյն Յովսիայ թագաւորին և գորդիսն Յովակիմայ զԱնանիա, զԱզարիա, և զՄիսայէլ՝ զհօրեղբօր որդիսն Դանիէլի, ըստ բանին Եսայայ առ Եզեկիայ: Եւ թէպէտ երկու ասաց՝ զայս տեսիլ, առաջին թուի թէ այն է, յետ որոյ իրքն Շուշանայ եղեն, և ընկալաւ դարձեալ զՀոզիան:

**Վարդան, 246ա:**

Անանիա, որ է շնորհ յԱստուծոյ, Ազարիա՝ Համարձակութիւն Աստուծոյ, Միսայէլ, որ է շօշափումն Աստուծոյ, զի ընկալեալ շնորհս յԱստուծոյ համարձակութիւն մեծ ցուցին ի հաւատս և ի գործս զկամս Աստուծոյ իմաստութեամբ և հանճարով շօշափելով, ըստ որում ցուցին մեծ հանդիսի: Ջորս ջանայ փոփոխել զազդողական անուանս ի Հոզոյն եղեալ՝ ներքինապետն. Սեղրակ՝ Անվար, Միսայէլ՝ Գեղով, Աբեղ՝ Գովաշատ, ըստ իրեանց բառիցն, իսկ Դանիէլ յետոյ թագաւորն եղ Բաղտասար, ըստ անուան Աստուծոյ

**Հովհաննես Ծործորեցի**

Սենէար դաշտն է, ուր աշտարակն ասի շինեալ, ուր կայր տուն գանձի աստուծոյն իւր, զի պատկառելով յանուանէ Տեառն ոչ էառ ի պէտս սպասաւորութեան սեղանոյ իւրոյ, որպէս յետոյ յանդգնեցաւ Բաղտասար որդի նորա, այլ անդ եղ ի տուն կոռցն: Ուստի թէպէտ Երկրորդ ասաց զայս տեսիլ, սակայն առաջին թուի, թէ է, յետ որոյ իրքն Շուշանայ եղեն, և ընկալաւ Դանիէլ զՀոզիան:

Անանիա՝ Շնորհ Աստուծոյ, Ազարիա՝ Համարձակութիւն Աստուծոյ, և Միսայէլ՝ Շօշափումն Աստուծոյ, զի դատաստանաւ Աստուծոյ ընկալան շնորհս այս և ի համարձակութիւն մեծացուցին ի հաւատս և ի գործս, զկամս Աստուծոյ իմաստիք և հանճարով շօշափելով: Վասն որոյ և մեծաւ հանդիսի միաբանեցան ի միասին:

Եւ եղ նոցա ներքինապետն անուանս Դանիէլի Բաղտասար, և Անանիայի՝ Սեղրակ, և Միսայէլի՝ Միսայէլ, և Ազարիայի՝ Աբեղնագով (Ա 7).

իւրոյ ի մեկնելն զերազն, զի կամէր  
ժառանգ առնել իւր:

**Վարդան, 264ա:**

Չասողական անուանս ի  
հոգւոցն եղեալ ջանայ փոփոխել  
ներքինապետն, ըստ իրեանց  
բանիցն. Դանիէլ՝ Բաղդասար,  
քանզի յետոյ թագաւորն կոչեաց  
նմին Բաղտասար, ըստ անուան  
իւրոյ աստուծոյն և որդւոյն, յոր-  
ժամ մեկնեաց զերազն, զի կամե-  
ցաւ ժառանգ առնել իւրն: Եւ ներ-  
քինապետն գայն այժմ ասէ Բաղ-  
տասար, որ լսի գլուխ Բաբելոնի,  
իսկ Սեդրակն Անվար թարգմանի  
և Միսաքն՝ Գեղով և Գովաշատ՝  
Աբեղնագովն:

Եւ կամի զթագաւորն ծանօթ առ-  
նել Աստուծոյ և որսալ այսպիսի  
բանիք վասն սրտի քոյ զուարթա-  
նալոյ յայտնեցաւ ինձ, և սկսանի  
նախ զկիրս սրտի նորա յայտնել:  
Խորհուրդ քո, ասէ, մտայոյզ լինէր,  
թէ յետ քոյ ո՞ կամի ժառանգել  
զթագաւորութիւն քո, զի ասացեալ  
է, թէ ըստ յուզման խորհրդոց  
ձևանան երազք, և երկիւղն մահու  
չտայ հանգչիլ թագաւորաց, որ-  
պէս և զքո քուն ի բաց հալածէր  
փոփոխմանն կասկած...

**Վարդան, 248բ**

Նախ զկիրս մտացն յայտ առնէ.  
մինչդեռ յարթուն էիր, զի նովաւ և  
զքնոյն հաւատարիմ արասցէ, և  
ասէ, թէ մտաց քոց տեսիլ այս է.  
զի նախ յուզէիր խորհրդով, թէ զի  
յետ քո ո՞ կամիցի ժառանգել  
զթագաւորութիւն քո, զի երկիւղն  
մահու չտա թոյլ հանգչել թագաւո-  
րաց, և զի ասացեալ է, թէ բազում  
անգամ, ըստ յուզմանց խորհր-  
դոցն ձևանան երազքն, այնպէս  
ձևացաւ և ի քո միտս ի յայտնու-  
թենէն Աստուծոյ, որ գիտակն է  
յանդերձելոյն:

Հատվածների համեմատությունից պարզվում է, որ Ծործորեցին,  
բառացիորեն հետևելով Վարդանի մտքի ընթացքին, այդուհանդերձ  
միշտ չէ, որ պատճենում է այն, այլ հաճախ ետևառաջությամբ շարահ-

յուտրեն վերաձևում է նյութը, վարդանյան խտացումները բացում ոճական հնարքներով:

Ի տարբերություն Վարդան Արևելցու մեկնության, ուր համարյա բացակայում են բնաբանները (դրանք այստեղ հիմնականում ներհյուսված են մեկնաբանությանը) Հովհաննես Ծործորեցու մոտ դրանք բերված են տուն առ տուն, կանոնավոր կերպով՝ մեկնությունից զատված չակերտներով:

\*\*\*

Ինչպես երևում է, Վարդան Արևելցու և Հովհաննես Ծործորեցու մեկնություններից հետո ևս հայ իրականության մեջ չի նվազել Դանիելի մարգարեության նկատմամբ եղած հետաքրքրությունը: Այն բավարարելու նպատակով Դանիելի մարգարեությունը մեկնաբանվել է նաև մեծանուն մատենագիր, եկեղեցաքաղաքական մտքի խոշորագույն ներկայացուցիչ Թովմա Մեծոփեցու (1378-1446) կողմից: Ծործորեցու նման նա ևս իր մեկնությունը շարադրել է վարդան Արևելցու համանուն աշխատության հետևողությամբ: Այս մասին հետևյալն ենք կարդում երկի հեղինակային հիշատակարանում. «Արդ, յերեսս անկեալ պաղատիմ քրիստոսասէր եւ վերնակրան եղբարցոյ, յիշեսցիք ի բարին Քրիստոս զմեծ վարժապետն մեր զվարդապետն Վարդան, որ զգիրս Դանիելի մեկնեաց՝ առեալ յԳ (3) մեկնչաց յԵփրեմէ, ի Հիպոդիտեայ հայրապետէն Հռովմայ եւ ի Ստեփաննոս փիլիսոփայէ հայոց, եւ ի մի հաւաքեալ լուսաւորեաց զդասս եկեղեցոյ վարդապետաց ի ՉԺԷ (1268) թվականիս մեր ի կենդանաթաղ գերեզմանի Լուսաւորչին Գրիգորի ի սուրբ Վիրապն սկսեալ եւ ի յԱղչուց վանքն աւարտեալ առաջի սուրբ եւ փառաւորեալ նահատակին Ստեփաննոսի հռիփսիմեանց (sic) քահանային, որոյ յիշատակն արհնութեամբ եղիցի մինչ ի գալուստն Քրիստոսի\*»: Եւ ես նուաստս ի մանկունս եկեղեցոյ Թովմա պիտականուն վարդապետս սակաւ մի առի ի գրոց մեկնչացն վասն վարդապետաց եւ գրոց աշակերտաց առձեռն պատրաստ, զի դիւրաւ գրեալ լինի եւ անճաշակ մի՛ լինիցին ի հրեշտականման առն Աստուծոյ Դանիելի»\*\*: Սակայն, պետք է նկատել, որ ի տարբերություն Ծործորեցու Մեծոփեցին, ելնելով իր աշխատության ուսումնագործնական նպատակից («սակաւ մի առի ի գրոց

\* Ի դեպ, հիշատակարանային այս տվյալը հաստատում է Վարդան Արևելցու մեկնության շարադրման թվականի եւ տեղի վերաբերյալ եղած տեղեկությունը. տես Փ. Փ. Անթաթյան, Վարդան Արևելցի, գիրք Ա, Եր. 1987, էջ 141:

\*\* ՄՍ ձեռ. 2567, ք. 97բ:

մեկնչացն վասն վարդապետաց եւ գրոց աշակերտաց», «զայս սակաւ նուսխայեցի վասն գրոց աշակերտի») համառոտել է նյութը՝ տեղ-տեղ միայն տալով ինքնուրույն մեկնաբանություն՝ կապված ազգային պատմության տվյալ շրջափուլի որոշ դրվագների հետ: Թովմա Մեծփեցին բարեխղճորեն հիշատակում է իր օգտագործած աղբյուրները («Եւ զայլն տես ի մեկնութիւն սուրբ վարդապետին Վարդանայ»): Բացի Վարդան Արևելցուց նա հիշատակելով օգտագործում է Եղիշեի երկերը, Հակոբ Մծբնա հայրապետի անունով հայտնի Ջգոն գիրքը, Վարդանի կիրառած մեկնություններն ու այլաբնույթ աղբյուրներ: Ինչ վերաբերում է Հովհաննես Ծործորեցու մեկնությանը, ապա պետք է նկատել, որ Մեծփեցին գիտությամբ թե անգիտությամբ չի օգտագործել միարարի համբավ ունեցող Հովհաննես Ծործորեցու մեկնությունը:

Ինչպես պարզում է համեմատությունը, ի տարբերություն Վարդան Արևելցու մեկնության, մյուս աղբյուրներից բերված քաղվածքները բառացի չեն, այլ ինչպես երևում է, ամփոփ վերապատումն են աղբյուրի: Այդ է ցույց տալիս հետևյալ համադրումը.

#### **Ջգոն գիրք**

«Դարձեալ Դանիէլ եկաց յաղաթս, եւ աղաթք նորա զբերանս առիւծուցն խցին, եւ զագանք շաղակերք գիրկս արկանէին բազկաք իւրեանց եւ համբարէին զոտս նորա իբրեւ յառնէր Դանիէլ կալ յաղաթս ի գուր անդ՝ տարածեալ զբազուկս իւր ընդ երկինս. տարածանէին զբազուկս իւրեանց ընդ երկինս եւ նոքա նման նորա, եւ եկն էջ առ նոսա, որ ընդունէր զաղաթսն, եխից զբերանս առիւծուցն... Իբրև ննջէր Դանիէլ եւ կամէր ի քուն լինել՝ խոնարհեցուցանէին զանձինս իւրեանց՝ զի ի վերայ նոցա ննջիցէ եւ ոչ ի վերայ երկրի...»

#### **Թովմա մեծփեցի**

«Դարձեալ եւ սսէ հայրապետն Յակոբ ի Ջգան գիրքն. Առիւծքն աղաթէին եւ արտասուէին եւ զձեռն տարածէին հետ Դանիէլի, եւ յորժամ ննջէր մինն՝ զմիսն ի բաց խլէր զգլուխն Դանիէլի բարձրներ».

«Գիրք որ կոչի Ջզոն արարեալ  
երիցս երանեալ հայրապետին  
Մծբին քաղաքի...», Կ.Պոլիս, 1824,  
էջ 69-70:

Այսպիսով, Ջզոն գրքից բերված վկայությունը համառոտումն է աղբյուրի համապատասխան մասի: Պարագան նույնն է նաև մյուս աղբյուրներից բերված վկայությունների:

\*\*\*

Վարդան Արևելցու Դանիելի մարգարեության մեկնությունը հրատարակվում է ըստ տպագրի և Մաշտոցի անվան Մատենադարանի հետևյալ ձեռագրերի.

**A** = «Մեկնութիւն սրբոյ երկոտասան մարգարէից՝ արարեալ երանելոյն Ներսիսի Լամբրոնացոյ... յաւելեալ նաեւ ի վերջոյ մեկնութիւն Դանիելի մարգարէի՝ արարեալն Վարդանայ Վանական վարդապետէ՝ համառօտ եւ լուսաւոր մտօք... աշխատասիրութեամբ Տ. Անդրեաս վարդապետի Նարինեան Ակնեցոյ», Կ. Պոլիս, 1826, էջ 242-280, ըստ «հնագոյն» մի գրչագրի (անդ, էջ 4):

#### **B = 4834**

Ժողովածու: **Ժամանակ**՝ 1289, 1296 թթ.: **Վայր**՝ Ս. Թեոդորոս վանք (Ճմին գյուղաքաղաք, Ա), Երզնկա (Բ): **Գրիչ**՝ Առաքել (Ա), Հակոբ (Բ): **Ստացող**՝ Ահարոն վրդ. (Ա, Բ): **Կազմող**՝ Սրապիոն եպս.: **Թերթ**՝ 219: **Նյութ**՝ բուրբ: **Մեծություն**՝ 24,5 x 17: **Գրություն**՝ միասյուն: **Գիր**՝ բոլորգիր: **Տող**՝ 25-27: **Բնագիր**՝ թ. 168ա-212ա:

#### **C = 3606**

Ժողովածու: **Ժամանակ**՝ 1303 թ.: **Վայր**՝ Նոնոնից վանք, Գայլիձոր, Երզնկա (Բ): **Գրիչ**՝ Թադեոս քին., Մխիթար վրդ: **Ստացող**՝ Հովհաննես վրդ.: **Թերթ**՝ 337: **Նյութ**՝ բուրբ: **Մեծություն**՝ 17 x 12,5: **Գրություն**՝ միասյուն: **Գիր**՝ բոլորգիր: **Տող**՝ 22-23: **Բնագիր**՝ թ. 276ա-336բ:

Հովհաննես Ծործորեցու Դանիելի մարգարեության մեկնությունը հրատարակվում է համաձայն Մաշտոցի անվ. Մատենադարանի թիվ 1187 ձեռագրի, որ երկը պարունակող երևանյան միակ գրչագիրն է: Այն



Ժողովածոյ է. **Ժամանակ՝** ԺԴ դ.: Գրիչն՝ անհայտ: **Թերթ՝** 383: **Պրակ՝** Ա-ԼԲ x 12 (ԼԱ 11): **Նյութ՝** թուղթ: **Մեծություն՝** 20,8 x 15: **Գրություն՝** երկայուն: **Գիր՝** բոլորգիր: **Տող՝** 31: **Բնագիր՝** թ. 305ա-379ա: Բնագիրը սկզբից և միջից թերի է: Այս փաստի հետ կապված հետևյալ ուշագրավ տողերն ենք կարդում նախագաղափար օրինակի հիշատակարանում. «Որ և Վարդան վաստակեալ ի յահագին ծովուս, կամ յերկրէ յերկինս դիմեալ, տկար ոգով և մարմնով, ցաւօք, և ծերութեամբ ձևն ի Յիսուս կալեալ ի յիւր մերձատր սուրբքն յԵպիփան, յԵփրեմ, յԱթանաս և ի Դանիէլ, զոր ումենն **համառօտեալ, կարճատեալ էր** ի մի գիրք յայլ և յայլ տեղիս, որոյ յիշատակն արինութեամբ Սեղբեստրոսի, որ մեզ պատճառ եղև աշխատել և հաւաքել ի մի, թողեալ և յաւելեալ կամաւ ի կարծիս թէ չէ յարմար, թերևս մեր տխմարութեան թուելով, և շատն, զոր նա էր թողեալ և զոր մեք սխալմամբ և չածելով ի յիշումն, զորոց թողութիւն Քրիստոսի սիրովն հայցեմ հանդիպելոցդ...» (242բ-242ա):

Այս հիշատակարանից նախ պարզվում է, որ նախագաղափար օրինակի գրիչը Վարդան Արևելցու և Հովհաննես Ծործորեցու երկերը տարբեր տեղերից ընդօրինակելով զետեղել է մի ձեռագրում, և երկրորդ՝ Դանիելի մեկնությունը գրչի ձեռքը անցել է արդեն **համառոտված** ու տարբեր տեղերից **կրճատված** վիճակում: Ուստի գրիչն այդ մասին տեղյակ է պահում ընթերցողին, որպեսզի վերջինս տվյալ կրճատումները կամ բացթողումները նրա տխմարությանը չվերագրի: Ի դեպ, նույն թերույթն ունեն երուսաղեմյան ձեռագրերը. թիվ 327 (313-390)՝ 1406 թ., թիվ 207(363ա-447ա)՝ 1704-1706 թթ.<sup>\*\*\*</sup>:

Այս իրողությունն ինքնին ենթադրել է տալիս, որ ՄՄ թիւ 1187 ձեռագրի նախագաղափար օրինակը եղել է 1406 թվականից առաջ ընդօրինակված մի ձեռագիր, որը գրչագրվել է հակամիարարական միջավայրում կրճատումների ենթարկված բնագրից:

ՄՄ թիվ 1187 ձեռագրում բնագիրն ունի հետևյալ ուղղագրական առանձնահատկությունները. գուսակալ/կուսակալ, երկիղ/երկիւղ, եւթնէրորդ/եօթնէրորդ, հրեայ/հրեայ (բայց՝ հրէից), Նաբոգոդոնոսոր/Նաբուգոդոնոսոր, Պաղտասար/Բաղտասար:

Թովմա Մեծոփեցու Դանիելի մեկնությունը հրատարակվում է ըստ Մաշտոցի անվ. Մատենադարանի հետևյալ երկու ձեռագրերի:

<sup>\*\*\*</sup> Տե՛ս **Նորայր եպս. Պողարյան**, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հտ. Բ, Երուսաղեմ, 1967, էջ 201, նույնը Հտ. Ա, Երուսաղեմ, 1966, էջ 584-585:

**A = 2567**

Ժողովածու: **Ժամանակ**՝ 1659 թ.: **Վայր**՝ Եդեսիա: **Գրիչ**՝ Գրիգոր Չեյթունցի, Սարգիս: **Թերթ**՝ 140: **Նյութ**՝ թուղթ: **Մեծություն**՝ 18 x 14: **Գրություն**՝ միասյուն: **Գիր**՝ նոտրգիր: Տող՝ 29-32: **Բնագիր**՝ թ. 84բ-97բ:

**B= 1134**

Ժողովածու: **Ժամանակ**՝ 1695 թ.: **Գրիչ**՝ Մանվել աբղ.: Կազմող, ստացող՝ Մարգարե Ապուչեղցի: **Թերթ**՝ 186: **Նյութ**՝ թուղթ: **Մեծություն**՝ 15x10,4: Գրություն՝ միասյուն: **Գիր**՝ նոտրգիր: Տող՝ 14-19: **Բնագիր**՝ թ. 81ա-125ա:\*\*\*\*

Ինչպես Աստվածաշնչից, այնպես էլ Վարդան Արևելցու Դանիելի մարգարեության մեկնությունից կատարված բառացի վկայաբաղումները ներկայացված են չակերտների մեջ:

ՀԱԿՈՒՔ ՔՅՈՍԵՅԱՆ

---

\*\*\*\* ՄՄ ձեռագրերի նկարագրությունն ըստ Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Հտ. Ա., կազմեցին Օ. Եզանյան, Ա. Չեյթունյան, Փ. Անթաբյան, խմբագրությամբ Լ. Խաչիկյանի, Ս. Մնացականյանի, Եր. 1965, էջ 484, 496, 827, 1049, 1297:

Արդիւնաւոր եւ սուրբ վարդապետին Վարդանայ սակաւ  
ինչ վաստակ ի սուրբն Դանիէլ<sup>1</sup>

Հոգեւոր սուրբ եւ մաքուր եղբարք<sup>2</sup> եւ որդեակք յաւթարեցին  
զհեռաւորութիւնս<sup>3</sup> մեր մերձ<sup>4</sup> տանել մերձաւորաց Հոգւոյն<sup>5</sup> եւ  
զտկարութիւնս մեր զաւրացուցանել Տերամբ զաւրացելովքն եւ  
զհիւանդութիւնս մեր բժշկել վարժեցելովքն ի բժշկապետէն Աս-  
տուծոյ<sup>6</sup> մերոյ: Որոց<sup>7</sup> մի է<sup>8</sup> եւ<sup>9</sup> եղբայրն մեր՝ Գրիգոր վարդա-  
պետն,<sup>10</sup> եւ այլք,<sup>11</sup> որք<sup>12</sup> կամեցան վաստակել զմեզ<sup>13</sup> մեծ յուսով ի  
բաղձալին Ամենասուրբ Հոգին<sup>14</sup> եւ ի ցանկալին հոգեղէն  
զուարթնոցն<sup>15</sup> ի յարդարն<sup>16</sup> եւ ի մեծն Դանիէլ, առաջնորդ ունե-  
լով եւ ճրագ ճանապարհի զաստուածընկալ լուսաւորիչն<sup>17</sup> այսմ  
մատենի՝ զսքանչելին զսուրբն Եփրեմ,<sup>18</sup> եւ զսուրբն<sup>19</sup> Հիպողա-  
տէս<sup>20</sup> Հռոմայ հայրապետն,<sup>21</sup> եւ զզարդու զաւակն Հայաստա-  
նեայցս<sup>22</sup> զպսակեալն զսուրբն<sup>23</sup> Ստեփաննոս Սիւնեցին,<sup>24</sup> առըն-

<sup>1</sup> B Դանիէլ եւ ի նորին մեկնիչսն

<sup>2</sup> BC Սերձաւորք մեր և եղբարք *փխ*. Հոգւոր սուրբ և մաքուր եղբարք

<sup>3</sup> C զհեռաւորութիւնսն

<sup>4</sup> C առ մերձ

<sup>5</sup> BC հոգւոյն Աստուծոյ

<sup>6</sup> B Յիսուսի Աստուծոյ. C Յիսուսի Աստուծոյն

<sup>7</sup> B յորոց

<sup>8</sup> B մի է քաւիչ

<sup>9</sup> B *չիք* եւ:

<sup>10</sup> B վարդապետն սանահնեցի

<sup>11</sup> B այլք ընդ նմա

<sup>12</sup> C վասն որոյ եղբարք որ ընդ մեզ են *փխ*. որոց մի է և եղբայրն մեր Գրիգոր  
վարդապետն և այլք, որք

<sup>13</sup> BC մեզ

<sup>14</sup> C Հոգւոյն

<sup>15</sup> C զուարթնոց

<sup>16</sup> BC ի յարդար

<sup>17</sup> BC լուսաւորիչքն

<sup>18</sup> BC զսքանչելի ասորին զԵփրեմ *փխ*. զսքանչելին զսուրբն Եփրեմ

<sup>19</sup> BC *չիք*

<sup>20</sup> BC զՀիպողիտա

<sup>21</sup> B հայրապետ

<sup>22</sup> BC հայաստանեայցս եկեղեցոյ *փխ*. Հայաստանեայցս

<sup>23</sup> BC *չիք* զսուրբն

<sup>24</sup> B Ստեփանոս Սիւնեա. C Ստեփանոս Սիւնեցի *փխ*. Ստեփանոս Սիւնեցին

Թեր<sup>1</sup> դնել զաստ եւ անդ բանս<sup>2</sup> նոցա՝ չառնելով վաստակ զուսումնասէրսն, որ<sup>3</sup> գան զհետ մեր, եւ<sup>4</sup> զի ի<sup>5</sup> յարձակմանէ նշուլից<sup>6</sup> լուսոյ նոցա տեսցուք ինչ եւ դիցուք ի փառս Աստուծոյ եւ ի զուարճացումն զարմից<sup>7</sup> Սիոնի եւ ի յոյս քաւութեան դժուարալուաց իմոցն մեղաց:

### Ի Դանիելի մարգարէի մեկնութեան

Դանիէլ ի նոցանէ էր,<sup>8</sup> «գորս ոչ արժէ աշխարհ» (Եբր. ԺԱ 38), ըստ Պաւղոսի ասիցն,<sup>9</sup> որ Քրիստոսին խաւսէր: Զորոյ նշանակն յայտնապէս եցոյց՝ ասելովն, թէ՛ «Խցին զբերանս առիւծուց» (Եբր. ԺԱ 33), որոց<sup>10</sup> առաջին սա կարողացաւ մի անգամ եւ միւս անգամ:

Եւ յիրաւի, անզուգելիք են աշխարհի սուրբքն,<sup>11</sup> զի «յառաջ քան զլինիլն<sup>12</sup> աշխարհի ընտրեցան յԱրարչէն» (Ռմմտ. Յովն. ԺԵ 19): Եւ աշխարհ վասն նոցա եղեւ, զի եւ հիմունք իսկ են աշխարհի, ըստ Դաւթի ասիցն,<sup>13</sup> թէ՛ «Անսահման ծովէ Հոգւոյն երեւեցան մեզ աղբիւր<sup>14</sup> մարգարէքն եւ յայտնեցան, թէ եւ հիմունք եւս են<sup>15</sup> աշխարհի» (Ռմմտ. Սաղմ. ԶԶ 2): Որ եւս<sup>16</sup> մեծացեալ եղեն եւ կարգեցան ընդ առաքեալսն, «որոց երանեցան աչք եւ ականջք» (Ռմմտ. Մատթ. ԺԳ 16):

Ընդ նոսա հանդիսացեալ՝ մտին ի հիմունս սուրբ եկեղեցւոյ՝ ըստ ասելոյն. «Զորս եդ Աստուած յեկեղեցւոջ, նախ<sup>17</sup> զառա-

<sup>1</sup> BC առընթեր միմեանց

<sup>2</sup> BC գտեալ բանս

<sup>3</sup> C որք

<sup>4</sup> BC եւ է

<sup>5</sup> C չիք ի:

<sup>6</sup> C նշուլից

<sup>7</sup> BC զարմիցդ

<sup>8</sup> BC է

<sup>9</sup> C ասելոյն

<sup>10</sup> B որոյ

<sup>11</sup> C սուրբք

<sup>12</sup> BC զլինելն

<sup>13</sup> BC Դաւթա ասելոյն *փյւ*. Դաւթի ասիցն

<sup>14</sup> BC աղբիւրք

<sup>15</sup> C եւ սիւնք *փյւ*. եւս են

<sup>16</sup> C որ եւ

<sup>17</sup> BC այս են

քեալսն<sup>1</sup>, երկրորդ<sup>2</sup> զմարգարէսն»<sup>3</sup> (Ա, Կորնթ. ԺԲ 28): Եւ դարձեալ, թէ<sup>4</sup> «Շինեալք ի վերայ հիման առաքելոց եւ մարգարէից» (Եփես. Բ 20):

Որ եւ յամենեսեան ի նոսա երեւի ճոխ եւ ճառագայթարձակ լուսով<sup>5</sup> մեծն Դանիէլ՝ մաքուր հոգևով, անարատ մարմնով, յերեւելի տանէ յարքայական<sup>6</sup> գահոյից, յերեւանէ աշխարհէ,<sup>7</sup> որպէս<sup>8</sup> յեզերաց մինչեւ<sup>9</sup> ի ծագս տիեզերաց գովեալ եւ գգուեալ յանմարմին զուարթնոցն,<sup>10</sup> տաճար Աստուծոյ<sup>11</sup> եւ բնակարան կենդանարար Հոգւոյն<sup>12</sup>:

Եւ<sup>13</sup> երագագիր դպիր խորհրդոցն Յիսուսի, գեղեցիկ զնա գրելով քան զամենայն որդիս Ադամայ, ի բազում խորհուրդս խորինս, ի<sup>14</sup> յառակս հանճարոյ արժանաւոր տեսեանց<sup>15</sup> եւ յայտնութեան զարմանալեաց եւ սքանչելեաց Աստուծոյ ամենայն դարուց եւ ժամանակաց, զոր<sup>16</sup> եւ գիրքս այս պարունակեալ ունի յինքեան,<sup>17</sup> որոց արժանի լիցուք տեսեան եւ իմացման նորին սուրբ աղաւթիւքն<sup>18</sup> յստակ հոգևով,<sup>19</sup> անմառախուղ խորհրդով, անժանգ զգայարանաւք, մանաւանդ աներկմիտ հաւատով եւ անդանդաղ մարմնով ի փառս Աստուծոյ եւ յաւգուտ անձանցն եւ այլոցն<sup>20</sup> անմոլար ուղեգնացութեամբ անխոտոր յաջ եւ յահեակ:

<sup>1</sup> BC առաքեալք

<sup>2</sup> B եւ փիս. երկրորդ. C չիք երկրորդ:

<sup>3</sup> B մարգարէ. C մարգարէք

<sup>4</sup> C եթէ

<sup>5</sup> BC ճոխ եւ ճառագայթարձակ լուսով երեւի փիս. երեւի ճոխ եւ ճառագայթարձակ լուսով

<sup>6</sup> B յարքունական

<sup>7</sup> B յերեւանի աշխարհի փիս. յերեւանէ աշխարհէ. C չիք աշխարհէ:

<sup>8</sup> BC չիք որպէս:

<sup>9</sup> C մինչ

<sup>10</sup> BC զուարթնոց

<sup>11</sup> BC Աստուծոյ կենդանւոյ

<sup>12</sup> B Սուրբ Հոգւոյն

<sup>13</sup> C եւս

<sup>14</sup> BC եւ

<sup>15</sup> BC տեսլեան

<sup>16</sup> C գորս

<sup>17</sup> B յինքեանս

<sup>18</sup> BC աղաւթիւք

<sup>19</sup> C հոգւով եւ

<sup>20</sup> B անձանց եւ այլոց. C այլոց անձանց փիս. անձանցն եւ այլոցն

Ասաց ոմն յառաջնոցն, թէ արդարոցն ծնողք,<sup>1</sup> յԱստուծոյ առեալ շնորհս մարգարէի, մարգարէաբար կոչէին<sup>2</sup> անուանս որդւոցն, որպէս եւ հայրն Նոյի՝ Ղամէք, ի կոչելն զանուն որդւոյն Նոյ, որ է հանգիստ, ասաց. «Սա հանգուսցէ զմեզ ի տրամութեանց եւ յերկրէ, զոր անէծ Տէր Աստուած» (ԾԱՆՊ. Ե 29):

Նոյնպէս եւ սրբոյս այսորիկ հայրն, զոր ասեն Յաւհաննէս,<sup>3</sup> կոչեաց զանուն նորա<sup>4</sup> Դանիէլ, որ ասի դատաստան Աստուծոյ, որ եւ արդեամբ<sup>5</sup> իսկ ցուցաւ ի սա: Ոչ միայն, զի յԱստուծոյ Հոգւոյն առեալ՝ արար դատաստան ի մէջ Շուշանայ եւ ծերոցն, այլ եւ զի<sup>6</sup> յայտնեաց զանճառելի գալուստն Աստուծոյ զառաջինն եւ զերկրորդն եւս. «Ի դատաստան հրով եւ հրեշտակաց<sup>7</sup> անբաւից բազմութեամբ ընդ ամպս երկնից եկեալ իբրեւ Որդի մարդոյ:<sup>8</sup> Աթոռք<sup>9</sup> արկեալ լինէին դատաստանի, եւ Հինաւուրցն նստէր այլովքն հանդերձ» (տե՛ս Դաճ. Է՝ 13):

Որ եւ սկիզբն առնէ Հոգին Սուրբ ի վերայ<sup>10</sup> յայտնութեանս Դանիէլի եւ մարգարէանալոյ սորա այսպէս.<sup>11</sup>

Եւ<sup>12</sup> եղեւ այր մի՝<sup>13</sup> բնակեալ<sup>14</sup> ի Բաբելոն (ԺԳ. 1):

Եւ զանուն առն եւ զկնոջն եւ<sup>15</sup> զարդարութենէ, զի յայտ արասցէ, թէ ի բարի յարմատոյ<sup>16</sup> բարի շառաւիղք էին եւ արժանիք էին այսպէս<sup>17</sup> սքանչելեաց երեւել առ նոսա, զի եւ ինքեանք իսկ

<sup>1</sup> BC ծնողքն

<sup>2</sup> BC կոչեն

<sup>3</sup> B Յովհաննէս

<sup>4</sup> BC սորա

<sup>5</sup> BC արդեամբք

<sup>6</sup> BC այլ զի եւ *փխ.* այլեւ զի

<sup>7</sup> C հրեշտակաւք

<sup>8</sup> BC զորդի մարդոյ *փխ.* որդի մարդոյ

<sup>9</sup> BC եւ աթոռք աստ

<sup>10</sup> B վերայ *փխ.* ի վերայ

<sup>11</sup> BC այսպիսի

<sup>12</sup> BC *չիք* եւ:

<sup>13</sup> BC այր մի աստ

<sup>14</sup> BC *չիք* բնակեալ:

<sup>15</sup> BC զծնողացն

<sup>16</sup> B բարի արմատոյ *փխ.* ի բարի յարմատոյ

<sup>17</sup> BC այսպիսի

արդարք էին եւ սնունդ<sup>1</sup> ւարինացն Մովսէսի:

Որպէս Հոգին Սուրբ էջ ի վերայ տեառն Ներսէսի աւծութեանն, եւ ի սուրբ պատարագին սրբոյն Բարսղի տեսիլս այս երեւէին<sup>2</sup>: Եւ չլինէր խափան աւտար երկիրն եւ հեռանալն ի Պաղեստինոյ<sup>3</sup> եւ ի տաճարէն, անցանելոյ ընդ<sup>4</sup> ւարէնսն լաւացն եւ արիագունիցն,<sup>5</sup> անպատասխանի առնելով զծոյլսն եւ զթերահաւատսն, որ պատճառեն զպատճառս մեղաց, մարդոյ եւ ո՛չ Աստուծոյ կարեն իրաւ երեւիլ<sup>6</sup>:

Թուի այրն ի ցեղէն Յուդայ, եւ կինն՝ Շուշան, ի նմին տանէ, ընդ որս գայր արեգակն արդար,<sup>7</sup> որոյ նշոյլք<sup>8</sup> փայլեալ<sup>9</sup> ըստ ժամանակի յարժանաւոր նախնիսն Տեառն, եւ յաղագս նորա<sup>10</sup> խնայեալ լինէր ազգն բովանդակ, թէպէտ յաճախէր ի նոսա ապստամբութիւն եւ չարութիւն,<sup>11</sup> յաղագս որոյ խրատեալ լինէին գերութեամբ եւ պէսպէս պատուհասիւք եւ ոչ իսպառ կորուսեալք ըստ արժանեաց<sup>12</sup> իւրեանց:

Այլ<sup>13</sup> «մեծատուն յոյժ» ասելն<sup>14</sup> «եւ բուրաստան ունել եւ զբաւսնուլ ի նմա» (տե՛ս Դաւ. ԺԳ. 3) ցուցանէ զԱստուծոյ դատաստանին զանհասութիւն,<sup>15</sup> զի եւ ի<sup>16</sup> պատուհասն լի է ողորմութեամբ՝ «զնելով զնոսա ի գթութիւնս առաջի ամենայն<sup>17</sup> գերչաց<sup>18</sup>

<sup>1</sup> B սնունդք

<sup>2</sup> BC *չիք* Որպէս Հոգին Սուրբ ... երեւէին:

<sup>3</sup> BC ի Պաղեստինէ

<sup>4</sup> BC ըստ

<sup>5</sup> BC արուորագունիցն

<sup>6</sup> BC երեւել

<sup>7</sup> BC արդարութեան

<sup>8</sup> BC նշոյլքն

<sup>9</sup> BC փայլէին

<sup>10</sup> BC նոցա

<sup>11</sup> C ապստամբութիւնն եւ չարութիւնն *փիս*. ապստամբութիւն եւ չարութիւն

<sup>12</sup> BC արժանեացն

<sup>13</sup> C այլեւ

<sup>14</sup> C ասելն յոյժ *փիս*. յոյժ ասելն

<sup>15</sup> C անհասութիւնն

<sup>16</sup> BC *չիք* ի:

<sup>17</sup> BC *չիք* ամենայն:

<sup>18</sup> BC գերչացն

նոցա»<sup>1</sup> (Սաղմ. ԾՁ 46), ընդարձակել<sup>2</sup> նոցա, տալ<sup>3</sup> նոցա<sup>4</sup> նիւթս փարթամութեան եւ զբաւսանք<sup>5</sup>:

Այլեւ սոքա, արդարք գոլով, լուան յԵրեմիայ մարգարէէ,<sup>6</sup> որ ասէր եւ գրէր. «Ի Բաբելոն<sup>7</sup> շինել տունս եւ բնակիլ<sup>8</sup> ի նմա,<sup>9</sup> տնկել այգի եւ ձիթենի<sup>10</sup> եւ ուտել զպտուղ<sup>11</sup> նոցա» (տե՛ս Երեմ. ԻԹ 5): Զի եաւթանասուն<sup>12</sup> ամ մնալոց էին անդէն՝ ըստ վճռին, որ է ժամանակ կենաց մարդոյ ի Դաւթայ ասացեալ (հմմտ. Սաղմ. ՁԹ 10):

Որում հաւատացեալ Յովակիմայ՝ յաջողելովն<sup>13</sup> Աստուծոյ շինեաց տունս եւ տնկեաց բուրաստանս եւ վայելէր ամենայն գերելովքն, որ<sup>14</sup> գային առ նա՝ ի մխիթարել եւ ի<sup>15</sup> սրբել զարտասուս<sup>16</sup> իւրեանց ի վտանգից նշդեհութեան<sup>17</sup> գերութեանն: Որպէս եւ ասէ,<sup>18</sup> թէ՛

Փառաւորագոյն քան զամենայն էր<sup>19</sup> այրն (ԺԳ 4):

Յայտ է, թէ՛<sup>20</sup> վասն այնորիկ, զի զաւրհնութիւն աւրինացն առաւել ունէր, քան զամենայն<sup>21</sup>: Եւ զի ասէ.

Երեսեցան երկու ծերք, զոր<sup>22</sup> խաւսեցաւ Տէր, թէ՛ ել անարեւուոթիւն

<sup>1</sup> BC *չիք* նոցա:

<sup>2</sup> C ընդ յարձակել

<sup>3</sup> BC եւ տալ

<sup>4</sup> BC *չիք* նոցա:

<sup>5</sup> BC զբաւսանլոյ

<sup>6</sup> B Երեմիա մարգարէին. C Երեմիայի մարգարէի *փիւ*. յԵրեմիայ մարգարէ

<sup>7</sup> C ի Բաբելովն

<sup>8</sup> B բնակել

<sup>9</sup> BC ի նոսա

<sup>10</sup> BC այգիս եւ ձիթենիս *փիւ*. այգի եւ ձիթենի

<sup>11</sup> BC զպտուղս

<sup>12</sup> BC ԳՅ (70)

<sup>13</sup> BC աջողելովն

<sup>14</sup> B որք

<sup>15</sup> C *չիք* ի:

<sup>16</sup> C զարտասուսս

<sup>17</sup> B նժդեհութեան. C նշդեհութեան

<sup>18</sup> B ասէր

<sup>19</sup> BC զամենեսեան էր

<sup>20</sup> BC *չիք* թէ:

<sup>21</sup> BC զամենեսեան

<sup>22</sup> BC զորոց



ծերոցն,<sup>1</sup> որք համարէին առաջնորդել ժողովրդեան»<sup>2</sup> (ԺԳ.5):

Եւ քննելի է, թէ ո՞րք են<sup>3</sup> սոքա, եւ յո՞րք<sup>4</sup> ձեռն խաւսեցաւ Տէր, եւ զի՞նչ են<sup>5</sup> խաւսեցեալ բանքն:

Երեւին անուանք սոցա եւ Տեառն եւ<sup>6</sup> խաւսք վասն սոցա ի միջոց<sup>7</sup> մարգարէութեան<sup>8</sup> Երեմիայի,<sup>9</sup> որ ասէ. «Այսպէս ասէ Տէր զաւրութեանց՝ Աստուած Իսրայէլի,<sup>10</sup> ի վերայ Աքիաբայ՝<sup>11</sup> որդւոյ Ուղկեայ,<sup>12</sup> եւ ի վերայ<sup>13</sup> Սեղեկիայ՝ որդւոյ Մայասայ,<sup>14</sup> որ մարգարէացան<sup>15</sup> ձեզ յանուն իմ զուր. «Ահաւասիկ ես տաց<sup>16</sup> զնոսա ի ձեռս Նաբուքոդոնոսորայ արքային բաբելացւոց, եւ սատակեսցէ<sup>17</sup> զնոսա առաջի աչաց ձերոց»: Եւ առցեն ի նոցանէ<sup>18</sup> անէծս ի մէջ ամենայն<sup>19</sup> գերութեանն<sup>20</sup> Յուդայ,<sup>21</sup> որ է ի Բաբելոն, եւ ասացեն. «Արացէ զքեզ<sup>22</sup> Տէր, որպէս արար Աքիաբայ<sup>23</sup> եւ Սեղեկիայ,<sup>24</sup> եւ<sup>25</sup> զորս տապակեաց արքայն բաբելացւոց<sup>26</sup> ի հոլը»: Վասն<sup>27</sup> զի գործեցին զանաւրէնու-

<sup>1</sup> C ի ծերոցն

<sup>2</sup> BC ժողովրդեանն

<sup>3</sup> BC էին

<sup>4</sup> C յոյց

<sup>5</sup> BC էին

<sup>6</sup> BC *չիք* եւ:

<sup>7</sup> BC ի միջոցի

<sup>8</sup> BC մարգարտութեանն

<sup>9</sup> C Երեմիա

<sup>10</sup> B Իսրայիլի

<sup>11</sup> B Աքաաբու. C Աքաիայ

<sup>12</sup> B Կովղեա. C *չիք* որդւոյ Ուղկեայ

<sup>13</sup> C *չիք* եւ ի վերայ

<sup>14</sup> B Մասիա. C որդւոյ Մասեայ Սեղեկիա *փիս*. Սեղեկիայ որդւոյ Մայասայ

<sup>15</sup> BC մարգարտեանն

<sup>16</sup> BC տամ *փիս* ես տաց

<sup>17</sup> C սատակեսցեն

<sup>18</sup> BC *չիք* ի նոցանէ

<sup>19</sup> BC *չիք* ամենայն:

<sup>20</sup> C գերութեան

<sup>21</sup> BC բաբելացւոց

<sup>22</sup> BC քեզ

<sup>23</sup> C Աքաիայ

<sup>24</sup> B Աքիա Սեղեկիա *փիս*. Աքիաբայ եւ Սեղեկիայ

<sup>25</sup> BC *չիք* եւ

<sup>26</sup> BC Նաբուգոդոնոսոր *փիս*. արքայն բաբելացւոց

<sup>27</sup> BC *չիք* վասն:

թիւնս<sup>1</sup> յիսրայէլի. եւ<sup>2</sup> շնային ընդ կանայս քաղաքայնոց իւրեանց եւ խաւսէին պատգամս յանուն իմ սուտ, զոր ոչ հրամայեցի նոցա,<sup>3</sup> եւ անիրաւս գտանէին<sup>4</sup> (Երեմ. ԻԹ 21-23): Յայտնապէս զսոցանէ ասէ, զի յԱստուծոյ են<sup>5</sup> անուանք սոցա<sup>6</sup>: Եւ մարգարէութիւն<sup>7</sup> սուտ շատ ինչ ասէին վասն ազահութեանն<sup>8</sup> եւ որովայնամորտութեան, եւ վասն շնալոյն<sup>9</sup> ընդ կանայսն ասէին,<sup>10</sup> թէ<sup>11</sup> «Քրիստոս<sup>12</sup> ի մէնջ՝ ի ծերոցս ծնանելոց է»,<sup>13</sup> զի դիւրաւ հաւանեացին այնու յուսով, զի թաքուցանէին զասելն Եսայեայ, թէ՛ «Ի կուսէ ծնցի եւ էմմանուէլ կոչեսցի» (Ռմմտ. Ես. Է 14):

Այսպիսի<sup>14</sup> ախտիւ եւ ընդ պարկեշտին Շուշանայ կամէին լինել՝ զաղտ յիրերաց սպասեալ<sup>15</sup> դիպող աւուր, եւ իբրեւ գտին զաւրն, մեկնեցան ի միմեանց<sup>16</sup> գնալ ի տուն՝ խաբելով զմիմեանս, եւ դարձեալ եկին երկոքին<sup>17</sup> ի դիտանոց տեղի՝ աչել զՇուշան, յայտնեցին<sup>18</sup> զախտն միմեանց եւ յուսացան երկոքինն կատարել<sup>19</sup> ի միասին, զոր առանձինն տկարանային,<sup>20</sup> զի դարձուցեալ էին<sup>21</sup> զոգիս<sup>22</sup> յետս<sup>23</sup> յԱստուծոյ՝ կարծելով, թէ չէ իրաւ ա-

<sup>1</sup> BC անաւրեւութիւն

<sup>2</sup> BC զի

<sup>3</sup> BC *չիք* զոր ոչ ... նոցա:

<sup>4</sup> BC դատէին

<sup>5</sup> BC այս էին

<sup>6</sup> BC նոցա

<sup>7</sup> C մարգարտութիւնս

<sup>8</sup> BC ազահութեան

<sup>9</sup> C շնալոյ

<sup>10</sup> C եւ ասէին

<sup>11</sup> C *չիք* թէ:

<sup>12</sup> C Քրիստոսն

<sup>13</sup> BC է ծնանելոց

<sup>14</sup> BC որով

<sup>15</sup> BC սպասել

<sup>16</sup> C *չիք* ի միմեանց:

<sup>17</sup> B երկոքեանն. C երկոքեան

<sup>18</sup> BC եւ յայտնեցին

<sup>19</sup> BC կատարել երկուքն *չի/ս*. երկոքինն կատարել

<sup>20</sup> BC անկարանային

<sup>21</sup> C դարձուցանէին

<sup>22</sup> B զոգիսն. C զոգիսն

<sup>23</sup> BC *չիք* յետս:

սելն Դաւթի. «Ո՞վ է որպէս Տէր<sup>1</sup> ի բարձունս բնակեալ<sup>2</sup> [եւ զխոնարհս տեսանէ յերկինս եւ յերկրի»]<sup>3</sup> (Սաղմ. ԾԺԲ 6): Այն, որ արար զմարդն ի<sup>4</sup> պատկեր իւր հոգևով եւ զշինուածս<sup>5</sup> մարմնոյն<sup>6</sup> այնպիսի,<sup>7</sup> որ միշտ յերկինս հայելով՝ ահ կալցի զնա ի դատաստանաց անտի, յորմէ անկաւ սատանայ, որ ծածկեաց զաչս<sup>8</sup> չհայել ի Տէր իւր:

Եւ<sup>9</sup> զի աղջկունք<sup>10</sup> փակեցին զդուրս<sup>11</sup> կոյս՝ յելանելն զբանալին<sup>12</sup> առընթեր փակին եղեալ, որ դիւրին էր արտաքուստ առնուլ նոցա<sup>13</sup> ի դառնալն, ծերքն առին զայն<sup>14</sup> եւ ասէին.

Ահա դուրքս փակեալ է,<sup>15</sup> եւ ոչ ոք է, որ տեսանէ (ԺԳ 20):

Իբր թէ<sup>16</sup> ոչ<sup>17</sup> Աստուած՝ այն, որ տեսանէ եւ քննէ զսիրտս: Որ եւ յանդիմանեալք եղեն յողջախոհէն, որ ասէրն.<sup>18</sup>

Լաւ է իմձ մեռանելն<sup>19</sup> ի ձեռաց ձերոց, քան թէ մեղաց անաջի Տեառն՝ տեսողիմ զամենայն (ԺԳ 23):

Եւ ճչեաց<sup>20</sup> աւգնել իւրն՝ նախ առ Աստուած աղաղակելով, զի կամէին<sup>21</sup> բռնադատել յակամայս, զոր լուեալ Աստուծոյ՝ պա-

<sup>1</sup> BC Տէր Աստուած մեր

<sup>2</sup> C բնակէ

<sup>3</sup> B կրճտ. C կրճտ.

<sup>4</sup> BC *չիք* ի:

<sup>5</sup> BC զշինուած

<sup>6</sup> C մարմնոյ

<sup>7</sup> C այնպիսւոյն

<sup>8</sup> C զաչսն

<sup>9</sup> C *չիք* եւ:

<sup>10</sup> BC աղջկունքն

<sup>11</sup> BC ի դուրս

<sup>12</sup> B եւ զբանալին

<sup>13</sup> B առնուլ նոցա արտաքուստ. C առնուլ արտաքուստ *փիս*. արտաքուստ առնուլ նոցա

<sup>14</sup> BC զայն յինքեանս

<sup>15</sup> BC փակեալ են

<sup>16</sup> B թէ եւ

<sup>17</sup> C եւ ոչ

<sup>18</sup> B որ ասէ. C որ ասէր

<sup>19</sup> BC մեռանել

<sup>20</sup> C ճչեցին

<sup>21</sup> C *չիք* աւգնել իւրն ... կամէին:

Հեաց զաւգնելն ի<sup>1</sup> դիպող ժամու եւ մեծի հանդիսի<sup>2</sup>:

Իսկ ընտանիք<sup>3</sup> պատկառեցին մտանել, այլ ընդ որմովն<sup>4</sup> ալանէին,<sup>5</sup> զի ծերոց<sup>6</sup> աղաղակն կից Շուշանայ ծածկեաց զբանն, թէ՛ աւգնեցէ՛ք, որ<sup>7</sup> փութով բացին զդուռն՝ ի<sup>8</sup> հաւանեցուցանել, թէ՛

Պատանին եբաց<sup>9</sup> եւ փախեաւ՝ ուժգին գոլով քան զմեզ (ԺԳ 39):

Որք ի լսելն զամաւթի հարան, որով պարծէին վասն պարկեշտութեանն, զի ոչ էր լեալ ի Շուշանայ<sup>10</sup> այնպիսի կարծիք: Եւ<sup>11</sup> զի ծերք եւ դատաւորք էին, ի կարծիս հաւատալոյ անկան եւ լուռ եղեն<sup>12</sup> ընտանիքն, նոյնպէս եւ պատկառոտն լուռ եղեալ՝ մնայր հաւատարիմ Վկային, որոյ առաջի ոչ մեղաւ:

Եւ<sup>13</sup> եղեւ աւր ժողովելոյ<sup>14</sup> ըստ սովորութեանն, եւ գործեցաւ ատեանն,<sup>15</sup> եւ ծերքն եկին՝ անաւրէն մտաւք սպանանել<sup>16</sup> եւ ո՛չ ըստ աւրինացն, իբրու<sup>17</sup> հրամայեալ էր<sup>18</sup> Տէրն,<sup>19</sup> վասն որոյ եւ այլ եւս ախտի վասն<sup>20</sup> վկայէ նոցա<sup>21</sup> գիրն<sup>22</sup>: Որ եւ եկեալ իւրքն ամենայն կացին.<sup>23</sup> հրամայեաց,<sup>24</sup> ասէ՛ հոլանի առնել զնա<sup>25</sup> մերկա-

<sup>1</sup> BC *չիք* ի:

<sup>2</sup> B հանդիսին

<sup>3</sup> BC ընտանիքն

<sup>4</sup> BC որմովքն

<sup>5</sup> B անցանէին

<sup>6</sup> BC ծերոցն

<sup>7</sup> BC որք

<sup>8</sup> BC առ ի

<sup>9</sup> C էր

<sup>10</sup> BC ի Շուշան

<sup>11</sup> B *չիք* եւ

<sup>12</sup> B են

<sup>13</sup> BC *չիք* եւ:

<sup>14</sup> BC ժողովոյ

<sup>15</sup> BC ատեան

<sup>16</sup> C սպանանել զշուշ.

<sup>17</sup> C իբր հրեայքն

<sup>18</sup> B հրամայեաց. C *չիք* էր:

<sup>19</sup> C գՏերն

<sup>20</sup> BC *չիք* վասն:

<sup>21</sup> BC *չիք* նոցա:

<sup>22</sup> BC գիրն շարժել ի նոսա յայնպիսի աղիտաշարժ ժամու

<sup>23</sup> B կահն. C լային

<sup>24</sup> BC հրամայեցին

<sup>25</sup> BC գՇուշան

նալ զգլուխն եւ զղէմսն,<sup>1</sup> զի լցցին գեղով նորա, որ եղեւ պատ-  
ճառ լնուլ զնոսա<sup>2</sup> յաւիտենից ամաւթովն<sup>3</sup> աստի եւ անտի: Ոչ  
միայն զամաւթն, այլ եւ զմահն, որ<sup>4</sup> Շուշանայ կամեցան. քանզի  
եղին ձեռս<sup>5</sup> ի վերայ գլխոյն Շուշանայ, եւ այն եւս ախտիւ, թէ-  
պէտ թուէր ըստ աւրինացն առնել, որ ասէր, թէ՝ «Գիտակքն մե-  
ղաց զիցեն<sup>6</sup> ձեռս<sup>7</sup> ի վերայ յանցաւորին՝ որպէս ի վերայ զոհին»  
(տե՛ս Բ Օր. ԺԷ, 7, ԺԹ 15):

[Յորժամ մատուցանէին զոհ, զձեռսն ի վերայ զնելով ի  
հինն]<sup>8</sup> խոստովանէին զմեղսն<sup>9</sup> [եւ ասէին, թէ՝ այս գործոյ տէրն  
եմ,]<sup>10</sup> իբր թէ<sup>11</sup> այն զոհ<sup>12</sup> Աստուծոյ, որ ոչ թաքուցանէ զյանցա-  
ւորն եւ քաւի վասն այնորիկ. եւ դարձեալ՝ «Թէ սուտ վկայէ,  
ինքն լիցի արիւնապարտ». որպէս եւ<sup>13</sup> սոցա զիպաւ<sup>14</sup> ի<sup>15</sup> յասելն  
զբանս<sup>16</sup> կարկատունս:

Շուշան յերկինս հայեր<sup>17</sup> (ԺԳ 35):

Ջի սիրտ նորա յուսացեալ էր ի Տէր, որում չէր մեղուցեալ.  
ըստ որում<sup>18</sup> ի հաւատալ ատենին իբր ձերոց եւ իրաւադատից՝  
ձայն<sup>19</sup> արձակեաց, թէ<sup>20</sup>

<sup>1</sup> BC գրէմս

<sup>2</sup> B նոցա

<sup>3</sup> B ամաւթով

<sup>4</sup> BC գոր

<sup>5</sup> C ձեռն

<sup>6</sup> BC դնիցեն

<sup>7</sup> BC զձեռս

<sup>8</sup> BC չիք Յորժամ մատուցանէին...ի հին:

<sup>9</sup> BC զմեղս

<sup>10</sup> BC չիք եւ ասէին ... եմ

<sup>11</sup> C իբր թէ եւ

<sup>12</sup> BC զոհ է

<sup>13</sup> C որ

<sup>14</sup> BC դիպեցաւ

<sup>15</sup> B չիք ի:

<sup>16</sup> BC զբանսն

<sup>17</sup> B նաեր

<sup>18</sup> BC ըստ որում եւ

<sup>19</sup> BC ձայն եւս

<sup>20</sup> C եթէ

Սո՛ւտ ասեմ, եւ ի<sup>1</sup> զուր մեռանիմ. ո՛չ ինչ<sup>2</sup> գործեցի, զոր ասեմն (ԺԳ 43):

*Զի մի՛ գայթաղեսցի<sup>3</sup> ատեանն, եւ ամաչեսցեն ակրինապահ<sup>4</sup> ծնողքն եւ ազգատոհմն:<sup>5</sup> Որում լուաւ Արդարադատն եւ որ «զկամս երկիւղածաց իւրոց առնէ եւ<sup>6</sup> աղաւթից նոցա լսէ եւ կեցուցանէ զնոսա»<sup>7</sup> (Սաղմ. ԾնԴ 19):*

Զի միանշդեռ տանէիմ ի մահում<sup>8</sup> տեղի, զարթոյց Աստուած յերկայնմտութեանն<sup>9</sup> միանչեւ ցայն վայր՝ զհոգիմ վրէժխնդրութեան ի վերայ մանկան միոյ տղայոյ, որում անունն էր Դանիէլ,<sup>10</sup> զի ծերքն այնպիսիք գտան (ԺԳ 45):

*Իբրեւ<sup>11</sup> խափանէր մեռանիլն<sup>12</sup> Իսահակայ, մինչ յայտնի եղեւ սէրն Աստուծոյ առ Աբրահամ, որպէս եւ<sup>13</sup> Դանիէլ ըստ անուանն արասցէ դատաստան, որպէս եւ ասէր.<sup>14</sup>*

Անպարտ եմ ես յարեմէ դորա<sup>15</sup> (ԺԳ 46):

*Իբր թէ<sup>16</sup> յամենայն Իսրայէլէ առնու Աստուած զվրէժ անպարտ սպանելոցն,<sup>17</sup> եթէ<sup>18</sup> ոչ նախ քննեն զիրաւն,<sup>19</sup> որ<sup>20</sup> եւ զիւրաւ յանձն առնուն վրէժխնդրութեան<sup>21</sup>:*

<sup>1</sup> BC *չիք* ի:

<sup>2</sup> BC որ ոչ ինչ

<sup>3</sup> B գայթաղեսցին

<sup>4</sup> C ատինապահ

<sup>5</sup> BC ազատատոհմքն

<sup>6</sup> C *չիք* եւ:

<sup>7</sup> B *չիք* եւ կեցուցանէ զնոսա. C աղաւթից ... կրճտ.

<sup>8</sup> C ի մահու

<sup>9</sup> BC յերկայնմտութենէն

<sup>10</sup> BC *չիք* որում անունն էր Դանիէլ:

<sup>11</sup> BC իբր

<sup>12</sup> B զմեռանելն C զմեռանիլն

<sup>13</sup> B զի *փխ*. որպէս եւ C զի

<sup>14</sup> C աղաղակեաց *փխ*. ասէր:

<sup>15</sup> B որպէս եւ աղախինն անպարտ է *փխ*. որպէս եւ ասէր. «Անպարտ եմ ես յարեմէ դորա»

<sup>16</sup> C *չիք* թէ:

<sup>17</sup> BC սպանելոյն

<sup>18</sup> BC թէ

<sup>19</sup> C զիրաւունս

<sup>20</sup> BC *չիք* որ:

<sup>21</sup> BC *չիք* վրէժխնդրութեան:

Յորմէ բանէ զարհուրեալ՝<sup>1</sup> դարձան անդրէն եւ տեսին,<sup>2</sup> զի պայծառացան երեսք նորա,<sup>3</sup> որպէս<sup>4</sup> զՍտեփաննոս<sup>5</sup>: Վասն որոյ եւ յանձն առին՝ ներելով<sup>6</sup> յանդիմանական բանիցն, որ անմիտս կոչեաց զնոսա եւ դիւրապատիրս, յորմէ զարհուրեալ ծերոցն՝ կամեցան փաղաքուշ բանիւ զերծանել:

Եկ մի՛ստ ի մէջ<sup>7</sup> (ԺԳ.50):

Յայն,<sup>8</sup> որ զատոյց հոգի<sup>9</sup> ի նոցանէ եւ յամենայն մարդկանէ եւ ընդ հոգեկիրսն թուեաց, ոչ<sup>10</sup> միայն Հոգւովն վկայեաց, թէ սուտ խաւսեցան, զի մի՛ կիսոց անհաւատ<sup>11</sup> թուեսցի՝ իբրեւ<sup>12</sup> տղայոյ<sup>13</sup> ասացեալ, այլ հաւանական իմն ամենայն մտաց, իբր Սողոմոն ի մէջ երկուց կանանց<sup>14</sup> արար իմաստնապէս եւ զարմացոյց զամենեսեան (ճմնտ. Գ. Թագ. Գ. 16):

Մեկնել ի միմեանց<sup>15</sup> հրամայեաց եւ Հոգւովն յայտնեաց եւ խայտառակեաց զգործս նոցա յառաջագոյն: Եւ ապա հարցանելով<sup>16</sup>:

Ընդ որո՞վ ծառով (ԺԳ. 54):

Զի զանցեալն եւ զառաջիկայն<sup>17</sup> միազոյգ դիտէ՞<sup>18</sup> Հոգին: Իսկ նոցա ասելն.

Ընդ հերձեաւն (ԺԳ. 54) եւ՝ Ընդ սղոցեաւն (ԺԳ. 58),

<sup>1</sup> BC գահի հարեալ

<sup>2</sup> BC *չիք* եւ տեսին:

<sup>3</sup> BC նորա հոգւովն

<sup>4</sup> C իբր

<sup>5</sup> B Ստեփանոսի. C Ստեփանին

<sup>6</sup> C ներելովն

<sup>7</sup> B միստ ասեն ի միջի. C միստ աստեն ի միջի *փիս*. միստ ի մէջ մերում

<sup>8</sup> C զայն

<sup>9</sup> BC հոգին

<sup>10</sup> BC վասն որոյ ոչ

<sup>11</sup> C անհաւան

<sup>12</sup> C իբր

<sup>13</sup> C ի տղայոյ

<sup>14</sup> BC կանանցն

<sup>15</sup> BC *չիք* ի միմեանց:

<sup>16</sup> BC հարցանէ

<sup>17</sup> B զառաջակայն

<sup>18</sup> BC գիտէ

ասեն՝ հերձաւոր<sup>1</sup> եւ բոլոր եւ սղոցածեւ տերեւ<sup>2</sup> եւ<sup>3</sup> երկայն են<sup>4</sup> ի ծառս, եւ այլք՝ թէ՛ հերձեալ էին<sup>5</sup> պատուաստ դնել<sup>6</sup> աղնիւս, եւ թէ՛ զգաւս ծառոյ ծայրս սղոցով կտրեալ էին,<sup>7</sup> զորոց ստուծիւնն<sup>8</sup> այլ<sup>9</sup> եւ այլ ասելոյն յանէծս դարձուցեալ՝ կուտէ ի գլուխս նոցա:

Եւ նոյն ձեւանայր ի հրեշտակաց հրեղէն եւ սղոցածեւ սրով կիսամահ արարեալ, եւ հրեղէն գաւազան անկեալ յերկնից եւ խարշատեաց եւ թողեալ: Ամենայն<sup>10</sup> ժողովուրդն, որք ի ձայն մեծ ետուն փառս<sup>11</sup> Աստուծոյ, որ ոչ եթող<sup>12</sup> զնոսա ի ձեռաց ի գերութեանն<sup>13</sup> իւրեանց: Եւ քարկոծ արարին զձերսն, զոր ինչ խորհեալ էին ունել<sup>14</sup> ընկերի ըստ աւրինացն, եւ գուբն,<sup>15</sup> զոր փորեցին, եւ կուլ զնոսա:

Զոր լուեալ Նաբուքոդոնոսոր<sup>16</sup> առաքեաց եւ ետ դնել զնոսա ի սան պղնձի եւ տապակել ի հուր, զսպանեալսն ետ<sup>17</sup> հալել<sup>18</sup> եւ վայթել ի հող, ըստ բանի<sup>19</sup> Տեառն, զոր խաւսեցաւ ի ձեռն Երեմիայի<sup>20</sup> եւ եղեւ<sup>21</sup> յանէծս, զի նոքաւք անիծէին<sup>22</sup> զվիճակակիցսն.<sup>23</sup> «Արասցէ քեզ Տէր, որպէս<sup>24</sup> արար

<sup>1</sup> B հերձատեր. C հերձատերեւն

<sup>2</sup> C բոլորէ եւ սղոցածեւն *փխ*. եւ բոլոր եւ սղոցածեւ տերեւ

<sup>3</sup> C *չիք* տերեւ:

<sup>4</sup> C երկայն է

<sup>5</sup> BC հերձեալ էին եւ

<sup>6</sup> BC դրեալ

<sup>7</sup> C կտրեալ էին սղոցով *փխ*. սղոցով կտրեալ էին

<sup>8</sup> B ստուծիւն

<sup>9</sup> B յայլ

<sup>10</sup> BC յամենայն

<sup>11</sup> C ի փառս

<sup>12</sup> B չէ թողեալ. C չեթող *փխ*. ոչ եթող

<sup>13</sup> BC ի գերութեան

<sup>14</sup> BC առնել

<sup>15</sup> BC գուբ

<sup>16</sup> BC Նաբուգոդոնոսոր

<sup>17</sup> BC *չիք* ետ:

<sup>18</sup> C հանել

<sup>19</sup> B ըստ բանին

<sup>20</sup> B Երեմիա

<sup>21</sup> BC եղեւ

<sup>22</sup> BC անիծանէին

<sup>23</sup> B զվիճակիցսն իւր ասելով. C զվիճակիցսն իւրեանց ասելով

<sup>24</sup> C որպէս եւ



երկու<sup>1</sup> ձերոցն՝ Աքիաբայ եւ Սեդեկիայ» (հմմտ. Երեմ. Իթ՝ 21):

Եւ փոխեցան արտասուք<sup>2</sup> հաւր եւ մաւր եւ առն Շուշանայ ի խնդուլթիւն եւ յուրախութիւն, եւ բացաւ բերան նոցա ի փառաբանութիւն Աստուծոյ եւ յաւրհանութիւն, եւ հաստատեցան ի հաւատս եւ ի գործս արդարութեան իւրեանց:

Եւ Դանիէլ եղեւ մեծ յոյժ, քանզի<sup>3</sup> վասն այսորիկ եղաւ դրուատս այս<sup>4</sup> սկիզբն գրոցս, զի աստի եղեւ սկիզբն մեծանալոյն Դանիէլի յաչս մարդկան, որ յաչս Աստուծոյ մեծ էր յառաջագոյն,<sup>5</sup> քան<sup>6</sup> զլինիլն<sup>7</sup> աշխարհի: Քանզի եւ<sup>8</sup> Յովակիմն այսպէս թարգմանի՝ սկիզբն անդ է<sup>9</sup> նմա, որպէս եւ ի տնաւրէնութեան<sup>10</sup> Տեառն երեւեցաւ այն Յովակիմն, յորմէ Մարիամ<sup>11</sup> մայրն Աստուծոյ ծնաւ:

Մեծացաւ<sup>12</sup> Դանիէլ առաջի ամենայն ժողովրդեանն:

<sup>1</sup> B երկուց

<sup>2</sup> BC արտասուք եւ ամաւք

<sup>3</sup> C չիք քանզի:

<sup>4</sup> B այս դրուատ. C այս դրուատս *փիս*. դրուատս այս

<sup>5</sup> B յառաջ

<sup>6</sup> C նախքան *փիս*. յառաջագոյն քան

<sup>7</sup> BC զլինելն

<sup>8</sup> BC չիք եւ:

<sup>9</sup> C անտի

<sup>10</sup> BC տնաւրէնութեանն *փիս*. ի տնաւրէնութեան

<sup>11</sup> C չիք Մարիամ:

<sup>12</sup> BC վասն որոյ ասէ՝ մեծացաւ

### 3-Մեկն. Դանիէլի

## Տեսիլ երկրորդ

Եւ<sup>1</sup> զառաջինն եւս տեսիլ կոչէ, որ զտեսող Հոգին էառ Դանիէլ եւ զՇուշան ապրեցոյց, այլ եւ<sup>2</sup> քանզի<sup>3</sup> տեսին զգերութիւնն Երուսաղէմի, տեսիլ<sup>4</sup> ոչ թէ զմարգարէութիւն<sup>5</sup> յայտ առնէ յայսմ դրուատի, այլ զի սիրտք<sup>6</sup> թագաւորաց յԱստուծոյ շարժին ի կամաց կամ ի թոյլ տալոյ, զոր եւ բաժակ կոչէր<sup>7</sup> զՆաբուքոդոնոսոր<sup>8</sup> ի ձեռին,<sup>9</sup> որ եւ թագաւորեաց տեսանելովն Աստուծոյ ի վերայ արթուրացոցն<sup>10</sup> Նաբուքոդոնոսորն՝ որդի Նաբուպոլոսարայ,<sup>11</sup> եւ հրամանաւ հաւր իւրոյ ել յԵրուսաղէմ յառաջին ամին իւրոյ՝ յերկրորդ<sup>12</sup> ամին<sup>13</sup> Յովակիմայ, զոր թագաւոր եղ յԵրուսաղէմ:

Եւ<sup>14</sup> փարաւոնն<sup>15</sup> Նեքաւով արքայ<sup>16</sup> եգիպտացոց,<sup>17</sup> որ եսպան<sup>18</sup> զՅովսիա ի գնալն իւր<sup>19</sup> ի կողմանս Եփրատայ եւ ի դառնալն տարաւ զՅովաքազ<sup>20</sup> յԵգիպտոս գերի, զոր թագաւորեալ էր<sup>21</sup> ժողովորդն<sup>22</sup> զորդին Յովսիայ<sup>23</sup> արքային,<sup>24</sup> փոխանակ հաւր

<sup>1</sup> C Երկրորդ տեսիլ եւ

<sup>2</sup> BC այլեւ աչաւք

<sup>3</sup> C չիք քանզի:

<sup>4</sup> B տեսիլ աստ. C եւ դարձեալ տեսիլ աստ

<sup>5</sup> B զմարգարէութենէ ինչ. C զմարգարէութենէ

<sup>6</sup> C սիրտ

<sup>7</sup> BC ասէ

<sup>8</sup> BC այլեւս հղում չենք կատարում

<sup>9</sup> C ի ձեռին Աստուծոյ

<sup>10</sup> B թուրացոցն

<sup>11</sup> BC Նաբուպոլսարայ

<sup>12</sup> B յերկրորդ. C յԳ

<sup>13</sup> B ամի

<sup>14</sup> BC չիք եւ:

<sup>15</sup> BC Նեփտոս չիս. փարաւաւոնն

<sup>16</sup> BC չիք արքայ:

<sup>17</sup> BC չիք եգիպտացոց:

<sup>18</sup> BC սպան

<sup>19</sup> C չիք իւր:

<sup>20</sup> BC զՈքոզիա

<sup>21</sup> BC թագաւորեցուցեալ էր

<sup>22</sup> B ժողովորդեանն

<sup>23</sup> B Ովսիա

<sup>24</sup> B արքայի

իւրոյ,<sup>1</sup> եւ զեղբայր<sup>2</sup> նորա զՅովակիմ եղեալ թագաւոր, որ<sup>3</sup> ի ներքոյ հարկի արարեալ, զոր<sup>4</sup> աստ ասէ իսկ,<sup>5</sup> թէ՛

Յերկրորդ<sup>6</sup> ամի<sup>7</sup> Յովակիմայ եկն Նաբուքոդոնոսոր արքայ ի Բաբելոն<sup>8</sup> (Ա 1):

Քանզի ի Բաբել<sup>9</sup> փոխեաց զթագաւորութիւն<sup>10</sup> յԱթուրայ, որ է Նինուէ: Եւ ետ, ասէ, Տէր ի ձեռն<sup>11</sup> զՅովակիմ, եւ հարկ եղ ի վերայ՝ արարեալ ընդ իւր<sup>12</sup> ձեռամբ, եւ էառ<sup>13</sup> զսպաս տաճարին. ոչ զամենայն, այլ զազնիւսն, զոր ետ Տէր<sup>14</sup> ի ձեռս նորա, եւ ոչ թէ անձին զաւրութեամբ կարէր առնուլ: Եւ տարեալ յերկիրն Սենարայ,<sup>15</sup> ուր աշտարակն շինեցին,<sup>16</sup> յոր<sup>17</sup> կայր տուն գանձի<sup>18</sup> աստուծոյն իւրոյ,<sup>19</sup> պատկառելով յանուանէ Տեառն՝ ոչ առ<sup>20</sup> ի պէտս սպասաւորութեան սեղանոյ իւրոյ, զոր յանդգնեցաւ առնել<sup>21</sup> Բաղդասար որդի նորա: Տարաւ զկնի<sup>22</sup> զԴանիէլ որդի Յոհաննիսի՝ որդւոյ Յովսիայ<sup>23</sup> թագաւորին,<sup>24</sup> եւ զորդիսն Յովակիմայ՝ զԱ-

<sup>1</sup> C *շիք* փոխանակ հաւր իւրոյ:

<sup>2</sup> C զեղբայրն

<sup>3</sup> BC *շիք* որ:

<sup>4</sup> BC զոր եւ

<sup>5</sup> BC *շիք* իսկ:

<sup>6</sup> BC յԳ

<sup>7</sup> B ամի

<sup>8</sup> BC բաբելացւոց

<sup>9</sup> BC ի Բաբելոն

<sup>10</sup> BC զթագաւորութիւնն

<sup>11</sup> BC ի ձեռս

<sup>12</sup> C ընդ իւրով

<sup>13</sup> BC առ

<sup>14</sup> BC Տէր ետ

<sup>15</sup> B Սեն.

<sup>16</sup> BC շինեալ ասի

<sup>17</sup> BC ուր

<sup>18</sup> C գանձուն

<sup>19</sup> C իւր

<sup>20</sup> BC էառ

<sup>21</sup> C *շիք* առնել:

<sup>22</sup> B *շիք* զկնի. C եւ զկնի իւր

<sup>23</sup> B Ովսիա

<sup>24</sup> BC թագաւորի

նանիա, զԱզարիա եւ զՄիսայէլ՝ զհարեղբաւր որդիսն<sup>1</sup> Դանիէլի, ըստ բանին Եսայեայ առ Եզեկիա (հմմտ. Դ. Թագ. Ի Գ. 29-Ի Դ. 16):

Եւ<sup>2</sup> թէպէտ երկու<sup>3</sup> ասաց զայս տեսիլ առաջին, թուի, թէ այն<sup>4</sup> է, յետ<sup>5</sup> որոյ իրքն Շուշանայ եղեն եւ ընկալաւ դարձեալ<sup>6</sup> զՀոգին. եւ ապա ասաց թագաւորն Ասիանէզ<sup>7</sup> ներքինապետին<sup>8</sup>՝ ածել յորդոց Իսրայէլի գերի<sup>9</sup> եւ յազգէ թագաւորացն<sup>10</sup> եւ առնել ներքինիս,<sup>11</sup> ոչ խզել եւ<sup>12</sup> կրճատել,<sup>13</sup> այլ ի ներքս առնուլ՝ ի տուն, եւ ռոճիկս<sup>14</sup> թագաւորին պարսից,<sup>15</sup> զի եւ ի նոցանէ ունէր գերիս՝ յորդոց անտի Աբրահամու,<sup>16</sup> որ ի Քետուրայ, մտավարժս, որ է ուշիմս, յայտ է, թէ որ ըստ իւրեանց լեզուին վարժեալ<sup>17</sup> լինին, եւ այնու երեւի մտառութիւն նոցա, զոր ասաց

Խելամուտ<sup>18</sup> ամենայն իմաստութեան եւ հմուտ<sup>19</sup> ամենայն գիտութեան (Ա. 4):

Որ է գրագէտս, եւ իւրեանց լեզուին եւ դիւանացն<sup>20</sup> եւ դպրոցաց վարժս, զի<sup>21</sup> այնու երեւի, թէ եւ նոցայն<sup>22</sup> բաւականք իցեն: Որում եւ արտաքին երեւոյթքն վկայեն առոյգս լինիլ<sup>23</sup> եւ գունեղ

<sup>1</sup> C որդին

<sup>2</sup> BC որ

<sup>3</sup> BC երկորորդ

<sup>4</sup> BC չիք այն:

<sup>5</sup> BC հետ

<sup>6</sup> BC Դանիէլ չիս. դարձեալ

<sup>7</sup> B ցԱնփ. C ցԱսփանտ

<sup>8</sup> B ներքին. C ներքինապետ

<sup>9</sup> BC գերութեանն Իսրայիլի չիս. Իսրայէլի գերի

<sup>10</sup> C թագաւորութեան

<sup>11</sup> C ներքեցինս

<sup>12</sup> B կամ

<sup>13</sup> C չիք եւ կրճատել:

<sup>14</sup> B յռոճիկս. C յռոճիկ

<sup>15</sup> BC եւ ի պարթեւաց չիս. պարսից

<sup>16</sup> B Աբրա. C Աբրահամու

<sup>17</sup> C վարժել

<sup>18</sup> BC խելամուտս

<sup>19</sup> BC հմուտս

<sup>20</sup> BC դիւանաց

<sup>21</sup> B չիք զի:

<sup>22</sup> BC նոցայցն

<sup>23</sup> BC լինել

եւ չունել արատ ինչ<sup>1</sup> ի գգայարանս,<sup>2</sup> վասն որոյ<sup>3</sup> ասէ՝<sup>4</sup>

Յայտ է՝ հրեշտակք յերկուս կողմանս գետոյն, որք են նշանակք երկուց վտակաց. կա՛մ երկուքն նշանակէ]՝<sup>1</sup> երկու Կտակարանքն,<sup>2</sup> կա՛մ արէնքն<sup>3</sup> եւ մարգարէքն,<sup>4</sup> եւ գետն՝ Յորդանան, կա՛մ նշանակալ՝ ժողովուրդք, որ յեզր գետոյն, եւ<sup>5</sup> տւիչ արինացն Քրիստոս է<sup>6</sup>: Եւ եհարց ցերկուսն,<sup>7</sup> որք<sup>8</sup> կային աստի եւ անտի՝ գիտելով, թէ՛ նոցա<sup>9</sup> տուաւ ամենայն իմաստութիւն եւ ամենայն խորհուրդ.<sup>10</sup>

ցե՞րք իցէ վախճան սքանչելեացդ, զոր ասացեր (ժԲ 6):

Իբր թէ՛<sup>11</sup> դատաստանք եւ խորհուրդք ե՞րք կատարին:

Հիպո. Եւ նա կամեցաւ հաւատալի առնել զբանն, ըստ այնմ՝

Եւ լուայ յառնէն, որ զգեցեալն էր զբաղէնն եւ կայր ի վերայ ջուրց գետոյն. ամբարձ զաջ իւր եւ զձախ իւր յերկինս եւ երդուաւ ի կենդանին յաւիտենից<sup>12</sup> (ժԲ 7):

Եւ նա կամեցաւ հաւատալի առնել զբանն խաչատարած բազկաւն ի Հայր ամբարձեալ՝<sup>13</sup> ի կենդանին: Իբր թէ՛ երզնու Որդին ի Հայրն, որ յաւիտենական<sup>14</sup> կենդանի է ի մեզ,

թէ ի ժամանակ<sup>15</sup> եւ ի ժամանակս եւ ի կէս ժամանակի<sup>16</sup> (ժԲ 7):

Ժամանակ, որ է<sup>17</sup> տարի մի,<sup>18</sup> ժամանակս՝ երկու տարի, կէս

<sup>1</sup> BC Եւ տեսի, եւ երկու կային աստի եւ անտի *փխ*. Եւ տեսի ... երկուքն նշանակէ

<sup>2</sup> BC կտակք

<sup>3</sup> BC արէնք

<sup>4</sup> BC մարգարէք

<sup>5</sup> BC *չիք* եւ

<sup>6</sup> BC *չիք* է

<sup>7</sup> BC հարցին երկուքն *փխ*. Եհարց ցերկուսն

<sup>8</sup> BC որ

<sup>9</sup> BC նմա

<sup>10</sup> B խորհուրդք

<sup>11</sup> B *չիք* իբր թէ

<sup>12</sup> BC *չիք* Եւ նա կամեցաւ ... յաւիտենից

<sup>13</sup> BC ամբարձել

<sup>14</sup> B յաւիտեան

<sup>15</sup> B ժամանակաց

<sup>16</sup> BC ժամանակաց

<sup>17</sup> BC *չիք* է

<sup>18</sup> BC *չիք* մի

*Ժամանակ<sup>1</sup> կէս տարի. այս է Նեոինն ժամանակն, որ է երեք տարի եւ կէս,<sup>2</sup> որ է աւուրս հազար երկու հարիւր եաւթանասուն եւ ութ<sup>3</sup>:*

[Եւ ի կատարել ցրման ձեռին ժողովորդեանն արեցելոյ, ծանիցեն զայս ամենայն]<sup>4</sup> (ժԲ 7):

*Ձեռն ցրուող Նեոն է,<sup>5</sup> ուստի ցրուին եւ փախչին եւ թաքչին ի չարէն այնքան աւուրս ի լերինս եւ յամրոցս, կամ յորժամ նորա ձեռն տիրէ, այս է՝ իշխանութիւնն, ցրուին բազումք ի պէսպէս մոլորութիւնս: Իսկ ժողովորդն սուրբ ի կատարել այսմ ամենայնի ծանիցէ զժամանակն,<sup>6</sup> այլ եւ ի հռոմայեցւոցն ցրուեցան<sup>7</sup>: [Աւրինակաւ այս է՝ ի ժամանակս Վեսպիանոսի եւ Տիտոսի հրէայքն ցրուեցան]<sup>8</sup>:*

Եւ ես լուայ եւ ոչ առի ի միտ. [եւ ասեմ՝ Տէ՛ր, զի՞նչ է վախճան այդոցիկ]<sup>9</sup> (ժԲ 8):

*Ոչ համարի նախատինք զչգիտելն, եւ կամ<sup>10</sup> վաստակ՝ զուսանելն, [յամաւթ ընդդիմակացն, որք ամաչեն ի չգիտելն եւ տաղտապին յուսանելն]<sup>11</sup>:*

Եւ ասէ. «Ե՛րթ, Դանիէ՛լ,<sup>12</sup> զի արգելեալ եւ կնքեալ [եւ բանքս մինչեւ ցժամանակ վախճանի]: *Զի հեռի են տակաւին:* Ընտրեսցիս եւ սպիտակասցիս [եւ փորձեսցիս] եւ արեսցիս բազումք (ժԲ 9):

*Բայց<sup>13</sup> նոքա են, որ<sup>14</sup> սպիտակացուցին զարկանելիս<sup>15</sup> իւ-*

<sup>1</sup> C ժամանակաց

<sup>2</sup> BC *չիք* որ է երեք տարի եւ կէս

<sup>3</sup> BC ՈՍԼԵ

<sup>4</sup> B ի կատարել ցրման նեռինն. C եւ ի կատարել ցրման ձեռինն *փիս*. եւ ի կատարել ... ամենայն

<sup>5</sup> B *չիք* է

<sup>6</sup> BC *չիք* ի լերինս եւ յամրոցս ... զժամանակն

<sup>7</sup> B ցրուեցան զաւրինակն

<sup>8</sup> BC *չիք* Աւրինակաւ ... ցրուեցան

<sup>9</sup> BC *չիք* եւ ասեմ ... այդոցիկ

<sup>10</sup> BC *չիք* կամ

<sup>11</sup> BC *չիք* յամաւթ ... յուսանելն

<sup>12</sup> BC Դանիէլ ի բաց ի խնդրելոյդ

<sup>13</sup> B *չիք* Բայց. C եւ

<sup>14</sup> BC որք

<sup>15</sup> B զարկելանիս



րեանց արեամբ Գառինն ըստ Յովհաննու՝ պէս պէս փորձանաւք զմարմինն անհետ<sup>1</sup> եւ անսպի առնել ի մեղաց, եւ արիւնն Աստուծոյ աստուածափայլ եւ ճառագայթաւէտ գործեսցէ: Կնքիւն<sup>2</sup> մինչեւ յայն է,<sup>3</sup> զի<sup>4</sup> յայտնապէս զրեցաւ ի տախտակի եւ եղաւ ի վերայ խաչին՝ Սա է թագաւոր Տրէից, ե՛լ արեգակն, ե՛լ լուսինն, ե՛լ տիեզերք վկայեցին, թէ ամենայն երկրի է Աստուած, եւ յայնմհետէ քարոզեցին Տովիւք եւ ձկնորսք եւ մաքսաւորք եւ տղայք եւ կանայք եւս:

Եւ անարիմեսցիմ [անարեւք] (ժԲ 10):

Քանզի նախ Տրէայքն անաւրիւնին),<sup>5</sup> որք ոչ ըստ աւրիւնացն<sup>6</sup> խաչեցին զՏէրն, եւ [ապա անաւրէնք անաւրիւն ի Նեռանէն]<sup>7</sup>:

Եւ ոչ առնուցում ի միտ ամպարիշտք (ժԲ 10),

եթէ նա է որդին կորստեան:

Եւ իմաստունք իմասցիմ (ժԲ 11),

զոր Տէրն յայտնեաց զիմաստուն կուսանան եւ զտնտեսն եւ զշինող տանն ի վերայ<sup>8</sup> վիմի եւ որք անարգեն զՆեռն:

Եւ զացի պղծութիւն անբաժիմ անուրս քաղար երկերիւր երեսուն եւ քինգ (ժԲ 11):

Նախասաց պղծութիւն եւ<sup>9</sup> ապականութիւն<sup>10</sup> թերեւս զպատկերն, զոր կանգնեաց Անտիոքոս, եւ զոր ինքն իսկ:

Եւ մի պղծութիւն ինքն՝ Նեռն, որ աւերեաց զերկիր աւուրս<sup>11</sup>

<sup>1</sup> BC անհոտ

<sup>2</sup> B կնքուիւն. C կնքիւն

<sup>3</sup> B մինչ ի յայն է. C մինչեւ ցայն է

<sup>4</sup> BC որ

<sup>5</sup> B անհաւան հրեայք. C հրեայքն *փիս*. անաւեւք ... անարիմիմ

<sup>6</sup> BC արիւնաց

<sup>7</sup> B կամ արեւքն անարիմիմ ի նեռնէն ամենայն արեւք. C կամ արեւքն անարիմիմ ի նեռնէն *փիս*. ապա անարեւք անարիմիմ ի նեռանէն

<sup>8</sup> BC *չիք* վերայ

<sup>9</sup> B *չիք* եւ. C ասաց պղծութիւնն *փիս*. նախասաց պղծութիւն եւ

<sup>10</sup> C ապականութեան

<sup>11</sup> B *չիք* անուրս

Հազար երկու հարիւր երեսուն եւ հինգ,<sup>1</sup> որ է<sup>2</sup> երեք տարի եւ կէս<sup>3</sup>:

Թէպէտ արեգական տարին<sup>4</sup> Հազար երկու հարիւր եաւթանասուն եւ ութ գայ,<sup>5</sup> այլ երբ լուսնովն հաշուես,<sup>6</sup> առնեն աւելի<sup>7</sup>: Եւ զպակասն<sup>8</sup> այն բերէ, զի լուսնոյ տարին երեք հարիւր յիսուն եւ չորս աւր է, եւ արեգական տարին՝ երեք հարիւր վաթսուն եւ հինգ աւր է. տասն եւ մէկ աւր պակաս է լուսնոյն, քան զարեգականն ի տարին<sup>9</sup>:

Եւ երանի, որ համբերեսցէ եւ հասցէ աւուրս հազար երեք հարիւր երեսուն եւ հինգ<sup>10</sup> (ԺԲ 12):

Ձոր եւ<sup>11</sup> Տէրն ասաց. «Որ համբերեսցէ ի սպառ, նա կեցցէ» (Մատթ. ԻԴ 13): Քանզի յայնքան աւուրսն<sup>12</sup> զերկիրն եզիպտացւոց եւ զամենայն<sup>13</sup> Լիբիա աւերէ եւ զՏիւրոս եւ զյոլով կղզիս, զԵրուսաղէմ շինէ եւ զտաճարն կանգնէ եւ զամենայն գաւառս հրէիցն ի ծառայութենէ ազատէ եւ առ ինքն ժողովէ եւ ոչ կեայ եւ ոչ մնայ<sup>14</sup> յայն, որ<sup>15</sup> նախ ասացաւ:

Եւ դու եկ եւ հանգի՛ր, զի տակաւին եմ աւուրք եւ [Ժամք ի կատարումն վախճանի, եւ հանգիցես եւ յարիցես ի ժամանակի քում] ի վախճանի աւուրց (ԺԲ 13):

Քանզի. «Մահ մարդոյ հանգիստ» (Յոք Գ 22) ասէ Յոք<sup>16</sup>:

<sup>1</sup> B ՌՄԼԵ տարի է

<sup>2</sup> C չիք որ է

<sup>3</sup> B կէսն այլ

<sup>4</sup> BC չիք թէպէտ արեգական տարին

<sup>5</sup> B գայ Գ տարի եւ կէսն

<sup>6</sup> BC չիք հաշուես

<sup>7</sup> B գաւելի

<sup>8</sup> C զպակաս

<sup>9</sup> BC չիք զի լուսնոյ տարին երեք հարիւր ... ի տարին

<sup>10</sup> BC չիք եւ հասցէ ... եւ հինգ

<sup>11</sup> C չիք եւ

<sup>12</sup> C աւուրս

<sup>13</sup> C զեզիպտոս եւ Վիս. զերկիրն եզիպտացւոց եւ զամենայն

<sup>14</sup> BC կայ եւ մնայ Վիս. կեայ եւ ոչ մնայ

<sup>15</sup> BC որպէս

<sup>16</sup> BC հանգիստ է Վիս. հանգիստ՝ ասէ Յարք

Որպէս զԴանիէլ ի բազում տեղիս այր կոչեաց եւ եկ ասաց. զի առ Աստուած գնալ է սրբոցն մահ, որպէս ասէր Պաւղոս.<sup>1</sup> «Ցանկամ ելանել ի մարմնոյ աստի եւ լինիլ ընդ Քրիստոսի»<sup>2</sup> (հմմտ. Փիլիպ. Ա. 23):

Եւ թագաւորն Աստիագէս յարեալ,<sup>3</sup> որ զկնի Դարեհի ունէր զմարս եւ զԲաբելոն, մեռաւ նա,<sup>4</sup> եւ էառ<sup>5</sup> զթագաւորութիւնն Կիւրոս առանց<sup>6</sup> մեծ պատերազմի, որպէս կանխաւ ասաց Երեմիա, զոր համառաւտ անցանէ Դանիէլ՝ ժամանակն<sup>7</sup> յայտնելով եւ պատճառ իւրում առաքինանալոյն: Էր կուռք մի, եւ թագաւորն պաշտէր եւ զայնքան ռոճիկն տայր ի կերակուր. խաբելիք ոմանց,<sup>8</sup> զոր յայտնեաց Դանիէլ, թէ չէ կենդանի եւ<sup>9</sup> կաւ եւ պղնձի է:<sup>10</sup> զի Կիւրոս, զոր գիտէր, թէ Նաբուքոդոնոսոր արար պատկեր Բելայ, զայն քակեաց, եւ զայնմանէ ասէին, թէ անարար է եւ զոհս եւ նուէրս ուտէ եւ ըմպէ. զոր իմաստութեամբ խայտառակեաց Դանիէլ, զի Աստուածն յաւիտենից կենդանին ո՛չ ուտէ եւ ո՛չ ըմպէ,<sup>11</sup> զի ոչ քաղցնու, եւ անեղ է եւ արարիչ ամենայնի, որ յատկութիւն է Աստուծոյ.<sup>12</sup> Քանզի. «Աստուածք, որ զերկինս եւ զերկիրս<sup>13</sup> ոչ արարին, կորիցեն» (Երեմ. Ժ 11) ասէ մարգարէն,<sup>14</sup> որպէս եւ կորոյս Դանիէլ՝ զԲէլ, եւ թագաւորն՝ զպաշտաւնեայս նորա, եւ փառաւորեցաւ Աստուած եւ զփառաւորիչս իւր փառաւորեաց, այսինքն<sup>15</sup> զԴանիէլ:

<sup>1</sup> BC ըստ Պաւղոսի *փիս*. որպէս ասէր Պաւղոս

<sup>2</sup> BC լաւ համարիմ ելանել ի մարմնոյ եւ ընդ Աստուծոյ լինել *փիս*. ցանկամ ... Քրիստոսի

<sup>3</sup> BC *չիք* յարեալ

<sup>4</sup> BC *չիք* նա

<sup>5</sup> B առ

<sup>6</sup> BC ոչ առանց

<sup>7</sup> BC ժամանակ

<sup>8</sup> BC խաբեալ ի քրմացն *փիս*. խաբելիք ոմանց

<sup>9</sup> C այլ

<sup>10</sup> BC պղինձ է

<sup>11</sup> B չուտէ եւ ըմպէ *փիս*. ոչ ուտէ եւ ոչ ըմպէ

<sup>12</sup> BC Աստուծոյ է *փիս*. է Աստուծոյ

<sup>13</sup> B զերկինք եւ զերկիր. C զերկինս եւ զերկիր *փիս*. զերկինս եւ զերկիրս

<sup>14</sup> BC *չիք* ասէ մարգարէն

<sup>15</sup> BC *չիք* այսինքն

[Եւ էր վիշապ մի մեծ, եւ պաշտէին զնա բաբելոնացիքն (ժԴ 22):

*Ոմանք ասեն, թէ պարսից էր վիշապն պաշտելի, եւ յետոյ*<sup>1</sup> *անմտութեամբ պաշտէին քաղղէացիքն, եւ համբաւէին զՅովնանու*<sup>2</sup> *վիշապէն, եթէ նա ուսոյց բանականութիւն եւ զամենայն արուեստից*<sup>3</sup> *եւ լեզուաց ճարտարութիւն, եւ խաբէին զթագաւորն այսպէս*<sup>4</sup>: *Եւ նա զԴանիէլ ողորէր վասն սիրոյն, որ առաւել սիրէր զնա, իբրեւ զկենաց*<sup>5</sup> *կցորդ, եւ ասէր. «Ահա դա կենդանի է»*<sup>6</sup> *եւ ուտէ եւ ըմպէ»*<sup>7</sup>: *Եւ*<sup>8</sup> *ասէ՝*

Եւ Տեառն Աստուծոյ իմոյ երկիր [պագաւնեմ], զի նա է Աստուած կեանքանի (ժԴ 24):

*Եւ չէ առեալ յումեքէ զկեանս, եւ չէ հնար ի բաց զնելոյ զյաւիտենական կենդանութիւնն: Իսկ վիշապը նորա արարած է եւ թշնամի եղեւ պատկերին Աստուծոյ՝ բնակարան եղեալ*<sup>9</sup> *սատանայի, եւ անիծաւ*<sup>10</sup> *եւ թէ չհաւատաս, տուր*<sup>11</sup> *հրաման սպանանել զնա*<sup>12</sup> *կերակրով, որպէս նա*<sup>13</sup> *զմեզ առանց սրոյ: Եւ առեալ հրաման Դանիէլ*<sup>14</sup> *սպասեաց*<sup>15</sup> *գլխոյն եւ*<sup>16</sup> *երեք նիւթով արարեալ զնդակս՝ ճիւթ եւ ճարպ եւ մազ. զճարպն խանձ արար ճիւթոյն եւ մազին, զոր չէր սովոր ուտել, եւ առժամայն հեղձաւ*<sup>17</sup> *զաւրինակ*

<sup>1</sup> BC որ եւ զվիշապն գոր *փխ*. Եւ էր վիշապ ... յետոյ

<sup>2</sup> B գովան. C Յովան

<sup>3</sup> BC արուեստ

<sup>4</sup> BC *չիք* այսպէս

<sup>5</sup> C կենաց

<sup>6</sup> C կենդանի *փխ*. դա կենդանի է

<sup>7</sup> B ըմպէ յաւտնկան

<sup>8</sup> BC եւ նա

<sup>9</sup> C եղեւ

<sup>10</sup> B եւ անիծաւ եւ հրաման տուաւ մեզ սպանանել եւ ոչ պաշտել. C եւ անիծաւ եւ հրամայեցաւ սպանանել եւ ոչ պաշտել

<sup>11</sup> C տուր ինձ

<sup>12</sup> BC զդա

<sup>13</sup> C դա

<sup>14</sup> BC *չիք* Դանիէլ

<sup>15</sup> C սպասել

<sup>16</sup> BC եւ մատեաւ

<sup>17</sup> BC *չիք* եւ առ ժամայն հեղձաւ

Տեառն Աստուծոյ իւրոյ նկարելով, որ զբնութիւնս առեալ՝ հոգի եւ<sup>1</sup> միտք եւ մարմին, խանձ, որով սովորաբար<sup>2</sup> սատանայ կերակրէր եւ ընոյր զդժոխս, յորմէ խաբեալ՝ ձեռն արկանէր<sup>3</sup> հրէիւքն սպանանել զնա. իսկ նա յաւանդել հոգւոյն պատառէր զորովայն նորա՝ զգժոխս, եւ գյառաջագոյն կլեալսն ազատէր ի նմանէ՝ աստուածացեալ մարմնովն յառնելով յաւուր երրորդի<sup>4</sup> անխախուս եւ կնքեալ թողով զգերեզմանն՝ վկայ կուսական եւ աստուածեղէն ծննդեանն, զորոյ<sup>5</sup> ոչ իմացեալ<sup>6</sup> զխորհուրդն՝ արմատացեալք ի չարն: Բաբելոցիք աւր մի ընտրեն, յոր չկային<sup>7</sup> զաւրք առ թագաւորն եւ չէին առ նա. մեծամեծքն իւր կուտեցան ի վերայ եւ ասեն սպառնալով՝

Տո՛ւր մեզ ի ձեռս<sup>8</sup> զԴանիէլ, ապա<sup>9</sup> թէ ոչ (ԺԴ 28)

եղեր հրէայ իբրեւ զնա: Տո՛ւր ի մեզ, զի սպանցուք, ապա թէ ոչ, դու եւ նա մեռանիք:

Եւ թագաւորն զարհուրեալ, միանգամայն եւ յԱստուածն Դանիէլի ապսպրեալ<sup>10</sup> գինքն՝

ի ձեռս ետ նոցա զԴանիէլ<sup>11</sup> (ԺԴ 29):

Ի նմին<sup>12</sup> ժամու արկին<sup>13</sup> զնա ի գուբն առիւծուց<sup>14</sup> կամելով չարամահ առնել զնա, զվեց<sup>15</sup> աւր պահելով անդ<sup>16</sup> ի մէջ եաւ-

<sup>1</sup> BC չիք եւ

<sup>2</sup> B գոր սովորաբար որով *փիս*. որով սովորաբար

<sup>3</sup> C արկեր

<sup>4</sup> BC չիք յաւուր երրորդի

<sup>5</sup> BC գոր

<sup>6</sup> C իմացեալք

<sup>7</sup> BC որ չկայր *փիս*. յոր չկային

<sup>8</sup> B ի մեզ. C չիք մեզ ի ձեռս

<sup>9</sup> BC չիք ապա

<sup>10</sup> B ապաւինեալ. C ապաստանեալ ապրեցուցանել *փիս*. ապսպրեալ

<sup>11</sup> B տայ զինքն ի ձեռս նոցա. C տայ ի ձեռս նոցա *փիս*. զինքն ի ձեռս ետ նոցա զԴանիէլ

<sup>12</sup> B եւ ի նմին

<sup>13</sup> BC արկանեն

<sup>14</sup> C գուբ առիւծուցն *փիս*. գուբն առիւծուց

<sup>15</sup> C վեց

<sup>16</sup> BC չիք անդ

Թանց<sup>1</sup> առիւծուցն,<sup>2</sup> չտալով զսովորական ռոճիկն, զի վաղվաղակի կերիցեն զնա:

Կրկին է այս Դանիէլի արկանիլ<sup>3</sup> ի գուրն<sup>4</sup> առիւծուց յաւրինակ Տեառն.<sup>5</sup> զի Տէրն կրկին ի<sup>6</sup> գուր եմուտ. հոգւովն էջ ի դժոխս, մարմնովն՝ ի գերեզմանի,<sup>7</sup> ըստ այնմ.<sup>8</sup> «Ոչ թողաւ ոգի նորա ի դժոխս, եւ ոչ մարմին նորա ետես զապականութիւն» (Սաղմ. ԺԵ 10, Գործք Բ 31):

Որ եւ քան զառիւծ ահագինք էին մահն եւ ապականութիւնն,<sup>9</sup> որք չկարացին զատամունս<sup>10</sup> մերձ տանել ի նա, որոյ ստուերագրութիւնն էր<sup>11</sup> Դանիէլին:

Ջառաջինն թագաւորն կնքեաց մատանեալ,<sup>12</sup> զի մի՛ արտաքուստ դժրիցի,<sup>13</sup> եւ աստ ոչ մատանի, զի յարտաքուստ դժրանացն<sup>14</sup> զսուր եւ զքար յինքեանս առնելով,<sup>15</sup> թէ յանդգնէին բնաւ. անդ աւր մի եկաց, «Զի հազար ամ յաչս Տեառն իբրեւ աւր մի»<sup>16</sup> (Սաղմ. 2Թ 4), յորում մեռաւ Ադամ, եւ զոգին ոչ կարաց<sup>17</sup> սպանանել մահն, զի կիսապատիժ եղեւ<sup>18</sup> բնութիւնս գթութեամբ Տեառն, որ ոչ արար<sup>19</sup> լրմամբ զպատուհասն, թէ՛ «Յորում աւուր ուտիցէք ի նմանէ,<sup>20</sup> մահու մեռանիցիք»<sup>21</sup> (Մանդ. Բ 17):

<sup>1</sup> BC վեցից

<sup>2</sup> B առեւծուց

<sup>3</sup> BC արկանել

<sup>4</sup> BC ի գուր

<sup>5</sup> BC չիք յաւրինակ Տեառն

<sup>6</sup> BC ի կրկին *փխ.* կրկին ի

<sup>7</sup> BC չիք հոգւովն էջ ... ի գերեզմանի

<sup>8</sup> B գի. C եւ

<sup>9</sup> BC մահ եւ ապականութիւն *փխ.* մահն եւ ապականութիւնն

<sup>10</sup> BC զատամունս իւրեանց

<sup>11</sup> BC ստուերագրութիւնն էր

<sup>12</sup> B մատանեալ կնքեաց. C մատնեաց *փխ.* կնքեաց մատանեալ

<sup>13</sup> B դրժիցի

<sup>14</sup> BC դրժանացն առեւծքն պահէին

<sup>15</sup> BC առնելով

<sup>16</sup> B մի է. C զար մի

<sup>17</sup> C կարացին

<sup>18</sup> B եղաւ

<sup>19</sup> B չարար *փխ.* ոչ արար

<sup>20</sup> B ուտիցես. C ուտիցէք *փխ.* ուտիցէք ի նմանէ

<sup>21</sup> B մեռանիցիս

Եւ աստ վեց աւր եկաց ի մէջ եաւթանց առիւծուց<sup>1</sup> զվեց դարն նշանակելով,<sup>2</sup> յորում յամեաց ի դժոխս բնութիւնս վեցաւրեայ արարած,<sup>3</sup> զի ապականեցաւ վեց շարժամբ. իսկ Դանիէլ, զի ի բարին ունէր զշարժումն,<sup>4</sup> անապական մնաց յառիւծուցն, որպէս Անանիանքն՝ ի հրոյն, եւ Պաւղոս՝ յիժի խածանելոյն<sup>5</sup> (տե՛ս Գործք ԻԸ 3-5):

Զի<sup>6</sup> զոր Ադամայ ետ զշնորհն եւ յետ մեղանացն էառ զնոյնն, եւ<sup>7</sup> յանմեղ մնացեալ որդւոցն ոչ արգել, այլ<sup>8</sup> իշխել արարածոցս՝ եւ<sup>9</sup> բոլորից,<sup>10</sup> եւ՝ մասանց, իբրեւ Մովսիսի եւ Եղիայի եւ Յեսուայ եւ Եզեկիայ: Ի վեց դարուն<sup>11</sup> եկն Տէրն եւ զհոգիսն ազատեաց, եւ յեաւթան<sup>12</sup> աւարտմանն գայ,<sup>13</sup> զմարմինն փրկէ եւ ազատէ զհրաւիրեալս<sup>14</sup> ի գուբս հողոյ, ըստ առաքելոյ, թէ՛<sup>15</sup> «Ակն ունիմք փրկութեան մարմնոյ, զի դեռ յուսով եմք ապրեալ» (Ռմմտ. Հոռմ. Ը 23-24): Յորում շաբաթանայ բազմավաստակ մարմինս<sup>16</sup> ի կեանսն<sup>17</sup> յաւիտենականս, ուստի մերժեալ են ցաւք եւ տրտմութիւնք<sup>18</sup>:

Իսկ Ամբակումայ տանել<sup>19</sup> ճաշ Դանիէլի<sup>20</sup> հրաշիւք եւ փութով դառնալն զփութով դարձն հրէիցն<sup>21</sup> նշանակէր ի Բաբելոնէ, զի այն, ինչ թագաւորեալ Կիւրոս հրաման տայր

<sup>1</sup> B վեցից առիւծուց. C վեցից առիւծուցն *փխ.* եաւթանց առիւծուց

<sup>2</sup> BC նշանակեալ

<sup>3</sup> B արարածն

<sup>4</sup> C գիտարժումնն

<sup>5</sup> BC յիժէն *փխ.* յիժի խածանելոյն

<sup>6</sup> C *չիք* Զի

<sup>7</sup> B *չիք* եւ

<sup>8</sup> BC եւ

<sup>9</sup> BC *չիք* եւ

<sup>10</sup> C բոլորիցս

<sup>11</sup> B դարին

<sup>12</sup> BC յեւթանն

<sup>13</sup> C աւարտման *փխ.* աւարտմանն գայ

<sup>14</sup> BC զիրաւիրեալսն

<sup>15</sup> BC եթէ

<sup>16</sup> B մարմնոյս

<sup>17</sup> C կեանս

<sup>18</sup> BC տրտմութիւնք եւ հեծութիւնք

<sup>19</sup> BC տանելն

<sup>20</sup> C ի գուբն *փխ.* Դանիէլի

<sup>21</sup> BC հրէից

յամենայն երկիր<sup>1</sup> եւ ոչ ի Բաբելոնէ միայն<sup>2</sup> արձակել զգերին<sup>3</sup>: Այլ եւ զհրաշիւք յափշտակելն արդարոց ի ձեռն հրեշտակաց<sup>4</sup> ամպովք<sup>5</sup> ի հանդիպումն Տեառն անցաւելի եւ լի զարմացմամբ: Առնոյր Դանիէլ զկերակուրն եւ գոհանայր՝ ասելով.

«Յիշեցեր զիս, Աստուած, եւ ոչ ընդվայր հարեր զսիրելիս քո» (ԺԴ 37):

Յիշեցեր զիս, ասէ,<sup>6</sup> զի վասն քո եղի<sup>7</sup> զանձն իմ ի մահ. եւ<sup>8</sup> թէպէտ խնամես զտիեզերս, սակայն<sup>9</sup> եւ զմինս ոչ մոռացար զսիրելիս քո,<sup>10</sup> զի սիրեմ զքեզ. որպէս<sup>11</sup> ասացեր, թէ<sup>12</sup> «Որ զիսն սիրեն, սիրեմ եւ ես»<sup>13</sup> (Առակ. Ը 17):

Եւ ոչ ընդ վայր հարեր, ըստ Դաւթայ, թէ<sup>14</sup> «Ոչ ընդ վայր հարկանէ զսուրբս իւր,<sup>15</sup> այլ յաւիտեան պահէ զնոսա»<sup>16</sup> (Սաղմ. Լ, 28): [Զի թէպէտ տայ ի հարուածս զսուրբս, այլ ոչ վայրապար],<sup>17</sup> զի<sup>18</sup> հարկանելով զսուրբս՝ մեծամեծ ուղղութիւնս եւ աւգուտս<sup>19</sup> առնէ աշխարհի: Որպէս եւ անդ յաւուրն եաւթներորդի գայր թագաւորն աշխարել զԴանիէլ, զի թերեւս գտցէ ինչ ի նշխարացն եւ թաղեսցէ պատուով. ի նշանակ, զի ի վեց դարուն եկն Տէր եւ զհոգիսն ազատեաց,<sup>20</sup> եւ եգիտ զերանելին,<sup>21</sup> զի կայր կերակուրն ի

<sup>1</sup> B ընդ յամենայն երկիր. C յամենայն երկրի. *փիս*. յամենայն երկիր

<sup>2</sup> BC միայն ի Բաբելոնէ *փիս*. ի Բաբելոնէ միայն

<sup>3</sup> B արձակեալ. C արձակել *փիս*. արձակել զգերին

<sup>4</sup> B հրեշտակաց զարդարքն *փիս*. արդարոց ի ձեռն հրեշտակաց

<sup>5</sup> C *շիք* ամպովք

<sup>6</sup> BC *շիք* զիս ասէ

<sup>7</sup> B եղիիր

<sup>8</sup> C *շիք* եւ

<sup>9</sup> BC *շիք* սակայն

<sup>10</sup> BC *շիք* զսիրելիս քո

<sup>11</sup> BC որ

<sup>12</sup> BC *շիք* թէ

<sup>13</sup> BC *շիք* եւ ես

<sup>14</sup> B զի ըստ սաղմոսին Դաւթայ. C զի ըստ սաղմոսին, որ ասէ *փիս*. ըստ Դաւթայ թէ

<sup>15</sup> BC զսուրբս իւր հարկանէ այլ ոչ ընդ վայր

<sup>16</sup> BC նոցա հատուցումն

<sup>17</sup> BC *շիք* Զի թէպէտ տայ ի հարուածս զսուրբս՝ այլ ոչ վայրապար

<sup>18</sup> BC եւ

<sup>19</sup> B աւգուտ. C աւգուտ եւ ուղղութիւն

<sup>20</sup> BC *շիք* զԴանիէլ, զի թերեւս գտցէ ... ազատեաց

<sup>21</sup> BC երանելի



մէջ կերողաց առիւծուցն ճաշ կերեալ եւ ի նշխարաց<sup>1</sup> զնոսին<sup>2</sup> կերակրեալ,<sup>3</sup> իբրեւ տէր զձեռասուն շունս,<sup>4</sup> եւ<sup>5</sup> նոքաւք զոհացեալ՝ նստեալ<sup>6</sup> զուարթ երեսաւք: Եւ զաչս ի<sup>7</sup> յերկինս համբարձեալ՝<sup>8</sup>

աղաղակեաց<sup>9</sup> ի ձայն մեծ (ԺԴ. 39)

առ ամենամեծն Աստուած ոչ ցած եւ<sup>10</sup> երկչոտ բարբառով ի բարեւաջլոցն եւ յայլոց<sup>11</sup> երկրպագուացն դիւաց,<sup>12</sup> այլ մեծաւ ձայնիւ,<sup>13</sup> եւ ոչ ասաց միայն, թէ՛

Մեծ ես, Տէ՛ր Աստուած Դանիէլի, եւ դադարեաց,<sup>14</sup> այլ թէ՛ եւ<sup>15</sup> չի՛ք այլ<sup>16</sup> ոք, բաց ի քէն (ԺԴ. 40),

որ հաւասարի մեծութեան քո,<sup>17</sup> որպէս եւ ինքն ի բազում տեղիս եւ ի գիրս վկայեաց, թէ՛<sup>18</sup> «Ես եմ, եւ չիք ոք այլ<sup>19</sup> աստուած, բաց յինէն»<sup>20</sup> (Տմմո. Ելք Ի 2):

Եւ էառ<sup>21</sup> զնա ի վեր (ԺԴ. 41):

Ինքն<sup>22</sup> իսկ իւրովք ձեռաւք,<sup>23</sup> իբրեւ զկարաւտեալ եւ յոյժ

<sup>1</sup> BC նշխարացն

<sup>2</sup> BC չիք զնոսին

<sup>3</sup> C կերակրեալ զնոսս

<sup>4</sup> C շուն

<sup>5</sup> C չիք եւ

<sup>6</sup> BC նստեր

<sup>7</sup> B չիք ի

<sup>8</sup> C համբարձեալ թագաւորին *փիս*. համբարձեալ

<sup>9</sup> B եւ աղաղակեաց

<sup>10</sup> B եւ ոչ

<sup>11</sup> C յայլ

<sup>12</sup> C դիւացն

<sup>13</sup> BC չիք այլ մեծաւ ձայնիւ

<sup>14</sup> BC չիք եւ դադարեաց

<sup>15</sup> BC չիք եւ

<sup>16</sup> BC չիք այլ

<sup>17</sup> BC չիք որ հաւասարի մեծութեան քո

<sup>18</sup> BC չիք թէ

<sup>19</sup> BC այլ ոք *փիս*. ոք այլ

<sup>20</sup> B ի քէն *փիս*. յինէն

<sup>21</sup> B առ

<sup>22</sup> BC չիք ինքն

<sup>23</sup> BC իւրովք իսկ ձեռաւքն *փիս*. իսկ իւրովք ձեռաւք

զուարճացեալ ի վերայ նորահրաշն<sup>1</sup> զարմանալեաց<sup>2</sup> ոչ ինչ պակաս, քան զՅովնանուն<sup>3</sup>:

Զի ամենայն ինչ հնարաւոր է Տեառն Աստուծոյ ամենաստեղծ, ամենակերակրող,<sup>4</sup> ամենասնոյց,<sup>5</sup> ամենակեցոյց եւ ամենափրկիչ ձեռացն եւ ամենակալ եւ յամենայնի հզաւր<sup>6</sup> բազկացն Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ աւրհնելոյն յաւիտեանս<sup>7</sup>:

Եւ զվնասակարս կորստեան նորա արկին ի գութն, եւ գէշ գէշ պատանեցան նոյն ժամայն առաջի նորա (ԺԴ 41):

Զաւրինացն կատարեաց զհրաման, թէ՛ «Որ փորէ ընկերի իւրում խորխորատ, անձամբ լցցէ զնա»<sup>8</sup> (Առակ. ԻԶ 27): Զի թագաւորն ի նոյն Տեառնէ Աստուծոյ աւժանդակեալ եւ ոչ զարհուրեալ ի նոցանէ, որք մահ<sup>9</sup> սպառնային, հրամայեաց<sup>10</sup> արկանել զվնասակարս կորստեանն Դանիէլի ի գուբն առիւծուց՝ ասելով, թէ՛ «Աստուածքն, զոր պաշտէիք եւ որոց վրէժխնդիր լինէիք, եկեսցեն եւ փրկեսցեն զձեզ», այսինքն՝ Բէլն եւ վիշապն, որպէս Աստուածն Դանիէլի՝ զԴանիէլ<sup>11</sup>:

Եւ կաց եւ<sup>12</sup> մնաց թագաւորն ի վերայ գբոյն, մինչեւ զամենայն<sup>13</sup> գէշ գէշ պատառեցին առաջի նորա. եւ այնպէս չարքն չարեաւ կորուսեալ՝ բարձան ի միջոյ՝ ի խրատ եւ ի զգուշութիւն այլոց<sup>14</sup>:

<sup>1</sup> BC նորահրաշ

<sup>2</sup> B զարմանալեացն

<sup>3</sup> B զՅովնանունն

<sup>4</sup> B ամենակերակրիչ

<sup>5</sup> C չիք ամենասնոյց

<sup>6</sup> C ամենահզաւր Վիս. յամենայնի հզաւր

<sup>7</sup> B փառք յաւիտեանս ամէն

<sup>8</sup> BC չիք եւ զվնասակարս կորստեան ... գնա

<sup>9</sup> B մահու

<sup>10</sup> BC եւ թագաւորն հրամայեաց Վիս. զի թագաւորն ... որք մահ սպառնային, հրամայեաց

<sup>11</sup> BC թոյ գայ Բէլ եւ վիշապն փրկել զձեզ Վիս. թէ աստուածքն ... գԴանիէլ

<sup>12</sup> BC չիք եւ

<sup>13</sup> B զամէնն. C զամենայնն

<sup>14</sup> BC չիք եւ այնպէս չարքն չարեաւ ... այլոց

## [Յիշատակարան հեղինակի գրոյս]

Եւ մեք,<sup>1</sup> Եւրհնելով եւ փառաւորելով զԱստուածն յաւիտենից Դանիէլիւ հանդերձ ընդ ամենայն<sup>2</sup> սուրբս եւ ընդ ամենայն արարածս,<sup>3</sup> Եւրհնեսցուք<sup>4</sup> յաւիտեան,<sup>5</sup> զի հասաք ի տեղիս, որ ասէ. «Կատարեցաւ մարգարէութիւնն Դանիէլի», ոչ միայն մատեանք գրոցս, այլ եւ բանք մարգարէութեանս, զի դարձաւ, ասէ,<sup>6</sup> գերին, եւ եկն Տէրն՝ վէմն հատեալ առանց ձեռին ըստ լրման եաւթներորդացն, եւ միշտ կատարի ի վերայ ամենայն ժամանակաց, մինչեւ ի գալ Նեոինն եւ ի<sup>7</sup> Տեառն Աստուծոյ մերոյ յերկրորդ<sup>8</sup> անգամ գալուստն յերկնից,<sup>9</sup> որպէս ետես ըստ նմանութեան որդւոյ մարդոյ եկեալ ընդ ամպս երկնից<sup>10</sup>:

Յորում եւ<sup>11</sup> սուրբք<sup>12</sup> զարքայութիւնն Աստուծոյ ժառանգեն եւ երգեն զբան մարգարէիս,<sup>13</sup> եթէ՛ «Կատարեցաւ մարգարէութիւնն Դանիէլի՛ մարդոյն Աստուծոյ եւ<sup>14</sup> ցանկալւոյն Հոգւոյն Սրբոյ եւ Հրեշտակաց եւ սրբոց Աստուծոյ, որ է Եւրհնեալ յաւիտեանս. ամէն<sup>15</sup>:

Եւ ինձ իսկ՝ անարժանիս, եղեւ բաղձալի փոքր-ինչ վաստակել ի բանս նորա գարբոցն խաւսս վասն գրոց նորայ դնել առ իրեարս, յորոց շատ մնացեալ լինի ի յուով հոգւոց իմոց եւ ի ցնորից, եւ զոր չէին առեալ ի մեկնութիւն յայնց բանից, դնէաք

<sup>1</sup> BC չիք եւ մեք

<sup>2</sup> BC եւ յամենայն *փիս*. ընդ ամենայն

<sup>3</sup> B յարարածս. C յամենայն արարածս *փիս*. ընդ ամենայն արարածս

<sup>4</sup> B մեք Եւրհնեսցուք. C եւ մեք Եւրհնեսցուք

<sup>5</sup> B յաւիտեանս յաւիտենից

<sup>6</sup> BC չիք ասէ

<sup>7</sup> BC չիք ի

<sup>8</sup> B երկրորդ. C երկրորդ անգամ իբրեւ Որդի մարդոյ եւ համբառնալն

<sup>9</sup> BC չիք գալուստն յերկնից

<sup>10</sup> BC իբրեւ էր որդին մարդոյ ի համբառնալն, որ եւ անդ ասի *փիս*. որպէս ետես ըստ ... երկնից

<sup>11</sup> B Յորում. C որ եւ անդ ասի, յորժամ *փիս*. Յորում եւ

<sup>12</sup> C սուրբքն

<sup>13</sup> BC չիք եւ երգեն զբան մարգարէիս

<sup>14</sup> BC չիք եւ

<sup>15</sup> BC չիք որ է Եւրհնեալ ... ամէն:

լուծմունս եւ շատս թողուաք՝ վասն ձանձրանալոյ զբնաբանն չգրելով:

Եւ յաղագս ամենեցունց երկնչիմ եւ խնդրեմ ներումն եւ թողութիւն եւ ողորմութիւն յԱստուծոյ եւ յիւրմէն եւ ի սուրբ հրեշտակաց եւ յեղբարցդ եւ յորդոցդ, որք պատահէք, չբարկանալ մերում համարձակութեանս՝ պատճառ ունելով մեր գոյսն եւ գսէրն, որ առ Աստուած, ի սուրբն իւր Աստուծոյ, որ միայն յԱստուած նայելով եւ ի մեզ բարի կամաւք. հաւատամք սրբիլ եւ հաճոյ երեւիլ Աստուծոյ եւ սուրբ եկեղեցոյ ամալթովս եւ անհաճոյս, որքան յինէնէ:

Այլ եւ եղբայրն Գրիգոր վարդապետն Սանահնեցին շատ հարկեաց եւ աճեցոյց գոյսն իմ ի Քրիստոս եւ ի Դանիէլ, որ զայն աստուածաբանեաց եւ կանխաւ գուշակեաց՝ կրելով զնա անարատ ոգոջն:

Եւ սկսաք ՉԺՁ թուին ի սուրբ վիրապին, եւ կատարեցաւ ՉԺէ առաջի սուրբ եւ փառաւորեալ նահատակիս սուրբ Ստեփանոսի ի սուրբ ուխտս Աղչոց վանիցս, յառաջնորդութեան Երեմիա գովելի ասպնջականիս եւ գոհանալի եղբարց: Աղաչեմ զամենեւեան սիրովն Քրիստոսի զպատահեալսդ՝ ներել սխալանացն մեր յամենայն իրս եւ ի գիրս յայս եւ խնդրել յԱստուծոյ մեզ ողորմութիւն եւ թողութիւն մեղաց, եւ ամենայն երախտաւոր պարոնացն՝ Սաղունին, Սմբատա, Քրդին, Պռաւշոյ եւ ամենայն բնակչաց երկրիս եւ եղբաւր իմոյ Ներսէս վարդապետին, որ եւ զնա աշխատեցաք ի գիրս. եւ ակրհնեալ է Քրիստոս Աստուած ի սուրբս իւր եւ յարարածս ի բոլոր եւ ի մասնաւորսն ընդ Հաւր եւ Ամենասուրբ Հոգւոյն յաւիտեանս. ամէն:

Ձբագմագան եւ զարի երջանիկ վարդապետն զպատուեալն ծերութեամբ ի հինաւորցն ակրհնելոյն զԳրիգորի[ո]ս զստացաւդ սուրբ մատենիս, աշակե'րտք բանին ճշմարտութեան, յիշեալիք անմոռաց առաջի զենլոյն Քրիստոսի ի ժամ սոսկալի բաշխմանն, եւ Աստուած յիշողացդ ողորմեսցի յիւրում գալստեանն, որ է ակրհնեալ յաւիտեանս. ամէն:

[ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ԵԶՆԿԱՑԵՑԻՈՅ (ԾՈՐԾՈՐԵՑԻՈՅ)  
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԴԱՆԻԷԼԻ]  
[ԺԳ]

Եւ ի վաղիւ անդր իբրեւ եկն ժողովորդն առ այրն Աորա Յովակիմ, եկին եւ երկորքիւ ծերքն անաւրէն մտաւք զՇուշանայ սպանանել զնա (ժԳ 27-28).

*Աստ զԱստուծոյ երկայնատուութիւն ցուցանէ եւ զշնաբարւոյ ծերոցն՝ անզղջութիւն, զի կարաւ չր Աստուած յայն ժամու, յորում ըմբռնեցին զՇուշան, պատժել զնոսա, բայց զի ներեաց, զի սոքա զղջասցին եւ նորա առաքինութիւն հրապարակատես լիցի: Իսկ որովհետեւ ոչ զղջացան, այլ յորժամ եկին<sup>1</sup> ժողովուրդն առ Յովակիմ, ըստ սովորութեան աւուրցն ժողովոյ կամ քննել զիրն կամ մխիթարել զծաւղսն եւ զայրն, եկին եւ ծերքն արտաքոյ աւրինացն՝ վկայել սուտ զՇուշանայ եւ զանբիծն սպանանել, զի ոչ բաւականացան ցանկութեամբն, այլ եւ արեամբն յագիլ կամեցան:*

Եւ ասեմ առաջի ժողովրդեանն յղեցէք զՇուշանա գոստեր Քեղկեա, որ է կին Յովակիմայ: Եւ Աորա յղեցին (ժԳ 29).

*Իբր դատաւոր հրամանաւ վարեցան, որպէս թէ արդարք իցեն յայտնի քննութենէս է: Բայց զի զծնաւդացն եւ զանուն առն ի մէջ բերեն, թերեւս գոյր այլ կին, յորում Շուշան կոչէին, զնա զատուցին:*

Եւ եկն նա եւ ծնաւդք իւր եւ որդիք իւր եւ ամենայն ազգականք Աորա (ժԳ 30).

Եկն նա, զի ոչ գիտէր խիղճ զանձնէ, զի արդար իբրեւ զառիւծ յանձնապաստանէ գրել: Իսկ ազգականքն ըստ բնութեան վշտակցէին, ըստ այնմ. «Եթէ եղբայր քո ի վիշտս երեւիցի»:

Եւ Շուշան էր փափուկ յոյժ եւ գեղեցիկ տեսւեամբ (ժԳ 31).

---

<sup>1</sup> Եկին՝ լուսանցից՝ ուղղման նշանով:

*Զի ոգւոյն առաքինութիւն, որ բնութեամբ գեղեցիկն է եւ փափկասունն ի մարմինն փայլեալ ծաղկէր, ըստ այնմ՝ «Սրտի բերկրեցելոյ երեսք զուարթ» (Առակ. ԺԵ 13).*

(305բ) Եւ անարէնքն հրամայեցին հոլանի առնել զնա, քանզի սքողեալ էր: Եւ իորքն լային եւ ամենեքեան //, որ ճանաչէին զնա (ԺԳ 32-33).

*Յայսպիսի աղէտաշարժ<sup>1</sup> ժամու, յորում ամենեքեան լային վասն զուր դատելոյն զնա: Նոքա զախտս իւրեանց յայտնէին, որպէսզի տեսցեն աչաւք եւ շնասցեն սրտիւք, «զնա հոլանի առնէին»<sup>2</sup> եւ զպատկառանս նորա բանալով լցին զանձինս իւրեանց «յաւիտենական ամաւթովն»<sup>3</sup>:*

Յարեան երկոքին ծերքն ի միջոյ ժողովրդեանն եւ եղին զձեռս իւրեանց ի վերա գլխոյ նորա (ԺԳ 34).

*«Եւ այս եւս ախտիւ թէպէտ ըստ աւրինացն ձեւացուցանէին, որ ասէր, թէ գիտակքն մեղաց դիցեն զձեռս ի վերայ յանցաւորին, որպէս ի վերայ զոհին՝ խոստովանէին զմեղս իբրեւ թէ այն զոհ է Աստուծոյ, որ ոչ թաքուցանէ զյանցաւորն ի քաւի վասն այսորիկ: Եւ դարձեալ՝ թէ սուտ վկայէ՝ ինքն լիցի արիւնապարտ, որպէս դիպեցաւ սոցա ի յասելն զբանս կարկատունս»<sup>4</sup>:*

Եւ նա լալով հայեցաւ յերկինս, քանզի էր սիրտ նորա յուսացեալ ի Տէր (Գ 35).

*Ի Տէր յուսայր, որում չէր բնաւ մեղուցեալ եւ «յերկինս հայէր»<sup>5</sup>, զի անտի զաւգնութիւն յուսայր առնուլ, ուստի ոչ ամաչեաց: Եւ այլ ազգ ոչ միայն աչաւք հայէր, այլ եւ զսիրտն եւս անդ էր եղեալ:*

Ասեմ ծերքն երկոքին (ԺԳ 36).

*Որպէս ի գործսն էին միաբանեալ, սոյնպէս եւ ի բանս, զորս բաժանեաց ի միմեանց մարգարէս:*

<sup>1</sup> Չիք ՆԲԳ:

<sup>2</sup> Վարդան, 244բ:

<sup>3</sup> Վարդան, 244բ:

<sup>4</sup> Վարդան, 244բ:

<sup>5</sup> Անդ:

Մինչդեռ մեք միայն զգնայաք ի մէջ բուրաստանին, եմուտ դա անդ երկու աղջկամբք եւ փակեաց զդուս բուրաստանին եւ արձակեաց զաղջկունսն (ԺԳ.36ա).

**Մինչեւ զայս վայր ճշմարիտ ասացին, որպէս զի զկնիսն յորժամ ստեսցեն հաւատալի լիցի եւ այն:**

(306ա) Եւ եկն առ դա պատանի ոմն, որ թաքուցեալ էր, եւ անկաւ ընդ դմա, եւ մեք էաք յանկեան բուրաստանին: Իբրեւ տեսաք զա//նարէնութիւն ընթացաք առ դուս, եւ տեսաք զլինել դոցա առ միմեանս: Զնա ոչ կարացաք ունել քանզի բուռն էր քան զմեզ եւ եբաց զդուս եւ փախեաւ արտաքս: Զդա, զոր ըմբռնեցաք հարցաք, թէ ով էր պատանին, եւ ոչ կամեցաւ պատմել. զայդ վկայեմք (ԺԳ.37-40).

**Այս ամենեւին սուտ, զի զոր բնաւին չէր լեալ, ասէին՝ ոչ խորհելով յաւրինացն, թէ զոր ինչ տեսանես աչաւք քո, խաւսեաց: Իսկ նոքա, զոր ոչ տեսին վկայեցին, ըստ նմանութեան սուտ վկայեցին Տեառն Յիսուսի, որով ծանրացուցին զյանցանս իւրեանց, ուստի եւ՝ զպատիժն, զի դատաւորք անիրաւք էին եւ շնացողք եւ սուտ մարգարէք եղեն եւ վկայք սուտ:**

Եւ հաւատաց անցաւ ատեանն իբրեւ ծերոց ժողովրդեանն եւ դատաւորաց, եւ դատեցան զնա մեռանել (ԺԳ.41).

**Զի երկուք էին ըստ աւրինացն (տե՛ս Բ Օր. ԺԷ՛ 6) եւ զի ձերք էին, եւ զի դատաւորք էին, վասն այնորիկ հաւատացին, որպէս յատեան դպրացն, յորժամ քահանայապետն զպատմուճանն պատառեաց (տե՛ս Մարկ. ԺԴ. 63):**

Աղաղակեաց ի ձայն բարձր Շուշան եւ ասէ. Աստուած յաիտեմական ծածկագէտ, որ գիտես զամեմայն յառաջ քան զլինել անցա, եւ դու գիտես, զի սուտ վկայեմ զլինելն եւ ահա մեռանիմ, զոր ոչ ինչ գործեցի, զոր դոքայդ անարիմեմ զլինելն (ԺԳ.42-43).

**Աղաղակեաց ի ձայն մեծ, զի մի՛ անցաւոր կարծեսցէ ատեանն լուր լինելովն, «եւ գայթակղեսցին ամենեքեան ամենեւին, եւ մաչեսցեն աւրինապահ ծնաւղքն եւ ազգատոհմքն»<sup>1</sup> վասն որոյ ասէ ծածկագէտ իբր այն թէ՛ մարդ յերեսս հայի եւ պատրի, որպէս ատեանն՝ ի ձերոցն, իսկ դու, որ զծածուկսն գիտես, յայտնեա**

<sup>1</sup> Վարդան, 244բ-245ա:

*զստուծիւն սոցա եւ զիմ զարդարուծիւնս: Ահա մեռանիմ. ոչ ի մահուանէ երկնչելով զայս ասէ, այլ ի մեռանելն ասէ բազումք (306բ) զայթակղին յինէն //:*

Եւ լուաւ Տէր ձայնի նորա (ժԳ. 44).

*Արդարադատն, որ «զկամս երկիւղածացան առնէ, աղաւթից նոցա լսէ» (Սաղմ. ԾԽԹ 19): Բայց ոչ եթէ յառաջն ոչ լուաւ, այլ այժմ լսել զայց առնելն գրէ եւ զվրէժ առնուլն:*

Եւ մինչդեռ տանէին զնա ի կորուսանել զարթոյց Աստուած զՀոգին սուրբ ի վերայ մանկան միոյ, որում անուն էր Դանիէլ (ժԳ. 44-45).

*Յորժամ ետես Աստուած, թէ տանին ի տեղի մահուն, զարթոյց Աստուած զՀոգին սուրբ ի վերայ մանկան միոյ, այսինքն՝ յերկայնմութենէն մինչեւ ցայն վայր զՀոգին վրէժխնդրութեան ի վերայ մանկան միոյ, զի ծերքն այնպիսի գտան, զի խափանեսցէ զմեռանելն Շուշանայ, որպէս երբեմն զԻսահակ, յորժամ յայտնի եղեւ սէրն Աբրահամու, որպէսզի անուանն արասցէ դատաստան արդարացուցանել զարդարն եւ պարտաւորել զյանցաւորսն:*

Եւ աղաղակեաց ի ձայն բարձր եւ ասէ անպարտ եմ եւ յարեմէ դորա (ժԳ. 46).

*Այսինքն՝ թէ յամենայն Իսրայէլէ առնու Աստուած զվրէժ անպարտ սպանելոյն յորժամ ոչ քննիցէք զիրաւն, այլ զիւրաւ յանձն առնուք զստուծիւն:*

Եւ ամենայն ժողովորդն դարձան առ նա եւ ասեմ. Զի՞նչ է բանդ ադ, զո խաւսեցար (ժԳ. 47).

*Յորժամ ասաց, թէ՛ անպարտ եմ, նոքա զարհուրեալ յետս «դարձան եւ տեսին, զի պայծառացեալ էին երեսք նորա».<sup>1</sup> որպէս եւ յետոյ՝ Նախավկային, վասն այնորիկ յորժամ յանգիմանեաց անսային:*

Եւ նա եկաց ի մէջ նոցա եւ ասէ. Այդպէս անմի՞տք էք, որդիք իսրայէլի, ոչ քննեցէք եւ ոչ յիրաւանց վերայ հասէք եւ դատապարտեցէք զդուստրդ

<sup>1</sup> Վարդան, 245ա:



Իսրայելի, դարձիք անդրէն յատեանն, զի սուտ վկայեցին դոքա զմմանէ (ժԳ. 48-49).

*(307ա) Զպարտամտութիւն ժողովրդեանն ձաղէ, զի թէպէտ եւ դատաւորք էին ծերքն, ասէ, պարտ էր հարցմամբ տեղեկանալ եւ ոչ զդատախազսն դատաւորս նստուցանել, զի այս անմտութեան գործ է //: Վասն որոյ ասէ դարձիք ոչ միայն յատեանն, այլ եւ յայդպիսի խորհրդոց, որով ստոցն հաւանեցայք եւ այլ ազգ ընտրութեամբ ստուգեցէք զիրն:*

Եւ դարձաւ ժողովուրդն վաղվաղակի (ժԳ. 50).

*Հաւանեալ բանիցն Դանիէլի, զի կարծեցին, թէ մարգարէութեան փառս ընկալաւ:*

Եւ ասէն ցնա ծերքն. Եկ միստ ի միջի մերում եւ պատմեա մեզ, զի քեզ ետ Աստուած զերիցութիւն (ժԳ. 50).

*Երկուցեալ ծերոցն կամեցան փաղաքուշ բանիւ զերծանիլ. Եկ նիստ, ասեն, զայն, զոր զատոյց Հոգին ի նոցանէ եւ յամենայն մարդկանէ եւ ընդ հոգեկիրսն թուեաց:*

Եւ ասէ ցնոսա Դանիէլ. Մեկնեցէք զդոսա միմեանց ի բաց եւ քննեցուք զդոսա (ժԳ. 51).

*Ոչ միայն Հոգևով վկայեաց, թէ սուտ խաւսեցան, զի մի՛ կիսոց անհաւատ թուեսցի՝ իբր ի տղայոց ասացեալ, այլ հաւանական իմն ամենայն մտաց իբր Սողոմոն ի մէջ երկուց կանանցն արար իմաստապէս, որով զարմացոյց զամենեսեան (տե՛ս Գ. Թագ. Գ. 5-28):*

Եւ իբրեւ մեկնեցան ի միմեանց կոչեաց զմի ի անցանէ եւ ասէ ցնա. Այ ճնացեալ ատորքք չարութեամբ, այժմ եկին հասին քեզ մեղք քո զոր գործէիր յառաջագոյն, զի առնէիր զդատաստան անիրաւութեամբ զանմեղսն դատապարտէիր եւ զվնասակարսն արձակէիր, որում Աստուած ասացեալ էր, թէ զարդարն եւ զանմեղս մի՛ սպանանիցես (ժԳ. 52-54).

*Նախ առանձին կոչէ եւ խայտառակէ զյանցանս նոցա՝ եղուկ տալով նմա եւ հնացեալ ոչ աւուրբք, այլ՝ չարութեամբ, եւ թէ՛ Եկին հասին քեզ մեղք քո, կամ թէ՛ Բազմաց մեղացն քոց պատիժք, որոց Աստուած ներէր, այժմ եկին հասին ի վերայ քո ոչ յԱստուծոյ, որպէս կարծես, այլ մեղք քո արարին քեզ զայդ կամ զոր*

(307բ) *յառաջ ծածուկ գործէիր //, այսինքն՝ զի զամենայն դաստապարտէիր եւ զվնասակարսն արձակէիր, այժմ յայտնի արարէր, զի զանմեղն Շուշան ի մահ դատապարտեցեր եւ զքեզ, որ յանցաւոր էիր, անմեղ կացուցանէր, եւ այն, զի զգուշացուցեալ էր Աստուած աւրինաւքն:*

Բայց եթէ տեսեր զդոսա, ասա թէ ըստ որով ծառով հասեր առ դոսա միանչդ խաւէիմ առ միմեանս եւ նա ասէ. Ընդ հերձեալսն (ԺԳ 54).

*Զի զանցեալն եւ զառաջիկայն միազոյգ գիտէ Հոգին: Վասն այսորիկ հնարցանէր, զի գիտէր, թէ ստելոց է: Իսկ ասելն, թէ Ընդ հերձեալսն. հերձատերեւն բոլորէ ասեն կամ երկճղի կամ հերձեալ էին եւ պատուաստ եղեալ ազնիւս, կամ թէ ծառն իսկ հերձեալ էր:*

Ասէ Դանիէլ. Բարոք ստեցեր ի քոյն զլուխ, անասանիկ հրեշտակ Աստուծոյ առեալ հրաման հերձցէ զքեզ ընդ մէջ, եւ ի բաց մերժեաց զնա (ԺԳ 55-56).

*Այսինքն՝ սուտ ասացեր, սակայն առ քեզ ճշմարիտ է, զի զնա ոչ տեսեր առ հերձեալսն, այլ դու ի հրեշտակէ Աստուծոյ հերձելոց ես եւ եհան զնա:*

Եւ հրամայեաց ամէլ զմիւսն եւ ասէ ցնա. Զուսակ Քանանու եւ ոչ Յուդա գեղ դորա պատրեաց զքեզ եւ ցանկութիւն շրջեաց զսիրտ քո, այդպէս առնէք զդատերս Իսրայէլի եւ նոքա առ երկիւղի մերձեանայքն առ ձեզ, այլ ոչ եւ դուստրդ Յուդա կալաւ յանձին զանարեւոթիւնդ ձեր (ԺԳ 56-57).

*Իբր թէ անիծից ծնունդ եւ մահու ուրդի եւ ոչ աւրհնութեան, որպէս Յուդայ, զի ցանկութեամբ պատրեցար ի գեղ դորա, եւ պղծել ջանացար որպէս զբազումս, բայց սա ոչ այնպէս, զի բազում անաւրէնութեանդ ձեր ոչ կամեցաւ կցորդել:*

(308ա) Բայց արդ, աղէ ասա ընդ որով ծառոջ հասեր առ դոսա միանչդ խաւէիմ առ միմեանս. Եւ նա ասէ. Ընդ սղոցաւն: (ԺԳ 58) //.

*Կամի մարգարէս ի բերանոյ նորա դատել զնա, վասն որոյ ասէ. Ընդ սղոցաւն: Սղոցածեւ տերեւն երկայն են ի ծառս կամ սղոցիւ հատեալ էին զգաւս ծայր ծառոցն:*

Եւ ասէ ցնա Դանիէլ. Բարոնք ստեցեր եւ դու ի քոյն գլուխդ, զի կամ աւադիկ հրեշտակ Աստուծոյ սուր մերկ ի ձեռնիս սղոցել ընդ մէջ, զի սատակեացէ զքեզ (ԺԳ. 59).

*Հանգոյն է ասացեալս Վիմին վարդապետութեան, թէ՛ «Զիա՞րդ միաբանեցէք ստել Աստուծոյ» (Գործք Ե 9): Վասն այսորիկ ասաց թէ՛ Եւ դու որպէս զընկերն քո: Արդ, որովհետեւ հաւասար եղէք ի ստելն, հաւասար լիցի ձեզ եւ պատիժն, իսկ զի ոմն ի հերձեալն եւ ոմն ի սղոցեալն ոմն հերձցի եւ ոմն սղոցեսցի ի հրեշտակէ Աստուծոյ ձեւացեալ ըստ այլ եւ այլ բանիցդ անէծս ի գլուխս ձեր: Ուստի եւ նոյն ժամայն հրեղէն սուրբ երեւեալ կիսամահ արարին զնոսա եւ հրեղէն գաւազան անկեալ յերկնից խարշատեաց զնոսա, բայց թէ ընդէ՞ր այսպիսի անհրաժեշտ տանգանաւք տանջեաց զնոսա: Վասն զի մանուկ էր դատաւորն նոր՝ դատաստանն. կամեցաւ Աստուած ահարկու երեւեցուցանել որպէս զՊետրոսին առ Անանիա եւ Սափիրա, զի հնազանդեսցին մարգարէին:*

Եւ աղաղակեաց ամենայն ժողովուրդն ի ձայն մեծ եւ արհնեցին զԱստուած, որ ապրեցուցանէ զյուսացեալս իւր (ԺԳ. 60).

*Նախ աւրհնեցին զԱստուած գոհութեամբ, թէ որ յուսա ի Տէր ոչ ամաչէ (հմնտ. Եսայի ԻԸ 16), որպէս Շուշան, եւ բիր ետուն փառս Աստուծոյ ի ձայն մեծ, թէ ոչ է թողեալ զնոսա ի խնամոց ի գերութեան անդ իւրեանց:*

Եւ յարեան ի վերայ երկուց ծերոցն, քանզի յանդիմանեաց զնոսա Դանիէլ ի նոցիս բերանոյ սուտ վկայիցն (ԺԳ. 61).

*Ոչ աւտար վկայիւք հաստատեաց զիրն, այլ ի նոցին լեզուացն, ուստի ճշմարտութիւն առաւել պայծառացաւ: Վասն յայնորիկ // արեան ի վերայ եւ քարկոծ արարին զծերսն:* (308բ)

Եւ արարին ընդ նոսա որպէս եղին ի մտի չարութիւն առնել ընդ ընկերի եւ պանին զնոսա եւ ապրեցաւ արիւն արդար յաւուր յայնմիկ (ԺԳ. 62).

*Ըստ աւրինացն Մովսէսի այն իսկ է, զի զսուտ վկայսն սպանանէին կամ թէ այն որ ասաց, թէ՛ Որ փորէ ընկերի իւրում խորխորատ, անձամբ լնուն զնոյն: Արդ, զայն արարին նոցին, զոր լուեալ Նաբուգոդոնոսոր ետ դնել զնոսա ի սան պղնձի եւ տապակեալ ի հուր զսպանեալսն եւ հալել եւ ի հող հեղուլ, ըստ բա-*

*նի Տեառն, զոր խաւսեցաւ ի ձեռն Երեմիայ մարգարէին, եւ եղեն յանէծս, զի նոքաւք անիծանէին զվիճակիցսն իւրեանց՝ ասելով. Արասցէ քեզ Տէր, որպէս եւ արար երկու ձերոցն Աքրիա եւ Սեղեկիա (տե՛ս Երեմիա ԼԷ 2, 5, 7-10):*

Իսկ Քեղկեայ եւ կինն Աորա արհնեցին զԱստուած վասն դատերն իւրեանց Ծուշանայ հանդերձ Յովակիմաւ արամբ Աորա եւ ամենայն ազգակամարքն, զի ոչ գտան իրք գարշուրեան ի մնա (ԺԳ 63).

*Ձի արտասուքն եւ տրտմութիւն յուրախութիւն եւ ի խնդութիւնն դարձաւ հաւր եւ մաւր եւ առն Շուշանայ: Վասն այսորիկ բացաւ բերան նոցա ի փառաբանութիւն Աստուծոյ եւ հաստատեցան ի հաւատս եւ ի գործս արդարութեան իւրեանց, զի որպէս խնդրէին այնպէս տեսին զՇուշան:*

Եւ Դանիէլ եղեւ մեծ առաջի ամենայն ժողովրդեանն յարե յայնմանէ եւ անդր (ԺԳ 64).

*Քանզի վասն այսորիկ եղաւ այս դրուակս սկիզբն գրոցս, զի աստի եղեւ սկիզբն մեծանալոյն Դանիէլի, որպէս եւ Յովակիմ թարգմանի, սոյնպէս թէ սկիզբն անդ է նմա իբր միւս Յովակիմն, յորմէ ծնաւ Մայրն Աստուծոյ, ուստի եղեւ սկիզբն փրկութեան մերոյ, նոյնպէս եւ Դանիէլ աստի մեծացաւ յաչս ամենայն ժողովրդեանն, որ մեծ էր յաչս Աստուծոյ ընտրութեամբ յառաջ քան զլինելն աշխարհի //:*

(309ա)

[Ա]  
ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

Ասելովն երկրորդ՝ գառաջինն եւս Տեսիլ կոչէ: Եւ յիրաւի, զի «տեսող Հոգին էառ Դանիէլ եւ զՇուշան ապրեցոյց»<sup>1</sup> կամ զի աշաւք տեսին սոքա զգերութիւնն Երուսաղէմի կամ Բան Երկրորդ կամ զի բազում տեսուած գտանի աստ Տեսիլ ասէ: Դարձեալ «Տեսիլ աստ ոչ զմարգարէութենէն յայտ առնէ յայսմ դրուատի, այլ զի սիրտ թագաւորաց յԱստուծոյ շարժին կամ ի կամաց կամ ի թոյլ տալոյ, զոր եւ բաժակ ոսկի ասէ զՆաբո[գոդոնոսոր] ի ձեռին Աստուծոյ, որ եւ թագաւորեաց տեսանելովն Աստուծոյ ի վերայ աթուրացւոցն, այսինքն՝ Նինուէի Նաբոգոդոնոսոր որդի Նաբուպալսարա, եւ հրամանաւ հաւր իւրոյ ել յԵրուսաղէմ»<sup>2</sup> որպէս ասէ.

Յամին երրորդի թագաւորութեան Յովակիմա արքայի Յուդա եկն Նաբոգոդոնոսոր արքայ բաբելացոց յԵրուսաղէմ եւ պաշարեաց զնա (Ա 1).

Յովակիմա այս որդի էէ Յովսիա, զոր թագաւոր եղ յԵրուսաղէմ Նեփսոս «Նեքաւով, որ սպան զՅովսիա ի գնալն ի կողմանս Եփրատայ, եւ ի դառնալն տարաւ զՅոքոզիա, այսինքն է՝ Յովաքաղ յԵգիպտոս գերի, զոր թագաւոր էր ժողովրդեան փոխանակ Յովսիա հաւր իւրոյ, եւ թագաւորեցոյց զՅովակիմ ի ներքոյ հարկի արարեալ ի սորա Գ (3) ամին: Եւ յառաջին ամի թագաւորութեան իւրոյ եկն Նաբոգոդոնոսոր արքայ բաբելացոց, քանզի ի Բաբելոն փոխեաց զթագաւորութիւնն Նինուէի»<sup>3</sup>: Եւ յարեալ զՆեքաւոն եկն ի վերայ Երուսաղէմի եւ պաշարեաց զնա:

Եւ ետ Տէր ի ձեռս նորա զՅովակիմ արքա Յուդա, ի մասնէ սպասուց տանն Տեառն (Ա 2).

Տէր ետ, զի մի՛ կարծեսցէ, թէ անձին զաւրութեամբ արար զայն, եւ վասն այսորիկ Տէր ետ, զի չար էր քան զայլսն, քանզի սա էր, որ զմարգարէութիւնն Երեմիայի, զոր գրեաց Բարուք, կտրեաց կտրոցաւ դպրապետին եւ այրեաց ի կրակի: Արդ, ոմանք

<sup>1</sup> Վարդան, 245բ:

<sup>2</sup> Վարդան 245բ-246ա:

<sup>3</sup> Վարդան, 246ա:

(309բ) *ասեն, թէ հարկ եղ ի վերայ եւ զնաց, բայց ճշմարտապէս թաղումն իւրոյ թաղեցաւ, ըստ Երեմիայի (ԻԲ 19), զի սպան եւ ընկեց արտաքս պարսպին եւ թագաւորեցոյց զերէց որչի նորա յեքոնիա եւ տարաւ յազնուականացն Յուդա գերի եւ զԴանիէլ որդի Յովակիմայ որդւոյ Յովսիայ եւ զերիս մանկունս զորդիսն Յովակիմայ զհաւրեղբոր որդիսն Դանիէլի եւ մասնաւոր ի սպասուցն զազնիւսն, զոր ետ Տէր ի ձեռս նորա, «ըստ բանիցն Եսայեա առ Եզեկիայ»<sup>4</sup> (ԾԲ 11):*

Եւ տարաւ զայն յերկիրն ի Սիւնար ի տուն աստուծոյ իւրոյ եւ զսպասն եմոյժ ի տուն գանձի Տեառն իւրոյ (Ս 2):

*«Սենէար դաշտն է, ուր աշտարակն ասի շինեալ, ուր կայր տուն գանձի աստուծոյն իւր, զի պատկառելով յանուանէ Տեառն ոչ հառ ի պէտ սպասաւորութեան սեղանոյ իւրոյ որպէս յետոյ յանդգնեցաւ Բաղտասար որդի նորա»<sup>5</sup>, այլ անդ եղ ի տուն կուօցն: Ուստի «Թէպէտ Երկրորդ ասաց զայս տեսիլ, սակայն Առաջին թուի, թէ է, յետ որոյ իրքն Շուշանայ եղեն, եւ ընկալաւ Դանիէլ զՀոգին»<sup>6</sup>:*

Եւ ասէ ցԱղփանէս Աերքիմապետ իւր ածել յորդոց գերութեան Իսրայէլի եւ ի զսակէ թագաւորութեան եւ ի պարթեւացն մանկունս անարատս գեղեցիկս երեսաւք եւ խելամուտս ամեճայն իմաստութեամբ եւ հմուտս գիտութեան մտավարժս հանճարով եւ զարաւորս կալ ի տաճարի առաջի թագաւորին եւ ուսուցանել անոցս դպրութիւն եւ զլեզու քաղդէացոցն (Ս 3-4):

(310ա) *Ներքիմիս ոչ միայն զխզեալսն եւ զմայեալսն ասէ, այլ այնոցիկ, որ ի ներքս ի տուն թագաւորին կային եւ յռոճիկն վայելէին եւ ներքին խորհրդոցն գիտակք լինէին, ասէ. Աերքիմապետ: Իսկ ածել զմանկունս յորդոցն իսրայէլի եւ պարթեւաց, «քանզի ունէր եւ ի նոցանէ գերի, որք էին որդւոց անտի աբրահամու, որ ի Քետուրա»<sup>7</sup>: Կամեցաւ այսու բարգաւաճ ցուցանել զթագաւորութիւնս իւր սպասաւորութեամբ թագաւորագանցն, քանզի զեռ իսկ էր թագաւորել՝ անարատս մարմնով եւ սգայարանծք եւ գե-*

<sup>4</sup> Վարդան, 246ա:

<sup>5</sup> Անդ:

<sup>6</sup> Անդ:

<sup>7</sup> Վարդան, 246ա:

զեցիկս դիմաւք եւ իմաստունս եւ ճարտարս ամենայն գիտութեամբ, այլ եւ «մտավարժս, որ է ուշիմս»<sup>8</sup> եւ հանճարով զաւրաւորս, այսինքն՝ զրազէտս եւ տիւանադպրոցաց վարժս քաղզէացի լեզուովն, որով երեւի մտառուի նոցա:

Եւ կարգեաց անցա թագաւորն ոռնիկ ար[ը]ստարէ ի սեղանոյ թագաւորին եւ ի գիւնոյ, գոր ինքն ըմպէր սնուցանել զնոսա ամիսս երիս, եւ ասպ կացուցանել առաջի թագաւորին (Ա 5).

Ջսեղանոյն կարգեալ գլուռծիկսն ոչ միայն զի առատ ծախիւքն պարարտասցին, այլ եւ հացակից լինելովն արքայի գուարթասցին մտաւք, որով առաւել գեղեցկասցին:

Եւ էին ի նոսա յորդոցն Յուդայ Դանիէլ եւ Անանիա եւ Միսայէլ եւ Ազարիա (Ա 6).

Նոքա առաւել քան զամենեսեան վասն ակրհնութեան հարցն ցուցան գեղեցիկ արդեամբք ծածկելով թ անյայտելով զընտակիցսն ըստ անուանցն մեկնութեամբ, քանզի թարգմանի դանիէլ Դատաստան աստուծոյ, իսկ «Անանիա՝ Շնորհ Աստուծոյ, եւ Ազարիա՝ Համարձակութիւն Աստուծոյ, եւ Միսայէլ՝ Շաւշափումն Աստուծոյ, զի դատաստանակ աստուծոյ ընկալան շնորհս այս եւ ի համարձակութիւն մեծացուցին ի հաւատս եւ ի գործս, զկամս Աստուծոյ իմաստիւք եւ հանճարով շաւշափելով: Վասն որոյ եւ մեծաւ հանդիսիւ միաբանեցան ի միասին»<sup>9</sup>:

Եւ եդ անցա անքինապետն անուանս Դանիէլի՝ Բաղտասար, եւ Անանիայի՝ Սեդրաք եւ Միսայէլի՝ Միսաք, եւ Ազարիայի՝ Աբեդնագով (Ա 7).

«Ձազդողական\* անուանս ի հոգւոցն եղեալ ջանաց փոխել ներքինապետն, ըստ իւրեանց բանիցն. Դանիէլ՝ Բաղտասար, քանզի յետոյ թագաւորն կոչեաց նմին Բաղտասար ըստ անուանն իւրոյ աստուծոյն// եւ որդւոյն, յորժամ մեկնեաց գերագն, զի կամեցաւ ժառանգ առնել իւրն»<sup>10</sup>: «Եւ ներքինապետն զայն այժմ ասէ Բաղտասար, որ լսի Գլուխ Բաբելոնի, իսկ Սեդրակն՝ Անվար թարգմանի, եւ Միսաքն՝ Գեղով եւ Գովաշատ՝ Աբեդնագովն»<sup>11</sup>:

<sup>8</sup> Անդ:

<sup>9</sup> Անդ 246բ:

\* Ձաստողական:

<sup>10</sup> Վարդան, 246բ:

<sup>11</sup> Անդ:

Եւ եղ Ռանիէլ ի մտի իւրում ոչ ճաշակել ի սեղանոյ թագաւորին եւ ոչ ի գինոյ ըմպելոյ նորա (Ս 8).

*Քանզի ետես Ռանիէլ «քաղցր եւ հաճոյ եւ հոտեղ ի ճաշակս եւ ի հայեացս եւ ի յունկունս գյուտճիկս, որ ի սեղանոյ թագաւորին՝ փորձանաւք երեւել նմա իբր Եւայի ցուցեալ յաւձէն եւ հրաժարեցուցեալ ի տեառնէ պահաւք ել ընդ առաջ նորա կամ ըստ աւրինացն հրամանի»<sup>12</sup> ոչ խնդրէր ուտել զհեթանոսականն, զոր ոչ կարաց ամենայն ժողովուրդն, թէպէտ եւ ամենայն կերակրոց գարշէին սիրտք նոցա, ըստ Ռաւթայ, այլ մերձեալ սովով ի դրունս մահու ուտէին: Իսկ սա եղ ի մտի փոխանակ ժողովրդեանն, եւ սկսաւ աղաչել զվերակացուն, որպէս ասէ.*

Եւ աղաչեաց զներքինապետն, զի մի՛ ճաշակեսցէ: Եւ ետ Աստուած Ռանիէլի<sup>13</sup> շնորհս առաջի ներքինապետին (Ս 8-9).

*Աւրինադիրն սոցա, թէ մահու ես արհամարհանս առնեն վասն պահելոյ զպատուիրանս աստուծոյն իւրեանց, նա եւ Աստուած իսկ «էարկ ի սիրտս նորա գլխալ ի նոսա»<sup>14</sup> եւ լսել աղաչանաց նոցա:*

Եւ ասէ ներքինապետն ցՌանիէլ. Երկնչիմ ես ի տեսնէ իմմէ արքայէ, որ կարգեացդ ձեզ զկերակուրդ ձեր եւ զըմպելի՝ գուցէ տեսանիցէ գերեսս ձեր տրտմագոյնս քան զայլոց մանկանց հասարակցաց ձերոց եւ առնիցէք զիս գլխապարտս առաջի թագաւորին (Ս 10).

*Յուցանէ զինքն ներքինապետն ոչ անգուլթ լինել բնութեամբ, այլ երկիւղ մահու ի թագաւորն բռնադատէր չլսել նմին //:*

Եւ ասէ Ռանիէլ ցԱմելասաթ, զոր կացուցեալ էր ներքինապետին ի վերայ Ռանիէլի եւ Անանիայի եւ Միսայէլի եւ Ազարիայի. Աղէ փորձեալ զմեզ ատուրս Ժ(10), եւ տացն մեզ ունտս եւ կերիցուք եւ ջուր արբցուք, եւ երեւեսցի առաջի քո գոյնք մեր եւ գոյնք մանկանցս, որ ուտեն զսեղան թագաւորին, եւ որպէս տեսանիցես այնպէս արասցես ընդ ծառայս քո (Ս 11-13).

<sup>12</sup> Անդ:

<sup>13</sup> ուղղման նշանով լուսանցքից:

<sup>14</sup> Վարդան, 246բ:



*Հաւանական բանիւ խորհրդակցի մարգարէս փորձել զնոսա աւուրս Ժ(10), որ բաւական էր գոյն դնել եւ բառնալ յերեսացն վասն ուտելոյ եւ չուտելոյ:*

Եւ անասց անցա եւ փորձեաց ատուրս Ժ(10) եւ յետ կատարելոյ ատուրց Ժ (10)անց երեւեցան երեսք անցա անա բարիք եւ հզարք մարմնով քան զամենայն մանկունս, որ ուտէին զսեղան թագաւորին (Ս, 14-15).

*Գործով փորձեաց, ուստի բարձան ահ թագաւորին ի մտացն եւ ներեաց նոցա ըստ կամաց նոցա եւ երեւեցան քան զնոսա գեղեցկագոյն, որք ուտէին ոչ ի սեղանոյն, այլ զբոլոր սեղան թագաւորին, քանզի սոքա սակաւապիտուութեամբն հուպ գտան անկարաւտ բնութեանցն, որոց եւ ցանկալիք եղեն, վասն այսորիկ եւ զգեղ զուարթնոցն ի մակերեւոյթ մարմնոց իւրեանց առին եւ ըստ ոգւոյն բարեձեւութեան, յորս հաճեցաւ վերակացուն:*

Եւ առնոյր Ամելասաթ զընթրիսն անցա եւ զգինի ըմպելոյ անցա, եւ տայր ունտս չորեցունց մանկանցն (Ս 16).

*Ջբաժին չորիցն առնոյր զկերակուր եւ զգինի՝ թողլով զնոսա վայելիլ ի կերակրոյն եւ յըմպելոյն, որ մնա ի կեանսն յաւիտենականս՝ դրախտին կենաւք շատանալ:*

Եւ ետ անցա Աստուած իմաստութիւն եւ հանճար յամենայն դպրութեան եւ իմաստութեան(Ս, 17).

*(311բ) Ջճ(100) աւորն աստէն առնելով ըստ Տեառն Հանճար եւ իմաստութիւն յամենայն դպրութիւնս եւ ոչ միայն ի քաղզէացւոցն//:*

Եւ Դանիէլ խելամուտ էր ամենայն տեսլեան երազոց (Ս 17ա).

*Ջայլ շնորհսն հասարակ առին, իսկ մեկնել զերագս Դանիէլ աւելի քան զնոսա, եւ այս յիրաւի, քանզի նա արար սկիզբն պարկեշտանալոյն եւ յուսոյն մեծ ի յԱստուած:*

Եւ յետ կատարածի ատուրցն հրաման ետ թագաւորն ամել զնոսա: Եւ ամ զնոսա անքիմապետն առաջի Նաբոգոդոնոսորայ, եւ խաւսեցաւ ընդ նոսա արքայն, եւ ոչ գտան ամենեսին անան Դանիէլի եւ Անանիայի եւ Ազարիայի եւ Միսայէլի (Ս 18-19).

*Ջոչ գտանն կրկին գովութիւն դնէ նախ զի այնքան աւուրս պահաւք կալով առաւել գտան գեղով գուցնոցն եւ շքոյ երեսացն*

քան զամենայն թագաւորազունս, որք փափկութեամբ սնեալք էին, եւ Բ(2) ի հարցուածս արքային ոչ ոք զաւրէր յամենեցունց տալ զգիպաւղ պատասխանին ընդ որս հաճէր արքայն, որպէս զդանիէլեանսն:

Եւ կային առաջի թագաւորին (Ս 20).

«Չորեքին մանկունքն կային ի դրան արքային հնազանդեալք փոխանակ զի հնազանդեցան որդիքն Իսրայէլի եգիպատցւոցն Դձ(400) ամ»<sup>15</sup>, որով եւ այց լիցի նոցա դարձն որպէս եւ ելքն նոցա

Եւ յամենայն բան իմաստութեան եւ գիտութեան, զոր խնդրէր ի նոցանէ թագաւորն եւ գտանէր գնոսս Ժ(10) ապատիկ առաւել քան զամենայն գէտս եւ զմոգս, որ էին ի թագաւորութեան նորս (Ս 20ա).

Վասն զի «փութացան պահել զԺ(10) բան աւրինացն Տեառն Աստուծոյ իւրեանց, այլ եւ ինքեանք իսկ տասանորդք եղեն նուէրք Աստուծոյ փոխանակ ամենայն ժողովրդեանն, որ լռեալ էին ի տալոյ տասանորդս ի գերութեան»<sup>16</sup> (Ժ 10) ապատիկ առաւել լինէին յամենայն բանս եւ յամենայն գիտութիւնս: Իսկ ասելն քան զմոգս եւ զգէտս առաւել էին. այսորիկ փորձն յետոյ ցուցաւ, յորժամ զերազ թագաւորին չկարացին լուծանել զոր եւ Դանիէլ մեկնեաց, որով// յարեցան առ թագաւորն եւ պանծալիք եղեն ուսմամբն ոչ մոգական արուեստիւն, զոր ոչ առին յանձն ուսանիլ, այլ ՝ ի շնորհացն Աստուծոյ, որում փա՛ռք յաւիտեանս:

<sup>15</sup> Աճդ, 247:

<sup>16</sup> Աճդ:

[Բ ]  
ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

*Յիրաւի զայս Տեսիլ գրէ վասն զի «երազ ետես թագաւորն եւ մոռացաւ եւ կրկին ետես Դանիէլ զերազն եւ զմեկնութիւն նորա զաւրութեամբ տեսանաւ շողոյն»<sup>1</sup> Աստուծոյ եւ Երրորդ, զի Երրորդութիւն աստ յայտնեցաւ, զի Հայր կազմեաց զերազն եւ Որդի երազն եղեւ վէմն հատեալ առանց ձեռին եւ Հոգին մեկնիչ Դանիէլի. վասն այսորիկ Գ (Երրորդ) ասաց//<sup>2</sup>*

(313բ) *Պատասխանի ետ արքայ եւ ասէ. Մշմարիտ գիտեմ, եթէ ժամավաճառ լինիր, զի տեսէք, թէ բանն վերացաւ յինչն] (Բ 8) ///,*

*այսինքն է՝ յերկարեցէք զժամ մահուն կամ թէ զյաճախելդ ի խաւսս եւ ի ծախել զժամս ի տեղի պատասխանոյ համարիք:*

Արդ, եթէ զերազն ոչ պատմեցէք ինձ, գիտեմ, զի բան սուտ եւ զեղծուցանել միաբանեալ էք ասել առաջի իմ մինչեւ ժամանակ անցցէ. ասացէք ինձ զերազն եւ գիտացից, թէ եւ զմեկնութիւնն անորա պատմելոց էք ինձ (Բ 9).

*Գիտեմ, ասէ, թէ ի միասին խորհեցայք խաբել զիս, ուստի յայտ յայսմանէ է, զի թէ կայր ի մտի երազն իմ եւ ասէի՝ դուք «սուտ եւ կարկատուն բանից մեկնութեամբ աւերէիք զերազն իմ»<sup>3</sup>: Ապա թէ ասէք նախ զերազն, յայնժամ գիտացից, թէ զմեկնութիւնն նորա ճշմարիտ գիտէք:*

(314ա) *Պատասխանի ետուն միս անգամ քաղղէալքն առաջի թագաւորին եւ ասեմ. ոչ գոյ մարդ ի վերայ երկրի, որր զբան թագաւորին կարաւ է ցուցանել, զի ամենայն թագաւոր մեծ եւ իշխան զբանդ զալդպիսի// ոչ հարցանէ ցգէտս եւ ցմոգս եւ ցքաղղեալս, զի բանդ, զոր արքայ հարցանէ, ծանր է, եւ այլ ոք չիք, որ պատմիցէ զալդ առաջի արքայի, բայց եթէ դիքն, որոց բնակութիւն չէ ի մէջ ամենայն մտեղեաց (Բ 10-11).*

<sup>1</sup> Վարդան, 247ա:

<sup>2</sup> 312ա-ի Բ սյունակից մինչեւ 313բ-ի Ա սյունակը բաց՝ հետագայում լրացվելու նպատակով: Բացակայում է Բ 1-7-ի մեկնությունը:

<sup>3</sup> Վարդան, 247բ:

Երիցս անգամ կրկնեցին զայս հայցել եւ յամենայն անգամ քաղղէայքն խաւսէին, զի թերեւս ակն առնուցու երեսաց նոցա վասն ազգականութեան: Բայց ասելն, թէ ոչ գոյ մարդ ի վերայ երկրի զայս յոյժ սուտ խաւսեցան, զի ահաւասիկ Դանիէլ մարգարէ եւ յերկրի, եւ մեկնեաց զերազն: Իսկ ծանրացուցանել զբան արքային այսու առաւել ի պատիւ հանեն զմարգարէն, զի որքան դժուարին ցուցանէ զմեկնութիւն այնքան մեծացուցանէ զԴանիէլ: Եւ այն, զի ասեն, թէ չիք ոք որ պատմիցէ, բայց եթէ զիքն ոչ զայն ասեն, թէ նոքա գիտեն, այլ զայն յայտ առնեն, թէ եւ ոչ կուռքն եւ հուր եւ ջուր, որք պաշտին ի մէնջ, կարեն գիտել, զի եթէ գիտէին եւ մեզ յայտնէին, ապա թէ ոչ յայտնեն եւ ոչ նոքին իսկ գիտեն, իսկ մեք զիարդ գիտասցուք: Ուրեմն տեսիլդ քո յայնմանէ է, որ բովանդակէ զամենայն, զի եւ հեթանոսք նկատէին զնա:

Յայնժամ թագաւորն արտմտութեամբ եւ բարկութեամբ բազմաւ հրամայեաց կոտորել զամենայն իմաստունս բաբիլացոց եւ հրամանն էլ եւ իմաստունքն կոտորելին (Բ 12-13).

Ի գործ էած բարկութեամբ զսպառնալիս, յորժամ տկար գտանի մեկնութիւն երազոյն:

Խնդրեցին եւ զԴանիէլ եւ զբարեկամս Աորա սպանանել (Բ 13ա).

(314բ) Դանիէլ ոչ կոչեցաւ վասն տղայութեան եւ վասն անկատար ուսմանն, սակայն խնդրեցին եւ զնոսա կոտորել կամ վասն նախանձու կամ թէ թագաւորն իսկ «առ զայրուկս»<sup>\*</sup> սրտին հրաման ետ եւ զդրոցականսն կոտորել, որով//հետեւ անաւզուտ է եւ ոչ աւզնեցին»<sup>4</sup> նմա ի գիւտս միոյ երազի:

Յայնժամ Դանիէլ խորհեցաւ խորհուրդ եւ խրատ ընդ Արիովքայ դահնապետի արքային, որ ելեալ էր կոտորել զիմաստունս թագաւորին բաբիլացոց եւ հարցին զնա եւ ասեն. Վասն է՞ր ել հրամանդ այդ յերեսաց արքայի: Եւ յայտնեաց զբանն Արիովք Դանիէլի (Բ 14-15).

Ոչ եթէ ոչ գիտէր մարգարէն, այլ զի պատճառ խաւսից արար զհարցուածն առ դահնապետն, եւ նա սկսաւ ասել զպատճառն: Եւ ասէ.

<sup>\*</sup> Չիք ՆԲՅ, ուր սակայն նույնանուն բառս ունի «մարդուկ» իմաստը (Ա, էջ 99):

<sup>4</sup> Վարդան, 248ա:

Դանիել [ե]մուտ եւ աղաչեա[ց] զարքայն, զի տացէ նմա ժամ, եւ զմեկ-  
նութիւնն անորա պատմեսցէ թագաւորին (Բ 16).

«Թէ եւ կամէր զմահն մարգարէն, այլ ոչ ախորժէր ընդ չարան  
չարամահ լինել իբրեւ զմի ի նոցանէ, որ զԱստուած երկնիցն  
պաշտէր»<sup>5</sup>: Վասն որոյ յորժամ ուսաւ զպատճառ անողորմ հրա-  
մանին, զգեցաւ զհաւատն Աբրահամու, եւ խոստանայր պատմել  
զերացն, եթէ տացէ ժամ ինչ ներողութեան, որով արգելոյր զցա-  
սուծմն արքային, եւ զնէր արիւնս բազում:

Եւ եմուտ Դանիել ի տուն իւր, եւ Անանիայի եւ Ազարիայի եւ Միսայելի  
բարեկամաց իւրոց յայտնեաց զբանն (Բ 17).

Եղբայր եղբաւր աւգնական գրեալ է, եւ Տէրն, թէ՛ «Ուր Բ (2)  
կամ Գ (3) ժողովեալ են, անդ եմ ես, ի մէջ նոցա» (Մատթ. ժԸ 20):  
Վասն այսորիկ ընդ իւր առնու զհաւատակիցս իւր եւ զազգա-  
կիցս եւ զժողովակիցս յաղաւթս:

Եւ խնդրեցին յԱստուծոյ երկնից գիտութիւն, զի մի կորիցէ Դանիել եւ  
բարեկամք իւր ընդ իմաստունսն բարիլացոց (Բ 18).

Զհայրենի խնամսն հայցեն իբր ի վեր տղայոյ զհայցուածս  
Աբրահամու, թէ մի՛ կորիցէ արգարն ընդ ամբարիշտս:

(315ա) Թայնժամ Դանիելի ի տեսեան գիշերոյ յայտնեցաւ խորհուրդն, եւ  
արհնեաց Դանիել զԱստուած // երկնից եւ ասէ (Բ 19).

Յորժամ յայտնեցաւ խորհուրդն փոխարեն մեծագոյն երախ-  
տեացն զաւրհանութիւնս տաց, քանզի զայս պահանջէ ի մէնջ  
տուրիչն բարեաց:

Երիցի անուն Տեառն արհնեալ յաիտեանից մինչեւ յաիտեանս (Բ 20).

Յայտ է՝ զողորմած անունն եւ զգթածն եւ «զՀայրն որբոց եւ  
զայլսն: Իսկ յաիտեանից յաիտեանս յեգիպտոսի սքանչելեացն մին-  
չեւ ի Բաբելոնի եղեալսն: Այլ եւ ողորմութեամբ շինելոյն զաշ-  
խարհս մինչեւ դնի աթոռն ստուգութեան»<sup>6</sup>, դարձեալ ի ներկայս  
եւ ի հանդերձեալն:

<sup>5</sup> Վարդան, 248ա:

<sup>6</sup> Անդ:

Ջի իմաստութիւն եւ հանճար եւ զարութիւն նորա է (Բ 20ա).

«Իմաստութիւն եւ հանճար՝ *Հոգին Սուրբ եւ զարութիւն Քրիստոս է*»<sup>7</sup>, ըստ առաքելոյ. «*ոմն բղխումն եւ ոմն ծնունդ անճառելի*»<sup>8</sup>:

Եւ նա փոփոխէ զժամանակս եւ զժամս (Բ 21).

*Կամ զժամանակս ըոպէից եւ զժամանակս լեղանակաց կամ «փոխէ զժամս աջողման Բաբելոնի եւ զժամանակս արքային Նաբոգոդոնոսորայ եւ զայլոց»*<sup>9</sup>:

Կացուցանէ զթագաւորս եւ փոխէ (Բ 21ա).

*Որպէս յայտնի է ի տեսութենէ երագոյն, զի զոմն յարուցանէ զկամս նորա առնել եւ զաշխարհս խրատել, եւ յորժամ անցանեն զնա, փոխէ եւ զայլ ոմն յարուցանէ*:

Տայ զիմաստութիւն իմաստնոց եւ զխորհուրդս խորհրդականաց ինքն յայտնէ զխորհնս եւ զգաղտնիս (Բ 21բ).

«*Ոչ վայրապար տա զիմաստութիւն, այլ որ կամաւք իմաստնանան յաստուածպաշտութիւն եւ խորհին մտածութեամբ զխորհուրդ յանցաւոր աշխարհիս եւ զյաւիտենականին*»<sup>10</sup> նոցա յայտնէ ինքն զխորհինս եւ զծածոկս, ըստ այնմ. «*Սորհուրդ ինձ եւ իմոցն*» (Եսայի ի Դ. 16):

Որ կա ի խրատ գիտէ եւ լոյս ընդ մնաց է (Բ 22).

(315բ) *Կամ անյայտքն յայտնի եւ լոյս է նմա կամ ինքն անգիտելի է բոլորիցս, ըստ այնմ «եղ զխաւար ի //ծածկոյթ իւր»* (Սաղմ. ԺԷ 12), եւ «*լոյս իւր անմատոյց, որ եւ նմանապէս չտա մատչել եւ գիտէ ու՞մ եւ եր՞բ յայտնէ*»<sup>11</sup>:

ՋՔԷն Աստուած հարցն մերոց գոհանամ եւ արհնեմ (Բ 23).

*Նոցա համարի զչնորհն տուեալ ի Տեառնէ եւ ոչ վասն իւրեանց, որոց բարեխաւսութեամբ խնդրեցաք մեք եւ զայս խոստովանութիւն ի բերան ունելով գոհանամք*:

<sup>7</sup> Անդ:

<sup>8</sup> Անդ:

<sup>9</sup> Անդ:

<sup>10</sup> Վարդան, 248բ:

<sup>11</sup> Անդ:

Զինաստութիւն եւ զարութիւն ետուր ինձ (Բ 23ա).

*Այսինքն՝ զտեսիլ երազոյն, այս է՝ իմաստութիւն եւ զաւրու-  
թիւն մեկնութեան ինձ ասէ եւ ոչ այլ ումեք:*

Եւ ծանուցեր ինձ որ ինչ աղաթիւք խնդրեցաք մեք ի քէն եւ զտեսիլ  
թագաւորի՞ն ցուցեր ինձ (Բ 23բ).

*Զի այնպիսի ես առատ ի պարգեւս մինչ զի եթէ եւ այլ ինչ  
խնդրեալ էաք աղաւթիւք եւ զայն եւս շնորհէիր, յայտ յայսմանէ  
է, զի այժմ վասն տեսլեան թագաւորին խնդրեցաք, եւ դու զայս  
արագ ծանուցեր ինձ*

Եւ եմուտ Դանիէլ առ Արիովթ, զոր կացուցեալ էր թագաւորի՞ն կորու-  
սանէլ զիմաստունսն Բաբելոնի, եւ ասէ ցնա զիմաստունս բաբելացոց մի  
կորուսանէլ, բայց զիս տար առաջի թագաւորի՞ն եւ ես պատմեցից զմեկնու-  
թիւն թագաւորի՞ն (Բ 24).

*Յորժամ իմացաւ զերազն եւ գոհացաւ զտուողէն, այնուհե-  
տեւ խնայէ ի նոսա, որք ոչ խնայեցին ի նա եւ «ի ձեռն Արիով-  
թա», որ պաշտպանէր գործոյն, «մտանէ առ թագաւորն»<sup>12</sup>, լնուլ  
զխոստումն:*

Յայնժամ Արիովթ փութապէս տարաւ զԴանիէլ առաջի թագաւորի՞ն  
եւ ասէ ցնա գտի այր մի յորդոցն Իսրայէլի գերութեան, որ զմեկնութիւն  
պատմեսցէ արքայի (Բ 25).

*Յաղազս կրկին իրաց փութացաւ այրն. մի՛ զթագաւորն ու-  
րախացուցէ եւ Բ (երկրորդ)՝ որք մեռանելոց էին փրկեսցէ*

Պատասխանի ետ թագաւորն եւ ասէ ցԴանիէլ, որում անունն  
Բաղտասար, եթէ կարող ես պատմել զերազն, զոր տեսի եւ զմեկնութիւն  
(316ա) նորա (Բ 26)՛՛.

*Ի դահճապետէն լուա, թէ գտի այր մի, որ զմեկնութիւն պատ-  
մեսցէ արքայի: Վասն այսորիկ ինքն հարցանէ, թէ ոչ միայն ի  
խնդիր եմ մեկնութեան, այլ եւ նմին իսկ երազոյն, զի ի բերանոյ  
նորին լուիցէ ասել, զոր ինչ զիտեն:*

<sup>12</sup> Անդ:

Պատասխանի ետ Դանիել առաջի թագաւորին եւ ասէ. Ջխորհուրդդ զայդ, զոր արքայ հարցամէ, ոչ է իմաստնոց եւ մոգուց եւ ըղձից պատմել առաջի արքայի (Բ 27).

*Ի մարդկան գիտութենէ բառնա զկարծիսն եւ ասէ թէ խորհուրդ Աստուծոյ է երազն, եւ ոչ կարեն գիտել զայն «գէտք եւ մոգք եւ իղձք, որ են աղաւթողք»<sup>13</sup>:*

Այլ գոյ Աստուած յերկինս, որ յայտնէ զխորհուրդս եւ եցոյց Նաբոգո-րոնոսորայ արքայի, որ ինչ լինելոց է յաւուրս յետինս (Բ 28).

*Յուցանէ զԱստուած գոյ ճշմարիտ Աստուած, որ յերկինս է, որ եւ զլինելոցն իբրեւ գեղեալ գիտէ եւ պաշտանէիւքն իւրով «յայտնէ իւրոց որպէս եւ կամի խոնարհացն եւ երկիւղածաց» որպէս եւ քեզ յայտնեաց:*

Երազն եւ տեսիլ զլիտյ քո այս է արքայ. խորհուրդք քո մտայոյզ առնէին զքեզ յանկողնի քում, թէ զինչ լինելոց է յետ այսորիկ եւ յայտնիչն խորհրդոց եցոյց քեզ զինչ լինելոց է (Բ 28-29).

*Նախ զկիրս մտացն յայտ առնէ. մինչդեռ յարթուն էիր, զի նովաւ եւ զքնոյն հաւատարիմ արասցէ, եւ ասէ, թէ մտաց քոց տեսիլ այս է. զի նախ յուցէիր խորհրդով, թէ զի «յետ քո ո՞ կամիցի ժառանգել զթագաւորութիւն քո, զի երկիւղն մահու չտա թոյլ հանգչել թագաւորաց»<sup>14</sup>, եւ զի ասացեալ է, թէ բազում անգամ, «ըստ յուզմանց խորհրդոցն ձեւանան երազքն»<sup>15</sup>, այնպէս ձեւացաւ եւ ի քո միտս ի յայտնութենէն Աստուծոյ, որ գիտակն է յանդերձելոյն:*

(316բ) Եւ ոչ առ իմաստութեան ինչ, որ իցէ յիս քան յամենայն կենդանիս՝ յայտնեցաւ խորհուրդն (Բ 30) //

*«Ոճ է այս սրբոցն»<sup>16</sup>, զի յորժամ փառաց հասանիցեն զանձինս իւրեանց ի չափու պահեն «իբր Աբրահամ հող եւ մոխիր ասէր զինքն (Ծննդ. ԺԸ 27) եւ Դաւիթ՝ որդն» (Սաղմ. ԻԱ 7)<sup>17</sup> եւ Սողոմոն, թէ՛ «իմաստութիւն մարդոյ ոչ է յիս» (Առակ. Լ 2), նոյնպէս եւ մար-*

<sup>13</sup> Անդ:

<sup>14</sup> Վարդան:

<sup>15</sup> Վարդան:

<sup>16</sup> Անդ:

<sup>17</sup> Անդ:



գարէս. Ոչ եթէ իմաստուն էի ես քան զմարդիկ, զի յայտնեցաւ ինձ, այլ վասն քո, որպէս ասէ:

Այլ վասն ցուցանելոյ արքայի զմեկնութիւն, զի ծանիցես զխորհուրդս արտի քո (Բ 30ա).

«Կամի զթագաւորն ծանաւթ առնել Աստուծոյ եւ որսալ այսպիսի բանիւք, վասն սրտի քո, ասէ, զուարթանալոյ ի սրտմտութենէդ, «յայտնեցաւ»<sup>18</sup> ի նմանէ, որ կամի զամենայն մարդոյ զկեալն եւ ի գիտութիւն ճշմարտութեան գալ, զի իւր են արարածք, որպէսզի, զոր ինչ տեսեր իմասցիս:

Դու, արքայ տեսանէիր, եւ ահա պատկեր մի մեծ եւ երեսք նորա եւ տեսիլ նորա ահագին յոյժ եւ կայր առաջի քո (Բ 31)

Թէպէտ զարմանալի է այս մարդկային մտաց, թէ զիարդ զտեսիլ արքային ձեւացոյց ի միտ մարգարէին, բայց Աստուծոյ զաւրուութիւն ոչ ինչ է դժուար, զի քան զոչգոյն ստեղծանել յոյժ թեթեւ է զգոյն վերստին կերպարանել, զի թէ երազն, որ ստեղծ ի միտս թագաւորին, զի՞նչ զարմանալի է, թէ զնոյն մոռացեալն յայտնեաց Դանիէլի, զորս առցես ի հաւատ յարութեան եւ ոչ երկբայեսցիս աւրինակաւս, քանզի թէ յոչէից գոյացոյց զմարդն ի հողոյ, ոչ է անհաւատալի զնոյն հողացեալ իբր մոռացմամբ ծածկեալ դարձեալ կենդանացուցանել, որպէս եւ աստ զերազն, զոր պատմէ Դանիէլ:

Դու, արքայ տեսանէիր, եւ ահա պատկեր մեծ (Բ 31ա).

Յիրաւի, պատկերի նմանէցուցանէ զփառս թագաւորաց երկրի, զի պատկեր է<sup>19</sup> կամ երկնաւոր թագաւորին աւրինակի յերկրի կամ պատկեր է ուրուական եւ եղծանելի, ըստ Դաւթայ, որ ասէ ամենայն ումեք. «Ապաքէն ի պատկերի շրջի մարդ» (Սաղմ. ԼԸ 7), (317ա) վասն զի ոչ իմացաւ զպա//տիւ պատկերին Աստուծոյ եւ պահեաց» (Տմն. Սաղմ. ԽԸ 13, 21)<sup>20</sup>: Իսկ ահագին տեսիլն վասն շքոյ թագաւորացն ասէ, զի գրէ, թէ այլ իմն կարծեցեալ լինին մարդկային բնութէնէս յաղագս սպասաւորացն եւ փառացն բազմութեան,

<sup>18</sup> Անդ:

<sup>19</sup> Վարդան 249ա:

<sup>20</sup> Անդ:

*եւ այն թէ՛ կայր առաջի քո նշանակէ ի նմանէ սկսանել ինքնակալութիւնն աշխարհի:*

Ահաւոր էր յոյժ պատկերն, որոյ գլուխն յոսկոյ սրբոյ, ձեռք իր եւ լանջք եւ բազուկք արծաթիք եւ մէջքն եւ բարձքն պղնձիք եւ սրունքն երկաթիք, եւ ոտքն կէսն ի խեցոյ եւ կէսն՝ յերկաթոյ (Բ 31բ-33).

*Ձանազանութիւնքն ի գոյութիւն պատկերին՝ զաստի պատիւս կամ զզաւրութիւն եւ զիմաստութիւն կամ զխոնարհութիւն եւ զտկարութիւն յայտ առնեն թագաւորաց: «Սակայն բովանդակն ի հողոյ են եւ ի հող մնալոց են, քանզի ասեն արուեստն աստուծոյ, որ է բնութիւն, ժիպակով եւ մբով գործ ակն: Իսկ ոսկի եւ արծաթ եւ պղինձ եւ երկաթ ի հողոյ է»<sup>21</sup>, ըստ Յոբայ (ԻԸ 2) յազնուաց մինչեւ ի մրրատեսակն երկաթ, որպէս ցուցաւ, ամենայն ի խեցոյ վերայ: Բայց է, որ անկարաւտ բովից եւ է խառնեալ ի հող քար, զոր յղկեն մարդիկ, եւ է որ բուսմամբ է: Նոյնպէս զամենայն թագաւորութիւնս երկրի նախախնամութիւն Աստուծոյ յարուցանէ՝ զոմանս հայրենիք, զորս յերկարէ եւ զկէսս՝ յայլ եւ յայլ պատճառէ, եւ զայլս ի ձեռս մարդոյ պէս պէս հնարից, վասն այսորիկ ի զանազան նիւթս ձեւացաւ պատկերն, զոր եւ ինքն Դանիէլ մեկնէ:*

Հայէիր միմչեւ հատաւ վէժ առանց ձեռին եւ եհար զպատկերն ի վերայ երկաթեղէն եւ խեցեղէն ոտիցն եւ մանրեաց գնոսս ի սպառ: Յայնժամ առ հասարակ մանրեցան խեցին եւ երկաթն, պղինձն եւ արծաթն եւ ոսկին, եւ եղէն իբրեւ զփոշի կալոյ ամարայնոյ եւ առ գնոսս աստկութիւն հողմոյ եւ տեսիլ \* ոչ գտանէր անցաւ եւ վէժն, որ եհար զպատկերն եղեւ լեւոն մեծ, եւ ելից// զամենայն երկիր (Բ 35).

*Եւ զայս եւս յառաջ տանելով մեկնէ ստուգապէս մարգարէս: Բայց հայէիրն զնախահայեցութիւն տեսլեանն ասէ, որ աւրինակ իմն մարգարէութիւն էր երազն: Իսկ մանրելն եւ ի հողմոյ վարելն զմահուն իրս ասէ թագաւորացն ըստ այնմ. «Շնչէ ի նմա հողմ, ոչ է եւ ոչ եւս երեւի տեղի նորա» (Սաղմ. ԾԲ 16), եւ զի յոտսն ասէ հարկանել վիմին, յորմէ ամենայն պատկերն փշրի զմարմնոցն*

<sup>21</sup> Անդ:

\* Ընկալլալ թրգմ. տեղի:

*խորտակումն ասէ մահուամբ, որ ոտք եւ խարխիս է հոգւոյն եւ վերջին, զի հոգին անմահ է եւ ոչ մեռանի:*

Այս է երազն եւ զմեկնութիւնն անորա ասասցոյք առաջի քո (Բ 36).

*Նախ զերազն պատմեաց, վասն հաւատարմութեան խոստանայ եւ զմեկնութիւնն ասել:*

Դու եւ արքայ, արքայից արքայ, որում Աստուած երկնից ետ զթագաւորութիւնն հզար եւ հաստատուն եւ պատուական ըստ ամենայն տեղիս, ուր բնակեալ են որդիք մարդկան (Բ 37-38).

«Գլուխն ոսկի, ասէ,, դու ես, զոր պատուեաց Աստուած ի փոքր ազգէ»<sup>22</sup> իբր ի հողոյ «եւ կոչեաց բաժակ ոսկի ի ձեռս իւր, թէ կացցես ի ձեռս նորա, կացցես գլուխ բարձր քան զամենայն թագաւորս երկրի ի կեանս քո»<sup>23</sup> հզաւր իշխանութեամբ եւ հաստատուն աթոռով եւ պատուական պատուով, քան զամենեսեան, որ բնակեալ են յաշխարհի, ապա թէ անկանիս ի ձեռաց նորա, որպէս որդի նորա անարգեաց զոսկի անաւթս տաճարին անկցի եւ ի գլուխ լինելոյն:

Եւ զգագանս վայրի եւ զթոշունս երկնից եւ զձկունս ծովու ետ ի ձեռս քո եւ կացոյց զքեզ Տէր ամենայնի: Դու եւ գլուխն ոսկի (Բ 38-39).

*Կամ վասն առաւելութեան ասէ զայս կամ թէ սիրեաց իսկ պատուելով կամ զբարս նշանակէ, «զգագանամիտսն եւ զթեւթեւախելսն եւ զտղմասէր գէջսն»<sup>24</sup>, զի զսոսա հնազանդեցոյց*  
 (318ա) *Նաբոգոդոնոսոր եւ ոչ զառաջինիսն որպէս զԴանիէլ, որոյ եւ // ինքն երկրպագէր, որպէս գլուխն ասէ ընդ իւր եւ ունի զսիրտ եւ զախոնդանսն եւ զներքին համսն կամ միտք զերիս մասունս հոգւոյն, նոյնպէս եւ դու զսոսա զամենեսեան ի ներքոյ քո ի Ստեղծչէն համայնից կացուցեալ զքեզ Տէր բոլորից:*

Եւ զկնի քո յարիցէ այլ թագաւորութիւնն խոնարհագոյն քան զքեզ (Բ 39ա).

*Երկրորդ յետ նորա խոնարհագոյն քան զնա յարեաւ Դարեհ մար, որ էին լանջք եւ բազուկք արծաթիք՝ «ոչ լինել ձեռնհաս եւ*

<sup>22</sup> Աճդ:

<sup>23</sup> Աճդ:

<sup>24</sup> Աճդ:

բազուկ զաւրեղ, որ կարող լինի առնել զկամս սրտին, որ ի լանջսն, ըստ որում չկարաց արգելուլ զԴանիէլ արկանելոյ ի գուրն առիւծուց, զի արծաթ պակասէ գունով եւ գնով քան զոսկի, սակայն կամաւքն Աստուծոյ յաղթեաց վերնագունին եւ սպան զԲաղտասար եւ էառ զթագաւորութիւնն»<sup>25</sup> :

Եւ թագաւորութիւնն երրորդ, որ է պղինձն, տիրեացես ամենայն երկրի (Բ 39բ).

«Պղինձ, որ է մէջքն եւ բարձքն, որ կարի պակաս է քան զարծաթ»<sup>26</sup>, բայց զաւրաւոր եւ ուժգին քան զնա. զԿիւրոս պարսիկ առակէ, որ ընդարձակեաց ուժգնակի զիշխանութիւնն պարսից եւ քաղաքացւոց եւ մարաց եւ յովսփս ազգաց եւ կղզեաց «տիրեաց մինչեւ յԵգիպտոս եւ ի Հնդկս, զի յամենայն երկիր տացէ հրաման արձակելոյ զգերին, զի ոսկէտեսակ է պղինձ: Եւ նա աստուածածանաւթ զգերին, զի ոսկէտեսակ է պղինձ: Եւ նա աստուածածանաւթ թագաւորաց նմանեցաւ» եւ աւժեալ կոչեցաւ եւ տէր եւս անուանեցաւ «արժանի եղեալ անուանակցութեան ճշմարիտ թագաւորին Քրիստոսի, որ աւերեաց զդժոխս իբր նա՝ զԲաբելոն, որոյ թագաւորութիւնն տիրեաց մինչեւ ի միւս Դարեհ, զոր սպան Աղեկսանդր»<sup>27</sup> :

Որոյ ասէ.

Եւ թագաւորութիւնն չորրորդ հզար իբրեւ գերկաթ զոր արինակ (318բ) երկաթն մանրէ եւ մալէ զամենայն, այնպէս// մանրեցէ եւ մալեցէ զնոսա զամենայն (Բ 40).

«Երկաթ զաւրաւոր եւ կարող է քան զպղինձ, հատու» որպէս Աղեկսանդր «եհատ զերկիր հարաւոյ մինչեւ ի Հնդիկ եւ սպան զՊորոս գոռոզ»<sup>28</sup> եւ ըստ ոմանց «եթող կենդանի եւ զթագաւորութիւնն եւս ետ, զի տացէ նա հարկս»<sup>29</sup>, եւ ի յապստամբելն դարձեալ սպան զնա եւ էանց ի կողմն «հիւսիսոյ մինչեւ ցծովն Կասպից, որում ասեն զնել զուռն Դարպանտին, եւ գնացեալ յայն-

<sup>25</sup> Վարդան, 249աբ:

<sup>26</sup> ԱՆդ, 249բ:

<sup>27</sup> ԱՆդ:

<sup>28</sup> ԱՆդ, ուր սակայն՝ զՁոսգովրոս *փխ*. զՊորոս:

<sup>29</sup> ԱՆդ:

չափ մինչեւ թողեալ զարեգակն ի թիկանց»<sup>30</sup> կուսէ՝ հասանելով ի վայրս դրախտին, եւ այնպէս հնազանդեցուցեալ զերիս մասունս աշխարհի՝ զԵւրոպիա, զԱսիա եւ զԼիբիա արագ եւ համառուս «կատարել զկեանս իւր: Զորոյ զիշխանութիւն առին չորեսին դայեկորդիք նորա, որոց ծնունդքն ապականեցին զերկիր, յորոց եւ Անտիոքոս, որ պղծեաց զԵրուսաղէմ եւ զտաճարն պէս-պէս չարեաւք, զոր եւ գիրք Մակաբայեցւոցն» պատմեն: «Զոր բարձին հռովմայեցւոց թագաւորքն»<sup>31</sup>, որպէս ասէ:

Եւ զի տեսանէիր զոտսն եւ զմատուսն կէս կողմն ի խեցոյ եւ կէս կողմն յերկաթոյ թագաւորութիւն բաժանեալ լիցի եւ յարմատոյ երկաթոյն եղիցի ի մնա (Բ 41).

Հռովմայեցւոց թագաւորութիւն է, որ տեւեցին եւ տեւեն հզաւրք եւ տկարք, զոր երկաթ եւ խեցիմ նշանակեն, հզաւրն, ըստ երկաթոյն յարմատոյն Աղեկսանդրի զաւրաւոր եւ տկարն, ըստ խեցոյն:

Եւ զի զոր արիմակ տեսանէիր զերկաթն ընդ խեցոյն խառնեալ եւ մատուցք ոսիցն կողմն մի յերկաթոյ եւ կողմն մի ի խեցոյ. մին կողմն թագաւորութեան հզար կացցէ եւ մինն ի մնանէ եղիցի ջախջախ (Բ 42).

(319ա) Յայտնապէս զհռոմոց եւ զհռովմայեցւոց թագաւորութիւն նշանակէ, զի հռովմայեցիքն յաղթողք են միշտ յերկաթի առակեալ գաւազանն// ի Դաւթէ (հմմտ. Սաղմ. Բ 9), իսկ հռոմոցն տկար եւ անզաւր, որ եւ «մերձ ի ժամանակս Նեոխնն սոքա ի Ժ(10) բաժանին, զոր Ժ(10) մատուցքն նկարագրեն, յորոց մին զՆեոն ասեն»<sup>32</sup>:

Եւ զի տեսանէիր զերկաթն ընդ խեցիմ խառնեալ, եղիցի խառն ի գաւակէ մարդկան եւ ի միմեանս ոչ խառնեցիմ, զոր արիմակ չխառնի երկաթն ընդ խեցիմ (Բ 43).

Հզաւրքն եւ տկարքն հաւասար ի զաւակէ մարդկան են. այս է խառն, իսկ զի ոմն զաւրաւոր եւ ոմն անզաւր, այս է՝ անխառն կամ վասն Նեոխն ասէ, զի է մարդ հողեղէն խառնեալ ի բնութիւնս Ադամայ: Բայց զի զսատանայ զգեցեալ է ըստ առաքելոյն,

<sup>30</sup> Աճդ:

<sup>31</sup> Աճդ:

<sup>32</sup> Աճդ:

«մարդն անաւրէնութեան եւ հակառակորդն ճշմարտութեան» (Բ Թեսաղ. Բ.3) ըստ այս անխառն ասէ զնա:

Եւ յաւորս թագաւորաց այնոցիկ յարուցէ Աստուած յերկնից թագաւորութիւն, որ յաւիտեան ոչ եղծանիցի, եւ թագաւորութիւն նորա ազգի այլում ոչ մնասցէ, մանրեացէ եւ հոսեացէ զամենայն թագաւորութիւնս եւ ինքն կացցէ յաւիտեանս, որպէս տեսանէիր, զի ի լեառնէ հատաւ վեմն առանց ձեռին, եւ մանրեացէ զխեցիս եւ զերկայթն եւ զպղիճն եւ զարծաթն եւ զոսկիսն (Բ 44-45).

Զայս ի «մարմնաւոր ոք ոչ վայելէ հանել»<sup>33</sup>, այլ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս յառաջին եւ ի յերկրորդ գալուստն վասն այսորիկ ասէ, թէ՛ Աստուած յարուցէ երկնաւոր թագաւորութիւն անեղծանելի, եւ թագաւորութիւն նորա առ ի յայլում ոչ մնասցէ: Այսինքն՝ համեմատ նորա թագաւոր ոչ լինիցի յազգս, կամ յորժամ երկրորդ անգամ գա մարմնական թագաւորութիւն ոչ մնասցէ աշխարհի, որպէս ասէ, թէ՛ մանրեացէ եւ հոսեացէ հեծանոցաւ դատաստանի իւրոյ, ըստ Յովհաննու (տե՛ս Մատթ. Գ 12), եւ Ինքն կացցէ թագաւոր կամողաց: Բայց զի նախ վէմն հատաւ առանց ձեռին եւ մանրեաց զպատկերն, եւ ապա եղեւ լեառն մեծ եւ ելից զերկիր: Պարտ է այսպէս իմանալ, զի նախ յառաջին գալուստն (319բ) «հատաւ վէմն առանձ ձեռին// ի կուսական արգանդէ երեւել առանց սերման, որ ձեռն տա յարգանդի կնոջ յղութեան, որում ոչ եղեւ կարաւտ մայրն Մանուէլի»<sup>34</sup>, յորմէ ծնաւ զվէմ անուանեալն ի մարգարէիցն, ըստ այնմ, թէ՛ «Դնէմ ի հիմունս Սիոնի վէմ ընտիր եւ ամենայն, որ հաւատայ ի նա, մի՛ ամաչեսցէ» (Եսայի ԻԸ 16) եւ թէ՛ «Վէմն, զոր անարգեցին շինող հրէայքն, եղեւ գլուխ անկեան հրէից եւ հեթանոսաց» (Մատթ. ԻԱ 42), եւ թէ՛ «Զվէմն, զոր ետու առաջի երեսացն Յեսուս», եւ թէ՛ «Քար ի հիմանէ աղաղակէ» (Ամբ. Բ 11): Եւ վէմն էր Ինքն՝ Քրիստոս, եւ զոր ունէր, ետ, եւ Պետրոսի ասելով, թէ՛ «Դու ես վէմ» (Մատթ. ԺԶ 18), եւ նա՛ հաւատացելոց. «Դուք իբրեւ զվէմս կենդանիս շինիք տաճար հոգեւոր», (Ա Պետ. Բ 5) որ եւ եհար «զպաշտելի պատկերս հեթանոսաց»<sup>35</sup> եւ խորտակեաց սկսեալ ի խեցոյ մինչեւ ցոսկին, զի յայս քան նիւթոց եղեն կուռքն հեթանոսաց: Եւ մեծացաւ վէմն

<sup>33</sup> Աճդ 249բ-250ա:

<sup>34</sup> Աճդ, 250ա:

<sup>35</sup> Աճդ:

եւ ելից զերկիր քարոզութեամբ Աւետարանին: Եւ դարձեալ վէմ, զի անփուտ եւ անյաղթ եւ անվանելի է Տէրն մեր կուսածին մարմնով փշրող դիւաց եւ նմանէ զաւրացելոց, ըստ Իւր ինքեան ասելոյն, թէ՛ «յոյր վերայ անկցի հոսեսցէ զնա» (Մատթ. ԻԱ 44), որպէս ասաց, թէ՛ մանրեսցէ եւ հոսեսցէ զամենայն թագաւորութիւնս: Եւ ինքն եղեւ լեառն մեծ եւ ելից զերկիր: Յառաջինս՝ հաւատով, որպէս ասացաք, իսկ յերկրորդն աստուածական թագաւորութեամբ, որում երկրպագեն ամենայն ազգ փառաւորելով զանուն նորա յաւիտեան: Քանզի առաջին ծնունդն փոքրագոյն կարծեցաւ ի բազմաց, ըստ նմանութեան վիմին: Ի յերկրորդին, յորժամ զայցէ բարձրացեալ փառաւք իբրեւ զլերինս մանաւանդ ըստ արդարադատ իրավամբքն, ըստ երգոյն, թէ՛ «Արդարութիւն քո որպէս լերինք են, Աստուած» (Սաղմ. ԼԵ 7): Այս է ասելն, թէ՛ «Եղեւ լեառն մեծ եւ ելից զամենայն երկիր վէմն» (Դան. Բ 35)՝ բառնալով զթագաւորութիւնս յաշխարհէ զմարդկան եւ զգիւաց եւ փշրելով, զոր պատկերն նշանակեաց:

(320ա) Աստուած մեծ եցոյց արքայի, որ ինչ լինելոց է առ յապա// եւ ճշմարիտ է երազն եւ հաւատարիմ մեկնութիւնն անորա (Բ 45).

Կատարի ասէ բանս իւրաքանչիւր յիւրում ժամանակի, որպէս Աստուածն երկնի եւ երկրի եցոյց քեզ «զի ճշմարիտ է երազն, եւ չէ ցնորք անէից, եւ հաւատարիմ, այսինքն՝ ստոյգ մեկնեցաւ, զի որ եցոյց քեզ զերազն, նա եցոյց ինծ եւ զմեկնութիւնս»<sup>36</sup>:

Յայնժամ արքայն Նաբոգոդոնոսոր անկաւ ի վերայ երեսաց իւրոց եւ երկիր եպագ Դանիէլի եւ զոհս եւ խունկս անուշութեան հրամայեաց մատուցանել անա (Բ 46).

Այնպիսի իմն է առաքինութիւն, մինչ զի եւ գյոյժ բռնաւորս հնազանդեցուցանէ եւ զթագաւորս խոնարհեցուցանէ, որպէս աստ եղեւ, քանզի թագաւորն իւր գերորդւոյն երկիր պագանէր եւ խնկաւք անուշիւք պատուեր: Եւ զի «զՀոգին Սուրբ զգեցեալ էր յայնժամ Դանիէլ ոչ փախչէր ի պատուոյն, այլ աստուածեղէն Հոգւոյն նուիրէր»<sup>37</sup>:

<sup>36</sup> Վարդան:

<sup>37</sup> Անդ:

Պատասխանի ետ թագաւորն եւ ասէ ցԴանիել. Արդարեւ Աստուածն ձեր նա է Աստուած աստուածոց եւ Տէր տէրանց եւ Թագաւոր թագաւորաց, որ յայտնէ զխորհուրդս, զի յայտնել կարացեր զխորհուրդ զայդ (Բ 47).

*Ծանեալ զճշմարիտն Աստուած ի մեկնութենէ երազոյն, եւ քան զամենայն աստուած եւ տեարս եւ թագաւորս, որ են յաշխարհի վերագոյն կարգեաց, որպէս եւ է իսկ, քանզի նա ասէ կարաւղ է՝ յորմէ կամի բառնա եւ ում կամի տա զփառս թագաւորութեան: Եւ այս երեւելի, զի մանուկ մի ի նմանէ զաւրացեալ այդպիսի խորհուրդ կարաց յայտնել:*

Եւ մեծացոյց թագաւորն զԴանիել եւ պարգեւս մեծամեծս եւ բազումս ետ նմա եւ կացոյց զնա ի վերայ աշխարհին բարիլացոց ի իշխան նախարարացն եւ ի վերայ ամենայն իմաստնոցն բարիլացոց (Բ 48).

*Նախ գովեաց, որպէսզի արժանիս ցուցցէ պարգեւացն եւ ապա տրաւք եւ իշխանութեամբ մեծացոյց: Իսկ ի վերայ իմաստնոցն կացուցանելն, զի նովաւ ապրեցան զ//նորայն ուսցին եւ աշակերտեսցեն նմա:*

Եւ Դանիել խնդրեաց յարքայէ եւ կացոյց ի վերայ գործոց աշխարհին բարիլացոց զՍեդրաք, զՄիսաք եւ զԱբեդնագով (Բ 49).

*Ոչ մոռանայ եւ զաղաւթակիցսն, այլ եւ զնոսա պատուոյն իւրոյ կցորդ առնէ՝ կացուցանելով ի վերայ աշխարհին գործակալս: Այլ եւ նոքաւք թեթեւացուցանէ զցնորս հոգւոց, զի մի՛ առաւել աշխատեսցի:*

Եւ Դանիել էր ի դրան արքունի<sup>□</sup> (Բ 49ա).

*Ոչ վասն այլ իրիք, քան թէ վասն սփոփելոյ յաստուածպաշտութիւն եւ յերկիւղ աւրինացն, այլ յաղաւթս միշտ, որ դուռն է երկնաւոր Արքային մտի:*

<sup>□</sup> Ընկալլալ թրգմ. մեջ. արքային:



[Գ]  
ՏԵՍԻԼ ՉՈՐՐՈՐԴ

Նաբուգոդոնոսոր արքայ թէպէտ ոչ եղեւ ըստ Աստուծոյ սրտի մտաւք, սակայն ունէր ի պատուի գտուրբս, եւ երկնչէր յԱստուծոյն իսրայէլի երկրորդ ասէ տեսլեան նորա առաջնոյն մինչեւ ցութ եւ տասն ամ արքայութեան իւրոյ, եւ ապա ի ներելն Աստուծոյ նմա եւ տալ յաջողումն տիրելոյ ազգաց բազմաց եւ լեզուաց եւ ի գերելոյն կրկին անգամ յութ ամ՝ թագաւորութեան իւրոյ զՅերեքոնիայ «կարծեաց զայն ի դիցն իւրոց եւ ի բախտից, զոր աստէղագէտքն պնդէին ասելով նմա որդի լինել Բելայ Քանանացոյ, որ ապստամբեաց յԱստուծոյ, շինեաց զաշտարակն եւ ի բաժանել լեզուացն աստուած անուանեցաւ եւ պաշտելետ զինքն՝ թագուցանելով ի նմանէ զչարամահ լինելն ի Հայկայ Աբեգեան, վասն որոյ պատրեալ ի բանից խաբողաց եւ կուրացեալ ի հոգւոց եւ ի պատրանաց մեծութեանց»<sup>1</sup> կանգնեաց զպատկերն Բելայ եւ արար զչարիս զայս, զոր ասէ:

(321ա) Իսկ զի՞ ասէ, թէ՛ Տեսիլ Չորրորդ: «Սովոր է Գիրքս այս զպատմութիւն ինչ իրաց տեսիլս կոչել»<sup>2</sup> իբր այն թէ՛ ճառ չորրորդ: Կամ որ ի սմա գործեցաւ // Նրաչք եւ տեսիլ չորրորդին եւ նմանութիւն Որդւոյն Աստուծոյ ընդ անանիանս կացեալ ի մէջ հնոցին, զոր եւ ինքն՝ թագաւորն տեսանէր եւ ասէր. «Ոչ երիս արս արկանք ի հնոցին, զի՞ չորրորդ տեսանեմ»: Վասն որոյ յիրաւի գրեցաւ Տեսիլ Չորրորդ, յորում պատմին զարմանալիք սքանչելեացն, որոյ առաջարկութիւն եղեւ այսպէս, որ ասէ.

Յամին ութուտասներորդին Նաբուգոդոնոսորայ արքայի արար պատկեր ոսկի. բարձրութիւն անրա Կ(60) կանգուն եւ լայնութիւն անրա կանգուն Զ(6), եւ կանգնեաց զնա ի դաշտին Դեմեդայ լաշխարհին բարիլացոց (Գ 1).

«Զպատկերն Բելայ արար՝ զնախնոյն իւրոյ, որպէս ասացաւ, որ այնքան ասէին լինել հասակաւ, զորոյ զթիւ չափոյ հասակին

\* Վարդան. ցտասն եւ ութն ամ *փյս*. յութ ամ:

<sup>1</sup> Վարդան, 250բ:

<sup>2</sup> Վարդան:

ոսկով պատուէ»<sup>3</sup>, որ ի հայողական նիւթս պատուական է, որպէս եւ ինքն առակեալ եղեւ ի տեսիլ երազոյն յոսկի գլուխ: Դնէ եւ զժամանակն եւ զտեղին, զոր կանգնեաց առ ի հաստատութիւն պատմութեան: Իսկ նշանակաւ Կ(60)ն Զ(6) Ժ(10) է եւ ԺԶ(16), «զոր իմանալին Նաբուգոդոնոսոր զվեցաւրեա ստեղծեալ մարդս ջանա խաբել Ժ(10) զգայութեամբ՝ Զ(6) շարժումն գայթակղեցուցանել, ի ձախն՝ ձախողակի՝ չարեաւք, ի յաջն՝ կեղծաւորութեամբ եւ հպարտութեամբ, յառաջ՝ յորդորմամբ՝ ի մեղս, արագ գնալ՝ ի բաց ձգելով յետս ամենայն բարեաց, ի վեր ոչ հայել երկիւղիւ, այլ հայհոյութեամբ՝ ի վայր»<sup>4</sup>, խոնարհութեամբ, այլ «յերկիր հաստատել զգարչապարս իբր եւ տղմի՝ այսքան ախտից պահանջելով երկրպագութիւն»<sup>5</sup>: Իսկ Բաբելոն խառնակութիւն լսի, եւ «Միջագետք՝ հեղեղք խաբէութեան աստի եւ անտի»<sup>6</sup> հոգեկանք եւ մարմնականք, «եւ դաշտ ապականութեան Դեհերայ կոչեցեալ»<sup>7</sup>: Զի խառնակ կենաւք եւ մեղացն հեղեղաւք ապակաւնի այնպիսին:

(321բ) Եւ արձակեաց ժողովել զգարաւարս զգարագլուխս// եւ զգուսակալս, զպետս եւ զբոնատրս եւ զգործակալս եւ զամենայն իշխանս աշխարհաց գալ ի նաւակատիս պատկերին, զոր կանգնեաց արքայն Նաբուգոդոնոսոր (Գ.2).

Ի կատարման պատկերին հպարտացաւ «զոռոզն այն՝ խաբեալ ի չարեն արար զգալի պատկերն, եւ առնէր նաւակատիս իբր նորոգումն կենաց եւ թագաւորութեան իւրոյ կարծելով: Եւ ժողովել հրամայեաց»<sup>8</sup> զգաւրավարս զառաջնորդս զաւրացն, զգաւրազուրս, զգլուխս հեծելոցն, «զկուսակալս, զկողմակալսն ի նմանէ կարգեալ»<sup>9</sup> աշխարհաց, զպէտս, որ էին իշխանք, զբոնաւրս, «զոր ինքն հնազանդեցուցեալ էր եւ զգործակալս, որ կայինի վերայ գործոցն արքունի եւ զամենայն իշխանս. զի ի

<sup>3</sup> Վարդան, 251ա:

<sup>4</sup> Անդ:

<sup>5</sup> Անդ:

<sup>6</sup> Անդ:

<sup>7</sup> Անդ:

<sup>8</sup> Վարդան, 251աբ:

<sup>9</sup> Անդ:

գալն ածէին եւ զնոսա, որոց իշխէին, զի հանդէս մեծ կամէր գործել»<sup>10</sup>:

Եւ ժողովեցան կուսակալք եւ զարավարք եւ զարագլուխք, պետք եւ բռնատրք եւ մեծամեծք գործակալք եւ ամենայն իշխանք աշխարհաց՝ գալ ի նաւակատիս պատկերին, զոր կանգնեաց արքայն Նաբուգոդոնոսոր, եւ կային առաջի պատկերին, զոր կանգնեաց Նաբուգոդոնոսոր (Գ 3).

*Ըստ հրամանին եղեւ իրն, եւ եկեալ ժողովեցան առաջի պատկերին, ուր զտաւնսն կատարելոց էր: Բայց ինձ զարմանալ գա ընդ անմտութիւնս նոցա, որ քան զանշունչսն եւս առաւել անգագայացեալք էին եւ այնքան բազմութիւնքն միոյ ուրուական պատկերին երկրպագուք լինէին՝ եկեալ պէս-պէս ընծայիւք եւ պատարագաւք:*

Եւ քարոզն կարդայր եւ ասէր. Ձեզ ասի ազգ եւ ազինք եւ լեզուք (Գ 4).

*Մեծաւ ձայնիւ գոչէր քարոզն, թէ՛ Ձեզ ասի. իբր թէ չիշխել յանուանէ կոչել թագաւոր կամ Նաբուգոդոնոսոր, այլ թէ՛ հրամանէ ասէ, եւ զումէն ոչ յաւելոյր, կամ ամենեցունց ի պատկերէն եւ յայլոց պաշտելեացն:*

(322ա) Յորժամ լսիցէք զձայն փողոյ սրնկի, թմբկի //, զքնարի եւ զտաւղի եւզերոց միաբանութեան անկամիջիք եւ երկիր պագամիջիք պատկերին, զոր կանգնեաց արքայ Նաբուգոդոնոսոր եւ որ ոչ անկեալ երկիր պագամիցէ ի մնիմ ժամու անկցի ի հնոց հրոյն բորբոքելոյ (Գ 5-6).

*Պէս-պէս յեղանակս ձայնի յաւելինեալ էր «Նաբուգոդոնոսորայ փողս եւ քնարս, սրինկս, որ ցնծղա կոչի եւ այլս փոխանակս, որ ի տաճարին Տեառն սաղմոս, զոր նա յաւելուածով արար յամենայն ազգ ձայնատու արուեստից ետ բերել յաշխարհաց, զորս չարն ուսոյց՝ սկսեալ ի դստերաց եւ յորդւոցն Կայենի արբեցութիւն առնել ընդ ականջս խելացն»<sup>11</sup>, որպէս գինի ընդ բերանս մտացն «եւ այնու զերէ զմիտս»<sup>12</sup>: Զի թմբրեալ նախ ձայնիւն կատարեսցեն զհրամանն եւ սպառնալիք հրոյ, որ ոչ հնազանդեսցի:*

Եւ եղև իբրեւ լուսն ազգն զձայն փողոյն սրնկի եւ զտաւղի, զնուագարանաց եւ զամենայն ազգաց արուեստականաց անկամէին ամենայն ազգն

<sup>10</sup> Անդ:

<sup>11</sup> Վարդան, 251բ:

<sup>12</sup> Անդ:

եւ ազիւք եւ լեզուք եւ երկիր պագանէին պատկերին ոսկույ, զոր կանգնեաց արքայ Նաբուգոդոնոսոր (Գ 7).

*Անկատարքն մտաւք յորժամ ի ձայնիցն արբենային «անկանէին յորոգայթն եւ երկիր պագանէին հող լիզելով նման աւձին (հմմտ. Միք. է 17): Ազգքն ասէ եւ լեզուք, իբրու թէ ՀԲ (72)քն, որ բաժանեցան աշտարակաւն, յորոց ունէր հնազանդս, զորս Արարիչն կարգեաց սահմանս ազգաց եւ չարն խրոխհայր բառնալ եւ իւր առնել պատկերաւք եւ ոչ դադարէ, զորս կարէ, որպէս յայնժամ ներելովն Աստուծոյ հնազանդեցոյց, բաց յանանեանցն, զորոց»<sup>13</sup> ասէ.*

(322բ) Յայնժամ մատեան արք քաղղեացիք եւ եղեմ չարախասս զհրէիցն առ Նաբուգոդոնոսոր եւ ասեմ. Արքայ յախտեան կաց դու հրաման ետուր ամենայն մարդոյ, որ լսիցէ զձայն փողոյ սրնկի եւ զքնարի եւ զտաւղի// եւ զՆուագարանաց եւ զամենայն ազգաց արուեստականաց եւ ոչ անկեալ երկիր պագանիցէ պատկերին ոսկույ անկցի ի հնոց հրոյն բորբոքելոյ (Գ 8-11).

*Կերպարանք աստուածպաշտութեան ցուցին չարախասուութեամբն, բայց նախանձն իւրեանց ի գլուխ հանին եւ բարւոյն չար փոխանակ հատուցին, զի որովք փրկեցան՝ զնոսին ի մահ մատնեցին:*

Արդ, եմ աստ հրէաք, զորս կացուցեր ի վերայ գործոց աշխարհիս բաբիլացոց Սեդրաք, Միսաք եւ զԱբեդնագով, որ ոչ հնազանդեցան հրամանի քում արքայ, զդիս քո ոչ պաշտեմ եւ պատկերի ոսկույ, զոր կանգնեցեր, երկիր ոչ պագանեմ (Գ 12).

*Նախ ոչ յայտնեցին զանուանս մինչ զսրամտութիւն գրգռեցին եւ ապա ասացին, թէ Սեդրաք է, Միսաք եւ Աբեդնագով, որ զքո հրամանդ անարգեցին, զի «զդիս քո ոչ պաշտեցին մինչեւ ցարդ, որ է Արամագդ, եւ ոչ զոր արդ կանգնեցեր միայն. սոքա ի գործակալաց չէին եկեալ եւ բերեալ»<sup>14</sup> զիւրեանց հնազանդսն:*

Յայնժամ Նաբուգոդոնոսոր սրտմտութեամբ եւ բարկութեամբ հրամայեաց ածել զՍեդրաք, զՄիսաք եւ զԱբեդնագով, եւ ածին առաջի թագաւորին (Գ 13).

<sup>13</sup> Վարդան:

<sup>14</sup> Վարդան:

*Բարկութեամբ ետ ածել յակամայ քարշանաւք եւ բերին առաջի նորա:*

Պատասխանի ետ Նաբուգոդոնոսոր եւ ասէ ցնոսա, թէ՛ արդարե՞ Սեդրաք, Միսաք եւ Աբեդնագով զդիս իմ ոչ պաշտէք եւ պատկերի ոսկւոյ, զոր կանգնեցի, երկիր ոչ պագանէք (Գ 14).

Արդարեւ. *որպէս թէ չէ հաւատալի՝ «զիա՞րդ ոք իշխէ եւ դուք, զորս մեծարեցի պատուով, որպէ՞ս անարգէք զիս»<sup>15</sup>:*

(323ա) Բայց արդ, պատրաստ լինիչիք, զի յորժամ լսիցէք զձայն փողոյ սրնկի եւ զթմբկի եւ զքնարի եւ զմիաբանութեան ամենայն ազգաց արուեստականաց// անկանիցիք եւ երկիր պագանէք պատկերին, զոր արարի, ապա թէ ոչ պագանիցէք երկիր՝ ի նմին ժամու անկանիցիք ի ճնոց հրոյ բորբոքելոյ: Եւ ո՞վ է Աստուած, որ փրկեսցէ զձեզ ի ձեռաց իմոց (Գ 15).

*Այսինքն «թէ՛ պատրաստ լինի՞ջիք յայսմհետէ զառաջինն թողում ձեզ»<sup>16</sup>, ապա թէ ոչ՝ եւ զայնորիկ խնդրեմ զվրէժ հրով. եւ ո՞վ է Աստուած, որ փրկեսցէ զձեզ. յիմարեալ մտաւք «ի մոռացոնս եկն ասացելոցն ի Դանիէլէ»<sup>17</sup>, եւ իբր փարաւոն խստացեալ սրտիւ ասէ՞ «Ո՞վ է Աստուած»<sup>18</sup> առ որս ասել է, թէ ո՞վ է՝ տեսցես, որպէս ասացին մանկունքն:*

Պատասխանի ետուն Սեդրաք, Միսաք եւ Աբեդնագով եւ ասեն ցարքայն Նաբուգոդոնոսոր. ոչ ինչ է պիտոյ վասն այսորիկ տալ քեզ պատասխանի, զի է մեր Աստուած յերկինս, զոր մեք պաշտեմք, կարող է փրկել զմեզ ի ճնոց հրոյն բորբոքելոյ եւ ի ձեռաց քոց ապրեցուցանել զմեզ (Գ 16-17).

*«Վասն այդ իրաց եւ ոչ պատասխանոյ ես արժանի, զի է մեր Աստուած յերկինս, որում երկնաւորքն եւ աշխարհ ամենայն վկայեն, որ կարող է ի հնոցէդ եւ ի ձեռաց քոց փրկել»<sup>19</sup>:*

Ապա թէ ոչ՝ այս ինչ յայտնի լիցի քեզ արքայ, զի զդիս քո մեք ոչ պաշտեմք եւ պատկերի ոսկւոյ, զոր կանգնեցեր, երկիր ոչ պագանեմք (Գ 18).

<sup>15</sup> Վարդան:

<sup>16</sup> Վարդան:

<sup>17</sup> Վարդան:

<sup>18</sup> Վարդան:

<sup>19</sup> Վարդան, 252ա:

*Ձի մի՛ թուիցի, թէ կաշառաւք պաշտեն, վասն զի փրկէ, ասեն, թէ եւ ոչ կամիցի փրկել, որ կարաւղն է յամենայնի, սակայն զիտեա, զի զդիս քո չեմք պաշտելոց, զի պատրաստ եմք մեռանել անուամբ նորա, քան ապրել անուամբ սնոտ[ե]աց քոց եւ պատուովդ քո մեծարիլ: Սոցա բանքն, ահա եւ «գործքն եւ հաւատքն հիմունք եղեն եւ յարացոյցք բոլոր լրման վկայիցն, որով եւ կցորդեցան բազմացն նահատակութեան»<sup>20</sup>:*

(323բ) Յայնժամ Նաբուգոդոնոսոր լի եղև արամտութեամբ եւ բար/կութեամբ եւ գոյն երեսաց նորա շրջեցաւ ի վերայ Սեդրաքայ, Միսաքայ եւ Աբեդնագովայ: Եւ ասէ. Ջեռուցէք զմնոցն է(7)ապատիկ, զի միգչեւ ի վախճան այրեսցին (Գ 19).

*Յորժամ լուաւ զայն, «գոր չէր լուեալ յումեքէ գունափոխ լինի յեռմանէ դառնութեան մաղձին եւ հրամայէ է(7)ապատիկ ջեռուցանել զհնոցն քան զսովորականն, զոր թերեւս ոչ միայն պատժարան էր կազմեալ անհնազանդիցն յահ եւ երկիւղ, այլ զի եւ կրակի երկիր պագանէր, կրակարան էր շինեալ յովով ծախիւք հաստահեղոյս եւ անշարժելի վիմաւք բրգամբք պատուածաւք գաւտէաւք եւ եռայարկ տամբ եւ դրամբ եւ գմբեթայարոյց երկայն եւ բարձր շինուածովք առ ընթեր պատկերին եւ քաղաքին Դեհերա կոչեցեալ, զոր տեսեալ է մեր մտեալ ի ներքս եւ զարմացեալ ընդ անխախտելի շինուածն եւ ընդ շատ վաստակն: Անդ հրամայէր արկանել զսուրս մանկունսն մինչ ի վախճան իբր կերակրել զպաշտելի իւր չաստուածսն, որք ոչ պաշտեցին զայլ աստուածսն նորա, զոր ինքն կանգնեաց»<sup>21</sup>:*

Եւ արք Ե (5) զարատրք զարութեամբ կապեցին զՍեդրաք, եւ զՄիսաք եւ զԱբեդնագով արկանել ի մնոց հրոյ բորբոքելոյ (Գ 20).

*Ճառդ յայտնի է. զի «Ե(5) արք զորաւորք յոյժ եւ ուժեղ բռնաւորք»<sup>22</sup> կապեցին զնոսա շղթայիւք: Իսկ նշանակաւ զհինկ զգայարանս կոչէ, որ հաւանին կապեալքն ի չարէն, քան զոր չիք զաւրաւոր կապ եթէ ոք ընդ երկիր եւ ընդ հեշտալի նորա ախտս կապի. «ընդ տես եւ ընդ լուր, ընդ հոտ եւ ընդ համ եւ ընդ կակ-*

<sup>20</sup> Վարդան:

<sup>21</sup> Վարդան, ուր սակայն մարաց *փխ*. Դեհերա:

<sup>22</sup> Վարդան:

*զագոյնս, որք ի լաւն կիզին աստուածային հրով սիրոյն որպէս եւ նոցայն<sup>23</sup>: Իսկ վատթարն կապի զաւրաւոր կապով<sup>24</sup>:*

(324ա) Յայնժամ արքն այնոքիկ կապեցան պատմունճանաւք վարտաւք, արտ-  
խորակաւք եւ զանկապանաւք// իրեանց եւ ընկեցան ի մէջ հնոցի հրոյ  
բորբոքելոյ. զի հրաման թագաւորին սաստականայր եւ հնոցին բորբոքել  
առաւել է(7) ապատիկ յոյժ (Գ 21-22).

«Կապեցան, ասէ վարտաւք, այս է՝ բարձիցն հանդերձիւք եւ արտախորակաւք»<sup>25</sup>, որ լսի արտաքին պսակ, զի ունէին «խոյր ի գլուխն նշանակ պատուոյ»<sup>26</sup> ի թագաւորէն կամ «գարդարուն՝ զոստափոկն»<sup>27</sup> ասեն արտախուրակ, իսկ զանկապան գլխոնճանն ասեն: Արդ, ոչ եթէ այնոքիւք կապեցան, այլ թէ գայնս ոչ մերկացին՝ իբր թէ ոչ է պիտոյ զարդարանք սոցա մեզ, որք հակառակք եղեն կրաւնից մերոց: Եւ կապեցին զնոսա երկաթի կապանաւք եւ արկին ի հնոցն սաստկացեալ ի թագաւորէն:

Եւ երեքին սոքա Սեդրաք, Միսաք եւ Աբեդնագով անկան ի մէջ հնոցին կապեալք եւ գնացին ի մէջ հրոյն, արհնէին եւ գովէին զԱստուած (Գ 23-24).

«Թիւ խորհրդապաշտ, որ պարունակեալ ունի յինքեան յոլով հանճարս մտաց մինչեւ ի նոյն իսկ յիսկականն Աստուած, որ միով բնութեամբ յերիս անձինս իմացեալ պաշտի յողջ հաւատս»<sup>28</sup>, զորս ակրհնէին եւ գովէին, զի արժանի եղեն վասն անուան նորա կիզիլ, որպէս առաքեալքն տեառն յաւժարութեամբ, զի գայս նշանակէ անկանն, վասն որոյ հուր գունդ կապեալ հաւեաց զերկաթն, եւ արձակ արար զնոսա, որք գնային ի մէջ հրոյն, որպէս ասաց:

Յարեաւ Ազարիա եւ յաղաւթս եկաց, այսպէս երաց զբերան իր ի մէջ հրոյն ասէ (Գ 25).

Յայտ է՝ անկմանէն ի բերանս, քանզի մոռանայր հուրն զբնութիւն իւր որպէս եւ նոքա՝ զսեղան թագաւորին եւ զպատիւ

<sup>23</sup> Վարդան:

<sup>24</sup> Բառս լուսանցքից:

<sup>25</sup> Վարդան 252բ:

<sup>26</sup> Վարդան:

<sup>27</sup> Վարդան:

<sup>28</sup> Վարդան:

(324բ) *եւ զահ նորա եւ զերկայնաչափ ոսկիապատ պատկերն, վասն այսորիկ զնացին իբր արձակարանի եւ կալով յաղաւթս աւրհնէին զԱստուած՝ առաջնորդելով Ազարիա միջնն եղբայր// կցորդակցութեամբ աւագոյն եւ կրտսերոյն եւ ի մի բերան ի միոյ հոգւոյ վասն միոյ փրկութեան երգէին ասելով.*

Արմնեալ եւ Տէր Աստուած հարցն մերոց, փառաւորեալ է անուն Քո յաիտեան (Գ26).

*Այսինքն՝ ի հարցն հետէ յայտնի են սքանչելիք Քո եւ պատմի մինչ ի կատարած աշխարհի: Կամ թէ վասն հարցն երախտեաց արարեր զայս սքանչելիս եւ ոչ վասն մեր արժանաւորութեան: Ուստի աւրհնեմք զսքանչելագործ անուն Քո անոլորտ եւ անեզեր ժամանակաւ, այս է՝ յաւիտեանն:*

Չի արդար եւ յամենայնի, զոր ածեր ի վերայ մեր եւ ամենայն գործք Քո ճշմարիտ են (Գ 27).

*Բերան եղեալ ազգին խոստովանութիւն տան երեսաց ժողովրդեանն:*

Եւ ուղիղ են ճանապարհք Քո եւ ամենայն դատաստանք Քո՝ ճշմարտութիւն (Գ 27ա).

*Ճանապարհ՝ զաւրէնս եւ դատաստան՝ զգերութիւն:*

Եւ իրաւունս ճշմարտութեան արարեր ըստ ամենայնի, զոր արարեր մեզ եւ քաղաքին սրբոյ հարցն մերոց Երուսաղէմի (Գ 28).

*Մեզ ասեն զգերութիւնս եւ հարցն մերոց սուրբ քաղաքին Երուսաղէմի զաւերն իրաւամբք արարեր, քանզի այս յոյժ ճշմարտութիւն է, յորժամ դատեալն զդատաստանն արդար համարի: Իսկ քաղաք սուրբ զԵրուսաղէմ ոչ միայն, զի սրբութիւն անդ էր, ասէ, այլ զի սրբեալ էր յամենայն քաղաքաց ի բաժին Աստուծոյ, ըստ այնմ՝ Եղիցի տեղի մի, եւ եղից զանուն քաջութեան իմոյ ի նմա: Բայց թէ ասիցէ ոք, թէ նոցա իրաւունք էր գերելն, իսկ քաղաքին զի՞նչ իրաւունք էր աւերելն: Նախ այս է պատճառն, զի յորժամ զնոսա գերեաց իրաւամբք որպէս ասացերդ քաղաքն ամայի եւ աւերակ մնաց, եւ զերկրորդն մարգարէս ասեն, զի զ«եւ»ն շաղկապ դնեն, թէ եւ քաղաքին, որպէս թէ այնքան ծանրացան չարիք մեր, զի ոչ միայն զմեզ, այլ եւ զտեղի մեր աւերեալ տապալեաց, վասն որոյ եւ զկնի ասէ.//*

(325ա)



Զի ճշմարտութեամբ եւ յիրաւի ածելը զայս ամենայն վասն ամենայն վասն մեղաց մերոց (Գ. 28ա).

*Ոչ ես, ասէ, դու պատճառ այսմ ամենայնի, այլ՝ մեղքն մեր:*

Զի մեղաք, անարիմեցաք յապստամբք լինել ի քէն եւ առաւել մեղաք յամենայնի եւ պատուիրանաց քոչ ոչ անսացաք (Գ. 29-30).

*Նախ մեղկացեալ թուլացաք մտաւք եւ ապա արիացուցուցիչ՝<sup>29</sup> աւրինացն արտաքս վազեցաք եւ եղաք ապստամբ ի Քէն հեռանալովն: Եւ այս ոչ չափաւոր կամ ակամայ, այլ կամաւ, այս է՝ առաւելն անուկնդիր եղաք պատուիրանաց Քոց:*

Ոչ պահեցաք եւ ոչ արարաք որպէս պատուիրեցեր դու մեզ, զի բարի լիցի մեզ (Գ. 30).

*Զայս աւրէնս ասէ ոչ պահեցաք, որ բարի խոստանայր մեզ ի պահելն, զոր իբրեւ բարեկամաց պատուիրեցեր եւ շահ մեզ էր պահելն եւ ոչ՝ քեզ:*

Եւ զամենայն, զոր ածեր ի վերայ մեր եւ զամենայն, զոր արարեր մեզ, արդար դատաստանաւ արարեր (Գ. 31).

*Ապա ուրեմն զտանջանս, զոր կրեցաք, արդար դատաստանաւ կրեցաք, վասն զի արժանաւոր էաք:*

Մատնեցեր զմեզ ի ձեռս թշնամեաց մերոց անարիմաց խստաց եւ ապստամբողաց (Գ. 32).

*«Ոչ միայն բաբելացւոց, այլ եւ մադիանացւոց եւ ասորոց եւ եգիպտացւոց եւ այլ ազգաց»<sup>30</sup>, զի զոր սիրեցաք զանաւրէնութիւն եւ զխստութիւն եւ զապստամբութիւն նոցունց, եւ մատնեցեր զմեզ թշնամեաց:*

Եւ ի ձեռս թագաւորի անարիմի եւ չարի քան զամենայն երկիր (Գ. 32ա).

*«Զի դժուարաջինջ չարիքն այսպիսի բովոյ կարաւտացան»<sup>31</sup>:*

Եւ արդ, ոչ գոյ մեզ ժամ բանալ զբերանս մեր, զի ամալթ եւ նախատինք եղաք ծառայից քոց պաշտանէից (Գ. 33).

<sup>29</sup> Չիք ՆԲԳ:

<sup>30</sup> Վարդան, 252բ:

<sup>31</sup> Վարդան:

(325բ) Այժմ ասեն ի տանջանացս ժամ ոչ է յարմար բանալ զբերան եւ խնդրել զփրկութիւն ի Քէն, զի գործքն մեր//, որ զտանջանս ածին, եւ հարքն, որ փրկեցան, ամաչեցուցանեն զմեզ նախատանաւք: Կամ թէ չունիմք համարձակութիւն ոչ եւ մի ժամ բանալ զբերանս եւ տալ պատճառս, թէ ոչ կարացաք պահել զաւրէնս եւ ամաչեմք որդիք ասել զմեզ հարցն, զի նոքա մարդիկ էին եւ պահեցին եւ մեք նախատինք եղաք նոցին:

Այլ մի՛ մատներ զմեզ ի սպառ վասն անուան Քո մի՛ ցրեք զուխտս քո եւ մի բացէ առնէր զողորմութիւնս Քո ի մէնջ (Գ.34-35).

Յամենայնէ վհատեալ միայն յայս յենումք, զի չես իբրեւ զմարդ՝ պահելով ոխս, վասն որոյ ողորմած կոչիս եւ ի ուխտս հարցն, որոց երդուար, թէ՛ «հարից գաւազանաւ» (Սաղմ. 2Ը 33), բայց զողորմութիւն իմ ոչ արգելից: Արդ, ի սոսին վստահացեալ աղաչեմք փրկել:

Վասն Աբրահամու սիրելոյ Քո եւ վասն Իսահակայ ծառայի եւ Իսրայելի սրբոյ Քո (Գ.35).

Վասն Աբրահամու սիրելոյ, զոր սիրեցեր եւ Իսահակայ, զոր խոյլն գնեցեր ծառայ կամակատար կամաց Քոց եւ Իսրայելի, որ սուրբ հաւատս կալաւ առ Քեզ եւ աներկմիտ:

Որոց խոստացար բազմացուցանել զաւակ նոցա, որպէս զաստեղս երկնից եւ որպէս զաւազ զառ ափն ծովու (Գ.36).

Ջխոստումն բազմազաւակութեան կրկնեցեր երիցն առնել անթիւ կամ լուսատու այլոց իբրեւ զաստեղս եւ արգելիչ փոճովութեան իբրեւ զաւազ ալեաց ծովու:

Եւ արդ, Տէր, նուաղեցաք մեք քան զամենայն ազգս եւ եմք տառապեալք ամենայն յերկրի այսար վասն մեղաց մերոց (Գ.37).

Որք ոչ ունին աւրէնս եւ մարգարէս եւ չեն ի մեղադրութեան:

(326ա) Եւ ոչ գոյ ի ժամանակի իշխան, մարգարէ եւ առաջնորդ, ոչ ողջակէզք եւ ոչ զոհք եւ ոչ պատարագք եւ ոչ խումկք եւ ոչ տեղի տալոյ երախայրիս առաջի քո եւ գտանել զողորմութիւն ի Քէն (Գ.38) //.

Հատաւ, սպառեցաւ ի մէնջ այս ամենայն. մարգարէ եւ առաջնորդ, տաճար եւ սեղան եւ խունկ, որով ողորմէիր մեզ, վասն

զի «մեք ճշմարիտ չեղաք հաւատարիմ որպէս ամենայն երկիր՝ սնոտեաց իւրոց: Բայց գուշակէր բան աղաւթից նոցա զարդի թշուառութիւնս, զի յայնժամ յերուսաղէմ նուիրէին Աստուծոյ մնացեալքն եւ առաքէր գերին նիւթս պատարագաց, եւ մարգարէանային Երեմիա եւ Եզեկիէլ եւ Դանիէլ»<sup>32</sup> թէպէտ ոչ յաճախ որպէս յառաջն իսկ մինչ ոչ եւս:

Այլ անձամբք բեկելովք եւ հոգւովք տառապանաց ընդունելի լիցուք որպէս գողջակէզս խոյոց եւ զուարականաց եւ որպէս բիրաւորս գառանց պարարտից (Գ. 39-40).

Անձամբք ասեն զպարտս պատարագացն վճարեմք, զոր ոչ մատուցաք, վասն որոյ եւ բարձաւ ի հնոցիս, որ արարեր մեզ «տաճար ի վերայ սրտիցս սեղանոյ, որ բեկեալ է ամբարտաւանութենէ եւ ոգւով, որ տառապեալ է ի չարեաց քահանայագործէ զԴաւթայն, թէպէտ արագաւրհնութիւն եւ «զսիրտ սուրբ»՝ սեղան եւ «զհոգի խոնարհ»՝ քահանայ «Աստուած ոչ արհամարհէ» (Սաղմ. Ծ 19) այլ ընդունի իբրեւ խոյս եւ զուարակս եւ զգառինս, զոր քահանայն եւ իշխանն եւ ամենայն ժողովուրդն մատուցանէին»<sup>33</sup>:

Այնպէս ընդունելի լիցի պատարագս մեր այսար առաջի Քո, զի կատարեալ գտցուք զկնի Քո եւ չիք յամալթ յուսացելոցս ի Քեզ (Գ. 40).

Կատարեալ զպատարագս մեր ընկալ, որով գամք զհետ Քո՝ անամաւթ մնալով ի նոյն:

Եւ արդ, գամք զհետ Քո ամենայն սրտիւ մերովք երկնչիմք, ի Քեզ խնդրենք զերեսս Քո, Տէր մի ամալթ առնէր զմեզ (Գ. 41-42).

Գամք ոչ ի հարկէ, այլ՝ կամաւք եւ յաւժարութեամբ՝ զերկիւղ քո ունելով ի սիրտս մեր եւ ցանկամք տեսանել զքեզ կամ զխնամս քո խնդրել ի վերայ մեր: Արդ, մի՛ ամաչեցուցանել զմեզ զրկել ի յուսոյ մերմէ:

(326բ) Այլ, արա առ մեզ ըստ հեզուրթեան Քում եւ ըստ բազում//ողորմութեան Քում փրկեա զմեզ վասն սքանչելեաց Քոց, Տէր, եւ փառաւորեսցի անուն Քո յալիստեան (Գ. 43).

<sup>32</sup> Վարդան, 253ա:

<sup>33</sup> Վարդան:

*Ձեմք ասէ արժանի այդ շնորհաց տեսանել զՔեզ, որով փրկիմք, այլ ըստ Քո քաղցրութեանդ եւ ողորմութեանդ արա, զի ի փրկելն զմեզ սքանչելեալք Քո անուանդ լիցի փառաւորութիւն:*

Յամաւթ լիցիս ամենքեան, որ չարչարեն զճառայս Քո եւ ամաչեցեն յամենայն բռնութեան իրեանց եւ զարութիւնք անցա խորտակեցիս (Գ.33).

*Քո ծառայիցս չարչարիչքն ամաչեն մանաւանդ յորժամ զմեզ փրկես նոցա բռնութիւն ամալթալից լիցի եւ չիշխեն զայլ ոք չարչարել, այլ մանրին հնարք զաւրութեանց նոցա:*

Եւ ծանիցեն, զի դու եւ Տէր Աստուած միայն, որ փառաւորեալդ եւ ի վերայ ամենայն տիեզերաց (Գ.45).

*Ձի իբրեւ զմի ի չաստուծոցն իւրեանց կարծեն զՔեզ, ի ձեռն սքանչելեացն ծանիցեն զՔեզ միայն Աստուած, որ յամենայն տիեզերաց աւրհնիս:*

Եւ ոչ դադարեիս, որք արկիս զնոսա սպասաւորք թագաւորիս ի հնոցս բորբոքելոյ Աւթիս եւ ձեթով, վշով եւ որթով (Գ.46).

*«Հակառակքն ոչ դադարէին ի բորբոքելոյ զհուրն, զի հրաման թագաւորին սաստիկ էր եւ նիւթն կարի իմն ազդողական՝ ձեթ եւ Աւթ, վուշ եւ չոր փայտ որթոյ. երկուքն պարարս եւ գէջ, եւ երկուքն ցամաք եւ չոր: Գէջն նշանակ ջրոյ եւ աւդոյ, եւ չորն հրոյ եւ երկրի, զոր զինեաց եւ զինէ չարն ընդդէմ չորքնիւթեայ բնութեանս, որ ոչ կարաց հերքել լաւացն եւ ոչ կարէ զհուր սիրոյն Աստուծոյ յազլթել սէր տարրեղինացն, որ բորբոքէ զցանկութիւն իշխանութեան եւ ընչից, որ են չոր եւ զհեշտութիւնն գինւոյ եւ կանանց, որ են գէջ: Թէպէտ եւ է(7)ապատիկ վառէ թշնամին»<sup>34</sup>, որ ԽԹ(49) կանգունն վասն մերկանալոյ «գէ(7) արփի շնորհս Հոգւոյն ի յէալթն դար կենցաղոյս հակառակ է(7) զգալարանացս»<sup>35</sup>.*

(327ա) *Որպէս եւ ասէ//.*

Եւ ելանէր դիզանէր բոցն ի վերոյ քան զհնոցն ի քառասուն եւ յիննս կանգուն (Գ.47).

<sup>34</sup> Վարդան, 253աբ:

<sup>35</sup> Վարդան, 253բ:

«Նաբուգոդոնոսոր զԲԺ(12)ան ակունս, որ ի լանջս քահանայապետին լինէր ի վերայ վակասին առեալ ի լանջս պատկերին եղ, որ կայր առ ընթեր հնոցին, եւ բոցն երկայնեալ մինչեւ ցանդր պատկառէր յանուանէն յԱստուծոյ, որ յակունսն եւ ԽԹ(49) կանգուն էր մինչեւ ցայն վայր, որ պատկերին»<sup>36</sup>, զի բովանդակն Կ(60) կանգուն ասացաւ: Կամ թէ որպէս ինքզ ասէ կրկին պատճառս: Իսկ առ ի միտս ԽԹ (49) կանգունն է(7). է(7), որ նշանակէ զէ(7) դար կենցաղոյս, որ է(7) ամբն չափի, որպէս ասացի որում բարձրացեալ դիզանայ, հրային ախտից ցանկութիւն բորբոքեալ է յիմանալոյն Նաբուգոդոնոսորայ եւ շրջապատեալ այրէ զհոգի եւ գմարմին քողէից աղանդաւորաց եւ չարացելոց մարդկան յաւրինակ մշտնջենաւոր գեհնոյն: Իսկ առաքինիքն ըստ նմանութեան երից մանկանցն ի մէջ ցանկութեան մարմնոց ողջախոհութեամբն անկիզբէիք մնան որպէս գալ Բանին երկրորդ անգամ յաշխարհ, յորում բառնին անբարիշտք եւ պակասին մեղաւորք եւ խառնին սուրբքն ի Սուրբն անջրպէտ միութեամբ:

Եւ շրջեալ պատէր հուրն շուրջ զհնոցսն եւ այրէր, զորս գտանէր ի քաղդէացոց անտի (Գ 48).

«Շուրջ զհնոցսն երկայնեալ պատէր հուրն այրելով զքաղդէացիսն՝ զհրոյն բորբոքիչսն եւ որք փութային տեսանել զկորուստ նոցա»<sup>37</sup>, զոր չափեալ այնչափ գտին:

Եւ հրեշտակ Աստուծոյ էջ եկաց ընդ ազարեանսն ի հնոցի անդ եւ թաւթափեաց զբոց հրոյն ի հնոցէ անդի եւ արար ի մէջ հնոցին որպէս հողմ ցաղազիւն, որ շնչիցէ (Գ 49-50).

(327բ) Հրեշտակ մեծի խորհրդոյն Միածին Որդին, արարիչն հրոյ, զոր տեսեալ հրոյն ոչ միայն զայրեցողութիւն թողեալ եղեւ ցաղազիւց քաղցրագոյն աւղով//, այլ եւ այնքան երկայնածիզ գետնատարած խոնարհութեամբ երկիր պագանէր:

Եւ ոչ մերձեցայր ամենեւին հուրն ի նոսա, ոչ տրտմեցուցանէր եւ ոչ անդէր զնոսա (Գ 50ա).

<sup>36</sup> Վարդան:

<sup>37</sup> Վարդան:

*Զլոյսն միայն ունելով ի պայծառութիւն մանկանցն առանց նեղութեան, եւ հրովն զարտաքինսն կիզոյր: Եւ այս եղեւ յիջմանէ Որդւոյն Աստուծոյ, զի թէ ճայն Տեառն Հատանէ զբոց ի հրոյ՝ որչա՞փ մերձաւորութիւնն էութեան՝ յաւրինակ հանդերձեալ դատաստանին:*

Յայնժամ երեքեան որպէս ի միոջէ բերանոյ արհնէին, գովէին եւ փառաւոր առնէին զԱստուած ի մէջ հնոցի հրոյն, եւ ասէին (Գ 51).

*Յորոյ գերեան խնդրեցին տեսանել, եւ տեսեալ մերձ հոգէ՝ խառնեցան՝<sup>38</sup> եւ զաւրհնութիւն առ նա դարձուցեալ ասեն.*

Արհնեալ եւ դու Տէր Աստուած հարցն մերոյ, գովեալ եւ առաւել բարձրացեալ յաւիտեան (Գ 52).

*«Որ եկիր առ Աբրաամ եւ կոչեցեր զքեզ Աստուած երկնից, եւ արդ, ցուցեր երիցս մեզ»<sup>39</sup> եւ թէ գովիս վասն սքանչելեաց քոց, բայց ի վեր ես քան զգովութիւն մեր, եւ բարձր է եւ առաւել եւ յաւիտեան ունիս զգովութիւն եւ ոչ ի մէնջ ասացեալ.*

Եւ արհնեալ է անուն սուրբ փառաց քոց գովեալ (Գ 52ա).

*Զասացեալ որ էն անուն եւ զոր առնլոց է զՅիսուս Քրիստոս, զոր ամենայն լեզու խոստովանեսցի Տէր զՅիսուս, ես եւ զայն, զի ոչ բնութեամբ անուն գիտեմք, այլ զփառաց անունն գովեմք եւ աւրհնեմք, զի այն անհաս է:*

Արհնեալ եւ ի տաճարի փառաց սրբութեան Քո, գովեալ [եւ առաւել բարձրացեալ յաւիտեան] (Գ 53).

*«Տաճար զերկինս եւ զհնոցն կոչէ՞<sup>40</sup>, որով առաւել փառաւորի:*

Արհնեալ եւ, որ հայիս յանդումս եւ նստիս ի քրովբէս գովեալ [եւ առաւել բարձրացեալ յաւիտեան] (Գ 55).

*Որպէս ետես կառս քերովբէականս ի վերայ Քոբար զետոյ (տե՛ս Եզեկ. Ա, Ժ): «Եւ անդումս զԲաբելոն կոչէ եւ որոյ վերայ երկիր կայ հիմնացեալ՝<sup>41</sup>:*

<sup>38</sup> *Չիք* ՆԲՅ, բայց Վարդանի մոտ՝ հոգեխառնութեամբ (253բ):

<sup>39</sup> Վարդան, 253բ, ուր՝ երիցն *փյս*. երկնից, մեջ *փյս*. մեզ:

<sup>40</sup> Վարդան, 254ա:

<sup>41</sup> Վարդան:

Արհմեալ ես ի վերայ աթոռոյ արքայութեան Քո, գովեալ [եւ առաւել բարձրացեալ յաւիտեանի] (Գ. 54).

*Նոյնդ է, զոր լուաւ մարգարէն, թէ՛ «Աւրհնեալ են փառք Տեառն ի տեղւոջէ իւրմէ» (Եզեկ. Գ. 12) //:*

Արհմեալ ես ի վերայ հաստատութեան երկնից գովեալ եւ [եւ առաւել բարձրացեալ յաւիտեան] (Գ. 56).

*Ի վեր է քան զհաստատութիւնդ եւ Արարիչ նմին, յորմէ աւրհնիս, ըստ այնմ. «Զարարածս ձեռաց Նորա պատմէ զհաստատութիւն (Սաղմ. ԺԸ. 2):*

Արհմեցեք ամենայն գործք Տեառն զՏէր, արհմեցեք եւ բարձր արարեք զՆա յաւիտեան (Գ. 57).

*Ի տեսլենէն Աստուծոյ աստուածագեցեալ չհամարին ինքեանս բաւական աւրհնելոյ, «այլ ձայն տուեալ բոլոր մասանց արարածոց կոչեն յաւրհնութիւն իւրեանց սեփական Տեառն եւ Արարչին, յորս մոլորեցոյց հակառակորդն ճշմարտին ի սուտն հայրն ստութեան»<sup>42</sup>: Վասն որոյ ընթհանրական անուամբ զամենայն գործս Աստուծոյ հրաւիրէ զիմանալիս եւ զգալիս յաւրհնութիւն Աստուծոյ: Էր վասն զի բերան եղեալ արարածոցս «իբր գլուխ սորին եւ շաղկապ իմանալի եւ զգալի աշխահին»<sup>43</sup>, աւրհնութեամբ միաւորէ կամ թէ մարդն իսկ է վայելող բարեաց եւ ի պէտս ինքեան վարէ: Վասն այսորիկ աւրհնէ գտուողն բարեաց:*

Արհմեցեք երկինք զՏէր, արհմեցեք [եւ բարձր արարեք զԱստուծոյ յաւիտեան] (Գ. 58).

*Զբոլորն այժմ ի մասունս բաժանէ, եւ մի ըստ միոջէ թուէ, եւ նախ զերկինս յիշէ ըստ կարգի, որ ի սկզբանէ արարաւ:*

Արհմեցեք հրեշտակք Տեառն զՏէր [արհմեցեք եւ բարձր արարեք զՆա յաւիտեան] (Գ. 59).

*Նոքա զկնի երկնից եղեն փառաբանիչք Աստուծոյ ի դուրս Նորին կարգեալք եւ զսոսա յորգորեն ըստ Դաւթայ:*

<sup>42</sup> Վարդան:

<sup>43</sup> Վարդան:

Արհմեցեք ջուրք, որ ի վերոյ քան զերկինս, զՏէր արհմեցեք [եւ բարձր արարեք զՆա յաիտեան] (Գ 60).

*Յերկրորդումն աւուրն եւ սա գոյացաւ՝ բաժանեալ ի ջրոց կառուցեալ կամար ի վերոյ հաստատութեան անջրպետ իմանալեալ եւ զգալեալ: Իսկ նշանակաւ երկինք եկեղեցի եւ հրեշտակ առաջնորդք նոցին եւ ջուր երկնային աւազանն սուրբ:*

Արհմեցեք զարութիւնք Տեառն զՏէր, արհմեցեք եւ [բարձր արարեք զՆա յաիտեան], արհմեցեք արի եւ լուսիմ եւ ամենայն աստեղք երկնից զՏէր [արհմեցեք եւ բարձր արարեք զՆա յաիտեան] (Գ 61-63).

*Ըստ կարգի իջանէ յարարածս. զարութիւնք զգարդս երկնից ասէ, որպէս ի վերայ բերէ արեւ եւ լուսին եւ աստեղք, իսկ առ ի միտս՝ զչնորհս Աստուծոյ, որ յեկեղեցի եւ զԱւետարանն եւ զաւրէնս եւ զմարգարէս առակէ, ասէ//.*

(328բ)

Արհմեցեք անձրեք եւ ցաւք եւ ամենայն հողմք, զՏէր արհմեցեք [եւ բարձր արարեք զՆա յաիտեան] (Գ 64-65).

*Որ ի պէտս բուսուց յաւդոյդ գոյանան հողմավար ամպով, որ են բանք Սուրբ գրոց՝ ի հողմոյ Հոգւոյն շնչեցեալ ի պէտս բժշկութեան, ըստ Եսայեայ (հմմտ. Եսայի Խ 7):*

Արհմեցեք հուր եւ տապ, ցուրտ եւ տաւթ զՏէր, արհմեցեք եւ [բարձր արարեք զՆա յաիտեան] (Գ 66).

*Գոյանան եւ սոքա յաւդոյդ ի տարէրէ հրոյն մերձաւորութենէ հուրն եւ տապ, եւ ի ջրոյն կցորդութենէ՝ ցուրտն եւ տաւթն: Կամ լ՛Դ(4) եղանակն ասէ. զգարուն եւ զամառն՝ հուր եւ տապ, զձմեռն եւ զաշուն՝ ցուրտ եւ տաւթ:*

Արհմեցեք ցաղ եւ ձիւնաբեր սառն եւ ցուրտ եղեմն եւ ձիւն զՏէր արհմեցեք [եւ բարձր արարեք զՆա] (Գ 67-68):

*Յաճախ յամէ ի փոփոխմունս յաւդոյ, որ ի պատշաճ ժամանակի ըստ պիտոյիցն ներգործեն:*

Արհմեցեք տիւր եւ գիշեր, լոյս եւ խաւար զՏէր, [արհմեցեք եւ բարձր արարեք զՆա յաիտեան] (Գ 69-70).

*Տիւն ի գործ յարուցանող զմարդիկ, եւ գիշերն ի հանգիստ քնոյ կոչելով լոյս, որ զտիւն առնէ, եւ խաւար, որ՝ զգիշեր:*



Աւրինեցէք ամպք եւ փայլատակումք զՏէր [աւրինեցէք եւ բարձր արարէք զՆա յաիտեան] (Գ 71).

*Ձի ի սոցանէ լինին անձրեւք, որով դալարանան բոյսք յաւդոյտ, զոր փայլատակունք հրոյն ոչ կարեն ցամաքեցուցանել եւ ոչ նամկութիւն ջրոյն շիջուցանէ զհուր զաւրութեամբ ներգործողին:*

Աւրինեալ երկիր զՏէր, արինեացէ եւ բարձր արասցէ զՆա յաիտեան, արինեցէք լերինք եւ բարձումք զՏէր, արինեցէք եւ բարձր արարէք զՆա յաիտեան, արինեցէք ամենայն բոյսք երկրի զՏէր (Գ 72-74).

*Առեալ յամպոյղ զանձրեւն, եւ լերինք եւ բլուրք բուսովք պայծառացեալ ի տեսանելն զձեզ. այսպէս աւրհնի Աստուած:*

Աւրինեցէք աղբերք, ծով եւ գետք, զՏէր արինեցէք (Գ 75-76).

*Ձերիս այս որոջի ջուր, քանզի աղբերք ի ծովէ եւ գետք յաղբերաց զեղանին, եւ ծով դարձեալ յուխից գետոց լրանայ: Իսկ նշանակաւ մարգարէք եւ առաքեալք եւ վարդապետք ուրախացուցիչք քաղաքաց Աստուծոյ:*

(329ա) Աւրինեցէք կէտք եւ կայտառք, որ ի շուրս, թոչումք երկնից զՏէր արինեցէք [եւ բարձր արարէք զՆա յաիտեան] (Գ 77-78)//.

*Որ եզերք են կենդանեաց եւ առանձին բնակին: Իսկ կայտառք կերակուր նոցին սահմանեալ Արարչէն, եւ թոչումք, որ ի ջրոյ գոյացան եւ յաւդս վերանան:*

Աւրինեցէք ամենայն գազանք եւ անասուն զՏէր, արինեցէք եւ բարձր արարէք զՆա յաիտեան, արինեցէք որդիք մարդկան զՏէր, արինեցէք [եւ բարձր արարէք զՆա յաիտեան] (Գ 79-80).

*«Նախ պէտք ստեղծան եւ ապա վայելողքն իբր ճաշ եւ ճաշակերք, թագաւորութիւն եւ թագաւոր»<sup>44</sup>: Վասն այսորիկ ի կատարածի զմարդն եղ աւրհներգու սոքաւք Աստուծոյ:*

Աւրինեցէք Իսրայէլ զՏէր, արինեցէք [եւ բարձր արասցէ զՆա յաիտեան] արինեցէք քահանայք զՏէր, արինեցէք [եւ բարձր արարէք զՆա յաիտեան] արինեցէք ծառայք Տեառն զՏէր, [արինեցէք եւ բարձր արարէք զՆա յաիտեան] (Գ 81-83).

<sup>44</sup> Վարդան:

Պատուելի անուամբ յատուկ զժողովուրդն Իսրայել կոչէ, որ է աստուածատես եւ զքահանայն՝ միջնորդ Աստուծոյ եւ մարդկան եւ ծառա՝ զեկան, եւ աստ՝ նորս Իսրայել եւ քահանայ կատարեալ՝ կատարեալ պատարագիս սպասաւոր, որ զանձինս եւ զմարմին եւ զարիւն Տեառն պատարագեն, իսկ ծառայ զնեալք արեամբ Տեառն՝ զնորս հաւտս:

Աւրհնեցէք անձինք եւ շունչք արդարոց, [զՏէր, ավրհնեցէք եւ բարձր արարէք զՆա յաւիտեան] սուրբք եւ խոնարհ սրտիւք, Անանիա, Ազարիա եւ Միսայել, զՏէր ավրհնեցէք եւ բարձր արարէք զՆա յաւիտեան (Գ. 84-86).

Թուի թէ Հոգին, որ ի նոսա, զնոսին իսկ ասէ շնչով արդար եւ սրտիւ խոնարհ, զորոյ անուանսն յաւել, թէ՛ Անանիա, Ազարիա եւ Միսայել, զՏէր արհնեցէք: Բանիւ բարեբանելով կամ բարի գործովք եւ սուրբ սրտիւ եւ խոնարհ հոգով պատարագելով զբանական խաւս:

Չի փրկեաց զմեզ ի դժոխոց, այսինքն՝ յերկրպագութենէ պատկերին, որ դժոխք է պաշտողացն, եւ ի ձեռաց մահու ասպրեցոյց զմեզ՝ ի թագաւորին սպառնալեաց, եւ փրկեաց զմեզ ի հնոցեա եւ ի միջոյ բորբոքեալ բոցոյս եւ ի միջոյ հրոյս փրկեաց զմեզ (Գ. 87-88).

Որ է առ հաւատչեա անշիջանելի գեհենայն, յորմէ փրկեաց եւ փրկեսցէ ոչ ըստ մեր արժանաւորութեան, այլ իւրում ողորմութեան, որպէս ասէ.

Գոհացարուք զՏեառնէ, զի քաղցր է, զի յաւիտեան է ողորմութիւն Անորա (Գ. 89).

(329բ) Որ ասաց. «Առնեմ զողորմութիւն ի հազար ազգս սիրելեաց իմոց» (Ելք Ի 6):

Արհնեցէք ամենայն պաշտամեալք Տեառն զԱստուածն աստուածոց, արհնեցէք եւ գոհացարուք, զի յաւիտեան է ողորմութիւն [Անորա] (Գ. 90).

Թերեւս թէ զայս մեծաձայն գոչեցին եւ զամենայն պաշտաւնեայս Աստուծոյ ի ճշմարիտն Աստուծոյ ավրհնութիւն կոչեցին, թէ՛ զնմանէ գոհացարուք, որ ողորմութեամբ փրկեաց:

Եւ Նաբուգոդոնոսոր, իբրեւ լուսա զարհնութիւն Անոցա, զարմացաւ, յարեաւ տագնապաւ, եւ ասէ զմեծամեծս իր. Ո՞չ այս երիս կապեալս<sup>45</sup> ար-

<sup>45</sup> կապեալս՝ լուսանցից՝ ողորման նշանով:

կաք<sup>46</sup> ի մէջ հնոցին: Եւ ասեմ ցթագաւորն. Այոյ, արդար ես, արքայ: Եւ ասե թագաւորն. այլ եւս տեսանեմ արս Դ(4) արձակս եւ գնամ ի մէջ հրոյն եւ ապականութիւն ինչ ոչ գոյ ի նոսա, եւ տեսիլ չորրորդին անամ է որդւոյն Աստուծոյ (Գ 91-92).

*Ահիւ եւ երկիւղիւ տազնապեցաւ ի կրկին եւ յերեքկին սքանչելեացն, զի «ոչ միայն լսէր զձայն աւրհնութեան, այլ եւ տեսանէր, զի արձակ իբր ի ճեմարանի ի մէջ հրոյն գնային անվնաս մնալով ի նոյն եւ զչորրորդն եւս, զոր դաւանէր որդի Աստուծոյ իբր զայլ անարժանս արժանացեալ շնորհի մարգարէութեան նման Բաղամու եւ Կայիայիայ եւ փարաւոնի, զոր եւ աւղիւն ասաց, թէ՛ անամ որդւոյն Աստուծոյ, զոր չէր տեսեալ այնպիսի զոք եւ ոչ լսել, բայց թէ՛ Հոգին աստուածաբանեաց յայտնապէս զՈրդին Աստուծոյ, որ ի լրման աւուրց եղեւ Որդի մարդոյ նոյնն»<sup>47</sup>, որ էր Որդի Աստուծոյ ի ծոց Հաւր: Քննելի է, թէ է՞ր վասն սմա յայտնեցան իրքն. առաջին՝ զի զառատութիւնն շնորհացն ցուցանիցէ, որ ի ծովու ցողէ եւ յապառածս աղբիւր բղխէ, եւ երկրորդ՝ զի թշնամեացն վկայութիւն Հաւատարիմ է:*

Յայնժամ մատեաւ Նաբուգոդոնոսոր ի դուռն հնոցի հրոյն բորբոքելոյ եւ ասէ. Սեդրաք, Միսաք եւ Աբեդնագով ծառայք Աստուծոյ բարձրելոյ. ելէք եւ եկաք: Եւ ելին Սեդրաք, Միսաք եւ Աբեդնագով ի միջոյ հրոյն (Գ 93).

(330ա) *Մեղմացեալ// ի գոռոզութենէն վասն հրաշիցն խոնարհութեամբ մատչի ի դուռն հնոցին եւ կոչէ արտաքս զնոսա ծառայք Աստուծոյ բարձրելոյ ասէ, քանզի գիտացի, թէ ստոյք ծառայք էք Աստուծոյ, զի ծառայակից հուրն պատկառեաց ի ծառայակցացդ: Արդ, եկայք արտաքս, եւ ելքն երեքին:*

Եւ ժողովեցան Ասիարարք եւ զարավարք եւ կուսակալք եւ զարք թագաւորին եւ տեսանէին զարսն, զի ոչ տիրեաց հուրն ի մարմինս անցա եւ հեր գլխոյ անցա ոչ խանձատեցաւ եւ վարտիք ոչ այլագումեցան եւ հոտ հրոյ ոչ գոյր ի նոսա: Եւ երկիր եպագ թագաւորն առաջի անցա Տեառն Աստուծոյ (Գ 94-95).

*Ամենեքեան միահամուռ տեսին, զի բնաւին ոչ էին վնասեալ. ո՛չ ի մարմինս եւ ո՛չ ի հանդերձս: Վասն այնորիկ երկիր եպագ թագաւորն այնպիսի Տեառն, որ կարող է զարմանալիս զործել:*

<sup>46</sup> արկաք կապեալս:

<sup>47</sup> Վարդան:

Եւ պատասխանի ետ Նաբուգոդոնոսոր եւ ասէ. Աւրհնեալ է Աստուած Սեդրաքայ, Միսաքայ եւ արեդնագովի, որ առաքեաց զհրեշտակ իր եւ փրկեաց զծառայս իր, զի յուսացան ի նա եւ զբան թագաւորի ամարգեցիմ եւ մատնեցիմ զմարմինս<sup>48</sup> իրեանց ի հուր, զի մի՛ պաշտեսցեն եւ մի երկիր պագցեն ամենայն աստուածոց, բայց միայն Աստուծոյն իրեանց (Գ 95).

*Գործով եւ բանիւ պատուէ զճշմարիտն Աստուած եւ իրաւունս համարի զփրկութիւնն Աստուծոյ, զի յուսացան ի նա եւ վասն սիրոյ եւ հրամանի նորա զմարմինս իւրեանց ի հուր մատնեցին, զի մի՛ զճշմարիտն ընդ ստոյ փոխանակեսցեն: վասն այսորիկ փրկեաց զնոսա առաքմամբ հրեշտակի իւրոյ, որ է Միածին Որդի:*

Եւ արդ, ես տամ հրաման. ամենայն ազգ եւ ազիմք, որ խաւին հայհոյութիւն զԱստուծոյ Սեդրաքայ, Միսաքայ եւ Արեդնագովի՝ ի կորուստ մատնեսցիմ, եւ տունք անցա ի յափշտակութիւն, զի ոչ գոյ այլ Աստուած, որ կարող իցէ փրկել (Գ 96).

*Ոչ միայն չվնասել նոցա ետ հրաման, այլ եւ հայհոյութեամբ անզամ բերանաբաց, մի // իշխեսցեն լինել յԱստուած նոցա, եւ որ յանցանէ ի հրամանս այս՝ տուգանաւք պատժեսցի:*

Յայնժամ թագաւորն առաւել շքեղացոյց զՍեդրաք, զՄիսաք եւ զԱրեդնագով լերկրին բաքիլացոց եւ բարձրացոյց զնոսա (Գ 97).

*Ուստի ուսանիմք, թէ նախ չարչարանք եւ ապա՝ փառք, զի քան զառաջինն առաւել պատուեաց զկենդանի նահատակսն իշխան լինել բոլոր թագաւորութեան նորա եւ իբրեւ զայս ոչ առին յանձն, ապա աղաչանաւք զայս շնորհէ:*

Եւ աղաչեաց լինել անցա իշխան ամենայն հրէիցն, որ էին ի թագաւորութեան անրա (Գ 97ա).

*Զգերեալսն նոցա յանձնէ պահել զնոսա յաւրէնս իւրեանց, զի մի՛ բռնադատեսցին յումեքէ: Եւ յահ եւ երկիւղ յամենեցունց զչարախաւսն անանիանց արկանէր ի հնոցն, որք առ ժամայն կիզեցան: Բայց ասացեալ է սրբոցն, թէ «Մովսէսի երեսն փառաւորեցաւ եւ Եդիայ վերացաւ, անանիանքն ի հրոյն ապրեցան, եւ Դանիէլ՝ առիւծուցն ի հինն, զի անմիտ հրէայքն հաւատասցեն ի*

<sup>48</sup> զանձինս. լուսանցքում ուղղված՝ զմարմինս:

ձեռն այնպիսի առաջնորդացն, թէ գոյ Աստուած: Կոտորեցան, քարկոծեցան, խաչեցան առաքեալքն եւ առաջնորդք նորոյս, զոր տեսեալ մտաւորաց հեթանոսաց, հաւատասցեն, թէ գոյ հաստուցումն եւ յոյս անմահութեան: Իսկ զի մեք ամենայն գիշեր երգեմք զմանկանցն աւրհնութիւնն այս է պատճառն, զի ի մէջ ցանկութեան բարոյ եմք եւ արտաքուստ չարն փչէ եւ վառէ ազահութեամբ իբրեւ որթով, որ աստէն մոխիր է եւ ոչ ինչ եւ անդէն կայծ գեհենոյն եւ վուշ փաղաքուշ յորդորիչք նաւթ եւ ձէթ, որ կորստութիւնն, որ մոլորեցուցանեն զպոռնկութեան ախտն, յորմէ ապրեալք ասեմք. Աւրհնեալ ես, Տէր Աստուած հարցն մերոց: Հարս մեր գյառաջագոյն ննջեցեալս կոչեմք զսուրբս, որք արտասուացն ցաւով սրբեցին զանձինս: Վասն որոյ նախ զմեղայն ամեմք// եւ ապա վստահութիւն առեալ կոչեմք զարարածս կցորդ մեզ ի գոհութիւն քաւիչ ողորմածին Աստուծոյ»<sup>49</sup>, որում փա՛ռք յաւիտեանս:

<sup>49</sup> Վարդան, 255ա:

[Դ]  
ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Անպատմելի են «խորք մարդասիրութեան Աստուծոյ, թէ որպիսի<sup>1</sup> պատուեաց զբնութիւնս եւ հնարի ապրեցուցանել զայսքան մոռացկոտ եւ զդժուարահաւատն ազգս մարդկան, զոր ի Նաբուգոդոնոսոր է տեսանել, որ մոռացաւնք եղեն նմա փշրումն պատկերին եւ սքանչելիք հնոցին, եւ տիրեաց ի վերայ նորայ ախտ անբարտաւանութեան, զոր յիշեցուցանէ դարձեալ մարդասէրն ի ձեռն տեսլեան ծառոյն»<sup>1</sup>, վասն որոյ եւ տեսիլ ասէ զճառս, որպէս զի թէ «ոչ խոնարհի ապաշա[ւա]նաւք խոնարհելոց է նա եւ կամաց յանասնական անպատուութիւն փոխանակ զի զպարտին տուեալ յԱստուծոյ ոչ իմացաւ, զոր եւ ինքն պատմէ գրելով»<sup>2</sup>.

Նորուգոդոնոսոր առ ամենայն ազգս եւ ազիմս եւ լեզուս, որ բնակեցաւ են յամենայն երկրի, խաղաղութիւն բազմասցի ձեզ (Դ 98).

Ի սկիզբն նամակիս առ յամենայն ազգս զխաղաղութիւն բազմացուցանէ, զի յապահովացեալ ունկնդիր լինին գրելոցն:

Զնշանս եւ զարուեստս, զոր արար ընդ իս Բարձրեալն, հաճոյ թուեցաւ առաջի իմ պատմել ձեզ, թէ որպէս մեծամեծք եւ զարատրք են արքայութիւնն Աորա արքայութիւնն յաւիտեանից եւ իշխանութիւնն Աորա ազգաց յազգս (Դ 100).

Յուցանէ, «թէ Բարձրեալն է ցուցիչ հինկերորդ տեսլեանս, եւ նման են սքանչելիք, որոյ թագաւորութիւնն անեղծ է եւ յաւիտեանական, զոր ծանեայ ի ծառն երեւեալ, զորոյ մեկնութիւնն ոչ կարացին գիտել, որք ներքին պաշտելեացս են սպասաւորք եւ ոչ աստեղացն, զի բարձրեալն, որ ի վեր է քան զբարձունս, նա նախախնամէ զներքին արարածս, զի իւր են»<sup>3</sup> //: Վասն որոյ, որով զիս նախախնամեաց, կամեցայ պատմել ձեզ նշանաւք տեսլեանն եւ արուեստիւք փոխակերտութեան<sup>4</sup>:

<sup>1</sup> Վարդան, 255ա:

<sup>2</sup> Վարդան:

<sup>3</sup> Վարդան 255բ:

Ես Նաբուգոդոնոսոր ուրախ էի ի տան իմում եւ տարճացեալ (Դ 1).

*Յայտ է՝ անհոգ յերկիրէ մահու եւ ի փոփոխմանն կարծեաց, ըստ այնմ ասաց ի սրտի իւրում, թէ՛ Ոչ սասանեցայց ազգէ յազգ:*

Երազ տեսի եւ զարհուրեցոյց զիս եւ խոովեցայ յանկողնի իմում եւ տեսիլ զլիտյ իմոյ տազնապեաց զիս (Դ 2).

*«Ձի կարծիս էառ զծառոյն՝ զինքն գոլ եւ տեսիլ զլիտյ զմտացն ասէ, որ ներգործէ յանուջս»<sup>5</sup>:*

Եւ տուաւ յինէն հրաման ածել առաջի իմ զամենայն իմաստունս բարիլացոց, զի մեկնութիւն երազոյն ցուցցեն ինձ եւ մտիմ առաջի իմ գէտք եւ մոգք եւ իղձք եւ քաղդեայք եւ զերազն ասացի առաջի նոցա եւ զմեկնութիւն երազոյն ոչ ցուցին ինձ (Դ 3-4).

*Վասն այնորիկ ետ ածել, զի զերազն չէր մոռացեալ որպէս զառաջինն, եւ նոքա զմեկնութիւն խոստանային գիտել, բայց նոքա եւ ի մեկնութիւն տկար երեւեցան:*

Մինչեւ եկն Դանիէլ, որում անուն էր Բաղտասար, ըստ անուան Աստուծոյ իմոյ, զի հոգի սուրբ Աստուծոյ գոյ ի մնա (Դ 5).

*«Յետոյ եկն, զի երեւեացի Հոգին Աստուծոյ, որ ն նմա, զի այլք ի պիղծ հոգւոյն խաւսէին»<sup>6</sup> վասն այսորիկ զԱստուծոյն քննել ոչ կարէին:*

Յոր ասացի, թէ Բաղտասար իշխան գիտեա, զոր եւ գիտեմ, զիի հոգի սուրբ Աստուծոյ գոյ ի քեզ եւ ամենայն խորհուրդ ոչ ծածկի ի քէն (Դ 6).

*«Առ Դանիէլ զարձուցանէ զբանն, որ ըստ իշխանսն խաւսէր նախ եւ ասէ հաւատամ, թէ գիտես, զոր ինչ ես գիտեմ նախ քան զասելն իմ զերազն<sup>7</sup>, զի փորձելով գիտացի, թէ՛ Հոգի Սուրբ ի քեզ:*

(322ա) Արդ, լուր դու զտեսիլ երազոյն իմոյ, զոր տեսի// եւ զմեկնութիւն նորա պատմեացես ինձ (Դ 6ա).

<sup>4</sup> Չիք ՆԲՅ (բայց փոխակերտել. տես Բ, էջ 947):

<sup>5</sup> Վարդան:

<sup>6</sup> Վարդան:

<sup>7</sup> Վարդան:

*Վասն զի չեմ մոռացեալ զերազն, որպէս յառաջն մինչ զի զքեզ ստիպես ասել կամ թէ զիտեմ եւ փորձելոյ աղազաւ ծածկեմ, այլ միայն զմեկնութիւն պահանջեմ:*

Տեսանէի յանկողնի իմում, եւ ահա ծառ մի ի մէջ երկրի ի բարձրութիւն բազում յոյժ մեծացաւ ծառն եւ զաւրացաւ եւ բարձրութիւնն Աորա եհասաւ մինչեւ յերկինս եւ լայնութիւնն Աորա ի ծագս ամենայն երկրի, տերեւ Աորա գեղեցիկ եւ պտուղ Աորա բազում յոյժ եւ կերակուր ամենայն ի մտն: Ի Աերքոյ բնակեալ էին զազանք վայրի եւ յոստս Աորա հանգուցեալ էին թռչունք երկնից, եւ ի մտն կերակրէր ամենայն մարմին: Տեսանէի ի տեսլեան գիշերոյ յանկողնի իմում, եւ ահա զուարթուն եւ սուրբ իջանէր յերկնից եւ բարբաբէր զաւրութեամբ եւ ասէր այսպէս. Հատեք զծառոյ եւ քշեցէք զոստս դորա, թաւափեցէք զտերեւ դորա եւ թռչունքոյ յոստոյ դորայ, բայց զշառաւիղս արմատոյ դորա թողէք յերկրի երկաթապատ եւ պղնձապատ ի դաւարի վայրի եւ ի ցաւոյ երկնից դադարեցէ եւ ընդ զազանս բաժին Աորա եւ ի խոտ երկրի, սիրտ Աորա ի մարդկանէ փոխեցի եւ սիրտ զազանաց տացի մտն եւ է(7) ժամանակ փոխեցի ի վերայ Աորա: Այս է երազն, զոր տեսի եւ Նաբուգոդոնոսոր արքայ եւ դու, Բաղտասար, ասա ինձ զմեկնութիւն Աորա, զի ամենայն իմաստունք թագաւորութեան իմոյ ոչ կարացին զմեկնութիւն Աորա ցուցանել ինձ, այլ դու Դանիէլ կարող ես, զի հոգի Աստուծոյ գոյ ի քեզ (Դ 7-15).

(332բ)

*Յառաջնումն վասն այն վերացաւ երազն ի մտաց նորա//, զի Դանիէլ յայտնեցցի: Իսկ այժմ մնաց որպէս պատմէ, բայց թէ է՞ր երազով յայտնեցաւ այս նմին եւ ոչ ի ձեռն ուրուք: Ի ձեռն այլոյ ոչ էր հաւատացեալ որպէս եւ ոչ թագաւորքն իսրայէլի եւ զի ոչ էր արժանի յայտնապէս տեսանել որպէս զմարգարէսն: Քանզի թէ ոք սրբեալ է զմիտս ի սնոտի աշխարհական իրաց\* առ նոսա դէմ յանդիման խաւսի: Իսկ եթէ ոք անըջական կենաւ զբազեալ իցէ անըջական երազաւք յանդիմանէ որպէս ի Յորն իսկ գրեալ է, քանզի նախախնամութեամբն զամենեցուն կամի զկեալն եւ ի գիտութիւն ճշմարտութեան զգալն եւ ըստ իւրաքանչիւր կերպարանի շահի զբազումս: զոր տեսանէ յարմար ինքեան զերազն եւ պատմէ Դանիէլի, զոր յիւրում տեղւոյն ուսցուք: Բայց այն, զի ասէ մեկնութեան զուարթնոյ է բանս, իբր այն, թէ ամենայն ումեք չէ յայտնի մեկնութիւն եւ քննութիւն պատգամացն, այլ զուարթ ոգւոց եւ սուրբ մտաց իբր զԴանիէլ: Կամ թէ մեկնու-*

\* իւրաց ուղղման նշանով:



*Թիւն բանիցս զուարթացուցանէ զլսաւղս եւ պատգամ հարցուածիս\* սրբէ եւ զընդունողս, զի ճանաչել տա, թէ Բարձրեալն տիրէ ամենայն թագաւորութեան մարդկան:*

Յայնժամ Դանիէլ, որում անուն է Բաղտասար, հիացաւ իբրեւ ժամ մի եւ խորհուրդք անոր խոսվեցուցանէին զնա (Դ 16)։

*Կամ վասն խոկալոյ յիմաստսն առ վայր մի լռեաց ի խաւսելոյ կամ թէ հիացաւ հայելով ի խորս աստուծոյ խնամոցն եւ խոսվեցաւ տրտմութեամբ վասն զժուար թուելոյ մեկնութիւն արքայի:*

Պատասխանի ետ թագաւորն եւ ասէ. Բաղտասար, երազն եւ մեկնութիւն անոր մի տագնապեցուցէ զքեզ (Դ 16ա)։

*Օճանեալ թագաւորն զխոսվութիւն մտաց Դանիէլի եւ ասէ\*\* . «Մի՛ տագնապիր երկիւղիւ, այլ ասա համարձակ»<sup>ճ</sup>:*

(333ա) Ետ պատասխանի Բաղտասար եւ ասէ. Տէր երազն ասելեաց քոց եւ մեկնութիւն անոր // թշնամեաց քոց (Դ 16բ)։

*Կամ թէ՛ «երազն եւ մեկնութիւն թշնամեաց քոց պատահէ կամ թէ մեկնութիւն թշնամեաց քոց խնդութիւն է: Վասն այն յապաղեմ, զի մի լուիցեն ատելիքն քո եւ խնդացեն: Զայս ոչ փաղաքշելոյ վասն ասէ, այլ զի պատուեաց զսպաս տաճարին եւ գլխայր ի գերիսն»<sup>դ</sup>:*

Օճառն, զոր տեսանէիր մեծացեալ եւ զարացեալ, որոյ բարձրութիւն հասնէր յերկինս եւ լայնութիւն անոր յամենայն երկրի, տերեւ անոր գեղեցիկ եւ պտուղ անոր բազում եւ կերակուր ամենայն ի նմա, ի ներքոյ անոր բնակեալ էին գազանք անասպատի եւ յոստս անոր հանգուցեալ թռչունք երկնից, դու ես, արքայ, զի մեծացար եւ զարացար եւ մեծութիւնդ քո բարձրացաւ եւ եհաս մինչեւ յերկինս, եւ տէրութիւն քո ի ծագս երկրի (Դ 17)։

*Դու ես, ասէ, ծառն, որ բարձրացաւ թագաւորութիւն քո եւ տիրեաց երկնաւորին քաղաքին, այս է՛ Երուսաղէմի, կամ զհայհոյութիւն ասէ, որ ասաց, թէ՛ «Ո՞վ է աստուած, որ փրկեսցէ*

\* հացուածիս, միջին լուսանցքում ուղղման նշանով:

\*\* եւ ասէ լուսանցքից:

<sup>ճ</sup> Վարդան, 255բ:

<sup>դ</sup> Վարդան:

զձեզ» իսկ լայնություն՝ զծագս տիեզերաց ասորոց տիրեաց, «զի զաւելի մասն լիբիոյ Եւրոպիոյ թ զբոլորն Ասիա ետ քեզ, եւ ուստք՝ քաղաքք, զոր սեփհականեաց կամ ժառանգ թագաւորութեան, տերեւ՝ զաւրքն եւ փարթամութիւն, եւ պտուղն հարքն, որ մտանէին, գազանք շողզակերք եւ արիւնարբու իշխանք եւ գործակալք, թռչունք՝ թեթեւամիտք, որք հնազանդեցան նմա եւ կերակորձան՝ ամենայն հողակերք եւ կամ դրամն, որ ունի զգիր աւուանն նորա, որով լինէր վաճառ եւ կերակուր»<sup>10</sup> :

(333բ) Եւ զի տեսանէիր արքայ գուարթունն եւ գտար զի իջանէր յերկնից եւ ասէր. Կտրեցէք զծառոյ եւ ապակամեցէք զդա, բայց զշատաւեղս նորա արմատոցն թողէք յերկրի երկաթապատ եւ պղնձապատ եւ ի դալարի վայրի եւ ի ցաւոյ երկնից հանգիցէ եւ ընդ գազանս անապատի եղիցի բնակությունն քո եւ խոտ որպէս արջատոյ ջամբես//ցենք քեզ եւ ի ցաւոյ երկնից հանգիցես եւ Է(7) ժամանակ փոխեսցի ի վերայ քո մինչեւ ծանցես, թէ տիրէ Բարձրեալն թագաւորութեան մարդկան, եւ ում կամի տացէ զնա (Դ 20-22).

Յիրաւի ասէ, թէ դատաստան է հասեալ ի վերայ Տեառն իմոյ արքայի, «քանզի ոչ անիրաւ ինչ առնէ Աստուած, այլ դու եղեր պատճառ: Ծառն անկողին է եւ վայելչութիւն խնամոց նորա եւ դու ոչ ծանեար զնա եւ պտուղ նմա ոչ ետուր, այլ՝ ատար դից»<sup>11</sup> , վասն որոյ իրաւամբք է պատիժն եւ զքեզ հալածեսցեն ի մարդկանէ, այսինքն՝ ի բնութենէ եւ ի բնակութենէ: Իսկ գուարթունն սուրբ կամ վասն միշտ բերկրութեան նոցին ասէ կամ աննիրհելի բնութեան զհրեշտակն այնպէս կոչեաց, որ «իջանէր յերկնից բերել զհրամանն Աստուծոյ՝ կտրել զծառն եւ թաւթափել զաւրացն եւ շարժիլ զազանացն բռնաւորաց, բայց զարմատն թողուլ»<sup>12</sup> , այս է՝ մնալ նմա թագաւորութիւն իբր երկաթով եւ պղնձով անխզելի պահել նմա ի խնամոցն Աստուծոյ զայնքան ժամանակս չերեւիլ ումէք հասարակ, որ է մեծ սքանչելիք, որպէս ասէ: Եւ զի ասաց, թէ՛ թողէք զշատաւեղս արմատոյ ծառոյն, թագաւորութիւն քո քեզ մնա մինչեւ ծանցես զիշխանութիւն երկնաւոր: Իսկ Է(7) ժամանակք. վասն զի Է(7) ատուրք յանցանելոյն, եւ Է(7) զգայութեամբք, բայց վճիռ հատանէ զԷ(7)ամն, զի մի՛ յուսահատեսցի: Եւ Է(7) ամն Գ(3) ամ է եւ կէս՝ զամառն զարնայնովն առեալ եւ

<sup>10</sup> Վարդան, 256ա:

<sup>11</sup> Վարդան, 255բ:

<sup>12</sup> Վարդան, 256ա:

զճմեռն՝ աշնայնովն կամ թէ այլք ասեն. Զի՞ է՝ է(7) տարի էր վճիռն աղաւթիւքն Դանիէլի Գ(3) ամ եւ կէս թողեալ եղեւ:

Վասն որոյ, արքայ, խրատ իմ, հաճոյ թուեսցի քեզ զմեզս քո ողորմութեամբ քաւեսցես եւ զանաւրէնութիւնս քո զթով տնկաց, թերեւս երկայնամիտ լինիցի ի յանցանաց քոց Աստուած: Մեկնեաց զերազն, եցոյց զվէրն, կազմէ եւ զբժշկութիւն, որ դիւրին էր նմա առնել // որպէս զի ողորմութեամբն ինքն զտցէ զողորմութիւնս Աստուծոյ:

Այս ամենայն եկն եհաս ի վերայ Նաբուգոդոնոսորայ արքայի լետ ԲԺ(12)ան ամսոյ մինչդեռ ի վերայ տաճարի թագաւորութեան իւրոյ ճեմէր ի Բաբելոն: Ոչ այս այն մեծ Բաբելոն է, զոր եւ շինեցի տուն թագաւորութեան իմոյ հաստատութիւն զաւրութեան իմոյ ի պատիւ փառաց իմոց (Դ 25-27).

Ներեաց Աստուած նմին վասն ողորմութեան զԲԺ(12) ան ամիս եւ նա «դարձեալ ի խակութիւն անբարտաւանութեան իւրոյ եւ ի ճեմելն յարքունեացն վերայ ասաց սիգալով ոչ այս այն Բաբելոն է, զոր եւ շինեցի»<sup>13</sup> իբր թէ ասել՝ Ո՞ հանէ զիս աստի:

Եւ մինչ դեռ բանքն ի բերանն էին թագաւորին ձայն եղեւ երկնից. «Բեզ ասեմ, Նաբուգոդոնոսոր արքայ, թագաւորութիւնդ քո անցեալ է ի քէն եւ ի մարդկանէ հալածեսցեն զքեզ եւ ընդ գազանս անապատի բնակութիւն քո եւ խոտ որպէս արջառոյ ջամբեսցեն քեզ եւ է(7) ժամանակ փոխեցի վերայ քո մինչեւ ծանիցես, թէ տիրէ Բարձրեալն թագաւորութեան մարդկան եւ ում կամի տացէ նմա (Դ 28-29).

«Յայտ է՝ յերեքանձնեա Աստուածութենէն, որ կազմեաց զքեզ երից. յոգւոյ, ի մտաց եւ ի մարմնոյ, զոր ոչ իմացար իբրեւ զմարդ, վասն որոյ հալածիս ի մարդկանէ»<sup>14</sup> եւ ընդ գազանս բնակիս, զի նոցա նմանեցէր եւ խոտ ջամբէին ոչ այլ ոք, այլ՝ կարիք սովոյն: Բայց տես, զի ամենայն ուրեք դնէ «զմինչեւ ծանիցես», զի որչափ ի յանցանս ոք է եւ զպատիժն կրէ, իսկ յորժամ ի զղջումն գայ եւ պատուհասն զանց առնէ:

Ի նմին ժամու բանն կատարեցաւ ի վերայ Նաբուգոդոնոսորայ եւ ի մարդկանէ հալածեցաւ, եւ խոտ որպէս զարջառ ուտէր, եւ ի ցաւոյն երկնից մարմինն անորս ներկեաւ, եւ վարսք իւր իբրեւ գառիւծոց մեծացան, եւ ըղընկունք անորս՝ որպէս թռչնոց երկնից (Դ 30).

<sup>13</sup> Վարդան:

<sup>14</sup> Վարդան, 256բ:

(334բ) *Զի բանն Աստուծոյ արդիւնք է// գործոյ. առժամայն կատարեցաւ ի վերայ նորա եւ եղեւ «յանկարծակի. առաջի կողմն առջառոյ, վարսք՝ առիւծոյ, ճիրանունք՝ արծուոյ. դատաստանաւ իսկ, զի ցանկասէր էր իբրեւ զառիւծ, հպարտ իբրեւ զթռչուն: Վասն որոյ ընդ նոսա դադարեաց եւ բնութիւն մարդոյ, եւ խելք կորեալ եւ ներկեալ մարմինն ի գոյն արեան արիւնասէր գոլով, եւ ցաւզալից լինէր ի բացալթեա: Եւ խնամաւքն Աստուծոյ ոչ լինէր ծախեալ ի գազանաց: Եւ ոչ այլ ոք նստաւ աթոռ թագաւորութեան նորա մինչեւ ի լնուլ է(7) ամին, որպէս ասէ:*

Եւ յետ կատարածի ատուրցն եւ Նաբուգոդոնոսոր գաչս իմ յերկինս համբարձի\* եւ միտք իմ առ իս դարձան եւ զբարձրեալն արհմեցի, եւ զկեմդանին յաիտեմից գովեցի եւ փառատրեցի, զի իշխանութիւնն անոր իշխանութիւնն յաիտեմական եւ արքայութիւնն անորա ազգաց յազգս (Դ 31).

*Ի լնուլ է(7) ամին իբրեւ ի քնոյ զարթուցեալ հայեցաւ յերկինս խոստովանութեամբ եւ աւրհնեաց զԲարձրեալն եւ ծանեալ, թէ նա է Թագաւոր ամենայն թագաւորաց եւ արքայ յաւիտենական:*

Եւ ամենայն բնակիչք երկրի իբրեւ ոչ ինչ համարեցան անս, ըստ կամաց իւրոց առնէ ի զարութեան երկնից եւ ի բնակութեան երկրի եւ չիք որ ընդդէմ դառնայցէ ձեռին անորա եւ ասիցէ, թէ զի<sup>օ</sup>նչ գործեցեր (Դ 32).

*Զայս եւ Եսայի ասաց, թէ՝ «Ամենայն հեթանոսք իբրեւ գոչինչ են» (Խ 17), զի զոր ինչ կամի կարող է առնել ի զաւրութենէ երկնից, որով խնամէ զբնակեալս յերկրի զազգս մարդկան որպէս եւ զինքն խնամեաց:*

Ի անին ժամանակի միտք իմ առ իս դարձան եւ ի պատիւ թագաւորութեան իմոյ եկի եւ կերպարանք իմ առ իս դարձան, եւ իշխանք իմ եւ մեծամեծք խնդրէին զիս եւ անդէն ի թագաւորութիւնն իմ հաստատեցայ եւ մեծութիւնն առաւելաւ\*\* ինձ (Դ 33).

(335ա) *Յորժամ եղեւ ժամանակ // ազդ արար Դանիէլ նախարարացն եւ ի իշխանացն, զի «ելին յառապարն եւ գտին զնա ի հասակ մարդոյ եւ ի զգայութիւնն եկեալ եւ բերեալ նստուցին յաթոռ թագաւորութեան, եւ որպէս ի մեռելոց հրաշիւք կենդանացեալ՝ զարմացաւ երկիր ամենայն: Եւ բերին զանձս, եւ յոլովք հնա-*

\* համարձի:

\*\* Ընկալլալ թրգմ առաւել յաւելալ:

զանդեցան քան թէ յառաջագոյն, որպէս ասէ թէ՛ Յաւելու ինձ առաւել մեծութիւնս»<sup>15</sup>:

Արդ, ես Նաբուգոդոնոսոր արքայ, արհմեմ եւ առաւել բարձրացուցանեմ եւ փառաւորեմ զարքայն երկնից, զի ամենայն գործք նորա ճշմարիտ են եւ շաւեղք նորա իրաւամբք եւ զամենեսին, ոչք գնան անբարտաւանութեամբ, կարաւղ է խոնարհեցուցանել (*Դ. 34*).

Հաճեալ ընդ պատիժն գոհութեամբ ընդունի՛ գովելով զարդար դատաստան նորա, եւ ասէ թէ՛ զամենեսին, ոչք գնան անբարտաւանութեամբ, կարաւղ է խոնարհեցուցանել իբրեւ զիս: Արդ, այսչափ գրեալ զսմանէ աւարտէ զճառս նորա «եւ զկատարած կենացն ոչ ասէ: Այլ ոմանք ասեն, թէ սպանաւ ի պատերազմի եւ անթաղ մնաց դի նորա, որպէս եւ սպառնացաւ նմա Աստուած ի ձեռն երեմիայի, զի «Դարձաւ նա իբրեւ շուն ի փսխած իւր յառաջին» (*Առակ. Ի. 2 11, Բ. Պետ. Բ. 22*)՝ յանառակութիւն: Եւ այլք իւր իսկ մահուամբ ասեն մեռեալ: Եւ զթագաւորութիւն էառ Ուլմարովդակ թագաւոր եւ եհան զՅետնիայ ի բանտէ, զոր փեսայ ասեն Նաբուգոդոնոսորայ եւ այլք՝ որդի եւ ապա Բաղտասար ամս երիս»<sup>16</sup> զորոյ պատմէ այժմ:

<sup>15</sup> Վարդան, 256բ:

<sup>16</sup> Վարդան, 256բ-257ա, ուր սակայն՝ Մարովրաք *փիս* Ուլմարովդակ (257ա):

Ե

Պաղտասար արքայ արար ընթրիս մեծամեծաց իւրոց հազար առն եւ ըստ հազարացն նոյնպէս եւ գիւնի (Ե 1).

*«Ընթրիս կոչեն, որ զգիշերն կցեն յուրախութիւն աւուրն Ռ(1000) առն, որք կամեցան զնա թագաւոր, եւ էին խորհրդակիցք, եւ ըստ թուոյ դնէր առաջի գինի ամանով դեղ յիմարութեան, որով ցուցաւ իսկ»<sup>17</sup>:*

(336ա) Եւ իբրեւ ընդ գիւնիս եմուտ // Բաղտասար հրամայեաց բերել զսպասս զարծաթոյ եւ զոսկոյ, զոր եհան նաբուգողոնոսոր հայր նորա ի տանարէն, որ յԵրուսաղէմ, զի արբցեն նոքաւք թագաւորն եւ մեծամեծ իւր եւ հարք նորա: Եւ բերին զսպասն զարծաթեղէնս զոսկեղէնս, զոր բերեալ էր ի տանարէն Աստուծոյ, որ յԵրուսաղէմ եւ ըմպէին նոքաւք թագաւորն եւ մեծամեծք իւր եւ հարճք նորա եւ կանայք ըմպէին գիւնի (Ե 1-3).

*Ոչ ինին ի նա եմուտ, այլ նա՝ ի գինին, յոր ընկղմեցաւ մտաւք եւ սկսաւ հանել զսպաս տաճարին, զոր անփոփոեալ էր հայր նորա զքահանայականս, եւ ի շանց եւ ի բոզից տուեալ ձեռս արհամարհանաւք, զորոյ եւ կրկնէ, թէ ոչ միայն բանիւ ասաց, այլ եւ գործով վճարեաց՝ գիտութեամբ սխալելով եւ ոչ յուսով սրբութեամբ գործելով:*

Եւ արհնէին զաստուածս ոսկեղէնս եւ պղնձեղէնս եւ զերկաթեղէնս\* եւ զքարեղէնս եւ զփայտեղէնս եւ զաստուածն յաիտեմից ոչ արհնեցին, որ ունէր զիշխանութիւն\*\* ոգւոց նորա\*\*\* (Ե 4).

*Կրկին յանցանք, զի «զաստուածսն իւրեանց եւ ոչ զկենդանին գովէին, իբր թէ նոքա ետուն յաղթութիւն առնուլ զայս, որք եւ պղծեալ վեցկուսի շարժամբ»<sup>18</sup> ի նոյնքան նիւթս պաշտեցեալ ի խեցին եզերեալ, զի մոխիր է սիրտ նոցա եւ ի հող իջանելոց են ապականութեամբ: Իսկ նշանակաւ սպաս սրբութեան են իմաս-*

<sup>17</sup> Վարդան, 257ա:

\* Եւ պղնձեղէնս եւ զերկաթեղէնս *ուղղման նշանով՝ լուսանցից:*

\*\* *Ընկալլալ թրգմ. իշխանութիւն:*

\*\*\* *Ընկալլալ թրգմ. նոցա:*

<sup>18</sup> Վարդան:

տուրքի են առաքինութիւն ի մարդս, որ է տաճար Աստուծոյ, որով պաշտի Աստուած: Իսկ եթէ ոք հանէ զսոսա պատրեալ ի չարէն, եւ պաշտէ նոքաւք զախտս, եւ ծախէ զնոսա ի պէտս մարմնականս պանծալեալք ի խորհուրդս իւր կամ ի բան, ի հաւատս կամ ի գործս ի պատահականս կամ ի բնականս՝ բառնա Աստուած զշնորհս ի նմանէ, քանզի այս են Զ(6) նիւթքն գովեցեալ եւ ոչ յԱստուած, որ ետ զիմաստութիւն եւ զառաքինութիւն, ըստ այնմ, «Որ ունիցի, տացի նմա եւ յաւելցի եւ որ ոչն ունիցի եւ զոր ունիցի, բարձցի ի նմանէ» (Մատթ. ԺԳ 12):

Ի Ամին Ժամու ելին մատուցք ձեռին մարդոյ եւ գրէին հանդէպ գնդին ի վերայ բռելոյ յորմոյ տաճարի թագաւորին եւ թագաւորն տեսանէր զթաթ ձեռին, որ գրէր //.

Որպէս հաւր սորին մինչ դեռ բանն ի բերանն էր եւ ձայնն, նոյնպէս եւ սմին մինչ յանդգնութեան կայր ել թաթ ձեռինն ցասմամբ եւ գրէր: Ընդէ՞ր ձեռաւք. զի որով զպարգեւն ետ նովիմբ եւ վերացուցանէր, եւ զի ձեռաւք ստեղծ ի հողոյ եւ կենսացոյց ձեռաւք եւ ի մահ զատապարտէր, ըստ իշխանութեան, որ ոչ ծանեալ զստեղծիչն իւր եւ զի ձեռաւք գրեաց զիր եւ բերել ետ զսպասն եւ ձեռաւք ըմբռնեալ «Երթայք ի հուրն, որ պղծեցին, ձեռաւք եւ պատիժն գրի: Իսկ զի ի վերայ բռեալ յորմոյ գրեցաւ, զայն յայտ առնէ, թէ որպէս այս գիր դիւրաւ ջնջի ի յորմոյ, նոյնպէս քո թագաւորութիւնդ արագ բառնի, զի բռեալ յորմոյ նմանեցար (հմտ. Գործք ԻԳ 3): Իսկ թէ ընդէր ոչ տեսեամբ զգաստացոյց զսա որպէս զհայրն, զի ոչ ի ծածուկ ինչ գործեաց զչարն, այլ յայտնի խայտառակութեամբ\* : Վասն այսորիկ եւ հրապարակաւ յանդիմանեցաւ, զի ոչ միայն ինքն, այլ եւ ամենայն գունդն տեսին զգիրն գրեալ: Իսկ աւրինակաւ գիր թէ ոք ասիցէ՝ զպատրաստել տանջանս մեղաւորաց՝ ոչ սխալէ, ըստ այնմ. «Երթայք ի հուրն, որ պատրաստեալ է» (Մատթ. ԻԵ 41):

Յայնժամ հատան գոյք թագաւորին եւ խորհուրդք Աորա խոովէին գնա եւ յաղք միջոյ Աորա լուծանէին եւ ծուկք Աորա զմիմեանս բարախէին (Ե 6).

\* խայտ-ը միջին լուսանցից՝ ուղղման նշանով:

*Երկն մահու ըմբռնեաց զնա եւ երկիր սոսկմամբ հանդերձ անկաւ ի վերայ նորա սկսեալ ի մտացն ամբոխն մինչ ի գունատիլ մարմնոյն: Իսկ նշանակաւ՝ «լալ աչացն եւ կրճել ատամացն» (Մատթ. Ը 12, ԺԳ 42, 50, ԻԲ 13, Ղուկ. ԺԳ 28):*

Եւ աղաղակեաց թագաւորն զաւրութեամբ անել զմոզս եւ զքաղղեայս եւ զգէտս, եւ ասէ, ցիմաստունս բաքիլացոց. Որ ոք ընթերցցի զգիրդ զայդ եւ զմեկնութիւնն դորա ցուցցէ ինձ ծիրանիս զգեցուցից մնա եւ մանեակ ոսկի ի պարանոցի իրում, եւ երրորդ ի թագաւորութեանն իմում տիրեսցէ (Ե 7).

*(336բ) Թէպէտ երկեալ կարծեաց այլ իմն գոյ զմեկնութիւն վասն աւգտի, քանզի յայս վստա//հացուցին իշխանքն կամ թէ զսրտին երկիրդն կամեցաւ արագ փարատել զիտութեամբ իրացն: Վասն այսորիկ հրամայեաց կոչել զգէտսն խոստմամբ պարգեւաւք:*

Եւ մտանէին ամենայն իմաստունք բաքիլացոցն եւ ոչ կարէին զգիրն ընթեռնուլ եւ ոչ զմեկնութիւնն մորա ցուցանել թագաւորին (Ե 8).

*«Ոչ կարացին ընթեռնուլ թէպէտ գիտէին զամենայն գիրս եւ զհանճարս, զի նոր էր դպրութիւն եւ նորագործ Արարչի, Հոգւոյն, որ քննէ զամենայն»<sup>19</sup> եւ ինքն ումեքէ ոչ քննի մանաւանդ ի շնչաւորաց, զի յիմարութիւնն է նմա, այլ «որոց ախորժէ յայտնէ, որպէս Դանիէլի՝ Տէր, եւ յանգուցեալ իսկ էր»<sup>20</sup>:*

Եւ արքա Բաղտասար խոսկեցաւ, եւ գոյն երեսաց մորա շրջեցաւ, խոսկեցան եւ մեծամեծք մորա ընդ մնա (Ե 9).

*Ջի կարծեաց, թէ որպէս ոչ է գիրն հասարակաց նշանագրութեամբ, այլ՝ աւտար, նոյնպէս եւ պատիժ վճռոյն գերագոյն եւ սաստիկ, վասն այսորիկ խռովեցաւ իւրաւաւքն:*

Եւ եմուտ տիկինն ի տաճար խրախութեան եւ ասէ. Արքայ, յախտեան կաց, մի՛ խոսկեցուցեն զքեզ խորհուրդք քո եւ գոյն երեսաց քոց մի եղծցի, զի է այր մի ի թագաւորութեանն քում, յորում գոյ Հոգի սուրբ աստուծոյ, եւ յաւուրս հար քո զաւրութիւնք եւ իմաստութիւնք գտան\* ի մնա եւ արքա Նաբուգոդոնոսոր հայր քո, իշխան կացոյց զնա ի վերա ամենայն գիտաց եւ մոզուց եւ քաղղէից եւ ըղձից, զի հոգի առաւել գոյ ի մնա իմաստութիւնն եւ

<sup>19</sup> Վարդան, 257ա:

<sup>20</sup> Վարդան:

\* Ընկալլալ թրգմ. գտանէին:



հանճար մեկնե՛ գերագուս և պատմե՛ գառակս և լուծանե՛ զիրս կապեալս: Դանհիէլ էր անունն անոր, և արքայ Պաղտասար անունն եդ անա: Արդ, կոչեացի և մեկնութիւնն դորա պատմեսցե՛ (Ե 10-12).

(337ա) *Տիկիինն մայր իսկ էր նորա՝ կին Նաբուգոդոնոսորայ, զոր յիշէր զվաղուց եղեալն ի սփոփանս որդւոյն, քանզի «յաւուրս հաւր քո եղեն այդպիսի իրք, եւ մեկնեցան ի նմանէ, յորս տկար ցուցան գէտք ամենայն քաղղէացուց եւ հայր քո իշխան կացոյց զնա, եւ // դու անգամ ոչ ճանաչես»<sup>21</sup>. Դանիէլ էր, ասէ, անունն: Եւ, արքայ, Բաղտասար եդ նմա՝ գլխոս անունդ նմին կոչելով, քանզի քո անձինդ չափ սիրէր զնա, եւ դու զնա մոռացար: Այսու զանմտութիւնն որդւոյն ճաղեաց տիկիինն. վասն որոյ ասէ զնա. կոչեա լուծիչ տարակուսանացդ:*

Յայնժամ ածին ի անքա զԴանիէլ առաջի թագաւորին, և ասէ թագաւորն ցԴանիէլ. Դու՞ եւ Դանիէլ որդւոց գերութեան Հրէաստանի, զոր ած Նաբուգոդոնոսոր հայր իմ, լուայ զքեզ, եթէ Հոգի Աստուծոյ է ի քեզ և զարութիւն և հանճար և իմաստութիւն առաւել գտաւ ի քեզ: Եւ արդ, ահաւասիկ մտիմ առաջի իմ իմաստունք և մոգք և իղձք, զի զգիրդ զայդ ընթեռնուցում և զմեկնութիւնն դորա ցուցցեմ ինձ, և ոչ կարացիմ պատմել ինձ: Եւ եւ լուայ զքեզ, եթէ կարող եւ մեկնել մեկնութիւնս, և արդ, եթէ կարիցես զգիրդ ընթեռնուլ և զմեկնութիւնն դորա ցուցանել ինձ, ծիրանի գգեցցիս և մանեակ ոսկի ի պարանոցի քում և երրորդ ի թագաւորութեան իմում տիրեսցես (Ե 13-16).

*Կեղակարծութեամբ խաւսեցաւ՝ իբր ոչ հաւատալ ի նա ճշմարիտ մեկնիչ գրոյն լինել: Վասն այսորիկ ոչ կոչեաց անուամբն իւր Բաղտասար, այլ Դանիէլ յակամա, զի կամէր դատաստան առնել թագաւորութեան նորա: Ուստի սկսաւ սակաւ մի ներբողել վասն Հոգւոյն ընդունելութեան եւ հանճարոյն, զոր ունէր, եւ իբր զերկրասէրաւք պատրել ջանայր, թէ զոր գէտքն ոչ գիտացին եւ ի պատուոյն զրկեցան, դու թէ մեկնեսցես, որպէս լուայ, եւ ճշմարտէ՝ թագաւորական փառաւք շքեղասցիս յինէն:*

(337բ) *Եւ ասէ Դանիէլ առաջի թագաւորին. պարգեւք քո քեզ լիցին եւ զպատիւ տան քում այլում տուր, բայց զգիրդ ես ընթերցայց եւ զմեկնութիւնն դորա ցուցից քեզ (Ե 17)//.*

<sup>21</sup> Վարդան:

*Խոտէ զպարգեւն, զի մի՛ կարծեսցէ վասն կաշառուց մեկնել զգիրս: Վասն որոյ ասէ, թէ՛ «անկաշառ է հանճար Տէառն իմոյ, զպատիւ տան քո եւ զիշխանութիւն այլում տացես, ոչ զերրորդ մասդ միայն, այլ զբովանդակն թէ կամիս եւ թէ ոչ»<sup>22</sup>:*

Արքայ, Աստուած բարձրեալ զմեծութիւն եւ զթագաւորութիւն եւ զպատիւ եւ զփառս ետ Նաբուգոդոնոսորայ հար քում եւ ի մեծութեան, զոր ետ մնա ամենայն ազգ եւ ազիւնք եւ լեզուք զարհուրեալ դողալից յերեսաց նորա, զորս կամէր՝ սպանանէր, զորս կամէր՝ հարկանէր, զոր կամէր ինքն բարձրացուցանէր եւ զորս կամէր ինքն խոնարհեցուցանէր: Եւ յորժամ բարձրացաւ սիրտ նորա եւ ոգի նորա զարացաւ յանբարտաւանել անկաւաթոնոյ թագաւորութեան իւրոյ եւ պատիւն բարձաւ ի մնացէ եւ ի մարդկանց հալածեցաւ եւ սիրտ ընդ գագանս տուաւ մնա եւ ընդ ցիոս բնակութիւն նորա, եւ խոտ որպէս արշաոնոյ ջամբէին մնաց եւ ի ցաւոյն երկնից մարմին նորա ներկեալ մինչեւ ծանեալ, թէ տիրէ Աստուած Բարձրեալն թագաւորութեան մարդկան եւ ում կամի՝ տացէ զնա (Ե 18-21).

*Յառաաջագոյն յանդիմանէ զնա նախ քան զմեկնութիւն զրոյն, «զի արդար իբրեւ զառիւծ վստահ է եւ խաւսի զվկայութիւն Տեառն առաջի թագաւորաց եւ ոչ ամաչէ»<sup>23</sup>: Եւ մէջ ածէ զհայր նորա վասն երկուց պատճառաց. մի, զի Նաբուգոդոնոսոր, որ յայնքան փառս հասաւ, յորում դու ոչ ժամանեցեր, յորժամ հպարտացաւ, զան եհար զնա Աստուած մինչեւ ծանեալ զԲարձրեալն քան առաւել զքեզ: Եւ Բ(երկրորդ). թէպէտ եհար զնա վասն բարձրամտութեան այնքան եթող ի վիշտս մինչեւ զղացաւ ի փառս Աստուծոյ, նոյնպէս եւ դու զայս ասելով յորդորէր զնա ի զղումն, զոր ոչ կամեցաւ:*

(338ա) Եւ արդ, դու, որդի նորա Բաղտասար, ոչ խոնարհեցուցեր զսիրտ քո առաջի Աստուծոյ, ուստի զայդ ամենայն գիտէիր եւ ընդդէմ Աստուծոյ երկնից ճարտարացար եւ զսպաս տան նորա բերին առաջի քո, եւ դու եւ մեծամեծք քո հարճք եւ կանայք քո ընպէին նոքայք գիւնի, եւ զաստուածս ոսկեղէնս եւ արծաթեղէնս, որ ոչ տեսանէն եւ ոչ գնան եւ ոչ լսեն եւ ոչ իմանան արհնէիր եւ զԱստուած, որոյ շունչ քո ի ձեռին նորա է եւ ամենայն ճանապարհք քո, զնա ոչ փառաւորեցեր (Ե 22-23).

<sup>22</sup> Վարդան, 257բ:

<sup>23</sup> Վարդան, 257ա:

*Զյանցանս հաւր քո մոռացար ընդ նմին եւ՝ զգանն, եւ սկսար հպարտանալ ընդդէմ Աստուծոյ՝ պղծելով զսպասն, զոր ոչ իշխեաց առնել հայր քո, եւ զնա, «որոյ շունչ քո ի ձեռին նորա», որ կարող է հանել կամ թողուլ, «ոչ յիշեցէր, եւ զսնոտիսն, որ ոչ թէ միայն զրկեալ են յիմացմանէ, այլ եւ՝ ի շնչոյ, թողէ թէ ոչ կարեն տալ»<sup>24</sup>. զնոսա մեծացուցեր:*

Վասն այսորիկ յերեսաց Աորա առաքեցաւ թաթ ձեռին եւ զգիրդ զայդ գրեաց, եւ այս ինչ է ի գիրդ, որ գրեալ է (Ե 24-25).

*Վասն այսպիսի պատճառաց, զոր ասացի, ասէ. ել «յերեսաց նորա բարկութիւն, զի ետես, զոր ինչ գործեցեր, եւ այն, զի գիտէիր զահն, որ առ հայր քո եղեալ եւ ոչ զգուշացար»<sup>25</sup>, էարկ դողումն ի սիրտս քո: Արդ, որովհետեւ ուսար զպատճառ գրոյն, ուսիր եւ զգիրն: Եւ է այս.*

Մանէ, թեկեղ, փարէս (Ե 26).

*Որ լսի՝ չափ, կշիռ, բաժանումն, քանզի չափով եւ կշռով բաժանէ Աստուած, ըստ արժանեաց զհոգեւոր եւ զմարմնաւոր իրս, ըստ բարեաց եւ ըստ չարեաց, եւ զի թէպէտ թարգմանեաց՝ անգիտելի էր եւ այն: Վասն այնորիկ Դանիէլ մեկնէ դիւրագոյն: Եւ այս է մեկնութիւն բանիդ.*

Մանէ՝ չափեաց Աստուած գթագաւորութիւն քո եւ վախճանեաց զնա (Ե 26).

*«Զանչափ զաւրութիւն Աստուծոյ, ասէ, ոչ ծանեար եւ ոչ զմտաւ ածեր զանվախճան՝ թագաւորութիւն նորա, նա չափեաց եւ վախճանեաց զքոյդ»<sup>26</sup>:*

Թեկեղ՝ կշռեցաւ ի կշիռս եւ գտաւ պակասեալ (Ե 27).

(338բ) *Կշռեաց Աստուած, ասէ զ//կեանս քո եւ գտաւ պակասեալ յամենայն արդարութեան, զոր դու պակասեցուցեր զչափն եւ զկշիռ կենաց, զոր սահմանեալ էր քեզ թագաւորել:*

<sup>24</sup> Վարդան, 257աբ, *ուր սակայն չիք* յիմացմանէ, *չիք* ոչ:

<sup>25</sup> Վարդան, 257բ:

\* «ճան»-ը լուսանցից՝ ուղղման նշանով:

<sup>26</sup> Վարդան, 257բ:

Փարես՝ բաժանեցաւ թագաւորութիւն քո եւ տուաւ մարաց եւ պարսից (Ե 28).

Վասն այսորիկ էառ զթագաւորութիւն քո եւ ետ մարաց եւ պարսից, զի խառնէին մարք եւ պարսիկ՝ կամ նախ մարն թագաւորէ յետ քո եւ ապա՝ պարսիցն: Ջայս մեկնութիւն լուան ի Դանիէլէ նախարարքն եւ «Տաւաբեցան ի միասին եւ արարին զԴարեհ մաղէ առաջնորդ եւ սպասէին ժամաւ»<sup>27</sup>: Դարձեալ առ ի միտս չափ՝ մարմնոյ մեղք, կշիռ՝ մտացն, զի ի կշիռս իւրեանց մեղանչեն<sup>28</sup>: Վասն որոյ բաժանին Աստուծոյ եւ կորնչին լրացեալքն մարմնոյ եւ մտաց մեղաւք: Զի լցին զչափն ամուրհացւոցն եւ ծանուցին զկշիռն ըստ կապարեա կնոջն:

Եւ հրաման ետ Բաղտասար եւ զգեցուցին նմա ծիրանիս եւ մանեակ ոսկի արկին ի պարանոցի նորա եւ քարոզ կարդայր առաջի նորա լինել իշխան երրորդ ի թագաւորութեան նորա (Ե 29).

Զպարզեւն ետ, զի իրաւ կամեցաւ ցուցանել զինքն ի խոստումն Բաղտասար: կամեցաւ կաշառել զԴանիէլ, զի շիջուցէ զցասումն, որ վասն նախանձուն Տեառն: «Իսկ Դանիէլ յանձն առ զծիրանին եւ զմարմնական փառսն ի փառս Աստուծոյ եւ յամաւթ սնաւտեացն, զոր նոքայն աւրհնէին ի խրախուլթեան»<sup>29</sup>:

Եւ ի նմին գիշերի սպանաւ Բաղտասար արքայ քաղդեացի<sup>30</sup> (Ե 30).

«Քանզի ոչ զղջացաւ ի սրտէ եւ ոչ զսպաս սրբութեան ետ ցԴանիէլ եւ մեղայ ոչ գտաւ ի բերանոյ նորա, այլ յուսացաւ ի զգուշութիւն իւր եւ [ի] խրատ դիւթացն, զի եմուտ ի ներքոյ դրան ի սենեակ մի յարմրագոյն ասեն, եւ պահապանս կացոյց ի (339ա) հաւատարմաց իւրոց ի դրունս եւ ջանայր հանգչել եւ ոչ կա//րէր յերկիղէ, զի հատաւ քուն յաչաց նորա, եւ ել գնաց տեսանել զպահապանս դրանցն, զի ննջէին եւ զառաջինն եւ զերկրորդն եւ զերրորդն թողեալ ի քուն մինչեւ ցէ(7)երրորդն, զոր զարթոյց եւ կարգաւ սկսաւ զարթուցանել մի ըստ միոջէ եւ յամբոխէ անդի զարթեան առաջինքն եւ սպանին զնա՝ կարծելով զթշնամի ոք, որ

<sup>27</sup> Վարդան, *ուր սակայն մտէ փխ*. մաղէ:

<sup>28</sup> «Դարձեալ առ ի միտս... մեղանչեա» *հատվածը նշանով ներկայացված իբրև բնաբան*:

<sup>29</sup> Վարդան:

<sup>30</sup> *Ընկալյալ թրգմ. քաղդեացուց*:

*գա սպանանել զթագաւորն, զի զԱստուծոյ վճիռն միայն ինքն եւ այլ ոչ ոք կարող է դարձուցանել, զի եղբայր ոչ փրկէ եւ ոչ մարդ ոք»<sup>31</sup>:*

Եւ Դարեհ արքայ էառ զթագաւորութիւն, որ էր ամաց Կ(60) եւ չորից<sup>32</sup> (Ե 31).

*Դարեհ նստի յաթոռն Բաբելոնի յազգէն մարաց, որ է քրդաց մերձաւոր նոցին, որ «միաբանեաց որպէս ինքեան զպարսս էառ զթագաւորութիւն ԿԴ (64)ամ ի տիս իմաստութեան»<sup>33</sup> եւ կատարելութեան մարմնոյ հասեալ:*

---

<sup>31</sup> Վարդան, 257բ-258ա:

<sup>32</sup> Ընկալլալ թրգմ. երկուց:

<sup>33</sup> Վարդան, 258ա, *որ* վաթսուն եւ երկու *փխ*. ԿԴ (64):

## [ Զ ]

Եւ հաճոյ թուեցաւ առաջի Դարեհի եւ կացոյց ի վերայ թագաւորութեան Ասիարարս Ծ(100) եւ քսան, զի իցեն յամենայն թագաւորութեան Անուա եւ ի վերայ Աոցա երիս հրամանատարս եւ մի ի Աոցանէ էր Դանիէլ՝ տալ Աոցա Ասիարարացն հրաման, զի արքայ աշխատ մի՛ հնչ լիցի (Զ 1-2).

*«Խնայելով ի ծերութիւն իւր կացուցանէ նախահոգս, ըստ թողոյ գաւառացն, զի այնքան գաւառք էին ըստ թագաւորութեան նորա եւ երիս խորհրդակիցս, յորոց մի էր Դանիէլ»<sup>1</sup>:*

Եւ Դանիէլ առաւել քան զնոսին, զի հոգի սուրբ<sup>2</sup> առաւել գոյր ի մտն եւ թագաւորն կացոյց զնա ի վերայ ամենայն թագաւորութեան իւրոյ (Զ 3-4).

*Ոչ ուսմամբ կամ դիւական, այլ Հոգւոյն Սրբոյ գիտութեամբն առաւել էր քան զնոսա, «որոյ բանն հատու վճիռ էր թագաւորին»<sup>3</sup> եւ այլոցն զոր գլխաւոր կացոյց ոչ միայն Ծ(100) եւ քսանիցն, այլ եւ երիցն կամ զի եցոյց զնորա թագաւորութիւն ի մեկնութիւն գրոյն, վասն այնորիկ պատուեաց:*

(339բ) Եւ հրամանատարքն եւ Ասիարարքն Ասիանձէիմ// ընդ մտն եւ խնդրէիմ պատճառ զԴանիէլէ, եւ ամենեւին պատճառս եւ յանցանս եւ բաղբաղայս ոչ գտանէիմ զմտնէ, քանզի հաւատարիմ էր: Եւ ասեն հրամանատարքն չգտանենք ուստեք պատճառս զԴանիէլէ, բայց թէ յարէնս Աստուծոյ իւրոյ (Զ 4-5).

*«Շնչաւոր իմաստունքն նախանձեցան ընդ երկնաւորին, եւ եղին որոգայթ նմա իշխանքն»<sup>4</sup>, զի «նախանձ առն ի մերձաւորէ իւրմէ» (Ժողով. Դ 4), ասէ Սողոմոն եւ զի ինքեանք վկայեցին չգտանել պատճառս ի նմա, ի յաւրէնս Աստուծոյ կամեցան որսալ, զոր յաւրէնութիւն ետ Աստուած եւ ոչ ի գլորումն պահողացն:*

Յայնժամ հրամանատարք եւ Ասարարք կացին առաջի թագաւորին եւ ասեն ցնա. Դարեհ արքայ յախտեան կաց, խորհուրդ արարին ամենեքեան, որ ի թագաւորութեան քում զարաւարք եւ Ասիարարք, իշխանք եւ կուսա-

<sup>1</sup> Վարդան, 258ա:

<sup>2</sup> Ընկալլալ թրգմ. մեջ բառս չիք:

<sup>3</sup> Վարդան, ուր խրատու *փխ*. հատու:

<sup>4</sup> Վարդան, 258ա:

կայք հաստատեալք արքունի հաստատութեամբ եւ զարացուցանել ուխտ մի, զի եթէ խնդրիցէ խնդրուածս ոք յամենայն Աստուծոյ կամ ի մարդոյ միճչեալ ատուրս Լ(30), բայց եթէ ի քէն՝ արքայէ անկցի ի գուբն առիծոց: Արդ, հաստատեա արքայ գուխտ եւ գրեա գիր, զի մի եղծանցիցի հրաման մարաց եւ պարսից<sup>5</sup>: Յայնժամ Դարեհ արքայ պատուէր ետ գրել զհրամանն (2 6-9).

«Զրհաման թագաւորին եւ զգիր աւգնական առնուն՝ խաբելով զնա»<sup>6</sup>, կամ թէ ասացին այսչափ աւուրս Լ(30), ըստ լուսնին նորութեան եւ հնութեան<sup>7</sup> եւ կամ արեգականն յայս նիշ կենդանակերպ շրջագայութեան ոչ է պարտ իրս խնդրել, զի մի՛ վնասիցի: Արդ, քո հրամանաւոյ այս լիցի կամ թէ փորձելոյ աղագաւ, զի խանութիւնդ սահմանեցաք զայս, զի երեւիցի՝ ո իցէ հնագանդ, զի եթէ յայս ոչ հնագանդին այսքան աւուրս ներել, զի ա՞րդ ապա յայլ մեծագոյնս: Եւ այսպիսի պատրանաւք հաւանեցուցին զարքայ գրել գիր եւ կնքել վաւերական կնքով առ ի հաստատութիւն: Բայց այն// զի ասացին ոչ խնդրել յամենայն աստուծոյ տկած ցուցին\* զաստուածսն հեթանոսաց, թէ չեն բաւական վրէժ առնուլ ի նոցանէ: Իսկ զի ասացին. բաց ի քէն, արքայ. զայս ի հաւանութեան սակս ասացին, թէ՛ զքեզ ոչ կարեմք ընդ հարկաւ փակել կամ թէ՛ ի քէն միայն ոք իշխէ խնդրել իրս եւ ոչ յԱստուծոյ կամ ի մարդոյ:

Եւ Դանիէլ իբրեւ գիտաց, թէ կարգեցաւ հրամանն, եմուտ ի տուն իր եւ պատուհանք բացէին անս ի վերնաստունն իր ընդդէմ Երուսաղէմի եւ երիս ժամս յատուր դմէր ծունր եւ կայր յաղաւթս եւ գոհանայր առաջի Աստուծոյ իւրոյ որպէս եւ առնէր յառաջագոյն (2 10).

Մարգարէս ի Դաւթէ վարժեալ «երիցս կարգայր առ Աստուած. երեկաւրեայ, ի վաղորդայն, ի հասարակաւրեայ՝ գուշակելով Գ(3) պատուհանաւքն հանդէպ Երուսաղէմի, եւ Գ(3) անգամ աղաւթիցն զկատարումն տնաւրէնութեան Տեառն յԵրուսաղէմ, ուր սկսաւ խորհուրդ եւ հաւատք երրորդականութեան յերիսանձինս եւ ի մի իսկութիւն երկրպագեալ»<sup>8</sup>, բայց ըստ ճառին ե-

<sup>5</sup> Եւ պարսից ուղղման նշանով լուսանցրից:

<sup>6</sup> Վարդան, 258ա:

<sup>7</sup> Ինութեան եւ նորութեան հերթագայության նշանով, բ, ա:

\* տկարացուցին, ուղղման նշանով:

<sup>8</sup> Վարդան, 258բ:

րիս պատուհանս ընդդէմ Երուսաղէմի իբր թէ հոգևով եւ մտաւք եւ մարմնով բաղձալի էր Երուսաղէմի ժառանգութիւնն նոցին: Բայց թէ ընդէ՞ր յայտնապէս աղաւթէր ուր եւ կարելի էր «անտես ի նոցանէ լինել, թէպէտ կարելի էր, այլ ոչ կամէր սնտաի երկիւղի ծառայել, այլ խոստովանել զնա եւ քարոզել առաջի իշխանութեանց բարբարոսաց, զի ընկալցի զանակնունելի նոցա զփրկութիւնն յաւգնականութենէ աւրինացն առաջի ամենայն ազգաց, որ յայնժամ եւ որ առ յապա լինելոց էին»<sup>9</sup>: Այլ եւ մահու քամահանս արար յաղագս զաւրէնս Տեառն իւրոյ ոչ լուծանելոյ: Իսկ թէ ասիցէ, թէ եւ աղաւթելն աւրէնք իմն է՝ ասասցուք. Այո, ի հինն ի Դաւթէ կարգեալ որպէս ցուցաւ, եւ ի նորա ի Պաւղոսէ յարժամ աղաւթել:

(340բ) Յայնժամ արքն այնոքիկ// դիտեցին զԴանիէլ, զի կայր յաղաւթս եւ աղաւթէր զԱստուած իւր, մատեան եւ ասեմ ցթագատրն. Արքայ, ոչ ուխտ մի կարգեցեր, զի ամենայն մարդ, որ խնդրիցէ խնդրուածս յամենայն աստուածոց կամ ի մարդոյ մինչեւ յաւորս Լ(30), բայց եթէ ի քէն արքայէ՝ անկցի ի գութն առիծոց: Եւ ասէ արքայ. ճշմարիտ է բանդ եւ զհրաման մարաց եւ պարսից չէ արէն շրջել: Յայնժամ պատասխանի ետուն արքայի եւ ասեմ. Դանիէլ որդոց գերութեան էր Հրեաստանի, ոչ հնազանդեցաւ հրամանի քում եւ երիս ժամս խնդրէ խնդրուածս յԱստուծոյ իւրմէ (Զ 11-13).

*Յորժամ որսացան ըմբռնել զնա եւ մատուցեալ առ թագաւորն հաստատեցին զուխտն, որպէս թէ անզղջանալի լինել նմա, ապա յայտնեցին, թէ Դանիէլ է:*

Յայնժամ թագատրն, իբրեւ լուսա զբանն, տրտմեցաւ յոյժ եւ վասն Դանիէլի ջանայ փրկել զնա: Յայնժամ արքն այնոքիկ ասեմ ցթագատրն. զիտաւջիր արքայ, զի հրամանի մարաց եւ պարսից եւ ամենայն ուխտի հաստատութեան հաստատիցէ, ոչ է արէն շրջել (Զ 14-15).

*Թէպէտ տրտմեցաւ թագաւորն, զի գիտաց, թէ վասն նախանձու է, «եւ ջանայր ապրեցուցանել, այլ ոչ կարաց, զի ոչ սեփական ունէր զթագաւորութիւնն: Վասն որոյ զարհուրեցուցանեն ասելով»<sup>10</sup> թէ զհրաման մարաց եւ պարսից ոչ է աւրէն լուծանել մանաւանդ յորժամ թագաւորն հաստատիցէ:*

<sup>9</sup> Վարդան:

<sup>10</sup> Վարդան:



Յայնժամ հրաման ետ թագաւորն եւ ածին զԴանիէլ եւ արկին զնա ի գութն առիծուց: Եւ ասէ արքայն ցԴանիէլ. Աստուածն, զոր դու պաշտես յաճախ, նա փրկեսցէ զքեզ (Ձ 16).

*Յիրաւի արծաթ ձեւացաւ ի պատկերն, քանզի թոյլ եւ կնատոք էր: Վասն որոյ ասէր, թէ՛ Աստուածն, զոր դու պաշտես, նա փրկեսցէ զքեզ, իբր թէ՛ ես ոչ կարացի թափել<sup>11</sup>, այլ՝ զաւրութիւն// Աստուծոյ քո, յոր եւ ես յուսամ, զոր պաշտես ի բազում ժամանակս յաճախ, ի միում յայս նուագի փրկեսցէ զքեզ:*

Եւ բերին վէմ մի եւ երին ի վերայ գբոյն եւ կնքեաց թագաւորն մատանեաւ իրով եւ մատանաւք մեծամեծացն, զի մի այլ ազգ ինչ իրք շրջեսցեն վասն Դանիէլի (Ձ 17).

*Այսինքն՝ զի մի՛ արտաքուստ նենգիցի, կնքեաց թագաւորն, իսկ իշխանք, զի մի՛ զերծցի ի թագաւորութենէն:*

*Եւ գնաց թագաւորն ի տուն իւր եւ ննջեաց առանց ընթրեաց, եւ խորտիկս ոչ մուծին առաջի նորա, եւ քուն հատաւ ի նմանէ: Կամ թէ՛ զսիրեցեալն ի նմանէ նախանձեալ ի մահ մատնեցին, վասն այնորիկ տրտմեցաւ, կամ թէ՛ բարեբարոյ ոք էր՝ ընդ անիրաւութիւն զայրացաւ եւ ոչ եկեր եւ ոչ ննջեաց, այլ եւ պահաւք եւ արթնութեամբ վշտակից եղեւ Դանիէլի ազաչելով զԱստուած նորա:*

Եւ եխից Աստուած զբերանս առիծուցն եւ ոչ լլկեցին զԴանիէլ (Ձ 18).

*«Չարագոյն գտան քան զբնութեամբ գազանս կամաւք իւրեանց իշխանքն, քանզի նոքա զպատկերն Աստուծոյ ողջ տեսանելով պատկառեցին, եւ ուսան ի նմանէ զպահելն, որպէս նա պահեաց ի սեղանոյ թագաւորին եւ կարծացոյց զբնութիւն մարմնոյն որպէս զմխեալ երկաթ»:* Վասն որոյ զնա ոչ կարացին լլկել, «այլ զէր եւ պարարտ եւ կակուղ մարմնոյ պահէին առիւծք»<sup>12</sup>:

Յայնժամ յարեաւ արքայն ընդ առաւատն լուսով եւ փութով եկն ի գութն առիծուցն եւ իբրեւ մերձեցաւ ի գութն, աղաղակեաց ի ձայն մեծ եւ ասէ. Դանիէլ ծառայ Աստուծոյ բարձրելոյ, Աստուածն, զոր դու յաճախ պաշտէիր, եթէ կարաց փրկել զքեզ ի բերանոյ առիծուցոյ (Ձ 19-20).

<sup>11</sup> փրկել. ուղղման նշանով:

<sup>12</sup> Վարդան, 259ա:

(342ա) *Զի «զգիչերն անքուն եւ անկերակուր անցոյց»՝ յանձնելով զնա մեծ հաւատով յԱստուած նորա, որ եւ աւգնեաց իսկ // վասն որոյ «ընդ լուսանալն եկն ճեպով» կամ նախ քան զլուսն եկն ճրագի լուսով «եւ առ փղձուկ սրտին ձայնէր յորդութեամբ. Դանիէլ, եթէ եղեւ աւգնական պաշտեցեալն ի քէն յաճախ կենդանին Աստուած»<sup>13</sup>, որում եւ ես ակն ունէի փրկել:*

Եւ ասէ Դանիէլ ցարքայ. Արքայ, յաիտեան կաց, Աստուած իմ առաքեաց զիրեշտակ իւր եւ եխից զբերան առիծուցս եւ ոչ ապականեցին զիս, զի առաջի նորա գտաւ ուղղութիւն իմ եւ առաջի քո արքայ վնաս ինչ ոչ արարի (Ձ 21-22).

*Ետ պատասխանի արքային, թէ՛ «Աստուած իմ, որոյ յանձնէ փրկութիւն, առաքեաց զհրեշտակ, զի պատուիրեալ է նորա վասն արդարոց պահել զնոսս, եթէ՛ «բանակք հրեշտակաց» (Սաղմ. 1, 9, 8) եւ թէ՛ «հոգիք են հարկաւորք» առաքին ի սպաս այնոցիկ, որ ժառանգեն (Եբր. Ա, 14), Պաւղոս ասէ: Եխից զբերան առիւծուցն, զի բանալ անգամ ոչ կարէին զկարիսն լցուցանել, զի առաջի Աստուծոյ ուղղութիւն գտաւ իմ. յայտ է, ըստ հաւատոց եւ գործոց նորա, որով ուղիղ հաւատացի եւ ուղիղ վարս առաջի նորա ցուցի, ըստ այնմ, ըստ սրբութեան ձեռաց իմոց առաջի աչաց նորա եւ առաջի քո եւ ոչ ինչ մեղայ, զի եւ այն եւս հաճոյ է Աստուծոյ»<sup>14</sup>:*

Յայնժամ թագաւորն զուարճաւ յանձն իւր յոյժ եւ հրաման ետ հանել զԴանիէլ ի գբոյ անտի: Եւ հանաւ Դանիէլ ի գբոյ անտի եւ ամենեւին ապականութիւն ոչ գտաւ ի նա, զի հաւատաց յԱստուած իւր: Եւ հրաման ետ թագաւորն եւ ածին չարսն չարախտսն Դանիէլի եւ ի գութն առիծուցն ընկեցան ինքեանք եւ որդիք իրեանց եւ կանայք իրեանց եւ չեւէին յատակս գբոյն հասեալ մինչեւ տիրեցին նոցա առիծքն եւ զամենայն ոսկերս նոցա մանրեցին (Ձ 23-24).

(342) *Զուարճացաւ ի գիւտ մարգարէին թագաւորն եւ «հրաման ետ հանել եւ զչարախաւսսն արկ: Եւ այս իրաւամբք. զի ի նոյն անկցի ի գութ եւ խորխորատ, զոր եւ գործեաց //, զի անձանց քաղցեցուցին զառիւծն եւ որդւոց եւ կանանց»<sup>15</sup>: Վասն որոյ ա-*

<sup>13</sup> Վարդան:

<sup>14</sup> Վարդան, 259ա:

<sup>15</sup> Վարդան:

սէ, թէ՛ ընկեցան, որպէս թէ ինքեանք մատնեցին զանձինս: «Զայս ահագին գործեաց թագաւորն ի պատուհաս նախանձացն եւ յերկիւղ անպիսեացն»<sup>16</sup>: Բայց նշանակաւ Դանիէլ բնութեանս է ապացոյց ընդ որս նախանձեալ բանսարկուին եւ զիւաց նորա՝ արկին ի ձեռն մեղաց ի բերան մահու, որ ըստ բնութեան անմեղութեան եւ մանաւանդ Քրիստոսի շնորհիւն արդարանալոյ ի ձեռն հաւատոցն ի կատարման գիշերոյ կենցաղոյս, յորժամ ծագէ արեգակն յերկնից Տէր յառաւառ միաշաբաթին զարթուցանէ զամենեսեան յանմահութիւն մեծաձայնութեամբ փողոյն եւ փոխանակ, զոր պարտաւորելոցս եւ չարախաւսելոցս ի սատանայէ, արկանէ ի լիճ հրոյն եւ ի բերան գեհենին՝ զբանսարկուն եւ զկամարարս նորա, որոց ընդառաջ ելեալ մրմուռով հրեղէն կլանէ զնոսա՝ մանրելով զգաւրութիւն նոցա եւ տիրելով անսպառ ի վերայ նոցա, որպէս եղեւ աւրինակն. ի Տեառն յարութիւն եւ ի կործանումն սատանայի:

Յայնժամ Դարեհ արքա գրեաց առ ամենայն ազգս եւ ազիս. որ բնակեալ էք յամենայն երկրի, խաղաղութիւն ձեզ բազմացի: Յերեսաց իմոց եղաւ հրամանս այս յամենայն իշխանութեան թագաւորութեանս իմում, զի երկնչիցիս եւ դողացեմ յերեսաց Աստուծոյ Դանիէլի, զի նա է Աստուած կենդանի եւ կայ յաիտեանս, եւ արքայութիւն նորա ոչ եղծանի եւ տէրութիւն նորա մինչեւ ցվախճան աւգնական լինի եւ փրկէ եւ առնէ նշանս յերկնս եւ յերկրի, որ փրկեաց զԴանիէլ ի բերանոյ առիծոց: Եւ Դանիէլի յաջողէր ի թագաւորութեան Դարեհի եւ Կիրոսի պարսկի (Զ 26-27).

(342բ) *Կատարեալ ի հաւատս ի սքանչելեացն Դարեհ արքայ «գրէ առ ազգս եւ լեզուս երկնչել յԱստուծոյ Դանիէլի, քանզի թէպէտ ոչ վստահացաւ բառնալ զս//նոտիսն, սակայն երկիւղն հիմն է պաշտելեացն, յորմէ երկնչին, զի որ երկնչի ի Տեառնէ զպատուիրանս նորա նա կամի յոյժ, եւ երկիւղիւ Տեառն խորշի ամենայն ոք ի չարէ: Եւ այս նշանք, որ ոչ երկար միջոցաւք, որ առ Բաղտասարաւ եւ Դարեհիւ, ըստ ասելոյն. Եկեսցէ ի տարւոջն համբաւ եւ ի գալ տարւոյն՝ միւս եւս համբաւ, որով երկնչի ամենայն երկիր յերեսաց ահի Տեառն, եւ ծածկեսցի փառաւք սնոտեացն»<sup>17</sup>: Այս է, որ ասացն.*

<sup>16</sup> Վարդան:

<sup>17</sup> Վարդան, 259բ:

## [ Է ]

Յամին առաջներորդի Բաղտասարայ արքայի ի քաղղեացոց երազ ետես Դանիել, եւ տեսիլ գլխոյ նորա յանկողնի իւրում եւ զերազն գրեաց (Է 1).

*Բաղտասարայ առաջի ամն ետես զերազն նախ քան զարկանելն ի գուբ եւ զթագաւորելն Դարեհի, բայց ոչ զրեաց թերեւս թէ անպարապ էր, եւ ի մէջ չարեաց լռեաց ի պատմելոյ, իսկ առ Դարեհիւ յելանելն ի գբոյ առիւծուց եւ յաջողելոյ ի թագաւորութեան Դարեհի, որպէս ասաց յապահով եղեալ սկսանի պատմել, քանզի ըստ տեսութեան յառաջ է, որպէս ասացի, քան զԴարեհ տեսիլս, բայց ըստ պատմութեան ի կարգի եւ ըստ գրութեան միանգամայն եւ անմոռանալի են ի միտս տպագրել սրբոցն իմաստք աստուածեղէնք:*

Ես Դանիել տեսանէի ի տեսլեան գիշերոյ եւ ահա չորք հողմք երկնից բախէին զծովն մեծ եւ չորս գազանք մեծամեծք ելանէին ի ծովէ անդի այլակերպք ի միմեանց: Առաջինն իբրեւ զմատակ առիւծ թեւաւոր, եւ թեւք նորա իբրեւ զարծուոյ, եւ հայէի մինչեւ թափեցան թեւք նորա, եւ ջնջեցաւ յերկրէ, եւ եկաց իբրեւ ի վերայ ոտից մարդոյ եւ սիրտ մարդոյ տուաւ նմա (Է 2-6).

*«Դանիէլ ասպնջական երկնաւոր շնորհացն եւ աւթեւան Հոգւոյն Սրբոյ եւ նման երկնաւորացն ի բաց եկաց յերկրաւոր խորտկաց միշտ կերակրի իմանալի եւ անմահ կերակրովն», զոր // (343ա) հրեշտակքն նմին ջամբէին: Այս է զտեսիլս աստուածային խորհրդոյն, «զոր տեսիլ գիշերոյ ասէ, զի այլք իբր ի քուն կացին յայնժամ յանգիտութեան գիշերոյ անզգայք ապագայիցն: Նոյնպէս եւ արդ, թէ ոչ բանան զաչս տեսլեամբ առաջնոցն եւ Աւետարանին արեգակամբն զարթնուն մինչ աւուր կա մասն»<sup>1</sup>: Կամ զՆեղութիւն գերութեան գիշեր կոչեաց, կամ վասն կենցաղոյս է տեսիլս, որ ի գիշեր առակեալ է եւ վասն հանդերձելոյն կամ զժամանակն իսկ գիշեր կոչէ զտեսլեանն, զի մի՛ անարժանքն տեսանիցեն, քանզի եւ նա գիշեր է մեղաւորացն ըստ այնմ. Զի՞ կա ձեզ եւ աւտարաց, զի աւրն այն խաւար է (հմմտ. Բ Կորնթ. 2 14): Կամ ցու-*

<sup>1</sup> Վարդան, 260ա:

ցեալ թագաւորին, վասն որոց տեսիլս իբր զգիշեր զկեանս անցուցին ի մէջ փափկութեան, զոր գիշեր կոչեաց, ըստ այնմ, թէ՛ «Խաւար էր զինեւ շուրջ զթշուառականաւ եւ ես լոյս զփափկութիւն կարծէի» (Ռմմտ. Սաղմ. ԾԼԸ 11): Եւ վեցերորդ. յորժամ անտեսեալ ծածկէ զինքն ի կենցաղոյս իբր ի գիշերի՝ սա՞ շրջելով յայնժամ տեսանէ զերկնայինն եւ զիմանալին, որպէս երբեմն հայրապետն Իսահակ (տե՛ս Ծմնդ. ԻՁ 23-24), զի որ յաշխարհիս յայսմիկ յիմար է ի Տէր իմաստունն է. ասէ առաքեալն (Ա Կորնթ. Ա 25, Գ 18): Այս է ասել, թէ՛ Տեսաւէի ի տեսլեամ գիշերոյ: Իսկ ես-ն նախ զայն ցուցանէ, թէ՛ ոչ միայն մեկնիչ էի այլոց տեսութեան, այլ եւ ես տեսաւէի տեսիլս անճառելիս: Եւ Բ(երկրորդ), զի ես եւ իմ եւ իմոյն ասացին արտաքինքն. ես զհոգին ասացին, եւ իմ՝ զմարմինն եւ իմոյ՝ զարտաքին ինչս: Արդ, ցուցանէ մարգարէս, թէ՛ ոչ այլոցն է տեսութիւն, այլ հոգւոյն է կարողութիւն ձկտիլ յաստուածայինսն: Եւ Գ (երրորդ). Եւզ իշխանութեան անունն է ըստ այնմ. «Բայց ես ասեմ ձեզ» (Մատթ. Ե 27) թէ՛ «Ես եմ լոյս աշխարհի» (Յովհ. Ը 12): Այժմ ասէ, թէ՛ ոչ ի հարկէ ձգեցայ յայս տեսութիւն, որպէս Նաբուգոդոնոսոր եւ այլքն, այլ յանձնիշխան կամաւք այսմ բաղձացայ, վասն որոյ եւ տեսի իսկ: Եւ ահա Դ(չորք) իողմք երկնից բախէի՜ն// չորք հողմք եւ չորք գազանք եւ չորք ձեւ պատկերին եւ չորք աւձիքն Զաքարիայի եւ չորք կառքն Եզեկիէլի մի են զաւրութեամբ՝ զելումն թագաւորաց նշանակեալ, որպէսզի ի բազմաց աստի «հաւատասցէ ամենայն երկիր, թէ ի ձեռս Աստուծոյ են ամենայն տիեզերք երկրի եւ նա փոփոխէ զիշխանս նոցա ընդ չորք կողմ երկրի: Հողմ զկողմապետ հրեշտակսն ասէ, ըստ այնմ. կացոյց սահմանս հեթանոսաց, ըստ թուոյ հրեշտակաց (Բ Օր. ԼԲ 8), քանզի հողմեղէնք ասին եւ հրեղէնք»<sup>2</sup>, ըստ Դաւթայ. «Ո՞ արար զհրեշտակս իւր հոգիս» (Սաղմ. ԾԳ 4), զի թեթեւք են եւ երազունք եւ սնուցիչք բանական հոգւոց: Իսկ երկնի՞ց. «զի երկնաւորք են, եւ անդի առեալ հրաման բախեն զծովս զայս մեծ (Ռմմտ. Սաղմ. ԾԳ 25): Ծով զաշխարհս ասէ, ըստ Դաւթայ. «Այս ծով մեծ եւ անդորր», վասն ծփմանն եւ դեղհմանն, որք ի սմա կենցաղավարին»<sup>3</sup>: Իսկ բախելն զհրամանն է արկանել ի սմա, յորոյ իբր ի բախմանէ

\* այս ուղղման նշանով՝ լուսանցքից:

<sup>2</sup> Վարդան, 260ա:

<sup>3</sup> Վարդան:

*Թնդայ եւ ամբոխի եւ շարժեալ դղրդի երկիր իբր զծով ալեաւք մանաւանդ ի յառնել թագաւորաց, զորս գազան կոչեաց:*

*Որպէս ասէ, թէ՛ չորք գազանք մեծամեծք ելանէին ի ծովէ (Է 3). «չորք գազանք՝ բաբելացւոցն, պարսիցն, յունացն, հռոմայեցւոցն», եւ գազանք ամենեքին, զի գազանաբարոյք եւ ապականիչք էին հաւասար եւ մեծամեծք, զի տիեզերակալեցին եւ այլակերպք վասն գործոցն եւ պէս-պէս կերպարանացն ասէ, որպէս անդ մի պատկերի Դ(4) նիւթոյ, աստ գազանք պէս-պէս ձեւով:*

Առաջինն իբրեւ զմատակ առիւծ թեւատր (Է 4).

*Թագաւորութիւն բաբելացւոյ Նաբուգոդոնոսոր, զի առաջին նա ինքնակալեաց, որ ի պատկերն ոսկի ասացաւ, որ նիւթս առաւել է աստ առիւծ քան զայլ գազանս իբրեւ առիւծ ասէ, զի չէր առիւծ, այլ կամաւք չարացաւ եւ մատակ առիւծ, զի բազում չարիս ծնաւ //: Կամ իգասէր էր եւ կնամուլ, որպէս որդի նորա հարճաւքն ըմպէր:*

Եւ թեւք նորա իբրեւ զարծուոյ (Է 4ա).

*«Բարձրամիտ՝ եւ գիշխանն՝ Իսկ թեւքն, զի ունէր, զասորոց եւ զբաբելացւոց թագաւորութիւն»<sup>4</sup>:*

Հայէի, ասէ, մինչեւ թափեցան թեւքն (Է 4բ).

*Ետես մարգարէս աչաւք իսկ, «զի անկաւ յիշխանութենէն եւ տկարացաւ իբրեւ թռչուն ի թափել թեւոցն եւ նա՝ յանկանելն ի փառաց եւ ի զաւրաց եւ լինել գազան եւ անասուն, եւ ապա սիրտ մարդոյ տուաւ, զի իմացաւ իբրեւ զմարդ եւ աւրհնեաց զԱրարիչն, այլ եւ ի հպարտութենէ զիջաւ եւ զմտաւ ած, թէ մարդն մահկանացու է: Կամ զիջեալ յարծուոյ երագութենէ եւ յառիւծոյ խրոխտմանէն տկարացաւ իբր մարդ թագաւորութիւն բաբելացւոց առաջի տկար թագաւորութեան մարաց»<sup>5</sup> եւ պարսից*

Եւ ահա երկրորդ գազանն մման արջոյ եւ եկաց ի կողմն մի եւ կողք երեք ի բերան նորա ի մէջ ժանեաց նորա, եւ այսպէս ասէին ցնա. Արի, կեր զմարմինս բազմաց (Է 5).

\* բարձրամիտ էր. էր-ի վրա ուղղման նշան:

<sup>4</sup> Վարդան, 260բ:

<sup>5</sup> Վարդան:

«Ահա ասելնն, զի արագ ընդ սպանմանն Բաղտասարայ հառ Դարեհն մար եւ ի նմանէ՝ պարսիկն Կիւրոս, զոր արշ կոչէ անհեթեթ եւ փաղաղող ատամամբք եւ ռնգամբք եւ ոտիւք որպէս եւ պարսիկ զազրագործք եւ աւերիչք երկրի, եւ եկաց ի կողմ մի, զի նախ միոյ կողման տիրեաց պարսից եւ ապա հառ զբաբելոնացւոցն եւ զմարացն, զոր ասէ կողք երեք ի բերան անորա: Կամ որպէս Դարեհ երեք կացոյց իշխանս եւ ինքն փափկանայր Դանիէլիւ, որ ի վերայ նոցա նոյնպէս եւ Կիւրոս՝ երիս զաւրագլուխս՝ զԴատին, զՏիսափեռին եւ զՄարտոնիոն, որովք զաւրաժողով եղեւ ի վերայ Ելլադայ, կամ զի թագաւորն ինքն եւ որդի իւր եւ որդի որդւոյ իւրոյ, զոր ասէին. Արի կեր զմարմինս բազմաց, քան//զի կոտորմամբ եւ աւարառութեամբ լցին զագահութիւնս իւրեանց պարսիկք զամս ՄԼ (230) մինչեւ ի Դարեհ միապետեալ, զոր սպան Աղեկսանդր, եւ այլք ՄԽԳ(243)ամ կալեալ ասեն Պարսից թագաւորութիւն»<sup>6</sup>:

Եւ զկնի անորա հայէի, եւ ահա այլ գագան էլաներ իբրեւ զինձ եւ Դ(4) թեւս թոչնոց ի վերայ անորա եւ չորք գլուխք գագանին եւ իշխանութիւն տուաւ նմա (Է 6).

Յետ ամաց բազմաց, որպէս ասացի, ել «Աղեկսանդր Մակեդոնացի, զոր ինձ առակէ վասն սրիմացութեան եւ երագութեան եւ պերճութեան ամենայն յունաց, որք առին զմակեդոնացոց իշխանութիւնս եւ խառնեցան», իսկ «Դ(4) թեւն եւ չորս գլուխն նախ սննդակիցսն եւ զդայեկորդիսն Աղեկսանդրի նշանակէ՝ զՍելեւկիոս, զԴեմետրիոս, զՊտղոմէոս, զՓիլիպպոս, որք թագաւորեցին եւ տիրեցին ազգաց բազմաց, որպէս պատմէ գիրք Մակաբայեցւոցն: Կամ զԴ(4) գլխաւոր աշխարհս, որոց արագապէս տիրեցին, զի զիւրեանցն ունէին զարեւմուտս եւ զերիցն եւս առին զթագաւորութիւն եւ զաշխարհ զԲաբելոնացւոցն, զՄարացն եւ զՊարսիցն: Դարձեալ ոմանք զպարսիցն ասեն թագաւորք զԿիւրոս, զԱրտաշէս, զԴարեհ, զոր սպան Աղեկսանդր եւ հառ զտեղի նոցա, եւ թագաւորեցին ամս Յ(300) յոյնք կոչեցեալ: Սակայն ընձուս, ասէ, զթեւսն եւ զգլուխն»<sup>7</sup>, որպէս ասացաւ:

<sup>6</sup> Վարդան, 260բ:

<sup>7</sup> Վարդան, 260բ-261ա:

Եւ զկնի նորա հայէի եւ ահա գազանն չորրորդ ահեղ եւ զարմանալի եւ հզար առաւել, ժամիք նորա երկաթիք եւ մագիլք նորա պղնձիք, ուտէր եւ մանրէր եւ զմնացորդսն\* առ ոտսն կոտորէր եւ ինքն առաւել այլակերպ էր քան զայլ գազանն, որ յառաջ քան զնա (Է 7).

(345ա) «Չորրորդ գազան *զՀռովմայեցւոցն է իմանալ տերութիւն, որ երկաթի ատամունս ունէր, որպէս այլուր «գաւազան երկաթի»* (Սաղմ. Բ 9) կոչէ զնա գիր առ ի՝ *զամենեսեան մաշել եւ հնա//զանդել, զի ըստ կարգի որպիսութեան պատկերին եկն ընդ գազանսն անդ զսրունսն երկաթի եւ աստ գատամունսն եւ զքնիսն պղնձի, զի երկուց կազմի զէնք եւ սուսեր պատերազմի՝ յերկաթոյ եւ ի պղնձոյ*<sup>8</sup>: *Կամ երկաթովն զգաւրութիւն ասէ եւ պղնձովն՝ զբանականութիւն, զի խորհրդով ինքնակալեցին հռոմայեցիքն, վասն որոյ ասէ, թէ այլակերպ էր քան զայլսն: Ուտէր, ասէ, եւ մանրէր եւ զմնացեալն, զի չտա այլ ումեք յառնել, զի զբովանդակն հնազանդեցոյց:*

Եւ եղջիրք ժ(10) ի մնա եւ պշուցեալ հայէի ընդ եղջիրս նորա, եւ ահա այլ եղջիր փոքրիկ ելանէր ի մէջ նոցա, եւ Գ(3) եղջիրք առաջնոցն ի բաց խլէին յերեսաց նորա, եւ ահա աչք իբրեւ զաչս մարդոյ յեղջերն յայնմիկ եւ բերան նորա խաւէր զմեծամեծս (Է 8).

(345բ) *Զի խաւսի հայհոյութիւնս զԱստուծոյ եւ զինքն տա պաշտել, «որոյ յարացոյց Անտիոքոս // եղեւ կռուելով ընդ մակաբայեցիսն եւ պղծելով զտաճարն»*<sup>9</sup>:

Տեսանէի մինչեւ աթոռք անկանէին եւ հինաւորոցն նստէր (Է 9).

«Ասէ աթոռք կործանեցան յայտ է՝ թագաւորաց, որ Նեոխնն հնազանդեցան, յետ որոյ այլ երկրաւոր թագաւոր ոչ յառնէ, այլ երկնաւոր թագաւորութիւն արժանաւորացն կազմին, որպէս ասէ. աթոռք անկանէին, որ է յաւրինեցան ըստ Տեառն առաքեալսն աւսացեալ «Նստջիք ԲԺ(12)ան աթոռ (Մատթ. ԺԹ 28) եւ աղքատացն հոգւով եւ հալածելոցն վասն արդարութեան, եւ հեզոցն եւ ողորմածացն: Եւ հինաւորոցն նստէր, որ է անսկիզբն Հայր, եւ հնացուցանէ զաւուրս եւ զժամանակս եւ զժամանակաւորսն, կամ հինա-

\* զմնացեալսն. ողորման նշանով լուսանցքից:

<sup>8</sup> Վարդան, 261ա:

<sup>9</sup> Վարդան, 261բ:



ուրցն Արարիչն արարչութեան ակուրցն, եւս եւ Գ(Յ)ակուրն, որ այն արեգակն հին ակուրք կոչի»<sup>10</sup>, զի որպէս լոյս ստեղծեալ լոյս կոչի եւ այլքն, նոյնպէս եւ հինակուրց ասի վասն զակուրսն առաջին առնելոյ կամ որ ստեղծանէ եւ գայ ի դատել, «Նստի Հայր, զի տեսցի յաջակողմեան դասուց եւ ակրհնեսցէ զնոսա յասելն Որդւոյ «Եկայք ակրհնեալք Հաւր իմոյ» (Մատթ. ԻԵ 34)»<sup>11</sup>:

Հանդերձ Աորա սպիտակ իբրեւ զձիւն եւ հեր գլխոյ Աորա իբրեւ զասր սուրբ (Է 9ա).

Հանդերձ զանմատչելի լոյսն ասէ, ըստ այնմ, թէ՛ «Բնակեալ է ի լոյս անմատոյց» (Ա Տիմ. 2 16): Իսկ հերն սուրբ\* զխորհուրդն Աստուծոյ ասէ զպէս-պէս եւ զանազան, որ անդանաւր բանի, այս է՝ ստեղծումն աշխարհի եւ մարդոյն, եւ գլորումն նմին, եւ գալ բան եւ մահն նորին, եւ այլն ամենայն, որ ծածկեալ է այժմ, յայնժամ յայտնի, զորս հերս կոչէ սուրբ: Եւ դարձեալ Հանդերձ սպիտակ զարդարն ասէ, զոր զգենու, որք զարկանելիս ունէին սպիտակ եւ գային ի վշտաց եւ իբրեւ զաղանիս ձագախառն երամովին առ նա ընթանան, ըստ այնմ. «Կենդանի եմ ես, ասէ Տէր» (Թիմ ժ Դ 28). թէ՛ Զձեզ զամենեսեան իբրեւ զՀանդերձ զգեցայց, եւ հեր գլխոյ եկեղեցւոյ\*\* Քրիստոսի նորա // իբրեւ զասր սուրբ: Այս է բարբառ առաքելոցն եւ մարգարէիցն, որք հերք եղեն Քրիստոսի պայծառ ցուցանի քարոզութիւն նոցա եւ առանց աղանդոց, այլ եւ ողջակիզելի եւ մաքուր:

Աթոռ Աորա որպէս զբոց հրոյ եւ անիւք կառաց Աորա իբրեւ զհուր բորբոքեալ եւ գետ հրոյ յորդեալ ելանէր առաջի Աորա (Է 9բ-10).

Չայս զհրեշտակաց իւրոց ասէ, որք հանգիստ պատրաստեալ են նմա բազումք եւ այլք սպասաւորք առաջի նորա յորդ եւ բազում իբր զգետ որպէս զկնիդ ասէ: Արդ, ցուցանէ, թէ՛ հրեղէնք են ըստ Դաւթայ եւ կամ զամենեսին ի հուր առակեալ: Ուսուցանէ թէ՛ ի հուր դատելոց է ամենայն երկիր եւ ամենայն ինչ հրով փորձելոց եւ յատելոց, որպէս երբեմն՝ ջրով

<sup>10</sup> Վարդան, 262ա:

<sup>11</sup> Վարդան:

\* սպիտակ. ուղղմանն նշանով լուսանցքից:

\*\* եղեղեցւոյ:

Հազարք հազարաց պաշտէիմ գնա եւ բիրք բիրոց կայիմ առաջի Աորա (Է 10).

**Ջանթուական լուսեղինացն դասն Ռ(1000)աւք եւ բիւրաւք ծայրագոյն թուով նշանակէ սպասաւոր պաշտաւնեայք, որք չունին պարապ հանգստեան՝ անմարմին գոլով: Կամ թէ զմարմնով յարուցեալն ասէ ի դատաստան կամ ի հանգիստ, որպէս հանգուցիչն գիտէ:**

Ատեան Աստաւ եւ դպրութիւն բացաւ (Է 10ա).

*(346բ)* Ահագին եւ քստմնելի, զի ամենայն հրեշտակ անդր ժողովին մինչ զի թափուր մնալ երկնի եւ ադամածին բնութիւնք եւս, «յորում արդարն հագիւ կեայ: Իսկ դպրութիւն բանալ. զի իւրաքանչիւր ոք զգիր պարտուց իւրոց եւ զարձանն ընթեռնու ոչ ասելով ումեք, թէ՛ եկ ընթերցիր ինձ զգիրս զայս»<sup>12</sup>, զի նոր գիտութիւն առնուն զգործոցն, կամ զհրեշտակացն ասէ զգիր, որք գրեալ են զգործս մարդկան զչարիս եւ զբարիս ի ծննդենէ մինչեւ ի մահ բերեալ առաջի ընթեռնուն, որում ամենեքեան վկայեն, «որով յայտնի լինի արդարութիւն դատաւորին»<sup>13</sup>, ըստ գրեցելոյն տալ զվճիռն կամ զաւրէնսն ցու//ցանիցեն, զի մի՛ ասիցեն, թէ աւրէնս ոչ ունէաք եւ կամ ի նախախնամութիւնս ոչ վայելեսցուք:

Տեսանէի յայնժամ ի բարբառոյ մեծամեծ բանիցն զոր եղջիրն այն խաւէր մինչեւ բարձաւ գագանն այն եւ կորեաւ, եւ մարմին Աորա տուաւ այրումն հրոյ (Է 11).

**Մարմնով տանջելոց սկիզբն ի Նեռէն լինի, զի վասն մեծամեծ հայհոյութեանց բանիցն տուաւ յայրումն գեհենուոյն ըստ Պաւղոսի, զոր «Տէր Յիսուս սատակեսցէ հոգևով բերանոյ նորա» (Բ Թեաաղ. Բ 8) եւ այրմամբ շրթանց, զի հուրն որդւոյն է:**

Եւ այլոց գագանացն իշխանութիւն փոխեցաւ եւ երկայնութիւն կեանց տուաւ Աոցա մինչեւ ի ժամանակ (Է 12).

**Այլոց իշխանաց ի նմանէ խաբեցելոց ժամանակ ինչ սակաւ տուեալ ապաշաւանաց մինչ ի գալ Դատաւորին, ապա թէ ոչ՝ անպատասխանիք կորիցեն:**

<sup>12</sup> Վարդան, 262բ, *որ սակայն* զարժանն *փխ*. զարժանն:

<sup>13</sup> Վարդան:

Տեսանելի ի տեսլեան գիշերոյ եւ ահա ընդ ամպս երկնից իբրեւ որդի մարդոյ գայր եւ հատանէր միճչեալ ի հիճաւորացն (Է 13).

Ոչ եթէ յառաջ նստի Հայր եւ ապա Որդի գայ, այլ ամենեքեանս ի միում նուազի լինին, բայց բանս զամենայն կամի պատմել՝ ի հարկէ այսպէս ձեւանայ: Գայ, ասէ, յանկարծ որպէս փայլակն Որդին մարդոյ «նովին մարմնով ըստ իւրում հրամանի չնաշխարհիկ եւ անպատմելի փառաւքն Հաւր, զի տեսցի դատելոց»<sup>14</sup>: Իսկ ամպաք կամ որպէս ամպով վերացաւ, ամպով գայ, որպէս ասացին հրեշտակքն: Կամ ամպ զմարմինն նշանակէ, զցաւ դաւոր բանն յինքեան ունելով կամ՝ հրեշտակական բազմութեամբ իբր զամպ խիտ եւ կուռ զաւրաւք կամ՝ Հոգևով Սրբով: Գայր հասանէր առ հինաւորացն, զի ուր Հայր է՝ անդ է Որդին եւ Հոգին Սուրբ, եւ մատուցաւ առաջի նորա: Յայտ է ընծայէ զսուրբ եկեղեցի Միածինն՝ ասելով. «Ահա ես եւ մանկունք իմ, զոր ետ ինձ Աստուած» (Եսայի Ը 18): Գրէ եւ Պաւղոս. «Յայնժամ եւ ինքն հնա//զանդեսցէ այնմ, որ հնազանդեցոյց նմա զամենայն» (Եբր. Բ 8):

Եւ նմա տուաւ իշխանութիւն եւ պատիւ եւ արքայութիւն եւ ամենայն ազգ եւ ազիւք եւ լեզուք նմա ծառայեսցեն իշխանութիւն նորա իշխանութիւն յաւիտեանական, որ ոչ անցանէ եւ թագաւորութիւն նորա ոչ եղծանի (Է 14).

Տալ իշխանութիւն եւ պատիւ «մերում բնութեան, զոր ունէր Աստուածութեամբն»<sup>15</sup>, որպէս եւ ասէր, թէ՛ «Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս եւ յերկրի» (Մատթ. ԻԸ 18), որպէսզի տացէ արժանեաց իւրոց: Ոչ թէ արդ չէ առեալ, այլ յայնժամ յայտնի, որք զիտենն եւ որք ոչ զիտեն, եւ ծառայեսցեն ամենայն ազգ եւ լեզուք, ըստ Դաւթայ (հմմտ. Սաղմ. ՀԱ 11), թէ զամենայն ազգ, զոր արար, եկեսցեն եւ երկիր պազեն, եւ թագաւորութիւն նորա յաւիտեանական եւ անեղծ ցուցցի եւ որոց տացէ եւ սոյնպէս (հմմտ. Սաղմ. ԻԱ 28, ՀԱ 11): Կամ այժմ եղծանեն զթագաւորութիւն եւ անգիտութիւն, վասն որոյ եւ անեղծ է թագաւորութիւն նորա:

<sup>14</sup> Վարդան, 262բ:

<sup>15</sup> Վարդան:

Սոսկացաւ մարմինն յանձն իմ. ես Դանիէլ եւ տեսիլ գլխոյ իմոյ խոռ-  
վեաց զիս (Է 15).

*Զի մտաց խռովութենէ հարաւ սոսկումն եւ ի մարմինս իմ  
վասն տեսլեան խորհրդոյն, թէ որպիսի իրս նշանակէ, վասն որոյ  
եւ մատեալ հարցանել, որպէս ասէ.*

Եւ մատեայ առ մի ոմն, որ կային անդ եւ զճշմարտութիւն խնդրէի ու-  
սանել վասն ամենայնի այսոցիկ եւ ասացին զճշմարտութիւն եւ զմեկնու-  
թիւն բանիցն եցոյց ինձ (Է 16).

*Մատեալ առ մի ոմն ի հրեշտակացն, որք զտեսիլն ձեւացու-  
ցին հեզութեամբ խնդրել զտեսլեանն յայտնութիւն, զոր եւ նա  
աննախանձ կամաւք պատմեաց զխորհուրդ մեկնութեան ճշմար-  
տապէս, որպէս ուսեալ էր ի Հոգւոյն:*

Արդ, զագանք մեծամեծք՝ չորք թագաւորք յարիցեն ի վերայ երկրի (Է  
17).

*Երկիր բաժանի ի Դ(4) կողմ յարեւելս եւ յարեւմուտս, ի  
հիւսիս եւ ի հարաւ, եւ յերիս մասունս, յորոյ վերայ յարեան  
ասացեալ թագաւորքն ի ինամոցն Աստուծոյ, որ ետ նոցա նիւթ  
(347բ) իշխանութեան, որով//իմանան զտուաւղն եւ զպահանջաւղն:  
«Սկսեալ իբր ի գլխոյ ի բարիլացւոցն եւ ի մարացն եւ ի պարսիցն  
եւ զասորոցն եւ զհայոցն եւ զյունացն՝ յարելով զհիւսիսոյ եւ  
զհարաւոյ թագաւորութիւն, որք ըմբռնեցին զամենայն Ասիա եւ  
զԼիբիա: Իսկ չորրորդիւս, զամենայն Եւրոպիայ եւ զարեւմուտս  
ցուցանէ»<sup>16</sup>:*

Բարձրեմ եւ անցեմ զթագաւորութիւն սուրք բարձրելոյն եւ կալցին  
զնա յաիտեանս յաիտեանից (Է 18).

*Փոխէ զթագաւորութիւն նոցա եւ բառնա ի դատաստան կոչե-  
լով յարեւելից մինչեւ ի մուտս յարեւու, ուստի սկսանին բարիքն  
եւ ուր սպառնին ըստ սաղմոսին, թէ՛ «Աստուած մեր յայտնապէս  
եկեսցէ եւ հուր առաջի նորա եւ կոչեսցէ զերկիր» (Սաղմ. 10թ 3) յա-  
րեւելից մինչեւ ի մուտս արեւու: Իսկ յորժամ բառնի թագաւո-  
րութիւն մարմնականացս՝ յայտնի թագաւորութիւն սրբոցն՝ տի-  
րել նոցին, յորոց չարչարեցան սուրբքն, ըստ առաքելոյ, թէ՛*

<sup>16</sup> Վարդան:

*«յորժամ կեանքն ձեր յայտնեսցէ, յայնժամ դուք ընդ նմին յայտնեսջիք փառաւք անվախճան» (Կողոս. Գ. 4).*

Եւ քննէի ճշմարտի վասն գազանիմ չորրորդի, զի առաւել այլակերպեր քան զամենայն գազանսն եւ ահագին յոյժ ժանիք նորա երկաթիք եւ մագիք նորա պղնձիք, ուտեր եւ մանրէր եւ զմնացորդսն կոտորէր: Եւ վասն եղջերացն ժ(10)անց, որ ի գլուխ նորա եւ վասն միւսոյն, որ ելանէր եւ զերիսն ի բաց թալթափէր, որոց աչք էին եւ բերանն խաւեր զմեծամեծս եւ տեսիլ նորա առաւել քան զայլոցն: Տեսանէի եւ ահա եղնիրն այն տայր պատերազմ ընդ սուրբս եւ զաւրանայր ի վերայ նոցա մինչեւ եկն ճիւղատուրցն եւ ետ իրաւունս սրբոյց Բարձրելոյն: Ժամանակ եհաս եւ զարքայութիւն սուրբք ըմբռնեցին (Է 19-22).

*(348ա) Ի համառաւտ մեկնութենէն իմացաւ մարգարէս զիրս երկից զազանացն, իսկ վասն չորրորդին, զի այլակերպ էր քան զայլսն: Ծճմարտիւ խուզէ, վասն որոյ եւ զտեսիլն //յատուկ յատուկ՝ կրկնէ առաջի նորա, զոր եւ սկսանի մեկնիլ հրեշտակին:*

Եւ ասէ. Գազանն չորրորդ թագաւորութիւն չորրորդ կացցէ ի յերկրի, որ առաւել իցէ քան զամենայն թագաւորութիւնս եւ կերիցէ զամենայն երկիր եւ կոխիցէ եւ հարցէ զնա: Եւ ժ(10) եղջիրք նորա ժ(10) թագաւորք յարիցեն եւ զկնի նոցա յարիցէ յայլ, որ առաւել իցէ չարեաւք քան զամենայն առաջինսն, եւ երիս թագաւորս խոնարհեցուցէ եւ բանս առ Բարձրելայն խաւեսցի եւ զսուրբս Բարձրելոյն մոլորեցուցէ\* եւ կարճեցէ զժամանակս եւ զաւրէնս փոփոխել եւ տացի ի ձեռս նորա մինչեւ ի ժամանակ եւ ի ժամանակս եւ ի կէս ժամանակաց: Ատեան նստցի եւ զիշխանութիւն նորա փոխեցցեն յապականել եւ ի կորուսանել մինչեւ ի սպառ, եւ թագաւորութիւն եւ իշխանութիւն եւ մեծութիւն թագաւորաց, որ ի ներքոյ ամենայն երկնից տուաւ սրբոց Բարձրելոյն եւ արքայութիւն նորա արքայութիւն յալիտեանց եւ ամենայն իշխանութիւնք նմա ծառայեցցեն եւ հնազանդեցին (Է 23-27).

*Ըստ կարգի մեկնէ, որպէս ասացեալ է զհռովմայեցւոց թագաւորութենէն, որք ի ժ(10) բաժանին մերձ ի լրման կենցաղոյս, յորոց միջի ելանէ եղջիւրն փոքրիկ, զոր այլ ասաց, որ է նա ինքն Նեռն, աւտար յառաջնոց զաւրացն, զորոյ ասէ առաւել չար լինել ի ներողութենէն Աստուծոյ տալ ի փորձ լաւացն կամ որպէս արդարութեան է լրումն Քրիստոս, նոյնպէս եւ մեղացն՝ Նեռն, որ*

\* խոնարհեցուցէ. ուղղման նշանով՝ լուսանցից:

(348բ) Հայհոյէ զԲարձրեալն եւ հնարի մոլորեցուցանել զսուրբսն, յորս խնայեալ Աստուած կարճէ զժամանակս նորա, որ փոփոխէ զաւրէնս՝ մնալով իշխանութիւն ի ձեռս նորա այսչափ ժամանակս, որ է տարի մի եւ ժամանակս, Բ(2) տարի եւ կէս ժամանակս՝ կէս տարի»<sup>17</sup>, եւ զի այսքան յառաջ տանի զմարգարէութիւնս եւ զասացեալ ժամանակս աւր թուէ ՄՀԸ (278), որ են Գ(3) ամ եւ կէս: Եւ այս «վասն ընտրելոցն կարճի»<sup>18</sup>, ըստ Տեառն, թէ ոչ// կարճէր Աստուած զաւուրսն զայնոսիկ, զի ապրեսցի ամենայն, որ է մարմին Քրիստոսի: «Իսկ աստեան զինամսն ասէ Հաւր, զոր Հինավուրց ասաց եւ զիշխանութիւն Նեռինն փոխեսցեն, այս է՝ չարիքն իւր բառնայ եւ դատաստանն Աստուծոյ ապականէ եւ կորուսանէ, զի պակասին մեղք եւ մեղաւորք յերկրէ, եւ ի նորանալն երկնի եւ երկրի նոր արքայութիւն առցեն սուրբքն»<sup>19</sup>, որք զանձինս Բարձրելոյն սրբեցին եւ կամ թէ սրբոց բարձրեալ որդին է, որպէս ասէ թէ՝ արքայութիւն նորա, զոր յայտնէ եւ տա սրբոցն, յաւիտենական է եւ ոչ անցաւոր, որում ամենայն ազգ հնազանդեսցին:

Մինչեւ ցայս վայր է վախճան բանին (Է՝ 28).

Կամ «տեսլեան երազոյն եւ մեկնութիւն հրեշտակին կամ վախճան աշխարհիս, որ լինի երկրորդ գալստեանն Քրիստոսի արդարոց եւ մեղաւորաց հատուցումն եւ կատարումն»<sup>20</sup>:

Ես Դանիէլ եւ խորհուրդք իմ յոյժ խոռվեցուցանէիմ զիս եւ զոյն երեսաց իմոց շրջեցաւ եւ զբանսն ի սրտի իմում պահէի (Է՝ 28ա).

Յառաւել յամբոխմանէ մտացս ասէ թէ եւ մարմինս տժգունեցաւ, սակայն զբանն ի մտի պահէի՝ չնեղիլ եւ «չպահանջել հաւաստիս ի խրատ ամենայն ումեք՝ մի՛ խնդրէր, թէ երբ լինին ասացեալքս՝ ունկնդիր լինելով Տեառն, որ անհոգ արար ասելով.\* «Ոչ է ձեզ գիտել զժամս եւ զժամանակ»<sup>21</sup> (Գործք Ա, 7) մեր ելիցն. Գտանէ զմեզ պատրաստ:

<sup>17</sup> Վարդան, 263ա:

<sup>18</sup> Վարդան:

<sup>19</sup> Վարդան:

<sup>20</sup> Վարդան:

\* «որ անհոգ արար ասելով» լուսանցից:

<sup>21</sup> Վարդան:

## [ Ը ]

Յամին երրորդի թագաւորութեան Բաղդասարայ արքայի տեսիլ երեւեցաւ ինձ (Ը 1).

Այլ տեսիլ յայտնէ երեւելի «հաստատութիւն կանխաւ տեսլեանն յերրորդ ամին Բաղդասարայ, որով ցուցանէ, թէ երիս ամս եկաց թագաւոր եւ ապա սպանաւ: Բայց ոչ ըստ ժամանակի տեսլեանն եղուն, այլ ըստ ժամանակի գրութեան եւ ըստ պատշաճի խորհրդեան, որպէս եւ նախ քան զայս տեսիլն ի նոյն թագաւորի ժամանակ յամին առաջին, նոյնպէս եւ// այս զկնի այնր որպէս եւ ասէ»<sup>1</sup>.

Ես Դանիէլ յետ տեսլեանս առաջնոյ էի ի Ծաւշ յապարանս, որ է յերկրին Իդամայ, եւ կայի ի վերայ Ուրաղայ (Ը 2).

Զի ասէ «ոչ մարմնով, այլ՝ հոգևով ի Ծաւշ, որ է մեծ քաղաք Պարսից: Առ դրան նորա տեսաներ իբր ի վերայ յարկին արքունեաց կամ ակերեալ արքունիս»<sup>2</sup>, քանզի շաւշել լուծեալ լսի՝ նշանակ գոլ կործանման թագաւորութեան Պարսից յերկրին Իդամայ յարեւելս յաշխարհն Պարսից, իսկ զՈւրաղ գետ ասեն մերձ քաղաքին՝ ջուր ունելով աղի:

Ամբարձի գաչս իմ եւ տեսի, եւ ահա խոյ մի կայր՝ հանդէպ Ուրաղայ, եւ եղջիր անրա բարձունք, եւ մինն բարձրագոյն էր քան զմիսն, եւ որ բարձր էր յետոյ ելանէր (Ը 3).

Յայտ է զմիտս բարձի հանդէպ ջրոյն, որ է շնորհ մարգարէութեան՝ աղիւ հոգւոյն համեմեալ: Եւ ահա խոյ մի կայր՝ «կիւրոս պարսիկ եւ նման նմա Դարեհ ի նոյն աթոռ թագաւորութեան: Իսկ եղջիրք անրա բարձունք զթագաւորութիւն պարսից ասէ ի վերջինն Դարեհ»<sup>3</sup>՝ բարձր եւ փառաւոր զարդարիչ անձանց եւ խեթկիչ հակառակորդաց եւ «երկու եղջիւր ունելով զՄարաց եւ

<sup>1</sup> Վարդան, 263բ:

<sup>2</sup> Վարդան:

\* գայր (այսպես եւ այլոր):

<sup>3</sup> Վարդան:

զ Պարսից»<sup>4</sup> թագաւորութիւն կոչէ: Եւ մինն բարձրագոյն քան զմիւսն. յետինն, զի «Կիւրոս ասէն սպանեալ զԱստիաղէս մար եւ բարձեալ զնոցին թագաւորութիւն եւ տիրեաց պարսիցն»<sup>5</sup> եւ մարաց, զոր բարձր կոչէ:

Տեսանէի զխոյն, զի ոգորէր ընդ ծով եւ ընդ ցամաք եւ ընդ հիւսիսի եւ ընդ հարաւ եւ ամենայն գագանք ոչ կայիմ առաջի նորա եւ չէր որ ապրէր ի ձեռաց նորա եւ առնէր ըստ կամաց իւղոց եւ մեծանայր, եւ ես միտ դնէի մնա (Ը 4).

(349բ) Ընդարձակեաց զպարսս եւ ոգորեր «ընդ Գ (3) կողմ երկրի, զի զարեւելս ունէր եւ ծով զարեւմուտս կոչէր եւ հնազանդեցոյց, եւ ոչ ոք ի հեթանոսաց թագաւորաց կարաց // ընդդիմանալ նորա, ըստ Եսայեայ. «Ես երթայց առաջի քոյ» (Եսայի ԽԵ 2), եւ «Քաղաք մի՛ փակեցին» (Եսայի ԽԵ 1): Եւ խոյ կոչէ, զի իբր մաքեաց տիրեաց ամենայնի կամաւք եւ ակամայ»<sup>6</sup>: Այլ եւ աստեղագէտքն, ըստ երկոտասան կենդանակերպիցն բաժանեալ զաշխարհս խոյ զՊարսիկս ասացին:

Իսկ ահա քաւշ մի յայծեաց գայր յարեւմտից ընդ երեսս երկրի եւ յերկրի ոչ մերձեանայր (Ը 5).

«ԶԱղեկսանդը Մակեդոնացի ասէ՝ զյունացն ունելով զթագաւորութիւն՝ դիմեալ յարեւմտից ի Լիբիոյ եւ յԵւրոպիոյ մասնէ»<sup>7</sup>: Իսկ զի ընդ երեսս երկրի գայր եւ յերկիր ոչ մերձենայր, զի թէպէտ երկրային ոք էր, սակայն կամաւք վերնոյն զաւրացեալ գայր, քանզի «որպէս քաւշ տկար է քան զխոյ, եւ յոյնք քան զպարսս յառաջ մինչ չէին տիրել նոցա»<sup>8</sup> կամ թէ ոչ կարաւտանայր իջանել ի վերայ քաղաքացն, որ հնազանդէին մինչ ի Դարեհ, զի որ ընդդիմացաւ փշրեցաւ թագաւորութիւն նորա:

Եւ քաւշիմ եղջիր մի էր ի մէջ աչաց նորա (Ը 5ա).

«Զի աննման էր մտացն կորովութեամբս այլոցն»<sup>9</sup>, վասն զի զթագաւորութիւն, որ եղջիւրն նշանակէ, իմաստութեամբ մղէր,

<sup>4</sup> Վարդան:

<sup>5</sup> Վարդան:

<sup>6</sup> Վարդան:

<sup>7</sup> Վարդան, 264ա:

<sup>8</sup> Վարդան:

<sup>9</sup> Վարդան:



զոր աչք կոչէ կամ թէ՛ միեղջիւր, զի «որդի ոչ եթող զկնի մահուանն»<sup>10</sup>:

Եւ եհաս մինչեւ ի խոյն եղջիրաւոր, զոր տեսանէի, զի կայր հանդէպ Ուբաղայ եւ յարձակեցաւ ի վերայ նորա զարութեամբ ուժոյ իւրոյ եւ տեսանէի զնա հասեալ մինչեւ ցխոյն եւ զայրացաւ եւ եհար զխոյն եւ խորտակեաց զերկոսիսն եղջիրս նորա եւ ոչ գոյր զարութիւն խոյին ունել զդէմ նորա. արկ զնա յերկիր եւ ոտից իւրոց կոխան առնէր եւ ոչ ոք էր, որ թափէր զխոյն ի ձեռաց նորա (Ը 6-7).

*(350ա)* Էհաս մինչեւ ցխոյն, այսինքն է՝ ի Դարեհ, որ զպարսիցն ունէր գտէրութիւն յայնժամ, զոր եսպան զաւրութեամբ ուժոյ իւրոյ խորտակելով զեղջերս նորա՝ զզաւրս մարաց // եւ պարսից, քանզի ոչ կարացին ընդդիմանալ նմա ի դաշտին կիլիկեցոց: Իսկ զայրացմամբ հարկանելն, քանզի բազում անգամ առաքեաց ոչ պատերազմել ընդ նմա եւ նա ոչ լուաւ, զոր եհար բարկութեամբ եւ ընկէց յոտս իւր: Քանզի ի գիրկս Աղեկսանդրի եհան զոգին իւր Դարեհ:

Եւ քաւզն այժեաց մեծացաւ յոյժ եւ ի զարանալ նորա խորտակեցաւ եղջեր նորա մեծ (Ը 8).

Զի ԲԺ (12)ան ամ թագաւորեաց եւ տիեզերակալեաց բոլոր աշխարհի եւ, իջեալ ի Բաբելոն, մահացաւ դեղով՝ սպանաւ յիւրոցն, ըստ անդադար գոլոյ ի մարտ պատերազմի:

Եւ ելին այլ չորք եղջերք ի ներքոյ նորա ընդ Դ(4) հողմս երկնից (Ը 8ա).

«Չորք եղջերք են չորեքին դայեկորդիքն Աղեկսանդրի»<sup>11</sup>, որք յարեան նուաստագոյն քան զնա. «Սելեւկիոս, Դեմետրիոս, Պտղոմէոս, Փիլիպպոս»<sup>12</sup>, որք թագաւորեցին. ոմն Աղեկսանդրիայ եւ ոմն ի տունն Կաղմեա եւ ոմն ի Մակեդոնիա, եւ ոմն՝ ի Բաբելոն յետ Աղեկսանդրի:

Եւ ի միջոյ՝ \* անցաւ ել եղջիր մի հզար եւ մեծացաւ առաւել ընդ հիւսիսի եւ առ զարութիւն բարձրացաւ մինչեւ զարութիւն յերկնից եւ ընկէց յերկիր

<sup>10</sup> Վարդան:

<sup>11</sup> Վարդան:

<sup>12</sup> Վարդան:

\* Ընկալլալ թրգմ. միոջէ:

ի զարուրթեանէ երկնից եւ յաստեղաց եւ կոխեաց զնոսա մինչեւ զարավարն փրկեսցէ զգերութիւն եւ նովալ պատարագք խոովեցան եւ եղև եւ յաջողեցաւ նմա եւ արբութիւն աւերեսցի եւ տուան ի վերայ պատարագացն մեղք եւ անկաւ յերկիր արդարութիւն եւ արար եւ յաջողեցաւ (Ը 9-12).

(350բ) Հգար եղջիր «*զԱնտիոքոս ասէ, որ կոչեցաւ Եպիփանէս\* , որ եղև նկարագրութիւն Նեոխնն, քանզի թագաւորեալ ասորոց եւ առեալ զԵգիպտոս ել յԵրուսաղէմի տաճարն, ուր հանգուցեալ էին շնորհք եւ զաւրութիւնք\*\* երկնային, զորս ընկէց յերկիր կործանելով զտաճարն եւ պղծելով զսպասն սուրբ զաշ//տանակն ոսկի եւ զսեղանն եւ զզոհանոցն եւ կոտորեաց զքահանայսն»<sup>13</sup>, զոր աստեղ ասաց: Իսկ խոովել պատարագաց «զզոհս Տեառն ասէ, զի խափանեաց եւ կանգնեաց կուռս ի մեհեանս եւ զոհեաց խոց եւ անասուն եւ էջ ի միասին եւ ամբոխեաց նովալ զազգն»<sup>14</sup>, եւ ի վերայ պատարագացն մեղք, ասէ, տուան, այս է՝ թոյլ ետ Աստուած, զի զպիղծն ընդ անպիղծն խառնեաց, կամ թէ վասն մեղաց՝ եղև այն եւ անկանել յերկիր արդ, զի արդարապէս մատուցումն պատարագաց կոխան «եղև եւ անապատ սրբութիւն մինչեւ յարեալ Յուդա Մակաբէ զաւրավար նոցին յետ մահու հաւր իւրոյ, եւ կոտորեաց զքանակն Անտիոքայ եւ փրկեաց զգերեալսն եւ սրբեաց զտաճարն եւ նորոգեաց զպատարագսն ըստ աւրինացն մատուցանել»<sup>15</sup>: Բայց տիրապ[էս] ասի եւ ի վերայ Նեոխնն, զի յառնէ զաւրութեամբ ներելովն Աստուծոյ ի ժամանակս յետինս, եւ խաւսի բանս հայհոյութեամբ առ Բարձրեալն եւ զբազումս յընտրելոց յաստեղաց մոլորեցուցանէ եւ մեծամեծ ամբոխումն յերկիր արկանէ մինչեւ զաւրավարն Յիսուս երեւելով սատակէ զնա:*

Եւ լուս մի միոյ\*\*\* արբոյ, որ խաւսեր ցիս եւ ասեր ցիս մի փելմոնին, որ խաւսեր ցնա. Մինչեւ յեր<sup>6</sup>ք տեսիլդ այդ կայցէ պատարագք բարձրեալք եւ մեղք աւերածի տուեալք եւ արբութիւնդ եւ զարութիւնդ կոխեսցի մինչեւ յերեկոյ եւ ի վաղորդայն աուրս Ռ(1000) եւ Մ(200) եւ ՀԸ(78)\*\*\*\* եւ արբեսցի արբութիւն (Ը 13-14).

\* Եպիփանէս:

\*\* Եւ զարութիւնք. լուսանցից:

<sup>13</sup> Վարդան:

<sup>14</sup> Վարդան, 264աբ:

<sup>15</sup> Վարդան, 264բ:

\*\*\* Ընկալյալ թրգմ. միոջէ:

\*\*\*\* Ընկալյալ թրգմ. վաթսուց եւ ութ:

(351ա) *Ջտեսիլս «պարզէ Գաբրիէլ մեկնութեամբ ի կերպարանս առն կացեալ առ Դանիէլիւ հրաման առեալ ի վեհագունէ ումեմնէ ի պետացն դասուց»<sup>16</sup>, որ եւս «միջամուխ էր երկնաւոր խորհրդոյն, զոր փելմոնի ասաց, այսինքն՝ ի նշանաւոր»<sup>17</sup> արանց, քանզի Գաբրիէլ եհարց ցայն, որ վերագոյն էր քան զնա, թէ՛ միւնչեւ յեր՞բ աւերն Անտիոքայ եւ Նեոխնն կացցէ, որոյ պատասխանել, թէ՛*  
*Գ(3) ամ եւ // կէս քանզի այսչափ յամեաց Անտիոքոս եւ յամելոց է Նեոն: Իսկ ասելն՝ թէ՛ միւնչեւ յերեկոյ եւ ի վաղորդայն կրկին լսի կամ թէ՛ երկակի աւր ասի. մին առանց գիշերոյ, ըստ այնմ զԽ(40) աւր եւ զԽ(40) գիշեր, եւ մին զի եւ զգիշերն զկնի առեալ աւր ասեն, իբր այն՝ «Աւուրք իմ որպէս հովանի անցին» (Սաղմ. ԾՆ, 12): Արդ, ցուցանէ աստ, զի զտիւ եւ զգիշեր ի հաշիւ առեալ այսքան լինի ժամանակ, կամ յերեկոյս զնեղութիւն ասաց եւ վաղորդեայն՝ զանդորրութիւն: Միանգամայն եւ զայն ուսուցանէ, թէ՛ աւուրն սկիզբն լոյսն է եւ ոչ՝ գիշերն:*

Եւ եղև իբրև տեսի եւ Դանիէլ գտեսիլն եւ խնդրէի խելամուտ լինել եւ ահա առաջի իմ եկաց իբրև գտեսիլ մարդոյ եւ լուայ բարբառ մարդոյ ի միջոյ Ուբաղայ, եւ կոչեաց եւ ասէ. Գաբրիէլ, իմացո՞ գտեսիդ (Ը 16).

*Ջի այրն, զոր փելմոնի ասաց, ծանոյց նախ Գաբրիէլ զխորհուրդն եւ նովալ՝ մարգարէին, քանզի ըստ կարգի իջանէ գիտութիւն Աստուծոյ յարարածս իւր: Իսկ իբրև գտեսիլ մարդոյ, զի մի՛ զարհուրեսցի մարգարէն:*

Եւ եկն եկաց, ուր եսն կայի եւ ի գալ անորս յիմարեցայ եւ անկայ ի վերայ երեսաց իմոց, եւ ասէ ցիս. Ի միտ առ որդի մարդոյ, զի տակաւին ի վախճանին է տեսիլս<sup>\*\*</sup> (Ը 17).

*Նախ զհպատակութիւն ներքնոցն առ վերինսն ազդէ մարգարէս եւ ապա զայն, զի յորժամ խորհուրդք ինչ յայտնեն մարգարէիցն աստուածայինն հրեշտակք, յափշտակեն զմիտս կորզելով յինքեանս եւ ծածկեն զզգայութիւնս<sup>\*\*\*</sup>, զոր յիմարութիւն ասէ եւ անկումն երեսաց, կամ ի փառաւոր երեսաց երեւելոյ հրեշտակին*

<sup>16</sup> Վարդան, 264բ:

<sup>17</sup> Վարդան (ՆԲՅ, Բ, 939):

\* Ընկալյալ թրգմ. իմացո դմա:

\*\* Ընկալյալ թրգմ. տեսիլդ:

\*\*\* զսգայութիւնս:

**զարհուրի մարգարէս: Իսկ «կոչելն զնա որդի մարդոյ, զի մի՛ մոռասցի զբնութիւն թեպէտ խորհրդակից եղեւ զուարթնոցն:**

(351բ) Եւ մինչդեռ խաւսէր նա ընդ իս, յիմարեցայ եւ անկայ ի վերայ երեսաց իմոց // յերկիր, եւ բուռն եհար զյիմէն եւ կացոյց ի վերայ ոտից իմոց եւ ասէցիս. Ահաւասիկ եւ ցուցից քեզ, զոր զիմչ յիմելոց է ի վախճանի ի վերայ երկրի, քանզի տակաւին ի ժամանակս է վախճան (Ը 18-19).

**Ի տեսլենէն եւ եւս խաւսիցն սոսկացեալ անկաւ յերկիր, վասն որոյ կանգնէ, զի ի միտ առցէ կազդուրելով հրեշտակին զտեսլեանն մեկնութիւն, զոր ցուցանէ նմին, քանզի ի վերջին ժամանակս կատարելոց է իրն յամալթ աշնոցիկ, որ ոչ զանկեալն յարուցանեն, ըստ նմանութեան մարդասէր հրեշտակացն, այլ եւ զոտն կացեալն դեղհացուցանեն եւ զանկեալն ամենեւին յուսահատ առնեն:**

Խոյն, զոր տեսանէիր եղջիրատր, թագաւորն Պարսից եւ մարաց եւ քաւրն այծեաց թագաւորն լունաց է եւ եղջիրն մեծ, որ էր ի մէջ աչաց նորա, նոյն ինքն է թագաւորն առաջին եւ ի խորտակելն նորա ընդ որով էին այլ եղջիրք չորք Դ(4) թագաւորք յազգէ նորա յարիցեն եւ ոչ իրեանց զարութեամբ (Ը 20-22).

**Սկսանի պատմել զԴարեհէ եւ զԱղեկսանդրէ եւ զԴ(4) բարեկամացն, «որք տիրեցին երկրի, բայց ոչ իւրեանց զաւրութեամբն, այլ ներելովն Աստուծոյ եւ Աղեկսանդրի աջողելով»<sup>18</sup>:**

Եւ յետ թագաւորութեան նոցա ի կատարել մեղաց նոցա յարիցէ թագաւոր ժպիրն երեսաք խորհրդականս եւ հզար զարութիւն նորա եւ զքանչելիսն ապականեցէ եւ յաջողեցի եւ արասցէ եւ ապականեցէ զհզարս եւ զժողովորդսն սուրբ եւ լուծ անրոյ նորա յաջողեցի եւ նենգութիւն ի ձեռս նորա եւ ի սրտի իրում մեծամտեցէ եւ նենգութեամբ ապականեցէ զբազումս եւ ի կորստեան բազմաց կացցէ եւ որպէս զձուս ի ձեռին մանրեցէ (Ը 23-25).

(352ա) **Ցուցանէ աւրինակաւ «զԱնտիոք եւ ճշմարտութեամբ՝ զՆեոն, եւ պատճառն յառնելոց նոցա մեղացն կատարումն է, զի լցեալ լիցի չափ մեղաց հ//րէից, նա եւ՝ ամենայն երկրի եւ մարդկան»<sup>19</sup>, առ որով Նեոն երեւի, որպեսզի յայտնի լինիցի, թէ արժանի են**

<sup>18</sup> Վարդան, 264բ:

<sup>19</sup> Վարդան:

հրէայքն վասն մեղաց դատեալ յԱնտիոքայ եւ ի Նեոնէն՝ ամենայն երկիր: «Զի հրէայքն գործաւք իւրեանց պղծեցին զտաճարն, որպէս եւ գիրք Մակաբայեցւոցն ամբաստանեն եւ երկիր ամենայն կամակոր խորհրդով ի բաց լինի կացեալ յԱստուծոյ»<sup>20</sup>, ըստ Տեառն, թէ՛ «Որդի մարդոյ եկեալ գտանիցէ՞ արդեաւք հաւատս երկրի» (Ղուկ. ԺԸ 8): Վասն այնորիկ զաւրանայ Նեոն: Բայց լաւացն ոչ ինչ կարէ վնասել որպէս եւ ոչ Անտիոքոս՝ Շմաւոնի եւ որդւոց իւրոց, «թէպէտ եւ յոյժ ժպիրհ լինի երեսաւք», որպէս ասէ. քանզի «լրբի ասել զինքն Աստուած»<sup>21</sup>, ասէ եւ զնա հնարաւոր եւ զաւրաւոր եւ սքանչելագործ, զի զոմանս հնարիւք եւ զայլս զաւրութեամբ եւ զկէսս սքանչելեաւք պատրէ, զոր առ աչաւք գործէ ներողութեամբն Աստուծոյ, որք «բանիւ ոչ խաբին, յորմէ եւ պսակեալ ի հրէից անտի, ըստ Յոհաննու ճն(140) եւ ԴՌ(4000=144000) կուսանք յերկոտասան ցեղիցն Իսրայէլի»<sup>22</sup> կամ զսքանչելի «տաճարն՝ Անտիոքոս, եւ զեկեղեցի Նեոն ապականէ»<sup>23</sup>: Իսկ լուծ աւրոյ զհարկն Անտիոքայ ասէ եւ զաղանդն Նեոնն եւ նենգութեամբ վարի առ վայր մի մինչեւ բռնանայ: Այլ եւ մեծամտէ հայհոյելով զԱստուած եւ յայն բազումս ապականէ եւ զբազմաց կորուստն կեանս իւր համարի եւ «իբր զձու զամենայն երկիր ի բռին ունել»<sup>24</sup> կարծեսցէ, այսինքն՝ հնազանդեցուցանել դիւրաւ եւ կամ փշրել զանհնազանդսն:

Եւ տեսիլն երեկոյիճ\* եւ առաւատիճ, որ ասացաւն, ճշմարիտ է, եւ դու կնքեա զտեսիլդ, զի յաւուրս բազումս է (Ը 26).

«Զգագանաց տեսիլն յերեկոյն ետես եւ զխոյն առաւաւտուն յայլ եւ յայլ տարւոջ»<sup>25</sup> կամ թէ՛ այն ճշմարիտ է, զի ասացաւ երեկոյս եւ ի վաղորդայն աւուրս ՄՀԸ(278)՝ ճշմարիտ այնչափ աւրս տեւէ Անտիոքոս եւ Նեոն, քանզի զայն իսկ եհարց//, թէ՛ մինչեւ յե՞րբ է տեսիլդ: Իսկ ասելն, թէ՛ կնքեա զտեսիլդ. է զի ի մտի եւ է զի գրել եւ կնքել եւ «առ հաւատարիմս տալ յաւանդ, զի մնասցէ

<sup>20</sup> Վարդան:

<sup>21</sup> Վարդան:

<sup>22</sup> Վարդան, 265ա:

<sup>23</sup> Վարդան:

<sup>24</sup> Վարդան:

\* Ընկալյալ թրգմ. երեկոր:

<sup>25</sup> Վարդան:

*անմոռանալի եւ անգողանալի մինչեւ ի ժամանակ ելիցն յետ յուրով ամաց»<sup>26</sup>:*

Եւ ես Դամիել Անշեցի եւ խաթացայ եւ յարեայ եւ գործէի զգործ արքունի եւ զարմացեալ էի ընդ տեսիլն եւ ոչ ոք էր, որ իմացուցանէր (Ը 27).

*Ննջել եւ խաւթանալ զհոգալոյն եւ զտրտմութենէն ասէ, զոր աշխարհէր եւ ցաւէր վասն սրբութեանցն կոխան լինելոյն: Իսկ զի յարեայ ասէ յԱստուած ապսպրելն է զապայն: Եւ ինքն գործել, ասէ զգործ արքունի, «քանզի ի վերայ գործակալաց աշխարհին եւ տան թագաւորութեան կայր»<sup>27</sup>: Եւ այն, թէ զարմացեալ էի եւ ոչ ոք էր, որ իմացուցանէր ո՛չ զմեկնութիւն, զի այն ահա իմացաւ, այլ՝ կամ զպատճառս տեսլեանն կամ զժամանակս ելիցն, թէ ե՞րբ լինելոց իցէ:*

---

<sup>26</sup> Վարդան:

<sup>27</sup> Վարդան:

## [ Թ ]

Յամին անաջներորդի Դարեհի որդու Արշարայ ի գաւակէ մարաց, որ թագաւորեաց ի թագաւորութիւն քաղդէացոց (*Թ 1*).

«Յաւուրս մար Դարեհի, զոր որդի Արշարայ ասէ. կամ զի այլ եւ այլ էին Դարեհք»<sup>1</sup>, կամ թէ զհզաւրն անունն յիշէ, զի ի նուստից ոք էր, եւ ոչ հայրենեաւք ունէր զթագաւորութիւն, այլ կամաւն Աստուծոյ յարեաւ թագաւոր. թուի, թէ նա իսկ է, որ սպան զԲաղտասար եւ թագաւորեաց քաղդէացոցն:

Եւ Դանիէլ խելամուտ եղէ ի գրոց թուոց ամացն, որ եղև բան Տեառն առ Երեմիայ մարգարէ ի կատարումն անլածոյն Երուսաղէմի ամս չ (70) (*Թ 2*).

Կամ զգեցաւ զհոգին Երեմիայի կամ ընթերցաւ զգիրս նորա, «յորում հատաւ վճիռն չ(70) ամաց աւեր մնալ սրբութեանցն Երուսաղէմի ժԸ(18) ամէն Յովսիայ, զի գթածն Աստուած անդի համարի»<sup>2</sup> որպէս զԵգիպտոսին զՆ(400) ամն, թէպէտ պղծութիւն եւ  
(353ա) աւեր տաճարին եղեւ զկնի ԽԳ(43) ամաց // ի մետասան ամն Սեղեկիա, քանզի ԳԺ(13) ան ամ Յովսիայ եւ Դ(4) ամ Յովաքագ եւ ժԱ(11) ամ Յովակիմ եւ Դ(4) ամ Յեքոնիայ եւ ժԱ(11) ամ Սեղեկիայ լինի ԽԳ(43), առ որով եղեւ աւերն: Արդ, ի նորայոցն ասէ հասու եղէ, զի մինչեւ ցայս տեսիլ լցաւ չ(70) ամն: «Վասն որոյ վստահութիւն առեալ»<sup>3</sup> աղաւթէ.

Եւ դարձուցի զերեսս իմ առ Տէր Աստուած իմ՝ խնդրել աղաւթիք եւ խնդրուածովք պահաւք եւ խորգով, կացի յաղաւթս առ Տէր Աստուած գոհացայ եւ ասեմ (*Թ 3-4*).

Վշտակցի ժողովրդեանն ի դէպ ժամանակի աղաւթիւք, որպէս է ասէ, թէ՛ դարձուցի զերեսս իմ առ Տէր Աստուած իմ, այսինքն՝ զմիտս եւ զգայարանս յաշխարհէ եւ յաշխարհայնոցս առ Տէր, որ եհար, վերացուցի. զի իբր յԱստուծոյ նախախնամողէ բարիս

<sup>1</sup> Վարդան:

<sup>2</sup> Վարդան:

<sup>3</sup> Վարդան:

գտայց եւ գայս պահաւք եւ խորգով ընդդէմ հեշտութեան եւ որկրամոլութեան գերելոցն: Ուստի եւ ի վերայ բերէ, թէ՛ գոհացայ ի մէջ վշտացն, որպէս թէ ասել թէ եւ ի վիշտս պահես՝ գոհանամ միշտ՝ թող թէ ի բարութիւնս հանես:

Տէր Աստուած մեծ եւ սքանչելի, որ պահես զուխտ եւ զողորմութիւն սիրելեաց քոց եւ որոց պահեն գպատուիրանս Քո (Թ 5).

Մեծ ես՝ անուամբ եւ սքանչելի՝ գործովք, այլ ըստ մեծութեան Քում ցուցցես սքանչելիս առ մեզ՝ մեղուցեալքս, զի պահես զուխտն Աբրահամու եւ զողորմութիւն Դաւթի, նոցա, որք նման նոցին սիրեն զՔեզ եւ պահեն զպատուիրանս Քո եւ զնոցա ուխտն եւ զողորմութիւն առ սոսա կատարես:

Մեղաք, անարիմեցաք, անիրաւեցաք, ապստամբ եղաք եւ խտորեցաք ի պատուիրանաց Քոց եւ յիրաւանց Քոց եւ ոչ լուսք ծառայից Քոց մարգարէից, որք խաւելին յանուն Քո առ թագաւորն մեր եւ առ իշխանսն մեր եւ առ հարսն մեր եւ առ ամենայն ժողովուրդ երկրին (Թ 5-6) //.

(353բ) Բերան լինի «ամենայն ժողովրդեանն մարգարէս թագաւորաց եւ ռամկաց, եւ պարտական»<sup>4</sup> ասէ լինել զնոսա յանցանաց կամաւ մեղկացեալ եւ արտաքս ելեալ յաւրինացն, որ մեծ անիրաւութիւն էր, որով ապստամբ ցուցաք՝ ոչ զնալով ի պատուիրանս Քո, այլ խտորնակ եւ հակառակ ոչ լսելով ճշմարիտ մարգարէիցն, զոր Դու առաքէիր, այլ ստոցն եւ խաբեբայիցն, վասն այսորիկ զչարիս գայս կրեցաք:

Թէ՛ Քո, Տէր արդարութիւն եւ մեր՝ ամաթ երեսաց իբրեւ յաւորս յայսմիկ առն Յուդայ եւ բնակչաց Երուսաղէմի եւ ամենայն Իսրայէլի հեռաւորաց եւ մերձաւորաց յամենայն երկրի, որ ցրուեցեր զնոսա անդր վասն անհնազանդութեան իրեանց, զոր ոչ հնազանդեցան Քեզ՝ Տէր (Թ 7).

Չայս խոստովանութիւն ըստ նմանութեան երից մանկանցն դաւանէ մարգարէս եւ դէմս ժողովրդեանն «ամալթոյ պարտական գոլ զնոսա յարգարադատ ատենին Աստուծոյ, եւ անպատասխանի»<sup>5</sup> : Եւ յայնմ ժամու կիրս վկայ դնէ իրացն եւ պատճառ զանհնազանդութիւն ասէ, զի որպէս Ադամ նովին ախտիւ ի մահ

<sup>4</sup> Վարդան, 265բ:

<sup>5</sup> Վարդան:



*եւ ի դժոխս, եւ մեք ի գերութիւն տուեալ եւ ի Բաբելոն ըմբռնեալ:*

Մեր ամառք երեսաց մերոց եւ թագաւորաց մերոց եւ իշխանաց մերոց եւ հարցն մեր, որք մեղան եւ Տեառն Աստուծոյ մերոյ գթութիւնք եւ քաւութիւնք, զի ապստամբեցաք ի Տեառնէ եւ ոչ լուաք ձայնի Տեառն Աստուծոյ մերոյ զնալ յարէնս նորա, զոր ետ առաջի մեր ի ձեռն ծառայից իւրոց մարգարէից (Թ՝ 8-10).

*Մեք ամալթոյ եմք պարտական վասն մեղաց մերոց եւ Դու՛ք առուլթեան վասն բնական գլթութեանդ: Ասէ եւ զմեղս, ուստի ամալթն ծնան, զի ապստամբեցաք յաւրիւնացն եւ ոչ լուաք ձայնի Տեառն կամ զոր ի Սինա խաւսեցաւ կամ զոր մարգարէիւքն քարոզեցեր:*

Եւ ամենայն Իսրայէլ էանց զարիմաւք քո՝ եւ խոտորեցան, զի մի՛ լուիցին ձայնի Քում (Թ՝ 11).

(354ա) *Յայտ առնէ զկամաւ յան//ցումն, զի ոչ մի եւ կամ Բ (2) խոտորեցան, այլ ամենեքեան, ըստ Դաւթայ (Սաղմ. ԾԳ. 3). եւ ոչ այս միայն, այլ վասն այն խոտորեցան, ասէ, զի մի՛ լուիցեն զձայն աւրիւնաց Քո իբր թէ հակառակութեամբ արարին զայս:*

Եւ եկին ի վերայ մեր անէծքն, որ գրեալ է յարէնսն Մովսէսի ծառայի Քո Տէր, զի մեղաք նմա, եւ հաստատեաց զբան իւր, զոր խաւսեցաւ ի վերայ մեր եւ ի վերայ դասաւորաց մերոց, որ դատէին զմեզ ածել ի վերայ մեր չարիս մեծամեծս, որ ոչ եղեն ի ներքոյ ամենայն երկնից, ըստ այնմ, որ եղեն յԵրուսաղէմ, որպէս եւ գրեալ է յարէնսն Մովսէսի, այն ամենայն չարիք եկին ի վերայ մեր (Թ՝ 11ա-13).

*«Ոչ երկեաք, ասէ, ի սպառնալեաց անիծիցն եւ չարարաք զանձն արժանի խոստման բարեացն, զոր ի ձեռն ծառային Քո սպառնացիր եւ խոստացար, վասն որոյ արդար գտանիս թիկամբք լսեցուցանել, զոր ահանջաւք ոչ լուաք»<sup>6</sup>, ուստի զամենայն անէծսն գործով ածեր ի վերայ մեր անհնարին ցաւաւք, զի «Ահ մեծ է անկանել ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ» (Եբր. Ժ 31):*

\* Ընկալլայ թրգմ. քովք:

<sup>6</sup> Վարդան:

Եւ ոչ աղաչեցաք զերեսս Տեառն Աստուծոյ մերոյ դառնալ յանիրաւութեանց հարցն մերոց, խելամուտ լինել ամենայն ճշմարտութեան Քում (*Թ 13ա*).

*Այս կարի չար, զի ի կոչելն Քո զմեզ յապաշխարութիւն՝ ոչ կամաւք ապաշխարեցաք եւ դարձաք ի մեղաց՝ ածել ի միտս մեր զճշմարտութիւն աւրինաց Քոց, որ ի դառնալն մեզ ի մեղաց զբարիսն խոստանայր ընձեռել:*

Եւ զարթեալ Տէր Աստուած մեր ի վերայ չարեացն մերոց եւ ած զնոսա ի վերայ մեր, զի արդար է Տէր Աստուած մեր ի վերայ ամենայն գործոց Իւրոց, զոր արար մեզ, զի ոչ լուսք ձայնի Աորա (*Թ 14*).

*Ի վրէժինդրութիւն յետ բազում երկայնմտութեան, զոր ներեաց եւ ած զպատիժ չարեացն ի վերայ մեր, ըստ գրեցելոցն Մովսէսի, որով արդար ցուցանի կրկին դիմաւք, զի ըստ գործոց մերոց չարեաց հատոյց մեզ եւ երկրորդ, զի ոչ լուսք նմա, զի վասն այսորիկ յառաջեաց բանիւ // զգուշացուցանել, որպէս զի արդար եղիցի ի տանջելն:*

Եւ արդ, Տէր Աստուած մեր, որ հանէր զժողովորդ Քո յերկրէն եգիպտացոց հզար ձեռամբ եւ արարեր քեզ անուն որպէս եւ յաւուրս յայսմիկ մեղաք եւ անարիմեցաք (*Թ 15*).

*Զգուժն Եգիպտոսի արկանեմք առաջի Քո, որով փրկեցաք, զի եւ յայնմ ժամանակի չեաք արժանի փրկութեան: Այլ փրկեցեր հզար ձեռամբ վասն անուան Քեզ առնելոյ, որպէս եւ այսաւր պատմի, նոյնպէս եւ ի մեղս այս, որ կամք, բայց վասն անուանդ Քո փրկեա:*

Տէր, ամենայն ողորմութեամբ Քո դարձցի սրբութիւն Քո եւ բարձցի բարկութիւն Քո ի քաղաքէ Քումմէ եւ յԵրուսաղէմէ եւ ի լեառնէ սրբոյ Քո, զի մեղաք եւ առ անարեւութեան մերում եւ հարցն մերոց՝ Երուսաղէմ եւ ամենայն ժողովորդ Քո եղեւ անխատինս ամենեցուն, որ շուրջ զմեաք էին\* (*Թ 16*).

*Զի ողորմութեամբ «Երկիր եղեւ եւ նովիմբ վերստին շինեցաւ եւ Իսրայէլ յԵգիպտոսէ փրկեցաւ, եւ ողորմութեամբ զալոց ես»<sup>7</sup> ի նորոգել: Արդ, ամենայն ուրեք ողորմութիւն Քո պատմի: Նոյնպէս*

\* Ընկալյալ թրգմ. են:

<sup>7</sup> Վարդան, *ուր սակայն* Նոյի *փխ*. նովիմբ:

եւ աստ զողորմութիւնդ արկ ի կիր եւ դարձո զսրամտութիւն ի բարկութեան, որով զվրէժ խնդրեցեր ի քաղաքէ Քուսմէ եւ ի լեառնէ, զի որպէս դատաստանաւ վասն անաւրէնութեան մեղաց մերոց\* եւ հարցն ետուր ի նախատինս ազգաց, այսպէս ողորմութեամբ հան զմեզ ի պատիւ փառաց: Այս եւ ի վերայ բնութեանս յարմարի, որ վասն մեղաց եղաք նախատինք դիւաց եւ վասն ողորմութեան Քրիստոսի բարձաւ բարկութիւն, որ վասն անհաւատութեան յեկեղեցւոյ, որ է քաղաք եւ լեառն սուրբ (հմնո. Սաղմ. 22, 2, 2, 2), այլ եւ ի հոգւոյ եւ մաղմնոյ մեղք եւ մահ:

Եւ արդ, լուր, Տէր Աստուած մեր աղաւթից ծառայի Քո եւ խնդրուածոց\*\*, եւ երեւեցոյ զերեսս Քո ի սրբութիւն, որ ւաւերեցաւ (Թ 17).

(355ա) Նշանակ լսելութեան աղաւթիցն այս է, թէ ընդունիս գյաջողուածս ծառայի Քո, զի որպէս դարձուցեր գերեսս // Քո յերուսաղէմէ եւ եղեւ աւերակ. արդ, եթէ այժմ քաղցրութեամբ հայիս՝ դարձեալ վերստին շինեսցի չքնաղ քան զառաջինն, կամ յուսամբ զերեսս Քո՝ տեսանել ի տեղւոջն, որ ի նորոգել կարող է:

Խոնարհեցո, Աստուած\*\*\*, զունկն Քո, եւ լուր ինձ, բաց զաչս քո եւ տես զապականութիւն մեր եւ զքաղաքին Քո, յորոյ վերայ կոչեցեալ է անուն Քո, զի ոչ առ արդարութեանց մերոց արկանեմք զաղաւթս մեր առաջի Քո, այլ վասն գթութեան Քո, լուր Տէր, քաւեա Տէր, անսա Տէր եւ մի՛ յամեր վասն Քո, Աստուած իմ, զի անուն Քո կոչեցեալ է ի վերայ մեր քաղաքին Քո (Թ 18-19).

Իբր մարդասէր բժիշկ մատիր յաղաչանս իմ, եւ զարթո զխնամս Քո ի վերայ մեր, եւ տեսցես նախատես գիտութեամբդ զգերութիւն մեր եւ զաւեր քաղաքին Քո, բաւական պատիժ յանցանացն մերոց: Եւ այժմ իբր ի Քո գթացեալ ի ծառայս Քո եւ ի քաղաքն եւ ոչ վասն արդարութեանց մերոց, զոր ոչ ունիմք, այլ վասն Քո գթութեանդ, լուր զպաղատանս եւ քաւեա գյանցանս եւ անսա բարկութեանդ եւ մի՛ յապաղեր հասանել յաւգնութիւն մեզ, զի բաց ի Քէն զայլ ո՞ ունիմք խնամիչ, «զի յանուն Քո կոչի քաղաքն, եւ մեք՝ Իսրայէլ, որ այժմ գերի, եւ բացընկեցիկ»<sup>δ</sup> անուանմիմք:

\* մերոց լուսանցքից:

\*\* խնդրուածաց:

\*\*\* Ընկալլալ թրգմ. Աստուած իմ:

<sup>δ</sup> Վարդան:

Եւ միմչդեո եւ խաւելի եւ յաղաթա կայի եւ խոստովան լինէի զմեղս իմ եւ զմեղս ժողովրդեանն Իսրայէլի, եւ արկանելի զգութս իմ առաջի Տեառն Աստուծոյ իմոյ վասն լերինն սրբոյ, եւ միմչդեո խաւելի յաղաթան, եւ ահա այրն Գաբրիէլ, զոր տեսանելի յառաջնում տեսլեանն, թողցեալ եւ մերձեցաւ առ իս իբրեւ ի ժամ երեկոյնիս պատարագին եւ խելամուտ արար զիս (Թ 20-21).

*Զխաւսս աղաւթիցն հրեշտակն փոխէ՝ «այրակերպ երեւեալ նախածանաւթ Դանիէլի»<sup>9</sup>, զի զայս յայտնէ յաւգիւն ասել, թէ այրն Գաբրիէլ, որ լսի մարդ Աստուծոյ, ի ժամ, ասէ երեկոյնի պատարագին, «յորժամ քահանայապէտն դնէր զերիս // հացն զառամբն»<sup>10</sup>, եւ Դաւիթ զհամբարձումն ձեռացն յայնմ պատարագի մատուցանէին, նմանեցուցանէ. քանզի ընդունելի իսկ էր Աստուծոյ, նոյնպէս «եւ Դանիէլ զողբի եւ զմիտս եւ զմարմին համբարձմամբ ձեռաց յաղաւթան նուիրէր: Իսկ թողցեալ զի անմարմնապէս երագ հասանէր միանգամայն»<sup>11</sup> եւ զայն ցուցանելով, թէ թուաւ աղաւթք քո եւ ել յերկինս:*

Եւ խաւսեցաւ ընդ իս եւ ասէ Դանիէլ. Այժմ եկի խելամուտ առնել զքեզ: Ի սկզբան աղաթից քոց ել պատգամ եւ ես եկի պատմել քեզ, զի այր ցանկալի եւ դու. արդ, ա՞ծ զմտաւ զբանդ, եւ ի միտ առ զտեսիլդ (Թ 22-23).

*Դանիէլ ասէ, զի հանդարտեսցէ խաւսիցն, վասն որոյ «եկի խելամուտ, այսինքն՝ ի խելս մատուցանել զխորհուրդն Աստուծոյ»<sup>12</sup>: Իսկ ասելն, թէ՝ ի սկզբան աղաթից քոց ել պատգամ, այսինքն՝ յառաջ ասաց Աստուած զպատգամս զայս բերել առ քեզ ի սկիզբն աղաւթից քոց, ըստ այնմ, թէ՝ «Մինչ չեւ իցէ խաւսեալ՝ ես լուայց քեզ» (Եսայի 46 24) եւ պատրաստ է յիւրն, այլ ես վճարման աղաւթից քոց մնայի պատիւ արարեալ քեզ, եւ այժմ եկի պատմել, զի այր ցանկալի եւ դու կամ իմաստից ցանկացող եւ կամ աստուածեղէն հոգւոյն բաղձալի: Այլ եւ իրաբուն զուարթնոցն դարձեալ ցանկալի բանս խաւսիս, զի ոչ քեզ, այլ բազմաց խնդրես փրկութիւն: Վասն այնորիկ արժանանաս պատասխանւոյ: Արդ, լսէ, զոր ասեմս.*

<sup>9</sup> Վարդան (ՆԲՅ, Ա, 97):

<sup>10</sup> Վարդան:

<sup>11</sup> Վարդան, 265բ-266ա:

<sup>12</sup> Վարդան, 266ա:

Ելթանասուն ելթներորդք համասուտեցան ի վերայ ժողովրդեանդ քո եւ ի վերայ քաղաքին սրբոյ (Թ 24).

«Մեծամեծս խնդրեաց մարգարէս դառնալ առ տաճարն եւ յԵրուսաղէմ՝ երեւիլ ի սուրբս իւր եւ տալ զինքն տեսանել, զի իրաւացուցէ զկոչումն անուան իւրոյ ի ժողովուրդն, որ Իսրայէլ կոչի, իսկ որ զկամս երկիւղածաց իւրոց առնէ լսելով աղաւթից նոցա (Սաղմ. ԾԽԴ 19), ըստ սրտի նորա առնէ նմա պա//տասխանի ի ձեռն Գաբրիէլի, որով եւ զլրումն խոստման աւետեացն բերելոց էր զաւարտն առ միջնորդն կենաց եւ փրկութեան մարդկան»<sup>13</sup> առ Կոյսն սուրբ: Որպէս եւ ասէ, թէ՛ «Հ(70) եւ Է(7)երրորդ համասուտեցան, իբր թէ ասել զերկայն ժամանակս զերութեան ձեր եւ անտես լինել ժողովրդեանդ եւ ամենայն մարդկան վասն աղաւթից քոց համառաւտեաց, կարճեաց Աստուած ածել յՀէ(77)երրորդն, որով թուէ թողուլ յանցաւորացն, յԱդամայ մինչեւ ի կատարումն ամենայն արդարոց խնդրուածոց, ըստ Ղուկայ ազգաբանութեան ի վերայ ժողովրդեան: Զի որք լսեն մարգարէիցն ի հրէից եւ ի հեթանոսաց ժողովուրդք եւն ճոցա եւ ի վերայ քաղաքին. երիս քաղաքս իմանամք. նախ՝ զստորինն Երուսաղէմ, ուր տնաւրինականքն եղեն եւ Բ(երկրորդ)՝ զքաղաքն Աստուծոյ կենդանւոյ»<sup>14</sup>, վասն որոյ փառաւորեալն խաւսեցան բանք զաստուածայինն սուրբ, առ որով եկեղեցի շինեցաւ, եւ Գ(երրորդ)՝ «զՍիոնն անթաքչելի, որ է Երուսաղէմ քաղաքն վերին»<sup>15</sup>: Արդ, երիս քաղաքս այս երեւի յետ Հէ(77)երրորդացս, յորում բացցին դրունք զթութեան Աստուծոյ, զոր բախես դու եւ ամենայն արդարք եւ երեւի «Գառն Աստուծոյ, որ բառնայ զմեզս աշխարհի» ըստ Յովհաննու (Ա 29), որպէս ասէ: Ի վախճանել մեղաւորացն եւ կնքել անաւրէնութեանցն եւ ի ջնջիլ անիրաւութեանցն եւ ի քաւիլ ամբարշտութեանցն ի Դ(4) բաժանէ, «ըստ թուոյ չորեքնիւթեա բնութեանս եւ սեռական մեղացն: Եւ նախ ի վախճանել մեղաւորացն ասէ, որով Եւայ մեղկեալ թուլացաւ ի գեղ պտղոյն եւ ի ցանկութիւն աստուածանալոյն, եւ ի կնքիլ անարեւոյթեանց (24ա) որք ի դուրս ելին ի բնական աւրինացն եւ յելանելոյ տանն Սեթայ եւ Նոյի եւ Աբրահամու եւ Մովսէսի, Ժ(10) բանիցն, որք կնքեալ չերեւին յաչս Աս-

<sup>13</sup> Վարդան, 266աբ:

<sup>14</sup> Վարդան, 266բ:

<sup>15</sup> Վարդան:

(356բ) տուծոյ»<sup>16</sup>, ըստ այնմ, թէ՛ «Երանի՛ որոց ծածկեցան յանցանք նոցա» (Հոռմ. Դ 4). այս հաւատացելոցն, իսկ անհաւատիցն եւ «ուրացողաց խաչողացն կնքին յիշատակ // Աստուծոյ գանձունն եւ բանին յաւրն հատուցման», ըստ Մովսէսի աւրհնութեան, թէ՛ «Այդ ամենայն կնքեալ պահի ի գանձի, յաւուր վրիժուց հատուցից (Բ Օր. ԼԲ 34-35):

«Եւ ի ջնջել անիրաւութեանց (24բ). զոր ի մարգարէքն անիրաւեցան՝ չլսելով եւ կոտորելով գնոսա, այլ եւ ի պէս-պէս զրկութիւնս, զոր ջնջեաց Խաչիւն, ըստ առաքելոյ. «Ջնջեա զձեռագիր մերոյ հակառակութեան» (Կողոս. Բ 14), որ գրեցան ի ձեռն նոցա, որ լցաւ արեամբ, այլ եւ սրբեաց սրբարար աւագանաւն:

Եւ ի քաւել անբարշտութեանց (24գ)

Որք ի կուռս ամբարշտեցան հրեայք եւ հեթանոսք ի բարոյն ի բաց կացեալք, եւ անբարի վարուց զհետ չոգան, ըստ այնմ. «Զիս թողին զաղբիւր ջրոյ կենդանւոյ եւ փորեցին իւրեանց գուրս ծակոտկէնս» (Երեմիա Բ 13)<sup>17</sup>: Արդ, զչորեսին զայսոսիկ յանցանս մանաւանդ զկռապաշտութիւն վախճանեաց եւ կնքեաց եւ ջնջեաց եւ քաւեաց վէմն հատեալ առանց ձեռին Յիսուս Քրիստոս, որ եհար զպատկերն «չորիւք տնաւրինական խորհրդովն՝ Ծննդեամբն եւ Մկրտութեամբն, Խաչիւն եւ Յարութեամբն, որք հաւատացին յայսոսիկ»<sup>18</sup>:

Եւ ի գալ յաիտեմական արդարութեան (24դ).

Որ եղեւ յԱստուծոյ արդարութիւնն մշտնջենաւոր հոգւոյ եւ մարմնոյ՝ լնլով զամենայն արդարութիւն, որպէս ասացն առ Յովաննէս (Ռմմտ. Մատթ. Գ 15):

Եւ ի կնքիլ տեպեան եւ մարգարէի (24ե).

Յորժամ զտեղի առնուն տեսիլք եւ մարգարէութիւնք, ըստ ասելոյն՝ «Ամենայն աւրէնք եւ մարգարէք մինչեւ ցՅովաննէս» (Մատթ. ԺԱ 13): Որպէս եւ ասաց, թէ՛ «Որ հաւատայ ձայնին Հաւր՝

<sup>16</sup> Վարդան:

<sup>17</sup> Վարդան, 267ա:

<sup>18</sup> Վարդան:

նա կնքեաց, թէ Աստուած ճշմարիտ է» (Յովհ. Գ 33), քանզի վասն այսորիկ խաւսեցան մարգարէք, զի զնա Աստուած ցուցանիցեն, եւ յորժամ եցոյց լուեցին մարգարէքն: Կամ թէ «գտեսեալն Յիսուս հաւատովք կնքեմք ի մեզ եւ զնեմք ի սրտի, որպէս ասէ (357ա) յԵրգս. «Դիր զիս իբրեւ զկնիք ի սրտի քում եւ յաւանել // սրբութեանցն» (Երգ Ը 6)<sup>19</sup>: Թէպէտ զտաճարին ասէ Դաբիրայն, բայց ճշմարտապէս նշանակէ զմարմինն Տեառն, որ է պատճառ սրբութեան որդոց մարդկան, որ առաւ ի կուսական յարգանդէ եւ էաւ ճշմարտութեամբն զմարդկութիւն եւ կոչեցաւ Յիսուս, եւ ի Յորդանան՝ զՀոգին տնաւրինաբար եւ կոչեցաւ Աւծեալ՝ Քրիստոս, ըստ այնմ՝ «Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ եւ էաւ իսկ զիս» (Եւայի ԿԱ 1), յորոյ խորհուրդ եւ զաւծեալ մարմին Տեառն պատարագեմք, եւ ի բարձրացուցանելն երգեմք զսրբութիւն սրբոցն: Այլ եւ «Նովաւ աւծանին բանաւոր եկեղեցիք՝ քրիստոնեայք կոչելով եւ ձեռաշէն խորանք աստուածաբնակք անուամբ Տեառն կոչին Սրբութիւնք եւ Սրբոց Սրբութիւնք»<sup>20</sup>:

Եւ գիտացես եւ խելամուտ լիցիս յելից բանիս տալ պատասխանի (Թ 25).

Այսինքն՝ զի զգոյշ լեր, «զի թէ նախաձայնութեանդ, ոչ հաւատան եւ զգուշացին, այլ աստուածամարտ գտանին եւ պատժիցին վասն կատաղմանն ի Տէրն, դատեա զու զնոսա ունել պատասխանի զցուցումն քեզ յԱստուծոյ ի լուր աղաւթիցն քոց»<sup>21</sup>:

Եւ ի շինելն Երուսաղէմի մինչեւ ցաւծեալն եւ առաջնորդ Է(7)երորդ եաւթն (Թ 25ա).

Քառասուն եւ ինն ամ ասէ կայ մինչեւ Երուսաղէմ շինի եւ աւծեալն առաջնորդ լիցի, որ է Յեսու՝ աւծեալ եղով եւ արեամբ ե եղով միայն Զաւրաբաբել, որք բարձեալ բերեն զաւծման եւ զտիրական անուն մինչեւ յերկնից գայ ճշմարիտ Աւծեալն, որ երեւի մարմնով եւ աւծանէ Աստուածութեամբն զմարդկութիւն: Բայց ինձ թուի, թէ զՀ(70) ամն հրեշտակն որպէս ոմանք ասեն ի վճռէն հաշուել ի ԺԸ(70) լինել ամ, եւ համարեն այսպէս. ԺԸ(18) ամ՝

<sup>19</sup> Վարդան:

<sup>20</sup> Վարդան:

<sup>21</sup> Վարդան, 267բ:

(357բ) *զՅովսիայն եւ Դ(4)՝ Զովաքազին եւ ԺԱ(11)՝ զՅովակիմայն եւ Գ(3)՝ զՅեքոնիայն եւ ԺԱ(11)՝ զՍեղեկիայն: Եւ ասեն զայս ԽԹ(49) ամ մինչ յաւեր տաճարին եւ ԻԱ(21) մինչ ի բան մարգարէիս //, որ լինի Հ(70): Այլ այս յոյժ սխալ է. նախ զի ասացեալ ամբողջ ոչ են ԽԹ(49), այլ ԽԷ(47), զի թողում զայն, զի ԺԸ(18) ամին եղեւ վճիռն Յովսիայ եւ ոչ ԴԺ(14)ան ամն, եւ Բ(2), զի ինքն՝ Տրեշտակն ասաց Է(7) երորդ Է(7) ամ մինչ ի շինելն Երուսաղէմի, զի ոչ ասաց զանցեալն, այլ՝ զոր առաջի կայր: Այլ, որպէս ես կարծեմ, Բ(2) Հ(70) ամէ մին ի վճռէն Յովսիայ մինչ յառաջին ամն Կիւրոսի, յորում մերձ էր մարգարէս, եւ եղեւ դարձ ըստ աղաւթից մարգարէիս: Բայց ոչ շինեցաւ տաճարն եւ Բ(երկրորդ) յաւերմանէ տաճարին մինչ յերկրորդ ամն Դարեհի լցաւ Հ(70) ամ, այլ Տրեշտակն ոչ զառաջին եաւթանասնէն ասէ, այլ՝ զվերջնոյս, յորմէ անցեալ էր ամբ ԻԱ(21) յաւերմանէ տաճարին, յորժամ ետես գտեսիլս եւ մնայր ԽԹ(49) ամ, որ լնոյր թիւ Հ(70)-ին: Այս է ասելն, թէ մինչ ի շինելն Երուսաղէմի եւ ցաւծեալ առաջնորդն եւ ամբ Է(7)երորդ Է(7):*

Եւ Է(7)երորդ եւ ԿԲ (62) (Թ 25բ).

*Յորոյ վերայ եղեալ զառաջինն լինի ԿԹ(69) Է(7)երորդ, որ են ամբ ՆԶԳ(483) մինչեւ ցճշմարիտ Աւծեալն եւ առաջնորդն կենաց եւ փրկութեան:*

Եւ դարձցիմ եւ շինեսցիմ հրապարակքն եւ պարիսպն եւ անորոգեսցիմ ժամանակք (Թ 25գ).

*«Ըստ հնոյն գկնի Է(7) եաւթներորդաց լինի դարձ նոցին եւ շինեսցին հրապարակքն Երուսաղէմի եւ պարիսպքն որպէս ետես Զաքարիայ մարգարէ (տե՛ս Բ Եզր. Ե 1-2): Իսկ ըստ նորոյս գկնի ԿԲ(62) Է(7) երորդացն, որ են ամբ ՆԼԴ(434) ի շինութենէ տաճարին մինչեւ ցԽաչն Տեառն, որով դարձաւ բնութիւնս ի դրախտն եւ շինեցան պարիսպք հաւատոյն, եւ նորոգեցան ժամանակք խառնելով ժամանակ անժամանակին Աստուծոյ ԼԳ (33) ամ եւ կէս ամաց ի ժամանակ հաւատացելոց նոր գործեաց զհնացեալքս»<sup>22</sup> եւ անմահութեան յուսով նորոգեաց զմեռեալքս:*

<sup>22</sup> Վարդան, 267բ-268ա:



Եւ յետ ԿԲ(62) Է(7) երորդաց բարձրի աւծութիւն եւ իրաւունք ոչ իցեն ի  
 Ամա (Թ 26).

(358ա) *Յառաջին Է(7) երորդ Է)7) թողու, որ վասն հրէից դար//ձին է  
 եւ ասէ զկնի ԿԲ (62) Է(7) երորդաց, որ է ի շինութենէ տաճարին  
 մինչեւ ի Քրիստոս ամք ՆԼԴ (434), «յորում սպանցի Աւծեալն  
 բառնալով ի վայտ խաչին առանց իրաւանց, զի անիրաւ սպանին  
 զՏէրն, եւ ապա բարցի եւ հրէիցն աւծութիւն, մարգարէք եւ քա-  
 հանայք եւ թագաւորք, որ սկսեալ էր Հերովդէիւ բառնալ»<sup>23</sup>, որ-  
 պէս եւ ասէ.*

Եւ քաղաքն եւ սրբութիւն ապականեսցին առաջնորդան հանդերձ, որ  
 կացցէ եւ ջնջեսցին հեղեղաւ մինչեւ ի վախճան պատերազմին համառու-  
 տելոյ կարգիցէ զապականութիւն (Թ 26ա).

*«Տիտոսիւ եւ Վեսպիանոսիւ աւերեցաւ քաղաքն եւ սրբութիւն  
 առաջնորդան հանդերձ, որ էր Հերովէս որդի Անթիպատրեայ ասկա-  
 լոնացոյ, որ էր աւտար ազգէ եւ ոչ ղեւտացի կամ յուզայեան,  
 քանզի Ներոն կայսն հռոմայեցոց առաքեաց զՎեսպիանոս եւ  
 զՏիտոս որդի նորա յԵրուսաղէմ, զի ապստամբեցին, որք լուան  
 զհամբաւ կորստեանն Ներոնի: Թագաւորեաց Վէսպիանոս որդե-  
 ւովն եւ կոտորեաց զհրեայսն եւ ապականեաց զտաճարն եւ զպա-  
 րիսպն եւ իբրեւ հեղեցաւ՝ վախճանեաց զնոսա եւ կորոյս ի հրէից  
 բիւրս ճԻԶ (126)»<sup>\*</sup>,<sup>24</sup> զի ճ(100) եւ Ժ(10) բիւր ի սովոյ մեռան եւ  
 Զ(6) բիւր ի սուր մաշեցան եւ Ժ(10) բիւր գերի վարեցան, ըստ  
 կարգի արժանեացն զկնի ՆԼԴ(434) ամի շինութեան Երուսաղէ-  
 մի: Եւ այս յիրաւի, զի որպէս զկնի այսչափ ամաց եղաւ հին աւ-  
 րէնքն՝ «լնլով զխոստումն Աբրահամու, նոյնպէս եւ նորա նոյն  
 թուով Ն(400) չորեքնիւթեա բնութեանս, զորս զգեցաւ Տէրն եւ  
 նորոգեաց զմարմինս մեր նոր կտակաւն եւ ԼԴ(34) անժամանակն  
 ԼԳ(33) ամ եւ կէս, որ էր ի չորս նմանեալ թիւն: Իսկ որք ոչ առին  
 զնիւթ նորանալոյն՝ հեղեղեցան հռոմայեցովքն ջնջեալք»<sup>25</sup>:*

Մինչեւ ի վախճան պատերազմին ասէ համառատ[ելոյ կարգեացէ զա-  
 պականութիւն] (Թ 26բ).

\* ԾԻԶ բիւրս. *բ. ա հերթագայտոթյանն նշանով տողված:*

<sup>23</sup> Վարդան, 268:

<sup>24</sup> Վարդան:

<sup>25</sup> Վարդան:

(358բ) *Որ Բամառաւտեաց զժամանակ զղջման յետ Խաչին Խ(40)ամ // եւ որք զղջացան փրկեցան եւ վաղվաղակի հրեշտակի առաջնորդութեամբ ելեալ յԵրուսաղէմէ զերծան ի պատերազմէն եւ անհաւատիցն երկարեաց վիշտ պատերազմին եւ կարգեցան ապականութիւն:*

Եւ զարացուցէ զուխտ բազմաց (Թ 26գ).

*«Որք ուխտեցին զանձինս Տեառն, զաւրացան եւ գնացին, կամ կէսք ուխտիւ ելին առ պաշարողսն եւ ապրեցան»<sup>26</sup>:*

Եւթներորդ մի եւ կէս Է(7) երորդ եւ դարարեցուցէ զսեղանս եւ զպատարագս եւ մինչեւ ի ծայրս անկեանսն ապականութիւն (Թ 26դ).

*Այս յետ Խաչին, որք յաւելին ի չարիս հալածելով զառաքեալսն եւ զհաւատացեալսն, որով յաւելին ի պատիժս իւրեանց, վասն որոյ խափանեցան ի մատուցմանէ պատարագաց մինչեւ ի ծայրս ապականութիւն քաղաքին եւ երկրին եհաս կամ զրոյց եւ գերին մինչեւ ի ծայրս ամենայն երկրի ժամանեցին: Եւ դարձեալ թուի թէ Է(7)երորդ մի եւ կէս զժամանակ պաշարման քաղաքին ասէ, զի ի Ժ(10) ակր առին զքաղաքն զաւրքն Հռոմայեցոց եւ բնաջինջ արարին: «Իսկ ոմանք Է(7)երորդ մի եւ կէս զայն ասեն, զոր առաքեալքն քարոզեցին ընդ տիեզերս մինչեւ ցԱզրիանոս\* կայսր, որ եւ շինեաց զԵրուսաղէմ վերստին եւ բնակեցոյց հեթանոսս եւ քրիստոնեայս, որք եւ ըստ նորոյս յաւրինեցին սեղան եւ պատարագ, եւ հրէիցն սպառնացաւ չիչխել հայել անգամ ի կողմ Երուսաղէմի»<sup>27</sup> թող թէ պատարագ մատուցանել:*

Եւ մինչեւ ցվախճան եւ ցտագնապ կարգեցի ի վերայ ապականութեանս (Թ 26ե).

*Յայտ է, թէ մինչ ի վախճան աշխարհի կան ի տագնապի եւ յապականութիւն, որ կարգեցաւ ի վերայ նոցա:*

Եւ զարացուցէ զուխտ բազմաց (Թ 27).

<sup>26</sup> Վարդան, 268բ:

\* Անդրիանոս:

<sup>27</sup> Վարդան, 268բ:

«Քանզի ուխտն նոր պատարագիս, որ զաւրացաւ ի բազում լեզուս եւ յազգս քան թէ զհինն, որ հրէայսն միայն, զոր ելոյծ անփոյթ արարեալ»<sup>28</sup>:

(359ա) Եւթներորդ մի եւ կէս Է(7)երորդի բարձցին գոհք եւ նուէրք (Թ 27ա) //.

Ոչ վայրապար զայս կրկնէ, այլ կամ զայն յայտ առնէ, զի ե-դեալ Է(7)երորդ մի եւ կէս ի վերայ ԿԹ(69) Է(7)երորդացն լինի ՀԷ(77)երորդ եւ կէս, յորում ամենեւին խափանի զոհքն եւ նուէրքն: Կամ թէ զառաջինն վասն հրէիցն ասաց եւ զայս վասն Նեոխնն երկրորդէ, զի ՀԷ(77) երորդն Է(7) տասներորդ, որ նշա-նակէ, թէ ի լրման Է(7) դարուս, յորում մարդիկ Է(7) զգայարա-նաւք Ժ(10)պատիկ արարեալ զյանցանս, երեւի Նեոն, որ փոքր եղջիւր ասացաւ, որ բառնայ զաւծութիւն եկեղեցւոյ եւ քրիստո-նէից անիրաւութեամբ, եւ զքաղաքն սուրբ ապականէ առաջ-նորդն չարեաց իբր հեղեղաւ պատերազմի՝ համառաւտ ժամանա-կաւ՝ կէս Է(7)երորդի ընդ մարդկան եւ զամենեսեան ապականէ եւ զուխտ իւր զաւրացուցանէ, որք ուխտեն ընդ նմա, եւ Է(7)երորդ մի եւ կէս. Է(7)երորդ, որ լինի Գ(3) ամ եւ կէս. զմի տարին յերկուս հատեալ ժամանակս՝ զամառն գարնայնով եւ զձմեռն աշնայնով առեալ լինի իշխանութիւն Նեոխն, եւ դադարեցուցէ ի Դ(4) ան-կիւնս աշխարհի զսեղանս եւ զպատարագս, առ որով լինի տագ-նապ մարդկան իբր ամբոխման ծովու, ըստ Տեառն յեւանել ոգւոց մարդկան եւ վախճանի աշխարհի ի զաւրանալ ուխտին եւ ի կար-գել ապականութեան նորա: Այս է ասելն, թէ՛ Է(7)երորդ մի եւ կէս. Է(7)երորդի բարձցին զոհք եւ նուէրք, որպէս եւ ի վերայ բերէ.

Եւ ի վերայ տաճարին պղծութիւն աներաժոյն կացցէ եւ մինչեւ ի վախ-ճան ժամանակի կատարած տացէ ի վերայ աներաժոյն (Թ 27բ).

Այս, թէպէտ աւրինակաւ, ի Պիղատոսէ եղեւ, քանզի ասեն թէ դրաւչ եմոյծ ի տաճարն, որոյ վերայ էր պատկեր արծուոյ եւ կամ, որպէս այլք ասեն, թէ գլուխ խոզի եմոյծ ի տաճարն եւ կամ հե-թանոսս եմոյծ ի ներքս կամ թէ այն որ մինչ ի վախճան կոխան եղեւ հեթանոսաց Երուսաղէմ պղծելով զնա: Բայց ճշմարտապէս

(359բ) զՆեոխնն ասէ // պղծութիւն, ըստ Տեառն վարդապետութեան, թէ՛ «Կացցէ ի տեղուջն սրբութեան» (Սաղմ. ԻԳ 3), որ ասացեալն է ի

<sup>28</sup> Վարդան, *որ սակայն Քրիստոսի փխ. Բանզի*:

ձեռն Դանիէլի մարգարէի\* . որ ընթեռնուն ի միտ առցէ, քանզի նստի ի տաճարն եւ յեկեղեցի եւ ցուցանէ զանձն, թէ Աստուած իցէ, եւ զպատկերն իւր կանգնիցէ եւ երկրպագութիւն ամենեցունց պահանջէ Գ(3) ամ եւ կէս, որպէս ասացաւ, յորում բաջաղէ Նեռն, եւ զալ Եղիայի եւ քարոզել եւ յանդիմանել զստութիւն նորա: Եւ այս պղծութեան անբաժնի վերայ, ասէ, լինի վախճան ժամանակի եւ կատարած աշխարհի յերեւել Որդւոյն Աստուծոյ ընդ ամպս երկնից եւ սատակել զՆեռն հոգւով բերանոյ եւ այրմամբ շրթանց (հմմտ. Եսայի ԺԱ 4), յորում տեղի տան ամենայն ապականութիւնք առաջնորդաւն իւրեանց, որ է «որդին կորստեան» (Բ Թեսաղ. Բ 3) առաջնորդ եւ լրումն չարեաց, պղծութեան եւ աւերման աշխարհի, որ եւ ջնջեալ կործանի ի զալ յաւիտենիցն արդարութեան Յիսուսի Աստուծոյն իմոյ աւրհնելոյն յաւիտեանս ի Հայր եւ ի Հոգին Սուրբ. ամէն:

---

\* մարգարէի. լուսանցից:

[ Ժ ]  
ՏԵՍԻԼ ՎԵՑՅԵՐՈՐԴ

Եւ զայս տեսիլ կոչէ յերաւի, զի յորժամ հրեշտակն Հէ(77)ե-  
րորդն համառուտեաց ի վերայ ազգին, տաղտապէր ցանկու-  
թեամբ վե(°) յամելոյ դարձին: Վասն այսորիկ յանձն առնու  
պահս մեծաւ ճգնութեամբ, զի տեսցէ զցանկալին, որ է դարձ  
գերւոյն, որոյ տեսեալ զայրն ահաւոր, զի պատմէ գլեղանակ  
դարձին, վասն այսորիկ տեսիլ ասէ:

Յամին երրորդի Կիրոսի արքայի Պարսից բան յայտնեցաւ Դանիէլի,  
որոյ անուն կոչեցաւ Բաղտասար, եւ ճշմարիտ է բանն, եւ զարութիւն մեծ  
եւ հանճար տուաւ նմա ի տեսլեանն (Ժ 1).

Մինչեւ ցայս վայր իբր «վերագիր նախերգանի է եղեալ յայլ-  
մէ յումեքէ կամ թերեւս յեզրա դպրէ, որ զբոլոր գրեանն հրէից  
հրամանակ հոգւոյն նորոգեաց, գրեաց եւ զայս եւս յառւրս, ասէ,  
(360ա) Կիւրոսի, որ սկիզբն լինելոց է դարձին: Բան յայտնեցաւ, այսինքն`//  
խորհուրդ ինչ, որ բանիւ յայտնի սրբոցն միայն անմարմնապէս<sup>1</sup>:  
Եւ ճշմարիտ է, իբր թէ ստոյգ լինելոց է տեսիլն: «Զարութիւն մեծ եւ  
հանճար տուաւ. յայտ է` ի բարեաց կամեցողեն եւ ի կարաւղ Տեառ-  
նէն, որ զնա արժանի արար տեսլեան մեծի զաւրութեան եւ իմաս-  
տութեան, զի կարասցէ եւ զայլս ապրեցուցանել, զի միմիայն նա,  
այլ եւ ամենեքեան լինիցին իբրեւ զնա ի տեսիլ ապագայիցն»<sup>2</sup>:

Յաւորսն յայնոսիկ եւ Դանիէլ էի ի սուգ երիւ Է(7)երրորդաց (Ժ 2).

Յուցանէ զաւրինակ պատրաստութեան, որով զՀոգին ընկա-  
լաւ եւ տեսլեանն արժանացաւ: Ի սուգ, ասէ, էի. «յայտ է` ի զգա-  
յութեան վասն ախորժելեացն պակասութեան, որ է դարձ գեր-  
ւոյն, զի տակաւին ի գերութեան էին երիւ Է(7): Ի խորհուրդ եր-  
րորդութեան եւ ի նշանակ Հոգւոյ եւ մտաց եւ մարմնոյ կրակցու-  
թեան»<sup>3</sup>, այլ եւ Գ(3) անգամ դարձին գուշակ, զոր ետես Եզեկիէլ  
զչափ ձողոյն:

<sup>1</sup> Վարդան, 269ա:

<sup>2</sup> Վարդան:

<sup>3</sup> Վարդան, 269աբ:

Հաց ցանկութեան ոչ կերայ (ժ 3).

Այլ ումեք հացի ոչ ցանկացայ, ասէ, ըստ այնմ՝ «Աւուր մարդոյ [որպէս խոտոյ է]» (Սաղմ. ԾԲ 15). ոչ ցանկացայ կամ հաց ոչ կերայ, որ զցանկութիւն շարժէ կամ ցանկութեան բաղձանաւք ի կերակուր ոչ գնացի, այլ եւ փափուկ կերակուր եւ խորտիկ, զոր ցանկութիւն խնդրէ, ոչ կերայ ըստ որում եւ յաւելու.

Եւ միս եւ գինի ոչ եմուտ ի բերան իմ (ժ 3ա).

Զի յառաջն ոչ էր ի կեանս դրախտին եւ նախ քան զջուրն, այլ յետոյ տուաւ Նոյի հրաման մտոյ եւ գինոյ ի բառնալ պարարտութեան:

Եւ եղով ոչ աւծայ (ժ 3բ).

«Զի կրակից լիցի ցամաքեալ սրտի մարմինն մինչեւ ի կատարել երից Է(7)երորդաց ատուրցն: Երեք է (7) ԻԱ (21) աւր է եւ է հասակ եւ թիւ զինուորութեան արիական հանդիսացելոց ի զաւրս»<sup>4</sup>, յորոյ խորհուրդ եւ սա ելանէ աղաւթիւք եւ խնդրէ ի կենդանւոյն Աստուծոյ կենդանացուցանել// զպատկեր հասակի մեռելոյ մեղաւք Իսրայէլի եւ յայտնել զխորհուրդ կամաց բարերարին:

Յատուրն Ի(20)երորդի չորրորդի ամսեանն առաջնոյ կայի ես առ ախն գետոյն մեծի Դկլաթ (ժ 4).

Ի Նիսան ամսոյ ԻԴ (24) ի գարնանային յեղանակի գատիկ եւ գարուն հոգոց գերելոցն խնդրէր յղձալով: Իսկ առ ախն գետոյն Դկլաթայ, որ նա ինքն է Քոբար, կայր մարգարէս կամ ի տեսլեանն կամ ի մէջ գերւոյն բնակեալ, որ առ եզեր գետոյն զետեղեալ էին, յորում երեւեալ Տէրն ցուցանէր զինքն աղաչեցեալ, այն գրով հանդերձեալ է բառնալ զմեղս եւ զսուգն վասն մեղացն:

Ամբարձի գաչս իմ, եւ ահա այր մի զգեցեալ փառս (ժ 5).

Զմտացն յայտնէ ահա: Իսկ այրակերպ երեւեալ Տէրն եւ ոչ ի մարդ եղեալ, զբաղէնն զգեցեալ, որ էր զարդ քահանայական զգեստու ձեւով ծաղկեա պատմուծան՝ զքահանայութիւն նշանակելով Տեառն, որ լինելոց էր ըստ կարգին Մելքիսեղեկի: Այլ եւ

<sup>4</sup> Վարդան, 269բ:

նկատելով զպէս-պէս առատութիւն շնորհացն, զոր տալոց էր եկեղեցւոյ յամենայն յազգաց եւ ի լեզուաց, որք գան եւ յարին յանդամս նորա: Քանզի Տեառն է երեւոյնս ստուգապէս, վասն այնորիկ ոչ ասաց, թէ այրն Գաբրիէլ կամ հրեշտակն:

Եւ ընդ մէջ իւր ամեալ կամար ոսկոյն Ուփագեայ (Ժ 5ա).

Այսինքն՝ գաւտի ի վերայ ամփոփելով զպատժող զաւրուութիւն ըստ Դաւթի. «Զգեցաւ Տէր զաւրութիւն՝ ընդ մէջ իւր ամառ» (Սաղմ. ԴԲ 1): Եւ գնախախնամականն ցուցանելով տեսչութիւն՝ կամ զմարմինն Տեառն առակէ զանապականն, որով պատեաց զկողս Աստուածութեան զճշմարտութիւն յերկրէ բուսեալ, կամ թէ հանդերձեալ էր իբր գաւտեալ զմեզ ի սէր իւր պնդել եւ կրել, իսկ մեք անդամք նորա ի նմա կամք միաւորեալ: Իսկ ոսկոյն (361ա) Ուփագեայ զգաւտին ասել զսոփերականն// ասէ զագնիւն, որ սուրբ լսի յերբայեցւոյն ի յոյն շրջեալ, զոր այլք յոսկւոյ եւ ի ծովագոյն ականէ ասէ, որ է ծիրանի:

Եւ մարմինն նորա ծովագոյն (Ժ 6).

Ոմանք որպէս Թարսիս ասեն, որ է ակն անգոյն: Եւ թարգմանի Թարսիսդ Եթովպայ, որ հնդկի, այսինքն՝ սեաւ անգիտելի, քանզի զայս եւ ծովագոյնն յայտ առնէ, զի բնութիւնն Աստուծոյ անճառելի է: Եւ թէպէտ եւ մարմինն էառ եւ այն եւս անպատմելի կամ թէ մարմինն աստուածանման, զոր ծով ասաց վասն միութեան, զորոյ զփառս եցոյց ի Թափաւր լերինն:

Եւ երեսք նորա իբրեւ տեսիլ արեգակաւն (Ժ 6)

Զայս եւ Աւետարանիչն ասաց, թէ՝ «Երեսք նորա իբրեւ զլոյս, որով զփառս արդարոցն ծագէ» (Սաղմ. ԴԶ 11), որում ըզճայր Դաւիթ երեւել երեսացն Աստուծոյ:

Եւ այք նորա իբրեւ զճառագայթս հրոյ (Ժ 6ա).

Զանաչառ դատաստանն հրակերպն յայտ առնէ՝ արդարոցն բաժանելով զլոյսն անմատոյց եւ մեղաւորացն՝ զհոլրն կիզանող:

Եւ բագուկք եւ բարձք նորա իբրեւ գտեսիլ փայլուն պղնձոյ (Ժ 6բ).

Բագուկ՝ յառաջ կոչումն հրէից եւ ոտքն յետոյ հեթանոսաց, որ եղեն յետինք առաջինք, ըստ ասելոյն թէ՝ «Եղից զիշխանս քո

որպէս զառաջինն, եւ զառաջնորդս քո, որպէս զիսկզբանէն»: Եւ դարձեալ բարձր՝ մարմինն Տեառն վասն ի վերջին ժամանակի առնլոյն: Եւ բազուկք՝ գործքն, զոր մարմնովն կատարեաց նման Աստուածութեան, ըստ այնմ. «Տեսաք մեք զփառս նորա, զփառս իբրեւ զՄիածնի առ ի Հաւրէ՛ լի շնորհաւք եւ ճշմարտութեամբ» (Յովն. Ա 14): Դարձեալ առաքեալք եւ մարգարէք աստուածատեսակք ամենեքեան բանիւ եւ գործով:

Եւ բարբառ բանից նորա իբրեւ զբարբառ զարու (Ժ 6գ).

Ձահարկութիւն ձայնիցն յայս բաղդատէ, ըստ այնմ, թէ՛ «Հանգոյն որոտայցես» (Յովք Խ 4) զոր խաւսեցաւ ի Հին եւ ի Նոր կտակս, կամ «Ձայն Տեառն զձայն զաւրութեան» (Սաղմ. ԿԷ 34) որով (361բ) զաւրա//նան հաւատացեալք եւ բարբառին նովաւ զուղիղ բանս եւ զբարի խաւսս:

Եւ տեսի եւ Դանիէլ միայն զտեսիլն, այլ առ մեծ անկաւ ի վերայ նոցա եւ փախեան զարհուրեալք (Ժ 7).

Ձայս եւ Պաւղոս ասէ. «Որ ընդ իս էին, զձայնն լուան, բայց զտեսիլն ոչ տեսին» (Գործք Թ 7), քանզի ոչ ամենեքեան կարեն ասպնջական լինել շնորհացն Աստուծոյ կամ արժանիս, այլ միայն՝ վեհագոյնքն եւ մաքրեալքն հոգւով: Իսկ «նշանակաւ ուսուցանէ, եթէ կայցէ ոք յեկեղեցւոյ եւ զերկիւղն Աստուծոյ ոչ ունիցի՝ ոչ ինչ աւգուտ է նմա ի մէջ սրբոցն լինելն»<sup>5</sup>:

Եւ ես միայն մնացի եւ տեսի զտեսիլն զայն մեծ եւ ոչ մնաց յիս զարութիւն (Ժ 8).

Միայն լինելն ի բազմաց հոգւոց ցնորական կարծեաց եւ ապա տեսլեան մեծին Աստուծոյ արժանանալ ուսուցանէ կամ զխորհուրդ տնաւրէնութեան Տեառն ասէ, որ բացաւ նմա: Իսկ ասելն՝ ոչ մնաց յիս զարութիւն զայն յայտ առնէ, թէ արդարքն չհանդուրժեն զինչ ասես վասն մեղացն, թէ՛ «Արդարն հազիւ կացցէ, իսկ մեղաւորն ո՞ւր էր» (Առակ. ԺԱ 31):

Եւ փառք իմ յապականութիւն դարձաւ (Ժ 8).

\* ունի. ուղղման նշանով՝ լուսանցից:

<sup>5</sup> Վարդան, 270ա:



«Փառք զպաղատանաւք կալն ասէ՝ առաջի Աստուծոյ»<sup>6</sup>, զի զի՞նչ այլ մեծագոյն փառք, քան Աստուծոյ խաւսակից լինել: Այս, ասէ «խափանեցաւ յահէն»<sup>7</sup> եւ չհանդարտեցի զարութեան (Ժ 8բ):

Եւ լուայ զբարբառ բանից նորա, կայի հիացեալ եւ երեսք իմ յերկիր խոնարհեալ (Ժ 9):

**Ի լսելն զբարբառն հիացայ, զի անսովոր էր ձայնն եւ ոչ էր իբրեւ զմարդոյ կամ զհրեշտակի, եւ հիանալն ոչ մտաւք միայն, այլ եւ մարմնով կորացեալ:**

Եւ ահա ձեռն մերձեալ առ իս կանգնեաց զիս ի ծունկս իմ եւ ի թաթս ձեռաց իմոց (Ժ 10):

(362ա) **Ձեռն ձգեալ նշանակէր զձեռն, որ հաստատէ զամենայն գայթակղեալս եւ կանգնէ զամենայն գլորեալս կամ զչոզին ասէ, ըստ այնմ. «Եղեւ ի վերայ իմ ձեռն Տեառն: (հմմտ. Սաղմ. ԾԼԸ 5) //, որ եկեալ ի վերայ նորա կացոյց զնա ի ծունկս եւ ի թաթս. որպէս էրն ի ժամ ազաւթիցն, այնպէս դարձոյց:**

Եւ ասէ ցիս. Դանիէլ, այր ցանկալի, խելամուտ լեր բանիցն, զար խաւսեցայք ընդ քեզ եւ կաց ի կայի քում, զի այժմ առաքեցայ առ քեզ (Ժ 11):

**Յանկալի հոգւոյն Աստուծոյ եւ դարձ ի գերւոյն, այլ եւ ուսման ցանկացաւդ, կաց յոտն, եւ զոր առաքեաց խաւսել ընդ քեզ, լուր:**

Եւ ի խաւսելն նորա ընդ իս զայս բանս կացի յոտն դողութեամբ, եւ ասէ ցիս, Մի՛ երկնչիր, Դանիէլ (Ժ 11ա-12):

**Ջերկիղն նախ փարատէ, զի ի միտ առցէ զասացեալն:**

Ջի յարեւ, յորմէ ետուր զսիրտ քո խելամուտ լինել եւ վշտանալ առաջի Աստուծոյ քո, լսելի եղեն բանք քո, եւ ես եկի ընդ բանից քոց (Ժ 12ա):

**«Վշտանալ կամ զվաստակ մարմնոյն ասէր ի պահս եւ յազաւթս, որ յոյժ հաճոյէ Աստուծոյ կամ զցաւակցութիւն գերոյն, զի յառաջին ամին իւր Կիւրոս հրամայեաց դառնալ գերոյն, որ եւ**

<sup>6</sup> Վարդան:

<sup>7</sup> Վարդան:

լցեալ էր Հ(70) ամն եւ չկամէր զդառնալն ժանդ ժողովուրդն մինչեւ յերրորդ ամն, ուստի եւ Դանիէլ աղաւթէր ազդումն առնել ի սիրտս խիստս, ըստ խոստացելոյն, թէ՛ «Տաց նոցա սիրտ մարմեղէն» (Եզեկ. Լ, 26): Ես եկի, ասէ, ըստ բանի քում Երեւեալն Տէրն էր, սակայն այժմ հրեշտակ խաւսի ընդ Դանիէլի, զի տանել կարասցէ: Ես եկի. յայտ է՝ ի սկիզբն աղաւթիցն եւ պահոցն հանել զգերին»<sup>8</sup>.

Եւ իշխան թագաւորութեան Պարսից կայր հակառակ ինձ զԻ(20) եւ զմի ար<sup>\*</sup> (Ժ 13).

Հրեշտակապետն, որ կայր ի վերայ զաւրուն Պարսից, «հակառակէր, կամ զի չէր տակաւին առեալ հրաման արձակման գերոյն, կամ զանյաւժարութիւն եւ զանարժանութիւն յայտնեաց եւ ոչ թէ Աստուծոյ կամացն կամ Գաբրիէլի հակառակէր: Իսկ այլք զսատանայ ասեն հակառակել, որպէս Յեսուայ Յովսեփեկեանց:

(362բ) Եւ ահա Միքայէլ՝ մի յառաջին իշխանացն՝ եկն աւգնել ինձ (Ժ 13ա) //.

Առաջին զնա ասելն ի պետացն ցուցանէ եւ ի գլխաւորացն, կամ թէ յառաջ վերակացու էր հրէիցն ընդ այլս ոմանս, քանզի նա էր, որ ի տանելն Մովսէսի զկիսն եւ զանթլփատ մանուկն ահարկանէր սպանանել մինչեւ դարձոյց յետս, նա, ասէ, եկն աւգնել ինձ»<sup>9</sup>:

Եւ թողի անդ իշխանի թագաւորութեան պարսից եւ եկի խե՛ամուտ առնել զքեզ որչափ ինչ անցք անցանելոց եմ ընդ ժողովուրդս քո յաւուրս յետինս, զի տեսիլդ յաւուրս Է(7) (Ժ 13բ-14).

Տե՛ս՝ «որքան է սէրն Աստուծոյ առ Դանիէլ, զի որ ինչ լինելոց էր ազգաց եւ ազանց, նմա միայն յայտնէր ի ձեռն հրեշտակի:

Եւ ի խաւսել անդ իս ըստ բանիցս այսոցիկ, անկալ ի վերայ երեսաց իմոց յերկիր եւ կալի հիացեալ (Ժ 15).

Ի խաւսիցն յերկար<sup>\*\*</sup> յերկիր անկանէր»<sup>10</sup>, զի զանհանդուրժելի բնութիւն հրեշտակին ցուցանէր կամ ի ձեռացն երեւմանէ հիացաւ, որպէս ասաց.

<sup>8</sup> Վարդան, 270բ:

<sup>\*</sup> զմիամար:

<sup>9</sup> Վարդան:

<sup>\*\*</sup> յերկար. *լուսանցից*:

Եւ անա իբրեւ անանութիւն որդւոյ մարդոյ մերձեանայր ի շրթունս իմ (ժ 16).

*«Զեռն, որ նախ ցուցաւ զնշոյլս տնաւրէնութեան Որդւոյն Աստուծոյ նշանակէր, ըստ այնմ, թէ՛ «Եղբաւր որդին իմ յարեաց զձեռն իւր ընդ պատուհանն եւ որովայն իմ խռովեցաւ» (Երգ Ե 4): Իսկ այժմ նմանութիւն որդւոյ մարդոյ ասէ մերձեանայր ի շրթունս, զի նախ ձեռն ի մարդարէսն ձգեալ զաւրուութիւն եւ ապա անձամբ գալոց էր, գուշակէ Դանիէլի. զի յառաջ Գաբրիէլ ասաց երեւեալ եւ խաւսեցեալ, եւ աստ նմանութիւն մարդոյ տալով բան ի բանալ բերանոյն, որպէս եւ ասէր աշակերտացն. «Մի՛ հոգայք, թէ զի՞նչ խաւսիցիք, զի ես տաց ձեզ բան եւ իմաստութիւն» (Մատթ. ժ 19): Սակայն դեռ նմանութիւն է, իսկ ի լրման ժամանակի մարդ եղեւ ստուգապէս»<sup>11</sup>, որպէս ասէ.*

Տէր յերեւելդ Քո<sup>\*\*</sup> խոսկեցաւ փոր իմ յիւ եւ ոչ գոյ յիւ զաւրութիւն, եւ զիս<sup>՞</sup> որդ կարիցէ ծառայ Քո, Տէր, խաւսել ընդ Տեսում իմում եւ ոչ ես է յիւ (363ա) զար/ութիւն կալոյ եւ շունչ ոչ մնաց յիւ (ժ 16ա-17).

*«Զփոր զընդունական եւ զխորհրդական Հոգւոյն կոչէ, քանզի խորհուրդ Տեառն տնաւրինական զարմացուցիչ եւ դժուարիմաց է, զոր եւ Յովաննէս չառնոյր զանձս արժանի եւ բաւական հանգոյց կաւչկաց կոչելով (տե՛ս Մատթ. Գ 11, Մարկ. Ա 7, Ղուկ. Գ 16, Յովն. Ա 27), եւ Պաւղոս «Խորք մեծութեան» (Հոովմ. ԺԱ, 33) ասէ<sup>12</sup>, քանզի քննելն քաղի շնչական ոյժ քննողին եւ յիմարի:*

Եւ յաւել ես մերձեցաւ յիւ իբրեւ գտեսիլ մարդոյ եւ զաւրացոյց զիս, եւ ասէ. Մի՛ երկնչիր այր ցանկալի, խաղաղութիւն ընդ քեզ, զաւրացիր եւ քաջ լեր (ժ 17ա-19).

*Քաջալերէ զաւրացուցի բանն՝ ոչ երկնչել, զի աւտարաց է ահագին եւ ոչ ծանոթից՝ կրկին տալով ձեռն որպէս Պետրոսի (տե՛ս Մատթ. ԺԴ 27-31):*

Եւ ի խաւսելն Գորա ընդ իս զաւրացայ եւ ասեմ. Խաւսեսցի Տէր իմ, զի զաւրացուցեր զիս, եւ ասէ ցիս. Թէ գիտիցե՞ս վասն Է՞ր եկի առ քեզ (ժ 19ա-20).

<sup>10</sup> Վարդան:  
<sup>11</sup> Վարդան, 270բ-271ա:  
<sup>\*\*</sup> Ընկալայ թրգմ. Քո ինձ:  
<sup>12</sup> Վարդան:

*Ջաւրացուցեր ասացի, խաւսեա, եւ նա ասէ. վասն այնորիկ «զաւրացուցի, զի գիտացես, թէ վասն Է՞ր եկի՝ ոչ քաղել շունչ քո եւ կամ ահիւ լնուլ, այլ Տեառն ցանկութիւն քո կատարել ի ուսումն ապագայիցն յայսմանէ ուսանիմք, թէ առաջին գալուստն Տեառն խնայելով է եւ կեցուցչաբար ոչ իբրեւ զերկրորդն, զի դողացուցէ զարարածս»<sup>13</sup>, ըստ այնմ. «ոչ եկի, թէ դատեցայց զաշխարհ, այլ զի փրկեցից» (Յովն. ԺԲ 47):*

Եւ արդ, դառնամ անդրէն տալ պատերազմ ընդ իշխանին Պարսից (Ժ 20ա).

*«Երկոքին զկամս Աստուծոյ փութային կատարել. մինն զի աղաւթքն Դանիէլի արդիւնասցի եւ միւսն, զի ժանդ ժողովուրդն չէին արժանի ելանելոյ, զի անարգեաց զշնորհն Աստուծոյ՝ կալ ի մէջ անարգողացն զԱստուած, վասն որոյ եւ ոչ պատժեցաւ, որ կայրն հակառակ, որպէս եւ ոչ Մովսէս ի խորտակելն զաստուածագործ տախտակսն, զի ոչ ի խորտակել տուաւ, սակայն անարժան դատեցաւ զ// պիղծսն եւ ոչ մեղադրեցաւ, ըստ որում եւ ոչ Դանիէլ, որ պապանձեցոյց զՋաքարիայ, զի իշխանութիւն ունին հրեշտակք գործել զարժանն յառաքելութիւն իւրեանց: Եւ այլազգ, զի Գաբրիէլ եւ Միքայէլ ջանային յաղթել Պարսից իշխանին, զի մի՛ յուսահատեալ ժողովուրդն ի կռակաշտութիւն անկանիցին: Եւ իշխանն յունաց եւ պարսից ուրախ լինէին, զի դարձցին արդարքն, որ անդ, այլ զանարժանսն սուրբ երկրին ոչ կամէին, եւ որք զնոցայն ախորժէին զերկիր եւ զգործ: Յազագս այսորիկ ասէ՝ երթամ պատերազմել:*

Եւ ես երթայի եւ իշխանն յունաց գայր: Բայց պատմեցից քեզ՝ զինչ կարգեալ է ի գիրս ճշմարտութեան (Ժ 20բ-21).

*Երթայի, ասէ, արձակել զգերին, որ Յունաց աշխարհին եւ իշխանն Յունաց գայր ընդ առաջ եւ ոչ թողոյր, զի զայս լսելով շարժեցի նախանձն Տեառն ի ժողովուրդն եւ ունկնդիր լինիցին Դանիէլի եւ յաւժարեցին զելանելն եւ աղաւթակից լիցին նմին»<sup>14</sup>: Իսկ ասելն թէ՛ գրեալ ի գիրս ճշմարտութեամբ՝ կամ ի գիրս մարգարէիցն կամ անմոռաց յիշատակն Աստուծոյ: Վասն այսորիկ եւ վերայ բերէ:*

<sup>13</sup> Վարդան:

<sup>14</sup> Վարդան, 271աբ:

Եւ ոչ ոք է ինձ ազնական այսոցիկ, բայց Միքայէլ իշխանն ձեր (Ժ 21ա)

«Ձայս ասէ, զի ազդ արասցէ Դանիէլ ժողովրդեանն աղաւթիւք աւգնել նոցա, որ կային վասն նոցա ի ճգնութեան, քանզի ասի ի սուրբ արանց, թէ ծուլիցն եւ հեղգագունիցն հրեշտակքն շատ աշխատին ի պահելն զնոսա: Բայց դու տես, զի որ յայնժամ ազգաց եւ լեզուաց էին խնամածուք, որպէս ասէ Մովսէս կացոյց սահմանս ազգաց, ըստ թուոյ հրեշտակաց Աստուծոյ, (Բ Օր. ԼԲ 8), որ Հ(70) եւ Բ(2) էին լեզուք՝ խնամ տանել նոցա, որք յանձնիշխան կամաւք խնդրէին զկենդանին Աստուած: Իսկ արդ, ի Տեառն գալստեանս յատուկ անձանց իւրաքանչիւր ումեք ի հաւատացելոց կարգաւորն սահմանաց եւ հասակաց կացոյց կրկին// հրեշտակս պահապան իսկ երկիւղածացն բանակս, ըստ Դաւթի (տե՛ս Սաղմ. Լ 9 8): Վասն այսորիկ ասաց թէ՛ «Ձգուչ լերուք ի գայթակղեցուցանելոյ զփոքունս, զի հրեշտակք նոցա հանապազ տեսանեն գերեսս Հաւր» (Մատթ. ԺԸ 10) որպէս եւ զԻւրն իսկ, զի «Որ ետես զիս՝ ետես զՀայր» (Յովհ. ԺԴ 9) որ զՀայր ետես՝ զՈրդի եւ զՀոգի ետես: Այս թէ ասիցէ ոք Դանիէլ որ այնքան ծարաւով խնդրէր դարձեալ զգերին, ինքն ընդէ՞ր ոչ դարձաւ, զի ասեն վասն նմա ասացեալ Նսայեայ. Մի՛ ասացցէ, որ եկեալ յեցեալ իցէ ի Տէր, թէ՛ ես եմ փայտ չոր, զի ես տաց նմա ի տան իմում տեղի անուանի առաւել քան գոլստերաց եւ զդստերաց (Եսայի Ծ:2 3-5): Եւ Դաւիթ վասն նոցա ասէ, թէ՛ «Եղեր նեղութիւն ի թիկունս եւ անցուցեր զմարդիկ ի վերայ, եւ անցաք ընդ հուր եւ ընդ ջուր» (Սաղմ. 45 11-12), եւ թէ՛ «Մտից ի տուն քո եւ զողջակէզս ուղղալիցս մատուցից քեզ» (Սաղմ. 45 15): Ձայն ասելի է, թէ՛ նոքա, որ արդարքն էին, անբովանդակելիք էին յուսով եւ հաւատով, եւ հանապազ ելանէին յԵրուսաղէմ եւ ի տաճարն բանական ողջակիզաւք իւրեանց՝ մարմնով, մտաւք եւ հոգւով՝ նուիրելով Աստուծոյ զինքեանս միշտ: Այլ եւ ի գնալ ժողովրդեանն եւ նուիրել զանձինս եւ զանասունս, եւ սոքա ընդ նոսա համարէին Դանիէլ եւ այլքն, քանզի աղաւթիւք նոցա դիպեցան յայնմ շնորհացն, եւ Բ(2) փոխանակ նոցա կային ի սպասաւորութիւն թագաւորացն, որք արգելուին զնոսա ի դրունս իւրեանց, եւ յուղարկէին զժողովուրդն շքով եւ երեւելի փառաւք՝ վասն նոցա յանձն ունելով զհոգս թագաւորացն եւ զտեսս կռապաշտիցն, որպէս Դանիէլ էր ի դրան արքունի եւ գործէր զգործ թագաւորացն: Այլ եւ այնքան սէր ունէին ընդ ազգին իւրեանց, զի զնոցա հանգիստն անձանց հա-

(364ա)

*չուէին կամ վերջոյ մնային իբր զհովիւ, զի զամենեսեան յորդորելով՝ յերուսաղէմ ժողովեսցեն: Եւ կամ թէ ոչ ժամանեցին Դանիէլ եւ այլք յաւուրս դարձին<sup>15</sup>:*

---

<sup>15</sup> Վարդան, 271բ-272բ:

## [ ԺԱ ]

«Եւ եւս յառաջնումն ամին Կիրոսի կացի ի հաս/(364բ)տատութեան եւ ի գարութեան (ԺԱ 1)

*Յայտ է՝ ի գաւրացուցանել զարդարան՝ յաւետիս ելիցն կալ հաստատուն, թէպէտ անյաւժարք են ընկերք նոցա: Կամ առ մարգարէս ասէ Գաբրիէլ, եթէ յառաջին յամէն Կիրոսի սկսայ գաւրացուցանել զքեզ յաղաւթս՝ կալ հաստատ ի խնդրուածս քո կամ այս է՝ գաւրացուցանելն, որ զկնի ասէ.*

Եւ արդ, պատմեից քեզ ճշմարտութիւն, զի ինքն ճշմարտութիւն (ԺԱ 2).

*Երանելի ուսումն պատմէ զճշմարտութիւն, զի ինքն ճշմարտութիւն գոլով՝ արտաքոյ ճշմարտութեան ոչ ինչ պատմէ: Եւ զի՞նչ է ճշմարտութիւն. զելս թագաւորացն ասէ, զոր պատմէ, ըստ կարգի կամ զանունն, զոր աւրինակաւ ունէր, պատմէ զճշմարտութիւն, զի Գաբրիէլ թարգմանի մարդ եւ Աստուած ընկալեալ պարգեւս յանունն, զի հանդերձեալ էր տնաւրէնութեան անճառ Բանին սպասաւորել, որ լինելոց էր ճշմարտապէս Աստուած եւ մարդ ի Կոստէն իբր մատանի տուեալ թագաւորի ցզինուոր ոք, զի հաւատասցեն լսաւղքն՝ տեսանելով զպատկեր թագաւորին ի վերայ մատանոյն: Արդ, զաւրինակ անուանն Գաբրիէլ ունէր եւ զճշմարտութիւն ի յիրն Քրիստոս, զոր պատմեաց մարգարէիս:*

Ահա երեք թագաւորք յարիցեն յերկիրդ Պարսից եւ չորրորդն մեծասցի ի մեծութիւն մեծ քան զամենեսեան եւ յետ զարանալոյ Աորա ի մեծութեան իւրում յարիցէ ի վերայ թագաւորութեանցն Յունաց (ԺԱ 2ա)

*Յորժամ զայս ասէր հրեշտակն, թագաւոր Կիրոս էր, եւ «յետ Կիրոսի յարեալ Դարեհ, ապա՝ Արտաշէս՝ Ուշեղ, ապա՝ Արտաշէս Քսերքսէս, եւ չորրորդն մեծասցի յետինն Դարեհ, որ յարեալ ի վերայ թագաւորութեանցն Յունաց, զոր սպան Աղեկսանդր որդի Փիլիպպոսի եւ եբարձ զթագաւորութիւն պարսից, որ տեւեաց*

\* Արտաշէտ:

(365ա) *ամեն ՄԼ(230): Բայց գիտել պարտ է, զի զնշանաւորսն ասաց զ(4) թագաւոր, ապա թէ ոչ չորքտասան թագաւոր նստան Կիւրոսիւ եւ վերջին Դարեհիւ աթոռն Պարսից //, որ զաւրաժողով եղեւ ի վերայ Աղեկսանդրի»<sup>1</sup>:*

Եւ յարիցէ թագաւորի հզար, եւ տիրեսցէ տէրութեամբ բազմաւ, եւ արասցէ ըստ կամս իւր (ժԱ 3).

*ՁԱղեկսանդրէ ասէ, որ զաւրացաւ եւ տիրեաց տէրութեանց բազմաց, եւ եբարձ գամենայն թագաւորս նշանաւորս, եւ ըմբունեաց զաշխարհ որպէս կամէր:*

Եւ իբրեւ յարիցէ թագաւորութիւնն Արաւ փշրեսցի եւ բաժանեսցի ի Դ(4) հողմս երկնից (ժԱ 4).

*Յորժամ յոյժ բարձրացի փշրեսցի իբր արմատ ծառոյ բեկեալ ի բաց, քանզի որդի ոչ եթող ժառանգ, այլ կեցեալ ամս ԼԲ (32) եւ թագաւորեալ ամս ԺԲ(12) եւ ամիսս Ձ(6) բաժանեսցաւ թագաւորութիւնն ի Դ(4) հողմս ապականիչս աշխարհի, որք են «Դ(4) դայեկորդիքն, որք առին զնորայն»<sup>2</sup> երկնաւորին Աստուծոյ թոյլ տալովն:*

Եւ ոչ ըստ վախճանի Արաւ եւ ոչ ըստ տէրութեան Արաւ, զոր տիրեսց, զի խլեսցի թագաւորութիւնն Արաւ եւ այլոց թող գնոցայն (ժԱ 4ա).

*Վախճանին սոքա ոչ ըստ վախճանին Աղեկսանդրու, զի նա դեղակուր եղեւ: Եւ ոչ ըստ տէրութեան Աղեկսանդրի պերճ եւ անուանի լինին սոքա, զի խլեսցաւ նորայն եւ այլոց եթող զնոցայն, զոր յայլոց էր առեալ Աղեկսանդրու:*

Եւ զարասցի թագաւորն հարաւոյ, եւ ի յիշխանացն զարասցի ի վերայ Արաւ, եւ տիրեսցէ տէրութիւնն մեծ (ժԱ 5).

Թագաւոր հարաւոյ *գեգիպտոսին ասէ, որ զբան աթոռն ունէր Պտղոմէոս, իսկ մի յիշխանացն զարաւալ «գԱնտիոքոս կոչէ, որ իշխէր ասիացւոցն, որ եւ թագաւորեաց ի ՃԼԷ(137)ամի թագաւորելոյն Յունաց եւ պատերազմ յարոյց ընդ թագաւորին եգիպտացւոց Պտղոմէայ, եւ յաղթեաց նմա եւ ել ի վերայ Երուսաղէմի ՅնԳ(343) ամին շինելոյն զնա եւ առ գամենայն գանձս Տեառն*

<sup>1</sup> Վարդան, 272բ-273ա:

<sup>2</sup> Վարդան, 273ա:



*տանն, եւ զնաց Անտիոք առ որով առաքինացան Մատաթէ եւ որդիք իւր յետ յերկուց ամաց, զոր ասէ Դանիէլ, թէ սակաւ ինչ աւզնութիւն գտցեն»<sup>3</sup>:*

(365բ) Եւ յետ ամաց իրեանց խառ//նակեսցին ընդ միմեանս (ԺԱ 6).

*Ինձ թուի զայն ասել, զի Պտղոմէոս եգիպտացի ետ զդուստր իւր ի կնութեան Աղեկսանդրի, իսկ ոմանք, այլ աւերինակաւ ասեն զայս եւ որ զկնիս է:*

Եւ դուստր արքային հարաւոյ մտցէ առ արքայն հիւսիսոյ՝ առնել դաշինս ընդ մմա, եւ ոչ հանդարտեսցէ զարութեան բազկին, եւ ոչ կացցէ զաւակն անոր, եւ մատնեսցի ինքն եւ ածելիք իւր եւ արիորդն, եւ որ զարացուցանեն զնա ի ժամանակին (ԺԱ 6ա).

*«Ոմն կին Կղէոպատրեայ անուն թագուհի յետ եգիպտացւոց արքայի Պտղոմեոս՝ մահուանն զնաց Բ(2) որդովն Պտղոմեաւ եւ Մայրասիրաւ ուխտել ընդ թագաւորին Անտիոքու ասորոց, եւ, եկեալ մաւտ ի Բիշան, սպանաւ, քանզի, որ իշխանք նոցա էին, մատնեցին, եթէ՝ զեղով կամի նենգել քեզ: Եւ փախեան Բ(2) եղբարքն յեգիպտոս: Եւ սպան Պտղոմէոս զՄայրասէրն, եւ ինքն թագաւորեաց: Եւ զի ասէ ինքն եւ ածելիք իւր, զի սպանան եւ նոքա եւ որ զաւերացուցանէր զմայրն զնալ, յայտ է՝ Մայրասէրն»<sup>4</sup>:*

Եւ յարիցէ ի ծաղկէ արմատոյ անոր ի վերայ պատրաստութեան իւրոյ, եւ եկեսցէ առ զարութիւն, եւ մտցէ ի հաստատութիւնս թագաւորին հիւսիսոյ եւ արասցէ ընդ անոսա եւ զարասցի եւ զաստուածս անոցա կործանեսցէ հանդերձ ձուլածոյիք անոցա եւ զամենայն սպաս ցանկալիս՝ անոցա զոսկոյ եւ զարծաթոյ, գերի առեալ բերցէ յԵգիպտոս եւ ինքն հաստատեսցի քան զթագաւորն հիւսիսոյ (ԺԱ 7-8).

*Այլ պտուղ յարմատոյն «Պտղոմեայ ել ի մեծ զաւրութիւն Անտիոքու եւ փախոյց զնա, եւ հառ զամենայն ինչ նորա, եւ զաստուածսն կործանեաց, որ աւծուած էր, եւ զձուլածոյսն, որ սուտ էր»<sup>5</sup>, տարաւ յեգիպտոս եւ զաւերացաւ քան զթագաւորն հիւսիսոյ զԱնտիոքոս:*

<sup>3</sup> Վարդան, 273աբ, *որ սակայն* հարիւր երեսուն եւ հինգ *փխ*. ԵԼԷ(137), իննսուն երեք *փխ*. ՅԽԳ (343):

\* Պտղոմեա... յետ բառերի վրա հերթագայութիւն ցույց տվող *բ ա նշումը*:

<sup>4</sup> Վարդան, 273բ:

<sup>5</sup> Վարդան:

Եւ մտցէ ի թագաւորութիւն արքային հարաւոյ, եւ դարձցի անդրէն յերկիր իւր եւ որդիք անորա ժողովեացիս ամբոյս զաւրաց բազմաց եւ մտցէ (366ա) դի//մեալ եւ հեղեղատեսցէ, եւ անցցէ, եւ դադարեսցէ, եւ գրգռեսցի մինչեւ ի զաւրութիւն անորա (ԺԱ 9-10).

*«Որդիք թագաւորին հիւսիսոյ դառնան ի վերայ հարաւոյ, յայտ է՝ Պտղոմեայ՝ առնուլ զվրէժ հաւրն, յաղթեցին եւ դարձան յերկիր իւրեանց: Եւ յարիցեն որդիքն Անտիոքոս բարձր քան զհայրս իւրեանց, եւ մինն մտցէ դիմեալ ի կղզիս եւ հեղեղեսցէ, եւ դադարեսցէ, այսինքն՝ մեռանի եւ միւսն գրգռեսցի, զի հասցէ ի զաւրութիւն եղբաւրն»<sup>6</sup>:*

Եւ զազանասցի թագաւորն հարաւոյ եւ ելցէ եւ տացէ պատերազմ ընդ թագաւորին հիւսիսոյ եւ գումարեսցէ զաւր բազում եւ մատնեսցի զաւրն ի ձեռս անորա եւ սոցէ զամբոյսն եւ բարձրասցի սիրտ անորա եւ կործանեսցէ զքիրաւորս եւ զզարաւորս \* (ԺԱ 11-12).

*«Ջայրանալ Պտղոմէոս եւ գումարեսցէ զաւր բազում՝ պատերազմել ընդ հիւսիսայինն Անտիոքոս: Եւ մատնին զաւրքն Անտիոքոս ի ձեռն Պտղոմեայ, եւ ոչ ինքն, այլ ամբոյսն եւ բանակն բիւրաւոր, ուստի հպարտացաւ եւ բարձրացաւ սիրտ նորա, եւ գնաց մեծաւ աւարաւ»<sup>7</sup>:*

Եւ դարձցի արքայ հիւսիսոյ եւ ածցէ զաւր բազում քան զառաջինն եւ ի վախճանի ժամանակացն եկեսցէ մտանել զաւրաւ մեծաւ եւ բազում ստացուածովք եւ ի ժամանակսն յայնուսիկ բազումք յարիցեն ի վերայ թագաւորին հարաւոյ (ԺԱ 13-14).

*«Մերձ ի վախճան կատարածի կենացն Անտիոքոս յուղեաց զզաւրս քան զառաջինն եւ բազում ստացուածաւք եւ ռոճկաւք մտեալ յեգիպտոս, յորում ժառանակի բազումք եւ շրջակայիցն կռուէին ընդ Պտղոմեայ, վասն որոյ դիւրաւ յաղթեաց եւ դարձաւ:*

Եւ որդիք մնացելոց ժողովրդեանն քո բարձրասցին ի հաստատել զտեսիլն եւ տկարասցին (ԺԱ 14ա).

<sup>6</sup> Վարդան, 273բ:

\* Ընկալլալ թրգմ. ոչ զաւրասցի *փխ*. զզարաւորս:

<sup>7</sup> Վարդան, 273բ-274ա:

(366բ) *Յետ Անտիոքու թագաւորեցին Դեմետրիոս եւ Աղեկսանդրոս հակառակ միմեանց, եւ Աղեկսանդրոս ուխտեաց ընդ քահանայապետին Յովնաթանու պատուել զնա, եւ // զամենայն ժողովուրդն հաստատել զտեսիլն իբր թէ Աստուած հայեցաւ ի նա հեշտութեամբ, եւ սկսան կատարել զամենայն պաշտաւն, սակայն շուտ տկարացան ի վախճանելն Աղեկսանդրի:*

Եւ մտցէ թագաւորն հարաւոյ եւ կուտեսցէ հող եւ աոցէ զքաղաքս ամուրս եւ բազուկք արքային հարաւոյ ոչ հաստատեսցին եւ յարիցեն ընտրեալք նորա եւ ոչ իցէ զարութիւն կալոյ եւ արասցէ ի մտանելն իրում առ նա զկամս իր եւ ոչ ոք իցէ, որ ունիցի զդէմս նորա (ԺԱ 15-16).

*Դարձեալ Պտղոմէոս զաւրացաւ եւ եմուտ ի թագաւորութիւն հիւսիսականացն, եւ հող կտրեալ եւ պատնէշ շուրջ զքաղաքաւք բազմաւք առնոյր եւ բազուկք նորին, որք են իշխանք, ոչ էին հաստատուն, զի չէին միամիտ, վասն որոյ ընդդէմ յարեան ընտիրքն նորա եւ ոչ գոյր զաւրութիւն մինչեւ խաղաղեաց զնոսս պարգեւաւք եւ ապա ի մտանելն իւրում առ արքայն հիւսիսոյ արար որպէս կամէրն եւ ոչ ոք ընդդիմացաւ նմա:*

Եւ կացցէ յերկրին Սաբայիսմ եւ վախճանեսցի ի ձեռս նորա (ԺԱ 16).

*Այսինքն մտցէ աստուածահաճոյ եւ սուրբ երկիրն Հրէաստանի, եւ անց կալով մեծարեաց զՅովնաթան եւ զհրեայսն, եւ վախճանեցաւ ի հնազանդութիւն երկիրն հիւսիսոյ ի ձեռն Պտղոմեա Աղեկսանդրի»<sup>8</sup>:*

Եւ դիցէ զերեսս իր մտանել զարութեամբ իրով յամենայն թագաւորութիւն նորա, եւ զամենայն ուղղութիւնս առիցէ ընդ նմա եւ զդուստր կանանց տացէ նմա յապականութիւն, եւ մի յամրասցի, եւ մի՛ եղիցի նա նորա (ԺԱ 17).

(367ա) *Երես եղ, այսինքն՝ զամենայն երկիրն եւ զթագաւորութիւն յինքն գրաւել Պտղոմէոս, վասն որոյ զամենայն խաւսս ուղղութեան եւ զսիրոյ արար նմա եւ «զգուստր իւր Կղէոպատրէ՝ ետ Աղեկսանդրոսի ի կնուութիւն, զի նենգով սպանցէ զնա: Բայց ասէ, թէ մի՛ յամրասցի եւ մի՛ եղիցի, զի խաբեաց յետոյ եւ էառ ի // նմանէ, եւ ետ Դեմետրեայ եւ սպանաւ Աղեկսանդրոս եւ յետ*

<sup>8</sup> Վարդան, 274ա:

\* Կղոպատրէ:

**Գ(3) առուր մեռաւ եւ ինքն Պտղոմէոս»<sup>9</sup>, որպէս յառաջ տարեալ ասէ.**

Եւ դարձուցէ զերեսս իր ի կղզիս եւ անցէ զբազումս եւ այրեսցէ զիշխանսն, որ նախատեցին զնոսա եւ զնախատինսն նոցա դարձուցէ յերեսս նոցա, եւ դարձցի զարութեամբ յերկիր իր եւ տկարացի եւ անկցի եւ ոչ գտանիցի (ՄԱ 18).

**«Դեմետրիոս դարձոյց զերեսս իւր ի կղզիս եւ առ զբազումս եւ այրեաց զբազում իշխանս, որ նախատեալ էին զնա յայլ անգամ գնալն առ նոսա, եւ դարձեալ յերկիր իւր, զոր առեալ էր Պտղոմէոս, որ զգուստր իւր էառ յԱղէկսանդրէ»<sup>10</sup>: Բայց ոչ յերկարեաց, որպէս ասէ, թէ տկարացի եւ ոչ գտանիցի:**

Եւ յարիցէ յարմատոյ նորա տունկ թագաւորութեան ի վերայ պատրաստութեան նորա եւ բռնադատեսցէ անել շուք թագաւորութեան եւ յատուրսն յայնոսիկ խորտակեսցի եւ ոչ երեսաւք եւ ոչ պատրագաւք կացցէ ի վերայ պատրաստութեան իւրոյ, զի արհամարհեցաւ, եւ ոչ ետուն նմա փառս թագաւորութեան (ՄԱ 20-21).

**«Յարմատոյն Դեմետրեա ել Անտիոքոս եւ բռնադատեաց առնուլ իւր շուք, եւ ի սակաւ առուրս խորտակեցաւ, եւ ոչ երեսաւք գնաց ընդ գաւրս ի պատերազմ, վասն որոյ ոչ ետուն նմա շուք թագաւորութեան: Դարձեալ ոմանք զայս զՆեռնէն ասեն եւ կէսք՝ զՊտղոմէոս, թէ փախոյց զԱղէկսանդրոս յարաբացիս, որ եւ կտրեալ զգլուխ նորա առաքեցին առ նա, եւ նա յետ երից առուրց մեռանէր»<sup>11</sup>: Վասն որոյ ոչ ետուն նմա շուք թագաւորութեան զասիացւոցն: Իսկ ի վերայ Նեռինն յայտնի է, զի ամենայն չար թագաւորք պատկերք են նմա, որպէս եւ այժմ զյոյժ նենգաւորսն եւ զչարաբարոյսն Նեռն կոչեն: Սա ի վերջին ժամանակս ծնանի բոլորովին զգեցեալ զսատանայ, եւ բռնադատեսցէ զբազումս // տալ նմա շուք թագաւորութեան, սակայն խորտակի յետ ՍՄԸ (2208) առուր եւ արհամարհի ի բազմաց:**

<sup>9</sup> Վարդան, 274բ:

<sup>10</sup> Վարդան:

<sup>11</sup> Վարդան, *ուր սակայն*. Ստեփաննոս Սիւնեցիս Նեռն է ասէ զսա: Եւ Դիպողիտես Դաւանայ հայրապետն՝ զՊտղոմէոս ասէ *փխ*. Դարձեալ ոմանք զայս Նեռնէն ասեն եւ կէսք՝ զՊտղոմէոս:

Եւ եկեացէ յաջողութեամբ եւ բռնադատեսցի թագաւորութեանց գայ-  
թակղութեամբք բազուկք այն. բազուկք այնր, որ հեղեղատիցեմ, հեղեղա-  
տեսցիմ յերեսաց նորա, եւ խորտակեսցի առաջնորդ ուխտիմ, եւ այնոցիկ,  
որ խառնիցիմ ի նա, արասցէ Անգութեամբ \* (ԺԱ 21ա-23ա).

*Պտղոմէոս իսկ, որ եկն բազում յաջողութեամբ եւ նենգու-  
թեամբ եւ գայթակղութեամբ ջանա տիրել թագաւորութեան Ա-  
ղէկսանդրի: Եւ բազումք լինին ի սորա կողմանն, որ հեղեղատի-  
ցեմ գայլս, այս է՝ յերեսաց նորա, եւ յետոյ ինքեանք հեղեղատին:  
Խորտակեսցի եւ առաջնորդն, որ ուխտ դնելոյ նոցա առաջնորդ  
լինի եւ այնոցիկ, որ խառնեսցի ի նա: Արասցէ գայս եւ Նեռն, որ  
փոքրիկ եղջեր անուանեցաւ, որ ի Ժ(10)անցն գերիսն ի բաց բա-  
նայ եւ գայլս հնազանդեցուցանէ՝ արատով եւ նենգութեամբ եւ  
գայթակղութեամբ գերփելով զոգիս բազմաց, ուխտ դնելով եւ  
պատրելով զբազումս, սակայն, որք միանանն ընդ նա՝ հեղեղա-  
տիմ եւ նոքա հանդերձ առաջնորդաւ ուխտին՝ սատակմամբ բե-  
րանոյն Յիսուսի եւ այրմամբ չրթանց նոցա:*

Եւ ելցէ եւ զարասցի ի վերայ նոցա սակաւ ազգաւ եւ յաջողութեամբ,  
եւ բազում աշխարհաւք եկեացէ եւ արասցէ, զոր ոչ արարիմ հարք նորա եւ  
ոչ հարք հարց նորա, եւ զարար եւ զկապուտ եւ զստացուածս բաշխեսցէ  
նոցա, եւ ի վերայ եգիպտացոց խորհուրդ խորհեսցի մինչեւ ի ժամանակս,  
եւ զարթիցէ զարութիւն նորա եւ սիրտ նորա ի վերայ թագաւորիմ հարատոյ  
զարութեամբ մեծաւ (ԺԱ 23ա-25).

*«Ոմն Տրիփոն անուն յԱղեկսանդրի կողմանէն, եւ ել եւ  
զաւրացաւ ի վերայ նորա սակաւ յաջողութեամբ եւ սակաւ ազգաւ  
եւ զաւրաւք, եւ թագաւորեցոյց տղա մի յանուն Անտիոքոս, որ-  
պէս պատմեն գիրք Մակաբայեցւոցն եւ զբազումս ըստ ինքեան  
(368ա) առեալ, արար ապականութիւն// երկրի, եւ զինչսն բաշխէր առա-  
տապէս, զի զաւրք նորա մտերմաբար պատերազմեսցին, եւ ի վե-  
րայ եգիպտացոցն Պտղոմեայ խորհէր չարիս, բայց փոքր ժամանակ  
լինի զարթնուլն նորա եւ չարութիւն սրտին ի վերայ թագաւորին  
հարաւոյ եւ խափանի, զի սպան Անտիոքոս տղայն, եւ ինքն  
սպանաւ ի միւս Անտիոքոս յորդուոյն Դեմետրիայ»<sup>12</sup>: Բռնանայ եւ  
Նեռն ի սակաւ ազգէ, զի ի հրէէ ծնանի ի գերւոյ եւ ապա ներելովն*

\* Ընկալլայ թրգմ. Անգութիւն:

<sup>12</sup> Վարդան, 275ա:

*Աստուծոյ ամէ է ի բազում չարիս, եւ արասցէ չարիս, որ ոչ է եղեալ ի սկզբանէ, եւ զյոյժ զաւրութեան պատերազմի իւրոյ եւ զսիրտ զիցէ ընդ կողմ հարաւոյ, եւ շատ անգամ յաղթահարի ինքն եւ իւրքն, եւ է զի յաղթէ մինչ զի բնաւից տիրէ կողմանն հարաւոյ, որպէս եւ ասէ.*

Եւ թագաւորն հարաւոյ խմբեցէ պատերազմ զաւրաւ մեծաւ եւ հզորաւ յոյժ, եւ հանարտեսցէ, զի խորհեսցին ի վերայ խորհուրդս եւ կերիցեն որ ինչ մնա անկ իցէ եւ խորտակեն զնա եւ զզարսն այրեսցեն եւ անկցին վիրաւորք բազումք (ԺԱ 25ա-26).

*«Թագաւոր հարաւոյ զՊտղոմէոս ասէ, զի զաւրացաւ եւ խաբեաց զպատերազմ ծածուկ չարութեամբ սրտի, սակայն չաւգտեցաւ կերեալ, որ ինչ անկ էր իւր անաւրեն խորհրդոցն, քանզի զաւրացն երկոցունց եհաս հուր բարկութեան եւ անկան վիրաւորք բազումք, զի երկուց թագաւորաց սիրտն ի չարութեան էին, որպէս ասէ.*

Եւ երկոցունց թագաւորացն սիրտք իրեանց ի չարութեան եւ ի միում սեղան սուտ խաւսիցին, եւ մի յաջողեսցի, զի վախճանն ի ժամանակս է եւ դարձցի յերկիր իւր մեծութեամբ բազմաւ (ԺԱ 27-28).

*Ի մի սեղան եկեալ սիրոյ Պտղոմէոս եւ Աղեկսանդրոս, եւ սուտ խաւսեցան, վասն զի սիրտք իւրեանց լի էր չարութեամբ, ուստի ոչ յաջողեցան, զի երկոցունց վախճանի ժամանակն եկեալ էր:*

(368բ) Եւ դարձցի// յերկիր իւր. «*Ի հող թերեւս, զի յերկիր իւր ոչ ժամանեաց իսկ ի վերայ Նեռինն»<sup>13</sup>, թէպէտ խմբէ մարտ պատերազմի թագաւորն հարաւոյ ընդդէմ նորա, սակայն ոչ կարէ հանդարտել, այլ յաղթէ Նեռն եւ կոտորէ զզաւրս նորա, զի լի լինին երկոքին չարութեամբ եւ առ վայր մի ողորբելով ի ձեռն սեղանոյ կամիցի հնազանդեցուցանել: Իսկ յորժամ ոչ հնազանդի, ապա պատերազմեալ յաղթէ, սակայն ոչ յաջողէ, զի ժամանակ նորա սակաւ է՝ Գ(3)ամ եւ կէս: Բայց նախ քան զլրումն ժամանակիս յաղթեալ կողմանցն հարաւոյ դառնայ մեծաւ ուժով յերկիր իւր, այսինքն*

<sup>13</sup> Վարդան:

է՝ ի Հրէաստան, զի զայն սեփհական իւր ասէ ժողովելով զհրեայսն եւ շինելով գտածարն:

Եւ սիրտ անոս ի վերայ ուխտին սրբոյ արասցէ եւ դարձցի յերկիր (ժԱ 28).

«Յորժամ դառնայ յաղթութեամբ յերուսաղէմ՝ ցանկայ երթալ»<sup>14</sup>, զի յետ առնելոյ զկամս սրտին յերուսաղէմ դարձցի:

Եւ ի ժամանակին դարձցին եւ եկեցեան ի վերայ հարաւոյ, եւ ոչ եղիցի իբրեւ զառաջին վերջին: Եւ ստացեան ի նա բանակք կիտացոց (ժԱ 29-30).

Նախ քան զերուսաղէմ գնալն դարձցի ի վերայ հարաւոյ եւ ոչ եւս եղիցի վերջին իբրեւ զառաջին: «Այլ եւս առաւել յաղթէ, զի անկանին ի նա բանակք կիտացոց եւ եգիպտացոց, եւ խոնարհին նմա, որք են զաւակք Աբրահամու»<sup>15</sup>, նմա եւ ըստ տեղւոյն ի վերայ Անտիոքայ, զի յորժամ մեռաւ Պտղոմէոս եւ Աղեկսանդր, թագաւորեաց Դեմետրիոս եւ որդի իւր Անտիոքոս, եւ եդ սիրտ, զի ելցէ յերուսաղէմ եւ դարձցի հարաւ եւ հնազանդին նմա ասացեալ ազինքդ ի գնալն յաշխարհ իւր:

Եւ դարձցին եւ բարկացին ի վերայ ուխտին սրբոյ, եւ արասցէ եւ դարձցի եւ գումարեացի ի վերայ այնոցիկ, ոչք թողին զուխտն սուրբ (ժԱ 30).

Դարձցի Նեոն յերուսաղէմ եւ բարկացի ի վերայ այնոցիկ, որ զաւրէնս թողեալ լինին, զի այնու զսիրտս հրէից յինքն ձգեսցէ: Իսկ ըստ ճառին թուի թէ նախ ուխտեսցէ Երուսաղէմի նմին հնազանդել եւ յետ ուխտազանցութեան, որ ի սուրբ տեղիս ուխտեցին ելցէ բարկութեամբ ի վերայ ուխտադրութիցն եւ չարչարեսցէ զնոսա Անտիոք եւ կամ որք յաթող նորա:

(369ա)

Եւ յարիցեան զաւակք ի մնացեան եւ պղծեցեան զսրբութիւն բոնութեամբ (ժԱ 31).

Յորդին Դեմետրեայ զԱնտիոքոս, որ պղծեաց բոնութեամբ զսրբութիւն, զոր պատմեն գիրք Մակաբայեցոց կամ զՅասոն եւ զՄինեղաւոս ասէ զանաւրէն քահանայսն, որ պղծեցին գտածարն: Իսկ դարձեալ «զաւակք չարութեան Նեոնն, ուժ առեալ ի

<sup>14</sup> Վարդան, 275բ:

<sup>15</sup> Վարդան:

*նմանէ, պղծեն զսրբութիւն՝ պատկեր դնելով ի նմա»<sup>16</sup>, զի ոչ դա-  
դարէ ի մի խորհուրդ եւ ի մի բան:*

Եւ փոխանակեացեմ\* զհանապազորդութիւն եւ տայցեմ զպղծութիւն ա-  
պականութեան եւ ապականիչք ուխտին ածցեմ ի վերայ իրեանց գայթակ-  
ղութիւն (ԺԱ 31ա-32).

*«Փոխէ զպատարագն եւ պղծէ կռոցն ապականութեամբ»<sup>17</sup>,  
բայց ապականիչք ուխտին անկանին ի գայթակղութիւն: Այլ եւ  
զանաւրէն քահանայսն զՅակիմոս եւ զՍիմոն, որ պղծեցին զԵ-  
րուսաղէմ եւ քակեցին զորմն տաճարին՝ ձեռն տալով յԱնտիոքոս  
հերքեաց Յոռայ Մակաբէ կոտորելով զնոսա:*

Եւ ժողովորդն, որ ճանաչէր զԱստուած իւր, զաւրասցին եւ արասցեմ  
(ԺԱ 32ա).

*Յայտ է՝ Յոռայ եւ եղբարք իւր, որք զաւրացան եւ արարին  
վրէժխնդրութիւն, կամ ոչ ճանաչողքն զԱստուած ասացեալ ա-  
նաւրէն քահանայքդ եւ ընկերք նոցունց: Նմանապէս եւ յաւուրս  
Նեոննն երկիղածքն Աստուծոյ ընդդիմանան նմին զաւրու-  
թեամբն Աստուծոյ եւ երկեղածքն ի նմանէ զաւրացեալ չարչա-  
րեն զսուրբան:*

Եւ հանճարեղք ժողովրդեանն բազում իմիք խելամուտ եղիցին (ԺԱ 33).  
*Որդիքն Մակաբայեայ, որք նահատակեցան վասն աւրինացն:*

Եւ տկարասցին սրով եւ հրով եւ գերութեամբ եւ յափշտակութեամբ  
զաւուրս (ԺԱ 33ա).

*ՅԱնտիոքայ բռնադատեալք տկարացան առ ժամանակ մի եւ  
չարչարեցան սրով եւ հրով, եւ կէսք գերութեամբ յափշտակեցան:  
(369բ) Նմանապէս եւ ի Նեոնէն ոմանք տկարա//նան ակամայ եւ վատ-  
նին սրով եւ հրով, որք ընդդիմանան նմա:*

Եւ ի տկարանալն նոցա ազնականութիւն ինչ սակաւ գտցեմ (ԺԱ 34).  
*Ջզաւրանալն Յոռայի եւ յեղբարց իւրոց տկարացելոցն աւգ-*

---

<sup>16</sup> Վարդան, 275բ-276ա:  
\* Ընկալլալ թրգով. փոխեցեմ:  
<sup>17</sup> Վարդան, 276ա:



*նական լինիցին: Այլ եւ վշտացեալքն ի Նեռնէն սակաւ ինչ աւգնութիւն գտանեն յԵնոքայ եւ յԵղիայի գալն կամ ի խրատուէ լաւացն աւգտին սակաւ ինչ:*

Եւ յաւելցիմ ի նոսա բազումք գայթակղութեամբք եւ ի հանճարեղացն տկարացիմ ի փորձել զնոսա եւ ընտրել եւ յայտնել մինչեւ ի վախճան ժամանակ մի\*, զի տակաւիմ ժամանակ է (ԺԱ 34ա-35ա).

*Վշտաց է ասէ ժամանակն, զի ներէ Աստուած, որով փորձանքն յայտնին, եւ գայթակղեալքն ծանուցանին, քանզի բազումք մոլորին յերկոսին ժամանակն, ըստ Տեառն, թէ՛ «Հնարի մոլորեցուցանել եւ զընտրեալսն» (Մարկ. ԺԳ 22):*

Եւ արասցէ ըստ կամաց իւրոց: Եւ բարձրացի թագաւորն եւ հպարտացի ի վերայ ամենայն աստուծոց եւ ի վերայ Աստուծոյն աստուածոց խաւսեցի ամբարտաւանս, եւ յաշողեսցի մինչեւ վախճանեացի բարկութիւն, քանզի ի վախճան լինելոց է (ԺԱ 35ա-36).

*Յառնելն զկամս իւր Անտիոքոս եւ Նեռն, եւ բարձրացի ի պատիւ թագաւորի, եւ սկսանին զկուռս արհամարհել եւ զԱստուածն աստուածոց հայհոյէ, զի հայր կոչէ զնա: Նմանապէս եւ Անտիոքոս անբարտաւանս խաւսի, եւ թոյլ տա Աստուած երկոցունց մինչեւ վախճանեցին ինքեանք եւ բարկութիւն իւրեանց, կամ վասն բարկութեան մեղաց մարդկան նոքա յառնեն յաշխարհի, յորժամ աւարտի բարկութիւն վրիժուցն Աստուծոյ վախճանին եւ նոքա, որպէս ասաց, թէ՛ վախճան լինելոց է կամ թէ՛ ի կատարածի աշխարհի լինիցի այս (տե՛ս Մատթ. ԺԳ 40, 49, ԻԴ 14):*

Եւ ի վերայ ամենայն աստուածոց հարց իւրոց զմտաւ ածիցէ եւ վասն բազում ցանկութեան կանանց (ԺԱ 37).

*Անտիոք «զամենայն աստուածս, զոր պաշտեցին հարքն»<sup>18</sup>, ժողովէ ի պաշտել եւ յովով կանայս՝ առ ի շնալ: Իսկ Նեռն քան (370ա) զամենայն աստուածս, զոր // պաշտեցին հարք եւ աւաք երկրի զմտաւ ածէ մեծ գոլ զինքն եւ ի ցանկութիւն կանանց ոչ խոնարհի, զի Քրիստոս գոլ թուեսցի:*

\* Ընկալլայ թրգմ. ժամանակի *փիս*. ժամանակ մի:

<sup>18</sup> Վարդան, 276ա:

Եւ զամենայն դիւ զմտաւ ածիցէ եւ ի վերայ ամենայնի հպարտասցի (ժԱ. 37ա).

**Ջհարանցն պատուէ եւ զայլս արհամարհէ կամ նեռն երբեմն պատուէ զկուռս եւ երբեմն հպարտանայ եւ քամահէ:**

Եւ զԱստուածն հզար ի տեղուջէ իւրմէ փառաւորեսցէ (ժԱ. 38).

**ՋԱստուածն ճշմարիտ յառաջին նուագին կեղծաւորութեամբ փառաւորեաց Անտիոք: Նմանապէս եւ նեռն, երբ ի տաճարն մտանէ յիշէ զանուն մեծին Աստուծոյ:**

Եւ զԱստուած, զոր ոչ ծանեան հարք նորա, փառաւորեսցէ ոսկով եւ արծաթով եւ ակամբք պատուականաւք եւ ցանկալեալք (ժԱ. 38ա).

**Որպէս ասացաք, մտանէ ի մեհեանս աւտար դիցն եւ պատուէ ոսկևով, զոր ոչ գիտէին հարքն, եւ զկէսս կործանէ հպարտութեամբ:**

Եւ անցցէ ասորս \* փախտականաց ըստ Աստուծոյ աստարի, եւ յաճախեսցէ փառս եւ հնազանդեսցուցէ նա զբազումս եւ զերկիրն բաժանիցէ ի պարզեի (ժԱ. 39).

**Արար զայս աւրինակաւ Անտիոքոս, զի զբազում ամորս քակեաց եւ բաշխեաց զաւրացն, սակայն առնէ եւ նեռն, զի ուր փախուցեալ լինին զկուռս եւ թաքուցեալ է յամբագոյն տեղուջ, հատանէ եւ առնու, եւ տեսեալ զկուռս՝ «հնազանդեցուցանէ զբազումս նոցա, եւ պարզեւս բաշխէ իւրոցն»<sup>19</sup>:**

Եւ ի ժամանակի վախճանի ոգորեսցի ընդ արքային հարաւոյ եւ զարածողով լիցի ի վերայ նորա արքայն հիւսիսոյ կառաւք եւ հեծելաւք եւ նաւաւք բազմաւք, եւ մտցէ յերկիրն եւ խորտակեսցէ եւ անցցէ եւ մտցէ յերկիրն Սաբայիմ եւ բազումք տկարասցին (ժԱ. 40-41).

(370բ) **Արքայ հիւսիսոյ Անտիոքոս, որ բազում զաւրաւք // ոգորի ընդ արքայն Եգիպտոսի, եւ յաղթէ՝ խորտակելով զնոսա, եւ մտցէ ի սուրբ երկիրն Երուսաղէմի: Դարձեալ հուպ ի վախճան նեռինն ապստամբէ ի նմանէ թագաւորն հարաւոյ եւ շարժի ի վերայ «եւ թագաւորն հիւսիսոյ ընդ ծով եւ ընդ ցամաք, իսկ նա խորտակէ զամենայն, «եւ մտցէ յերկիրն Սաբայիմ, այս է՝ աստուածապաշտից**

\* Ընկալալ թրգմ. ամուրս:

<sup>19</sup> Վարդան, 276բ:

*ի սուրբ եկեղեցի, եւ առնէ հրաշս առ աչաւք, եւ յոլովք խաբին եւ տկարանան ի հաւատոյ»<sup>20</sup>:*

Եւ սոքայ իցեն, որ ապրիցեն ի ձեռաց Աորա Եդոմ եւ Մովսաբ եւ իշխանութիւն որդոցն Ամոնայ (*ԺԱ, 41ա*).

*ՅԱնտիրոքայ՝ վասն ամրութեան երկրին, եւ ի ձեռնէն՝ վասն ի Քրիստոս հաւատոցն:*

Եւ ձգեսցէ զձեռն իւր լերկիրն եգիպտացոց, եւ երկիրն եգիպտացոց ոչ եղիցի ի փրկութիւն, եւ տիրեսցէ ի վերայ գաղտնեաց ոսկոյ եւ արծաթոյ եւ ի վերայ ամենայն ցանկալեացն եգիպտացոց եւ լիբէացոց եւ եթոպացոց եւ յամուրս Աոցա (*ԺԱ, 42-43*).

*Սոցա տիրէ Անտոքոս վասն հարթ գոլոյ գաւառացն, եւ յափշտակէ զգանձս նոցա: Իսկ Նեոնն հարաւայինքս ամենայն հաւատան իբր յազգային, եւ կոչեն թագաւոր, եւ յուսացեալ ի նա ապրին, եւ տիրէ նոցա ընչից պատուականաց ոսկոյ եւ արծաթոյ, այսինքն՝ անապական հաւատոյ եւ մաքուր բանի եւ բարի գործոց ցանկալեացն յիւրն դարձեալ աղանդ եւ յաղտեղի գործս:*

Եւ ահա\* համբար եւ տագնապք ճեպեսցեն զՆա յարեւելից եւ ի հիւսիսոյ եւ եկեսցէ սրտմտութեամբ բազմաւ ապականել զբազումս, եւ հարցէ զխորան իւր յապարանս\* լԵփադոնն ի մէջ ծովուց ի լեառն սաբային սուրբ, եւ եկեսցէ միմչեւ ի կողմ մի Աորա, եւ ոչ ոք իցէ, որ փրկիցէ զՆա (*ԺԱ, 44-45*).

(371ա) *Ուսանիմք եւ զայս ի Բ գրոց Մակաբայեցոց, թէ, լուեալ համբաւ Անտիրոքոս, չոգաւ յարեւելս // ի Պարսիկս, եւ եկն յԱտրբատական եւ անպատուութեամբ դարձաւ, եւ ի ճանապարհին լուեալ զքաջութիւն Յուդայի բարկանայր եւ սպառնայր ապականել զհրեայսն եւ քակել զԵրուսաղէմ եւ անմարդի գնա առնել՝ հարկանելով զխորանն իւր անդ: Վասն որոյ հարեալ յաստուածասաստ բարկութենէ նեխեալ զազրահոտութենէ որդանց սատակեցաւ: «Իսկ Նեոն լուեալ համբաւ յարեւելից եւ ի հիւսիսոյ, թէ նոքա իսկ ապստամբեցին, եւ գա բարկութեամբ, եւ տեսեալ զբազմութիւն ամրանան ի ծովամէջս եւ ի կղզիս եւ յեկեղեցիս, զոր լեառն սուրբ Սաբայիմ ասէ հնազանդեցուցանել զնոսս»<sup>21</sup>:*

<sup>20</sup> Վարդան:

\* Ընկալլալ թրգմ. ապա:

\* Ընկալլալ թրգմ. չիք յապարանս:

<sup>21</sup> Վարդան:

## [ ԺԲ ]

Եւ ի ժամանակին յայնմիկ յարիցէ Միքայել իշխան մեծ, որ կայ ի վերայ որդոց ժողովրդեանքո (ժԲ 1).

*Առ Անտրոքաւ Յուդա Մակաբէ՝ զաւրացեալ<sup>1</sup> ի վերակացու հրեշտակէն Միքայելէ, իսկ վերջին ժամանակս յառնէ հրեշտակ յաւգնել ժուժկալիցն ի գթութենէն Աստուծոյ:*

Եւ եղիցի ժամանակ անդութեան, անդութիւն, որպիսի ոչ եղեւ, յորմէ հետեւ եղեւ ազգ ի վերայ երկրի միջեւ ի ժամանակն յայն (ժԲ 1ա)

*Ջայս. եւ «Տէրն ասաց, թէ այնպիսի նեղութիւն ոչ է եղեալ ի սկզբանէ աշխարհի եւ մի՛ այլ լիցի (Մատթ. ԻԴ 23, Մրկ. ԺԳ 19): Եւ ի ժամանակին յայնմիկ ապրեսցի ժողովուրդ քո ամենայն, որ գտցի գրեալ ի դպրութեան (Փիլիպ. Դ 35): Անդ մակաբայեցիքն եւ համախոհ նոցին՝ քահանայիցն: Իսկ աստ նոքա, զորս ետես Յոհանէս ի յայտնութեան Ճիւրի(1144) կնքեալ, որք մտանեն ի կարգ առաքելոցն, որոց ասաց Տէրն. «Խնդացէք, զի անուանք ձեր գրեալ են յերկինս» (Ղուկ. Ժ 20)՝ յանմոռաց յիշեցումն Աստուծոյ, զորս ընտրեաց յառաջ քան զլինելն աշխարհի»<sup>2</sup>, քանզի ոչ ընդունին զգիր անուան Նեոխնն ի ճակատիս իւրեանց (Յայտ. ԺԴ 1):*

Եւ բազումք ի անջեցելոց՝ ի հող երկրի՝ յարիցեան, ոմանք ի կեանս յաիտեանականս եւ ոմանք ի անխատիանս եւ յամալթս յաիտեանականս (ժԲ 2).

(371բ) *Մերկացոյց զբանս, թէ ասացեալքս ամենայն յաղագս Նեոխնն չարութեան են առ// որով ի յարութիւն լինելոց է: Բայց զի ոչ ասաց, թէ ամենայն ննջեցեալք յառնեն, այլ՝ բազումք, ըստ կարգի բանին այնպէս պատշաճեաց, զի «որք ի Նեոխնն մեռան վասն Քրիստոսի, յառնեն ի կեանս յաիտեանականս, եւ որք այլ պատճառաւ մեռանին՝ ի նմանէ առաւել խնդրելով պատիւ»<sup>3</sup> կամ հաւանելով նմա՝ յառնեն ի անխատիանս եւ յամալթս յաիտեանականս: «Իսկ զհասարակն Տէրն ասաց յառնել, որոց զբարիս գործեալ իցէ՝ յա-*

<sup>1</sup> զաւրաց. եալ-ը՝ լուսանցից՝ ուղղման նշանով:

\* նոցին. լուսանցից՝ ուղղման նշանով:

<sup>2</sup> Վարդան, 276բ-277ա:

<sup>3</sup> Վարդան:

րութիւն կենաց եւ որոց զչար արարեալ է՝ ի յարութիւն դատաստանաց (Յովհ. Ե 29), զի աւելի եւ պակաս մեղան՝ դատաստանաւ առնուն գտանջանան»<sup>4</sup>:

Եւ իմաստունքն ծագեցեն իբրեւ լուսաւորութիւնք ի հաստատութեան, եւ բազումք յարդարոց իբրեւ զաստեղս յաիտեմականս՝ եւ եւ (ԺԲ 3).

«Ձի եւս Քրիստոս յայտնեաց, թէ՛ «Արդարքն ծագին իբրեւ զարեգակ» (Մատթ. ԺԳ 43), եւ Պաւղոս, թէ՛ «Աստղ քան զաստղ առաւել է փառաւք զի ըստ լուսաւոր գործեացն լուսափայլին՝ պսակեալ լուսով» (Ա Կորնթ. ԺԵ 41):

Եւ դու, Դանիէլ փակեա զբանդ եւ կնքեա զգիրդ, մինչեւ ի ժամանակ վաղճանի, մինչեւ ուսցին բազումք, եւ բազմասցի գիտութիւն (ԺԲ 4).

Մինչ ի յետին ժամանակս, յորում կատարի բանքս, մի՛ ումեք յայտներ մինչեւ գայ իմաստութիւն Հաւր Յիսուս եւ իմաստնասցին բազումք, որոց ասաց. «Ձեզ տուեալ է գիտել զխորհուրդ արքայութեան» (Մարկ. Դ 11) եւ «Երանի աչաց ձերոց եւ ականջաց» (Մատթ. ԺԳ 16), զի գանձն որոց է՝ նոցա պահեսցի:

Եւ տեսի եւ՝ Դանիէլ, եւ ահա երկուք կային յայսկոյս եւ յայնկոյս գետոյն (ԺԲ 5).

Յայտ է՝ հրեշտակք երկուս կողմանս գետոյն, որք են նշանակք Բ(2) Կտակաց կամ աւրինաց եւ մարգարէից: Եւ գետն՝ Յորդանան կամ նշանակալ՝ ժողովուրդն, որ յեզր գետոյն, եւ տուիչ աւրինաց Քրիստոս»<sup>5</sup>, զոր եւ հարցանեն այժմ:

(372ա) Եւ ասեն ցայրն, որ զգեցեալ էր զբաղէնն եւ կայր ի վերայ ջուրց գետոյն մինչեւ. Մի՞նչեւ ցե՞րբ իցէ վախճան ժամանակի՝ // սքանչելեացդ, զոր ասացեր (ԺԲ 6).

Հարցին երկուքն, որ կային աստի եւ անտի իբր ի քահանայակետէ տեղեկանալ գիտելով, թէ՛ նմա տուաւ ամենայն իմաստութիւն եւ ամենայն խորհրդոց՝ եր՞բ իցէ վախճան սքանչելեացդ եւ «դատաստանք եւ խորհուրդք ե՞րբ կատարին»<sup>6</sup>:

<sup>4</sup> Վարդան:

\* Ընկալլալ թրգմ. յաիտեանս:

<sup>5</sup> Վարդան:

\*\* Ընկալլալ թրգմ. չիք ժամանակի:

<sup>6</sup> Վարդան, 277բ:

Եւ լուայ յառնէն, որ զգեցեալ էր զբաղէնն, եւ ւայր ի վերայ ջուրց գետոյն, ամբարձ գաջ իր եւ զձախ իր յերկինս, եւ երդուաւ ի կենցանին յաւիտեանից, եթէ ժամանակ եւ ի ժամանակս եւ ի կէս ժամանակաց\* (ԺԲ 7)

*«Կամեցաւ հաւատալի առնել զբանն խաչատարած բազկաւն ի Հայր ամբարձեալ ի կենդանին, իբր թէ երդնու որդին ի հայրն, որ յաւիտենական կենդանի է ի մեզ, թէ՛ ի ժամանակ, որ է տարի մի եւ ի ժամանակս Բ(2) տարի եւ ի կէս ժամանակաց՝ կէս տարի, այս է, ասէ, Նեոխնն ժամանակ, որ է ՌՄՀԸ (1278):*

Ի կատարել ցրման ձեռնն ժողովրդեանն սրբելոց ծանիցեմ գայս ամենայն (ԺԲ 7ա):

*Ձեռն ցրուաւ Նեոն է, ուստի ցրուին եւ փախչին եւ թաքչին ի չարէն այնքան աւուրս ի լերինս եւ ամրոցս կամ յորժամ նորա ձեռն տիրէ, այս է՝ իշխանութիւն, ցրուին բազումք ի պէս պէս մոլորութիւնս: Իսկ ժողովուրդն սուրբ, ի կատարել այսմ ամենայնի, ծնանիցէ զժամանակն: Այլ եւ հռոմայեցւոցն ցրուեցաւ աւրինակաւ:*

Եւ ես Դանիէլ լուայ, եւ ոչ առի ի միտ, եւ ասեմ. Տէր, զի՞նչ է վախճան այդոցիկ (ԺԲ 8):

*Ոչ համարի ամաւթ զգիտելն եւ կամ վաստակ՝ զուսանելն՝ յամաւթ ընդդիմակացն, որք ամաչեն ի չգիտելն եւ տաղտապին ի յուսանելն»՝:*

*Բայց զո՞յս ասէ, թէ՛ լուայ եւ ոչ առի ի միտ. թուի, թէ զժամանակ Նեոխնն, զի լուաւ զորչափն, բայց զե՞րբն ոչ ծանեաւ: Վասն այնր հարցանէ եթէ ե՞րբ է վախճանն:*

Եւ ասէ, Երթ, Դանիէլ, զի արգելեալ է եւ կնքեալ է բանքն մինչեւ ցվախճան ժամանակի\* (ԺԲ 9):

(372բ) *Խնայելով ի նա, զի մի՛ աշխատիցի ի գիտելն, ասէ, // արգելեալ է եւ կնքեալ. հանգոյն է այնմ, թէ՛ «Ոչ է ձեզ գիտել զժամս եւ զժամանակս, զոր Հայր եդ յիւրում իշխանութեան» (Գործք Ա 7): Դարձեալ կնքեալ է մինչ ի լրումն աշխարհի, որ յայտնապէս գրե-*

\* Ընկալլայ թրգմ. ժամանակի:  
 7 Վարդան, 277բ:  
 \* Ընկալլայ թրգմ. ցժամանակ վախճանի:

ցաւ ի տախտակի, եւ եղաւ ի վերայ Խաչին, թէ՛ «Սա է թագաւորն հրէից» (Մատթ. ԻԷ 37, Յովհ. ԺԹ 19): Եւ արեգակն եւ լուսին եւ տիեզերք վկայեցին, թէ ամենայն երկրի Աստուած է, եւ այնմհետէ քարոզեցին հովիւք եւ ձկնորսք եւ մաքսաւորք եւ տղայք եւ կանայք եւս:

Ընտրեացիս եւ սպիտակացիս եւ փորձեացիս եւ սրբեացիս բազումք (ԺԲ 10).

Ձժամանակն ոչ ասաց, այլ զպատճառ նեղութեան յայտնէ, թէ՛ վասն այնորիկ լիցի, զի ընտրեացիս եւ սպիտակացիս բազումք եւ սրբեացիս ի բաց. «նոքա, որ սպիտակացուցին զարկանելիս իւրեանց արեամբ Գառինն, ըստ Յոհաննու (Յայտ. Է 14) պէս-պէս փորձանաւք զմարմինն անհետ եւ անսպի առնել ի մեղաց, եւ արիւնն Աստուծոյ աստուածափայլ եւ ճառագայթաւէտ գործէ՞»:

Եւ անարիւնեացիս արեւքն\* եւ ոչ ի միտ առնուցում անբարիշտք (ԺԲ 10ա).

Սրբոցն պայծառութիւն յայտնի եւ անարիւնացն՝ անաւրէնութիւն, քանզի անարեւն նախ հրեայքն, «որք խաչեցին զՏէրն եւ ոչ ըստ աւրինացն, եւ ապա աւրէնքն անաւրինին ի Նեռնէն»<sup>9</sup>, եւ անբարիշտք ոչ առնուն ի միտ, եթէ նա է որդին կորստեան (Թեաաղ. Բ 3):

Եւ իմաստունք իմացիս ի ժամանակէ փոփոխմանն յաճախութիւն\* (ԺԲ 10բ).

Չոր անբարիշտքն ոչ ճանաչեն, ասէ, իմաստունք մտաւք իբր զկուսանսն եւ զտնտեսն եւ զչինոզ տանն ծանիցեն զՆեռն եկեալ յաշխարհ ի ժամանակէ նեղութեան յաճախութեան եւ ի փոփոխմանէ կրաւնիցն այլանդակութեան, եւ զգուշանան անձանց եւ բազմաց:

Եւ տացի պղծութիւն ւաւրածին ւաւրս ՌՅ(1300) եւ ԼԵ(35), եւ երանի որ համբերեացէ եւ հասցէ յաւորսն ՌՅ(1300) եւ ԼԵ(35) (ԺԲ 11-12).

<sup>8</sup> Վարդան, 277բ:

\* Ընկալլալ թրգմ. անարեւնք:

<sup>9</sup> Վարդան, 278ա:

\* Ընկալլալ թրգմ. յաճախութեան:

(373ա) «Նախ պղծութիւն ապականութեան ասաց զպատկերսն զոր // կանգնեաց Անտիոքոս եւ զոր ինքն իսկ: Եւ դարձեալ պղծութիւն է Նեոն ինքն, որ աւերէ զերկիր այսչափ աւուրս»<sup>10</sup>: Բայց գիտելի է, զի աւուրք Նեոնն է Գ(3) ամ եւ կէս, որ է ՌՄ (1200) եւ ՀԸ(78), ուստի ոմանք Ռ(1000) եւ ԼԵ(35) ասեն, եւ զպատճառն, զի յաւելի եւ պակաս գայ, ի լուսնոյն դնեն: Այլ ինձ այսպէս թուի. որպէս ի գիրս կարգեալ է ՌԽ(1300) եւ ԼԵ(35), եթէ զՆեոնն ասէ, զի յետ ՌՄ(1200) եւ ՀԸ(78) աւուր անցանելոյ ԾԷ(57) աւր ընդ մէջէ կամ տարի, եւ լինի գալուստն Տեառն, զոր տեսանէ մարգարէս, եթէ յաւուրսն յանոսիկ, որպէս զի լիցի յերեւմանէ Նեոնն մինչեւ ի փրկութեան աւր այսչափ թիւ, որպէս ասաց մարգարէս: Եւ դարձեալ ոչ զՆեոնն ժամանակ թուէ աստ, քանզի զայն ի վեր անդ ասաց, այլ թուէ յառաջին գալստենէն Տեառն այսչափ ամ, յորում կարապետք Նեոնն ըստ վարդապետութենէն եւ առաքելոցն հալածեն եւ չարչարեն՝ վշտացուցանելով զեկեղեցի, կէղեքելով զկեանս քրիստոնէից հոգեպէս եւ մարմնապէս, որպէս տեսանեմք այսաւր: Իսկ ի լրմանց ամաց, նախ քան զգալ Նեոնն, անդորրանայ եկեղեցի ի խաղաղանայ առ ժամանակ մի, եւ բարձրի գայթակղութիւնք եւ այլասեռիցն կրաւնք եւ հերձուածողաց խափանեսցի, եւ Աւետարանն պայծառանայ ընդ ամենայն տիեզերս, եւ եկեղեցի բարձրանայ, եւ ապայ յետոյ երեւի Նեոն եւ լիցի լրումն աշխարհի:

Արդ, ի գրեալս մեր գմեկնութիւն թուոյս, էր թիւն Տեառն, ըստ մեզ՝ մարդեղութեան ՌՅ(1300) եւ ԺԶ(16) ամ, եւ յորժամ այս հասանէ յերեսուն եւ հինգն\*, զի է պակաս ԺԹ(19) ամ, կատարին ասացեալ երանութիւնքս ի մարգարէս ի վերայ համբերողաց: Եւ զու եթէ ժամանեսցես ի թիւն յայն եւ տեսցես զբարութիւն եկեղեցւոյ, յիշեսցես եւ զնուաստս Յոհան Եզնկեցի, որ եւ

(373բ) Ծործորեցի, զի ես այսպէս գթիւս գայս մտածեցի: Եւ եթէ // ոչ լիցի այս՝ ընկալ զառաջին ասացեալն ի սրբոցն, որ վասն աւուրց Նեոնն եւ զմեզ ազատ ի պարսանաւաց արասցես: Իսկ զի ասէ, թէ՛ երանի որ համբերեսցէ հաւասար է Տեառն ձայնին, թէ՛ «որ համբերեսցէ ի սպառ՝ նա կեցցէ» (Մատթ. ԻԴ 12): «Քանզի յայսքան աւուրս զԵգիպտոս եւ զամենայն երկիրն Լիբիայ աւերէ եւ զՏիւ-

<sup>10</sup> Վարդան, 278ա:

\* հիմկն:



րոս եւ գյուղով կղզիս, զԵրուսաղէմ շինէ եւ զտաճարն կանգնէ, եւ զամենայն գաւառս հրէիցն ի ծառայութենէ ազատէ, եւ առ ինքն ժողովէ, եւ ոչ կայ յայնր վերայ որպէս նախ\* ասաց:

Եւ դու եկ հանգիր, զի տակաւին եմ աւուրք եւ ժամանակ ի կատարումն վախճանի, եւ հանգիցես եւ յարիցես ի ժամանակի քում ի վախճանի աւուրք (ԺԲ 13).

«Զի մահ սրբոցն առ Աստուած գնալ է, ըստ առաքելոյ»<sup>11</sup>, թէ՛ «Լաւ համարիմ ելանել ի մարմնոյ աստի եւ մտանել առ Աստուած» (Բ Կորնթ. Ե 8), այլ եւ հանգիստ եւս ի վշտաշատ կենցաղոյս վրդովմանց, ըստ Յորայ, թէ՛ «Մահ մարդոյ հանգիստ է» (Յովբ. Գ 22): Եւ զի մարդ էր Դանիէլ եւ որդի մարդոյ եւ այր ցանկալի, որպէս ի բազում տեղիս կոչեցաւ, այժմ ասէ, թէ՛ Եկ եւ հանգիր ի տառապանաց, զի տակաւին աւուրք գոն մինչ ի կատարումն վախճանի, յորում եւ դու յարիցես յետ հանգստեան ի վախճան ժամանակի՝ ծագելով իբր զարեգակն ըստ տեսեանդ քո: Միանգամայն եւ հաստատէ զհասարակաց յարութիւն յարութեամբ մարգարէիս:

\* Նախ՝ լուսանցից ողորման նշանով:

<sup>11</sup> Վարդան, 278բ:

[ ԺԳ ]

Եւ թագաւորն Աստիագէս լաւելաւ առ հարս իւր եւ ա՛ն Կիրոս պարսիկ զթագաւորութիւնն նորա (ԺԳ 65)\*

*Սա «զկնի Դարեհի ունէր զմարս եւ զԲաբելոն, յորոյ մեռանելն առ զԹագաւորութիւնն Կիրոս ո՛չ առանց մեծ պատերազմի, թէպէտ մարգարէս համառաւտ անցանի՝ ժամանակ յայտնելով եւ պատճառ իւրոյ առաքինանալոյն»<sup>1</sup>, այլ սպանեալ ի Կիրոսէ, որպէս կանխաւ ասաց Երեմիայ:*

(374ա) Եւ Դանիէլ էր կենաց //կցորդ թագաւորին եւ փառաւոր քան զամենայն բարեկամս իւր (ԺԳ 1).

*Գլխաւոր կարգեալ ի Դարեհէ ձի(120) նախարարացն եւ երից վերակացուացն վասն անհամեմատ իմաստութեան: Եւ այսպիսի պատուով եկն մինչեւ ի Կիրոս, եւ եւս առաւել ի նմանէ սիրեցեալ եւ փառաւորեալ քան զամենայն զաւրս իւր:*

Եւ էին կուռք մի բարիլացոց անուն Բէլ, եւ էլանէր նմա ոռճիկ ատր միոջ անշիմ՝ Բժ(12)ան արդու եւ Խ(40) ոչխար, եւ գինի Չ(6)մար: Եւ թագաւորն պաշտէր զնա եւ երթայր հանապազ երկիր պագանէլ \*\* նմա: Բայց Դանիէլ պագանէր յերկիր Աստուծոյ իւրում (ԺԳ 2-3).

*Կուռքս այս այն է, զոր կանգնեաց Նաբուգոդոնոսոր, զի զայն քակեաց Կիրոս՝ գիտելով, թէ Նաբուգոդոնոսոր կանգնեաց, այլ զայսմանէ ասէին, թէ սկզբնատիպ է նորա, յորոյ քրմանցն խաբեալ թագաւորն տայր այսքան ոռճիկ ի կերակուր անարար եւ զոհս եւ զնուէրս ուտէ եւ ըմպէ, եւ ինքն երթայր յերկրպագութիւն: Իսկ Դանիէլ գիտէր, զի սնտտի ունէր զանունն, ճշմարտին Աստուծոյ զերկրպագութիւն ընձեռէր:*

Եւ ասէ ցնա թագաւորն. Դու ընդէ՞ր ոչ պագանես երկիր Բելայ (ԺԳ 3ա).

\* Շար. ԺԳ 64-ի:

<sup>1</sup> Վարդան, 278բ, որ սակայն առանց մեծ փյն. ոչ առանց մեծ:

\*\* Ընկալլալ թրգմ. պագանէր:

*Նախանձեալ ընդ փառաւորութիւնն Դանիէլի մատնեցին Կիւրոսի, որպէս երբեմն՝ զանանիանսն՝ Նաբուգոդոնոսորայ: Բայց Կիւրոսս ոչ էր իբրեւ Նաբուգոդոնոսոր հպարտ եւ անմիտ, այլ յոյժ խոհեմ եւ կորովամիտ, վասն որոյ հարցանէ, թէ՛ ընդէ՞ր ոչ երկիր պագանես Բելայ՝ իբր զսնտի՞ համարելով թէ՞ զպաշտաւնս եւ զհրամանս մեր քամահելով:*

Եւ նա ասէ. Քանզի ոչ պաշտեմ զկոտու ձեռագործս, այլ զԱստուածն կենդանի գարարիչն երկնի եւ երկրի, որ ունի իշխանութիւն ամենայն մարմնոյ (ԺԴ 4).

(374բ) *Իմաստութեամբ պատասխանի ետ, թէ՛ ո՛չ պաշտեմ զկոտու ձեռագործս, որպէ՛ս թէ ասել, թէ պաշտել է, զարուեստաւորն պարտ է պաշտել եւ ոչ՝ զնիւթո՞ւ ի ձեռաց նորին եղեալ պատկերն: Իսկ եւս ոչ զձեռնարուեստն եւ ոչ զարարեալն, այլ՝ զԱստուած յաւիտեանց կենդանին պաշտեմ, որ արարիչ է արուեստաւորին եւ նիւթոյն, համայն երկնի եւ երկրի, եւ «ո՛չ ուտէ եւ ո՛չ ըմպէ եւ ո՛չ քաղցնու, եւ անեղ է եւ արարիչ ամենայնի, զի աստուածք, որ զերկինս եւ զերկիր ոչ արարին, կորիցեն»<sup>2</sup>: Եւ ոչ միայն այս, այլ եւ իշխանութիւն ունի դատելոյ զամենայն մարմին: Իսկ Բէլ ոչ միայն ոչ դատէ, այլ եւ մեռեալ ամենեւին եւս է եւ նիւթ անշունչ:*

Եւ ասէ ցնա թագաւորն. Իսկ Բէլ ո՞չ թոյի քեզ թէ իցէ Աստուած կենդանի, եթէ ո՞չ տեսանես, թէ որչափ ուտէ եւ ըմպէ համապազ (ԺԴ 5).

*Չայս կամի ստուգել, զի ասաց Դանիէլ, թէ՛ զԱստուած կենդանին պաշտեմ, իսկ արքայն ասէ, թէ՛ Բէլ ո՞չ իցէ Աստուած կենդանի, զի ահաւասիկ ուտէ. զկենդանութիւնն նշանակէ հանապազ զԱստուածութիւնն:*

Եւ ասէ Դանիէլ ծիծաղելով. Մի՛ խաբիր արքայ, զի դա է ի ներքոյ կաւեայ եւ արտաքոյ պղինձ\*, ոչ կերեալ դորա երբեք եւ ոչ արբեալ (ԺԴ 6)

*Ծիծաղելն զախմարութիւն արքային նշանակեաց, թէ խաբեալ է՝ ոչ զիտելով, թէ կաւեղէն է պատկերն՝ աւծեալ պղնձով:*

<sup>2</sup> Վարդան:

\* Ընկալլալ թրգմ. պղնձի:

Բարկացեալ թագաւորն կոչեաց զքորսն նորա եւ ասէ ցնոսա թագաւորն. Եթէ ոչ ասիցէք ինձ, եթէ ով ուտէ զսեղանն զայն, մահու մեռանիցիք, ապա թէ յայտ առնիցէք, եթէ զայն ամենայն Բէլ ուտէ, մեռանիցի Դանիէլ, զի հայհոյեաց զԲէլ: Եւ ասէ Դանիէլ ցթագաւորն. Եղիցի ըստ բանի քում (ԺԴ 7-8).

(375ա) *Յորժամ ասաց Դանիէլ, թէ ոչ ուտէ, կամեցաւ զայն արքայն ճշմարիտ գիտել եւ իրաւունք վճուի հա//տուցանել, զի թէ ոչ ուտէ՝ նոքին մահապարտք են, եւ թէ ուտէ՝ Դանիէլ մեռցի, զի հայհոյիչ եղեւ Բելայ, որոյ իրաւանցն հաւանեալ Դանիէլ եւ յարդարութիւն խաւսիցն իւր վստահացեալ իբրեւ զառիւծ՝ այդպէս եղիցի, ասաց:*

Եւ էին քորմք Բելայ Հ(70), թող զկանայս եւ զմանկտի. Եւ եկն թագաւորն Դանիէլի հանդերձ ի տուն Բելայ (ԺԴ 9).

*Վասն որովայնամոլութեան միանգամայն եւ պղերգացեալքն ի գործոյ սպասաւորէին կոոցն յագեցուցանել զանձինս եւ կանանց եւ մանկանցն յարքունի ռոճկացն, զոր ի պատճառս Բելայ առնուին, յորում եկն թագաւորն Դանիէլիւ հանդերձ ի տաճար կոոցն ստուգել զիրն:*

Եւ ասեմ քորմք Բելայ. Ահաւասիկ մեք արտաքս ելցուք, եւ դու արքա դիր առաջի դորա զկերակուրսդ եւ զգինիդ խառնեալ դիցես, եւ փակեա զդուրսդ եւ կնքեա մատանեալ քո, եւ եկեալ ընդ առաւատս, եթէ ոչ գտցես զայդ ամենայն կերեալ Բելայ մեռցուք մեք, ապա եթէ ոչ՝ Դանիէլ, որ սուտ խաւսեցաւ զմէնց: Եւ նոքա վստահ էին, զի արարեալ էին ընդ սեղանովն մուտ անյայտ, եւ ընդ այն մտանէին հանապազ եւ ուտէին զայն (ԺԴ 10-12).

(375բ) *Կարծէին, թէ որպէս զմարդ խաբեն, այսպէս եւ զԱստուած, եւ զձածկատես հոգիւնկալն Դանիէլ ասացին զայս: Եւ զի թէպէտ գոյր առ այս, եթէ ուտէ՝ ընդէ՞ր ոչ ի ցերեկի, այլ՝ ի գիշերի: Ինձ թուի, թէ զայս պատճառէին, թէ վասն զի Աստուած գոլով Բէլ՝ մատակարարէ զաշխարհ ի տուէ զպէտս նորա՝ ընձեռելով արեւ եւ անձրեւ, աճումն բուսոց եւ կենդանեաց, իսկ ի գիշերի ի հանգստեան մարդկան պարապի ի ճաշ համայն եւ անքուն զնա այսու ցուցանելով //: Արդ, զայս գիտելով ի նոցանէ ասացեալ ոչ ինչ ասաց յայսցանէ մարգարէն մինչեւ արդեամբք խայտառակեսցին: Իսկ նոքա, զի վստահ էին յարարուածս իւրեանց՝ զմահ յանձն առին:*

Եւ եղև իբրև ելին անքա արտաքս եւ թագաւորն եղ զկերակուրն առաջի Բելայ, եւ հրաման ետ Դանիէլ իւրում մանկտույ, եւ բերին մոխիր եւ ցանեցին ընդ ամենայն մեհեանն առաջի թագաւորին միայնույ, եւ ելեալ արտաքս փակեցին զդուրսն եւ կնքեցին մատանեալ թագաւորին եւ գնացին: Եւ քուրմքն մտին ի գիշերի, ըստ սովորութեան իրեանց, կանամբք եւ որդուովք իրեանց կերան զամենայն եւ արբին եւ ոչ ինչ թողին (*ԺԴ 13-14*)

*Թէպէտ նշանակի վասն ցանեաց զմոխիրն յատակս մեհենին, զի ըմբռնեսցին գողքն, բայց յայտնեաց եւ զայն, թէ մոխիր է պաշտելիքն եւ սիրտ պաշտողացն, ըստ Եսայեայ (հմտտ. Եսայի 10Դ 20):*

Եւ կանխեաց թագաւորն ընդ առաւաւտն հանդերձ Դանիէլիւ, Ո՞ղջ եմ կնիքդ, Դանիէլ, եւ ասէ ողջ եմ\*, արքայ: Եւ եղև ընդ բանալ դրանցն հայեցեալ թագաւորին ընդ սեղանն, ի ձայն մեծ աղաղակեաց. եւ ասէ. մեծ ես, Բէլ եւ ոչ գոյ անգութիւն ի քեզ եւ ոչ մի (*ԺԴ 15-17*).

*Ի սեղանն հայեցեալ դատարկացեալ եւ ոչ ՚ ի խաբէութիւն, վասն այնորիկ ասաց, թէ՛ ճշարիտ ես Բէլ կենդանի եւ զուր բանբասեն զքէն:*

Եւ ծիծաղեցաւ Դանիէլ եւ կալաւ զթագաւորն, զի մի մտանիցէ ի անքս, եւ ասէ. աղէ, հայեաց ընդ յատակսդ, եւ տես ո՞չք է հետդ այդ: Եւ ասէ թագաւորն. Տեսանեմ հետ արանց եւ կանանց եւ մանկտույ: Յայնժամ բարկացեալ թագաւորն կալաւ զքուրմսն եւ զկանայս եւ զորդիս անցաւ եւ ցուցին անա զգաղտնի դուրսն, ընդ որ մտանէին եւ ծախէին զսեղանն: Եւ կոտորեաց զնոսա թագաւորն եւ զԲէլ ետ ի ձեռս Դանիէլի եւ կործանեաց զմեհեանն անորա //:

(376ա)

*Յորժամ յայտնեաց զծածուկ խաբէութիւն քրմացն\* հետոցն նշանաւք, յայնժամ իմացեալ թագաւորն խոշտանգեաց տանջանաւք մինչեւ խոստովանեցան եւ ապայ իրաւամբք կոտորեաց՝ առնլով զվրէժ ռոճկացն, զոր նենգութեամբ ուտէին: Իսկ զԲէլ ետ ի ձեռս Դանիէլի, զի առցէ զվրէժ Աստուծոյ իւրոյ ի սնտաի դիցն, զոր եւ քակեալ կործանեաց եւ արահետ արար զտեղին, եւ փառաւորեցաւ յԱստուծոյ եւ ի մարդկանէ, զի փառաւորէ Աստուած զփառաւորիչս իւր, գրեալ է (Ա. Թագ. Բ 30):*

Եւ էր վիշապ մի մեծ եւ պաշտէին զնա քաղաքացիքն (*ԺԴ 22*):

---

\* է:  
\* քրմանցն:

«Ոմանք ասեն թէ պարսից էր վիշապն պաշտելի եւ յետոյ պաշտէին քաղղէացիքն»<sup>3</sup>, յորժամ տիրեցին պարսիկք, եւ այլք թէ՛ քաղղեացիքն պաշտէին, զի աստեղաբաշխութիւն անդ գտեալ եղեւ, եւ զաստեղս երկնից Ռաստ եւ Ջանապ կոչէին, որ է տուտն եւ գլուխ վիշապին<sup>4</sup> յորոյ նմանութիւն եւ կենդանի վիշապին զոհէին՝ իբր թէ ամենայնի պատճառ վիշապն է յերկինս: Եւ կէսք ասեն, թէ անմտացեալ քաղղեացիքն համբաւէին զյովան\* վիշապէն, թէ նա ուսոյց բանականութիւն եւ զամենայն արուեստից եւ լեզուաց ճարտարութիւն, եւ այնու պատրէին զթագաւորն:

Եւ ասէ թագաւորն ցԴանիէլ. Միթե՞ եւ զդմանէ առիցես, թէ պղինձ է՞ ահաւասիկ կենդանի է, ուտէ եւ ըմպէ եւ ոչ կարիցես ասել, թէ չիցէ Աստուած կենդանի, արդ եկ պագ դմա երկիր (ժԴ 23).

*Քանզի յոյժ սիրէր զԴանիէլ, ուստի եւ առաւել սիրոյն ողորձէր զնա իբրեւ կենաց կցորդ, եւ ասէր, թէ զԲէլ խորտակեցեր յիրաւի էր, զի անշունչ էր, իսկ վիշապս զի ուտէ եւ ըմպէ, արդ, հաւասարեա ինձ ի պաշտաւնն, զի այնպէս կարծէր, թէ որ// ուտէ եւ ըմպէ Աստուած է կենդանի:*

Եւ ասէ ցնա Դանիէլ. եւ Տեսոն Աստուծոյ իմոյ երկիր պագանեմ, զի նա է Աստուած կենդանի (ժԴ 24)

Ոչ ամենայն կենդանի ասէ Աստուած է, որպէսզի երկիր պագանիցեմ, այլ Տէր Աստուած է ճշմարիտ Աստուած կենդանի, զի ոչ է առեալ յուժեքէ զկենդանութիւն, եւ ոչ է հնար ի բաց դնել զյաւիտենական կեանս, այլ եւ այլոց տա կեանս: Իսկ վիշապդ ոչ միայն ի նմանէ է շնացեալ, այլ լուծանելոց է մահուամբ: Եւ ոչ այս միայն, այլ եւ թշնամի եղեւ պատկերին Աստուծոյ եւ բնակարան սատանայի, եւ անիծեցաւ եւ հրամայեցաւ սպանանել եւ ոչ պաշտել եւ թէ ոչ հաւատաս՝ տուր ինձ հրաման եւ սպանից:

Բայց դու արքայ, տուր ինձ հրաման եւ սպանից զվիշապդ առաջի քո առանց սրոյ եւ գաւազանի (ժԴ 25).

<sup>3</sup> Վարդան:

<sup>4</sup> Մինչդեռ Վանական վարդապետի եւ Վարդան Արեւելցու երկերում Ռաստը եւ Ջանապը ոչ թե աստղեր, այլ ամպեր են. («Յաղագս տարեմտին՝ ի Վանական վարդապետէ ասացեալ». տես Լեւոն Խաչիկեան, Աշխատութիւններ, Գտ. Ա, Եր., 1995, էջ 184 տ. 13-15, 189 ծնթ. 12), որոնք Վարդան Արեւելցու եւ Դովիաննես Ծործորեցու մոտ տվյալ դպքում նշանակում են վիշապի գլուխ եւ պոչ:

\* Չիք ՆԲԳ:

*Միայն հրաման տուր ասէ եւ զանճոռնի զազանդ սպանից կերակրով, որպէս դա զմեզ՝ առանց սրոյ եւ գազանի:*

Եւ ասէ թագաւորն. Տոնալ է քեզ: Եւ առ Դանիէլ ձիւթ եւ ճարպ եւ մագ եւ եփեաց ի միասին, եւ արար գնդակս եւ եհար ի բերան վիշապին, եւ իբրեւ կերու պայթեաց վիշապն, եւ ասէ. Տեսէք զպաշտամունս ձեր (ԺԴ 26)

*«Իբրեւ առ հրաման սպանել գլխոյն, մատեաւ երիս նիւթով արարեալ զնդակս ձիւթ եւ ճարպ եւ մագ. զճարպն խանձարար ձիւթոյն եւ մագոյն, զոր ոչ էր սովոր ուտել, եւ առ ժամայն հերձաւ՝ նկարելով զաւրինակ Տեառն մերոյ, որ զբնութիւնս առեալ՝ հոգի, մարմին, միտք՝ խանձ, որով սովորաբար սատանայ կերակրէր եւ լնոյր զդժոխս, յորմէ խաբեալ ձեռն արկէր հրէիւքն սպանանել զնա, իսկ նա յաւանդել հոգւոյն, պատառէր զորովայն իւր՝ զդժոխս, եւ զյառաջագոյն կլեալսն ազատէր ի նմանէ՝ աստուածացեալ մարմինն յառնելով յաւուր երրորդի՝ անխախտ եւ կնքեալ թողլով// զգերեզմանն՝ վկայ աստուածեղէն եւ կուսական ծննդեանն<sup>5</sup>:*

Եւ եղև իբրեւ լուսն բարիլացիքն, բարկացան յոյժ եւ կուտեցան ի վերայ թագաւորին, եւ ասեն. հրեայ եղև թագաւորն, զԲէլ կործանեաց եւ զվիշապն եսպան եւ զքորսնսն կոտորեաց: Եւ իբրեւ եկին առ թագաւորն, ասեն\* . Տուր մեզ ի ձեռս զԴանիէլ, ապա թէ ոչ սպանանենք զքեզ եւ զտունս քո (ԺԴ 27-28).

*Ներկեալ եւ արմատացեալք էին ի չարն բարիլացիքն փոխանակ հաւատալոյ ի հրաշալի գործն, այլ եւս չար խորհին, զի ընտրեցին աւր մի, յորում ոչ էին զաւրք թագաւորին առ ընթեր նմին եւ ոչ մեծամեծք իւր առ իւր, կուտեցան ի վերայ եւ ասեն սպանուալով. Տուր մեզ զԴանիէլ եթէ ոչ՝ եղեր հրեայ իբրեւ զնա, եւ ոչ տաս՝ սպանցուք զքեզ եւ զնա:*

Իբրեւ տես թագաւորն, թէ կարի տագնապեն գնա, հարկաւ ի ձեռս Անուս եւ զԴանիէլ (ԺԴ 29).

*Ջարհուրեցաւ, զի այն, ինչ էր առեալ զթագաւորութիւն միանգամայն եւ յԱստուածն Դանիէլի յանձն արարեալ զնա, եւ ի ձեռն նոցա, թէպէտ ոչ կամէր վասն սիրելոյն զնա:*

<sup>5</sup> Վարդան, 279ա:

\* Ընկալլալ թրգմ. ասեն ցթագաւորն *փիս*. առ թագաւորն, ասեն:

Եւ անքա արկին գնա ի գուրն առիծուց, եւ անդ էր զվեց ար (ժԴ. 30).

«Ի նմին ժամու արկին ի գուրն, զի կամեցան չարամահ առնել զնա՝ զվեց ակր պահելով անդ ի մէջ Է(7)-ից առիւծուց»<sup>6</sup> : Բայց գիտելի է, զի «կրկին է այս Դանիէլի արկանել ի գուրն առիւծուց՝ յաւրինակ Տեառն, զի կրկին գուրն եմուտ, զի ոչ թողաւ ոգի նորա ի դժոխս եւ ոչ մարմին նորա ետես զապականութիւն (Սաղմ. ԺԵ 10, Գործք Բ 27), որ եւ քան զառիւծ ահագինք էին՝ մահ եւ ապականութիւն, որք ոչ կարացին զատամուկնս իւրեանց մերձ ի նա տանել, որոյ ստուերագրութիւն էր Դանիէլին: Եւ զառաջինն (377բ) կնքեաց թագաւորն մատանեալ, զի մի արտաքուստ դժբեցի // եւ աստ ոչ կնքի, զի յարտաքուստ դժբանաց առիւծքն պահէին զսուր եւ զքար՝ յինքեանս առնելով, թէ յանդգնէր ոք բնաւ եւ անդ ակր մի եկաց, զի «Ռ(1000) ամ յաչս Տեառն իբրեւ զակր մի է» (Սաղմ. ԶԹ 4), յորում մեռաւ Ադամ, եւ զոգին ոչ կարաց սպանանել մահն, զի կիսապատիժ եղեւ բնութիւնս գթութեամբ Տեառն, զոր ոչ արար լրմամբ զպատուհասն, թէ՛ «յորում ակուր ուտիցէք՝ մահու մեռանիցիք» (Ծանդ. Բ 17): Եւ աստ Զ(6)ակր եկաց ի մէջ Է (7)ից առիւծուց՝ զվեց դարն նշանակեալ, յորում յամեաց բնութիւնս ի դժոխս Զ(6)ակրեա արարած, որ ապականեցաւ Զ(6)չարժամբ: Իսկ զի զԶ(6) ակր անվնաս եկաց, զի ի բարին ունէր Դանիէլ զչարժումն անապական մնաց յառիւծուցն, որպէս անանիանքն՝ ի հրոյն եւ Պաւղոս՝ յիժին խածանելոյն (տե՛ս գործք ԻԸ 3), զոր Ադամայ ետ զչնորհն եւ յետ մեղացն առ զնոյնն եւ յանմեղ մնալ որդւոցն՝ ոչ արգել, այլ՝ իշխել արարածոցս բոլորից եւ մասանց, որպէս Մովսէս եւ Եղիայ, Յեսու եւ Եգեկիայ»<sup>7</sup>:

Եւ էին ի գրին Է(7) առիւծ եւ տային անցա հանապազ երկու մարդս եւ երկուս պատրուակս, բայց յայնժամ ոչ ինչ արկին անցա, զի վաղվաղակի կերիցեն գ՛հանիել (ժԴ. 31).

Տես զնոցա չարութիւն, զի թէ հեղձուցանելոյ էին եւ ոչ կերակուրն արգելել կարէր զգագանսն: Բայց նոքա եւ ոչ զսովորական ռոճիկն ետուն, զի վաղվաղակի կերիցեն, որով յոչ ուտելն Աստուծոյ հրաշագործութիւն եւ մարգարէին մաքրութիւն առաւել զարմանալի լիցի:

<sup>6</sup> Վարդան:

<sup>7</sup> Վարդան 279բ:



Եւ էր Ամբակում մարգարէ ի Հրեաստանի եւ եփեաց թան եւ բողեաց հաց ի կուր, եւ երթայր յանդ՝ տանել մշակաց իւրոց: Եւ ասէ հրեշտակ Տեառն ցԱմբակում, Տար զճաշդ, զոր ունիս, ի Բաբիլոն Դանիէլի ի գուր առիծուցն: Եւ // ասէ Ամբակում. Տէր զԲաբիլոն իմ չիք տեսեալ եւ զգուրն ոչ գիտեմ՝ ուր իցէ (ԺԴ.32-34).

*Կրկին հրաշիւք կամի պատուել զմարգարէն Աստուած ոչ միայն ի գազանացն անփորձ պահելով, այլ եւ ի հեռի աշխարհէ եւ յընտել ազգէ մարգարէիւ զմարգարէ կերակրելով, քանզի ասէ ցԱմբակում. Տար զճացդ, զոր բրդեցեր յամանողդ, Դանիէլի ի գուրն, քանզի եւ նա մշակ է աւրինացն Աստուծոյ: Եւ Ամբակում ոչ ասէ, թէ՛ ոչ տանիմ, զի ոգիք մարգարէից մարգարէից հնազանդին, այլ գտեղին անգիտանալով խնոստովանի յայտնապէս:*

Եւ բուն եհար հրեշտակն զգազաթանէ նորա եւ կալաւ զվարսից զիսոյ նորա եւ եդ զճա ի Բաբիլոն ի վերայ գբոյն սաստկութեամբ հոգույն իւրոյ: Եւ աղաղակեաց Ամբակում եւ ասէ. Դանիէլ, Դանիէլ, առ զճաշդ, զոր առաքեաց քեզ Աստուած (ԺԴ.35-36).

*Նման Փիլիպպոսի (տե՛ս Գործք Ը 26-29) եւ կամ Եզեկիէլի, զոր վերացոյց Հոգին եւ եդ ի մէջ դաշտին (տե՛ս Եզեկ. ԼԷ 1), վերացոյց հրեշտակն զԱմբակում եւ եդ ի Բաբիլոն սաստկութեամբ Հոգւոյ իւր, այսինքն՝ զաւրութեամբ ուժոյ իւրոյ կամ սաստկացոյց զընթացս Հոգին Ամբակումայ, քանզի այսպէս թարգմանի Ամբակումդ՝ հայր արի, քանզի յարեալ համբարձմամբ Հոգւոյն փութանակի: Բայց նշանակէր համբառնալն հրաշիւք եւ փութով դառնալն զփութով դարձն հրէից ի Բաբիլոնէ, զի այն ինչ թագաւորել Կիւրոս հրաման տայր յամենայն յերկիր եւ ոչ միայն ի Բաբիլոն արձակել զգերին, այլ եւ՝ զյափշտակելն արդարոց ի ձեռն հրեշտակաց ի հանդիպումն Տեառն անցաւելի եւ լի զարմացմամբ: Իսկ ասելն, թէ՛ առ զճաշդ, զոր առաքեաց քեզ Աստուած, թէպէտ ես պատճառեցի զզգիտելն, բայց Աստուած հրաշիւք առաքեաց քեզ զճաշդ, արդ առ եւ զոհացիր զտուաւղէն: //*

*(378բ). Եւ ասէ Դանիէլ. Յիշեցեր զիս Աստուած եւ ոչ ընդ վայր հարեր զսիրելիս քո եւ յարեալ Դանիէլ եւ եկեր զճաշն\* (ԺԴ.37-38).*

*«Նախ զոհացաւ եւ ապա ճաշակեաց. Յիշեցեր զիս, ասէ, զի վասն Քո եդի զանձն իմ ի մահ, եւ թէպէտ խնամես զտիեզերս, սակայն եւ զմինս ոչ մոռացար զսիրելիս քո, զի սիրեմ զքեզ, որ-*

\* Ընկալլալ թրգմ. չիք զճաշն:

պէս ասացեր, թէ որ զիսն սիրեն՝ սիրեմ (Առակ. Ը 17) եւ ոչ ընդ վայր հարեր, ըստ Դաւթայ, թէ՛ «Ոչ ընդ վայր հարկանէ զսուրբս» (Սաղմ. Լ, 28), զի թէպէտ տա ի հարուածս զսուրբս, այլ ոչ վայրապար, այլ մեծամեծ աւգտի կամ աշխարհի»<sup>8</sup> ուղղեաց որպէս անդ կամ վասն յաւիտեան հատուցմանցն պահեստի:

Եւ հրեշտակ Տեառն տարաւ զԱմբակումն անցն ժամայն անդրեմ ի տեղի իւր (ԺԴ 38ա).

Նոյնժամայն ասէ, զի տարաւ հաց հնձողաց իւրոց:

Եւ թագաւորն եկն յաւուրն Է(7)երորդի աշխատել զԴաւիթի (ԺԴ 39).

Զի թերեւս գտցէ ինչ ի նշխարացն եւ թաղեսցէ պատուով<sup>\*\*</sup>:

Նշանակ, զի ի Զ(6) դարուն եկն Տէր եւ զհոգիսն ազատեաց եւ յեաւթեան աւարտմանն գայ եւ զմարմինն փրկէ եւ ազատէ զհրաւիրեալս ի գուբս հողոյ, ըստ առաքելոյ, եթէ՛ Ակն ունիմք փրկութեան մարմնոյ, զի յուսով ապրեցաք (հմմտ. Հոովմ. Ը 23-25), յորում շաբաթանայ բազմավաստակ մարմինս ի կեանս յաւիտենականս, ուստի մերժեալ են ցաւք եւ հեծութիւնք եւ տրամութիւնք:

Եւ իբրեւ եկն ի բերան գրոյն եւ ետես, զի աստէր Դաւիթի, աղաղակեաց ի ձայն մեծ եւ ասէ. Մեծ եւ Տէր Աստուած Դաւիթի, եւ չիք այլ ոք բաց ի Քէն (ԺԴ 39ա-40).

Ի բերան գրոյն եկն եւ զոր կարծէր մեռեալ եւ մանրեալ, եգիտ կենդանի<sup>\*\*\*</sup> Դաւիթի, զի կայր կերակուրն ի մէջ կերողացն առիւծուց ճաշ կերեալ եւ ի նշխարացն զնոսին կերակրեալ իբրեւ Տէր զձեռասուն շուն, եւ նոքաւք առ գոհացեալ նստէր զուարթ ե//րեսաւք եւ զաչս ի յերկինս համբարձեալ աղաղակեաց ի ձայն մեծ առ ամենամեծն Աստուած, «ոչ ցած եւ երկչոտ բարբառով ի բարիլացւոցն, այլ մեծաւ ձայնիւ, թէ՛ Մեծ եւ, Տէր Աստուած Դաւիթի, զի ոչ միայն սպանանես, այլ եւ կեցուցանես: Եւ ոչ ասաց, թէ՛ Մեծ եւ, եւ դադարեաց, այլ թէ՛ Չիք ոք, որ հաւասարէ մեծութեան Քո բաց ի Քէն, որպէս եւ Ինքն ի բազում տեղիս վկայեաց ի Գիրս, թէ՛ «Ես եմ եւ չիք այլ ոք իբրեւ զիս» (Ելք Ի 2, Բար. ԼԲ 39):

<sup>8</sup> Վարդան, 280ա:

<sup>\*\*</sup> զի թերեւս... պատուով հատվածը շարունակվում է իբրև բնարան:

<sup>\*\*\*</sup> կենդանի. լուսանցից՝ ուղղման նշանով:

Եւ էառ զնա ի վեր (ԺԴ 41).

Ինքն իսկ իւրովք ձեռաւք իբրեւ զկարաւտեալ եւ յոյժ զուարճացեալ ի վերայ նորահրաշ զարմանալեաց ոչ ինչ պակաս քան զՅունանուն (տե՛ս Յովնան Բ), զի ամենայն ինչ հնարաւոր է Տեառն Աստուծոյ՝ ամենաստեղծ, ամենակեցոյց եւ ամենազաւր բաղկացն Տեառն:

Եւ զվնասակարս կորստեան անորս արկ ի անոյն գութ եւ գէշ գէշ պատանեցան անո՞թամայն անաջի Նորա (ԺԴ 41ա).

Ջաւրինացն կատարեաց զհրաման, թէ՛ «Որ փորէ ընկերի իւրում խորխորատ՝ անձամբ լցցէ զնա» (Առակ. ԻԶ 27), զի առանց զարհուրելոյ ի նոցանէ, որք մահ սպառնային, հրամայեաց թագաւորն ի Տեառնէ աւժանդակեալ արկանել զվնասակարս Դանիէլի ի գուբն առիւծուց ասելով, թէ՛ աստուածքն, զոր պաշտէիք եւ որոց վրէժխնդիր լինէիք, եկեսցեն, փրկեսցեն զձեզ, որպէս Աստուածն Դանիէլի՝ զԴանիէլ: Եւ եկաց թագաւորն ի վերայ զբոյն մինչեւ զամենայն պատառեցին առաջի նորա առժամայն: Եւ այնպէս չարքն չարեաւ կորուսեալ բարձան ի միջոյ ի խրատ եւ ի զգուշութիւն այլոց՝:

Կատարեցաւ մարգարէութիւն Դանիէլի.\*

Ոչ միայն մատեանք գրոցս, այլ եւ մարգարէութիւնս, զի դարձաւ գերին եւ եկն Տէրն՝ «վէմն հատեալ առանց ձեռին» (Դան. Բ 34), ըստ լրման է(7) երորդացն, եւ միշտ կատարի ի վերայ ամենայն ժամանակի մինչեւ ի գալ Նեռինն եւ ի տան մերոյ յերկրորդ անգամ յերկնից որպէս// ետես ըստ\* նմանութեան Որդւոյ մարդոյ եկեալ ընդ ամպս երկնից, յորում եւ սուրբք զարքայութիւն ժառանգեն եւ երգեն զբան մարգարէիս, թէ՛ Կատարեցաւ մարգարէութիւն Դանիէլի՝ մարդոյն Աստուծոյ եւ ցանկալոյն Հոգւոյն Սրբոյ եւ հրեշտակաց ընտրելոց:

<sup>9</sup> Վարդան, 280աբ:

\* Ընկալյալ թրգմ. չիք կատարեցաւ... Դանիէլի:

\* Ըստ լուսանցից՝ ուղղման նշանով:



**ՊԱՏՄՈՒԹԻՒՆՍ Ի ՏԵՍԼԵԱՆ ԴԱՆԻԷԼԻ  
ՄԱՐԳԱՐԷԷ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԱՐՃ Ի  
ԿԱՐՃՈՅ Ի ԹՈՎՄԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԷ\*  
ԺԳ**

Եւ էր այր մի բնակեալ ի Բաբելոն, եւ անունն նորա Յովակիմ: Եւ առ իւր կինն անունն Շուշան, դուստր Քեղկեա, գեղեցիկ յոյժ եւ երկիւղած ի Տեառնէ: Եւ ծնաւոյն նորա էին արդարք, եւ ուսուցանէին գրուստր իւրեանց, ըստ արինացն Մովսէսի (ԺԳ 1-3).

Պարտ է գիտել, զի Երեմիայ մարգարէն ասաց ի գիրս իւր, եթէ Հ (70) ամ Իսրայէլ<sup>1</sup> ի գերութիւն մնալոց է: Իսկ Յովակիմ յազգէ Յուդայ մեծատուն քան զամենայն Իսրայէլ: Արար բուրաստանս ինքեան եւ աղբիւր ի մէջ նոցա, եւ Շուշան մտեալ լուանայր ի տաւթաժամու եւ Բ (2) աղախնայք նորին փակեցին զդուռն եւ զբանալիքն անդ եզին: Իսկ Բ(2) ծերք չար եւ դատաւորք կամէին մեղանչել ընդ նմայ. միոյն անունն Աքիաբ որդի Կովղայ<sup>1\*</sup> եւ միոյն՝ Սեղեկիայ որդի Մասիայ<sup>2\*</sup>: Զոր բազում անգամ խաբեալ էին զգոտերս որդւոցն Իսրայէլի, թէ Մեսիայ ի մէնջ ծնանելոց է, եւ սուտ մարգարէութիւնս պատմէին: Զոր յառաջագոյն խաւսեցաւ Աստուած ի գիրս Երեմիայ մարգարէին, եւ ասաց՝ «Տամ զնոսա ի ձեռն նաբուգոդոնոսորայ, զի սատակեսցէ զնոսայ» (Երեմ. ԻԹ 21): Իսկ ծերքն առին զայն յինքեանս եւ ասեն. Ահա դուրքս<sup>2</sup> փակեալ են եւ ոչ ոք է, որ տեսանէ. իբր թէ ոչ Աստուած, որ քննէ զսիրտս եւ զերիկամունս: Որ եւ յանդիմանեալք եղեն յողջախոհէն. Լաւ է ինձ մեռնել ի ձեռաց քոց, քան թէ մեղաց ատաշի Տեառն տեսողին զամենայն (ԺԳ 23): Եւ ճշեաց աւգնել իւրն: Զոր լուեալ Աստուծոյ պահեաց զաւգնելն ի դիպող ժամու: Իսկ ընտանիքն պատկառեցին ընդ դուռն, այլ ընդ որմովն անցանէին, զի ծերոց ազաղակն կից Շուշանայ ծածկեաց զբանն, որք ասէին.

\* Խորագիր 4 չիք

<sup>1</sup> Բ Իսրայէլ ասացի:

<sup>1\*</sup> Վարդանի մոտ Ուղկեայ ( 243բ):

<sup>2\*</sup> Վարդանի մոտ Սայասայ ( 243բ):

<sup>2</sup> Բ դրունքս:

Աւգնեցէք, պատանի ոմն էր ընդ Շուշանայ, եւ փախեալ: Եւ եղեւ աւր մի ժողովոյ եւ գործեցաւ ատեան, եւ ծերքն եկին անաւրէն մտաւք սպանանել զՇուշան եւ ոչ ըստ աւրինաց, եւ վկայեցին սուտ, եւ հրամայեն հոլանի առնել քանզի<sup>1</sup> ձեռս եղին ի վերայ գլխոյ նորին իբր ըստ աւրինացն առնել իբր թէ զոհ մատուցեն Աստուծոյ: Եւ դարձեալ, թէ սուտ լինիցի՝ ինքն լիցի աւրինապարտ:

Աղաղակեաց Օուշան ի ձայն մեծ. Աստուած ծածկագէտ, Դու գիտես, զի սուտ վկայեմ (ԺԳ 42-43):

Որում լուաւ արդարադատն Աստուած, զի զկամս երկիւղածաց Իւրոյ<sup>2</sup> եւ աղաւթից նոցա լսէ եւս: Զարթոյց Աստուած Հոգին զերկայնմտութիւն իւր ի վրէժինդրութիւն ի վերայ<sup>3</sup> մանկան միոյ տղայի ապրեցուցանել զՇուշան: Որպէս խափանեաց զմեռանելն Իսահակայ եւ սէրն Աստուծոյ առ Աբրահամ յայտնի եղեւ: Առեալ տանէին ի քարկոծումն եւ ամենայն ընտանիքն լալով եւ ամենայն ծանաւթքն զհետ երթային:

Գոչեաց Դանիէլ<sup>4</sup> աղաղակելով. Անպարտ եմ եւ յարեմէ դորայ, եւ դուք անմիտք եւ անիրաւք, ընդէ՞ր ոչ քննեցէք զիրաւն<sup>5</sup> եւ զսուտն (ԺԳ 46-49):

Եւ հայեցեալ ի Դանիէլ տեսին զերեսն Մովսէսի եւ իբրեւ զՆախավկային Ստեփաննոսի: Յորմէ բանէ զահի հարեալ յետս դարձան: Եւ ներեցին յանդիմանութեան, որ անմիտս<sup>6</sup> կոչեաց զնոսա: Եւ եկեալ նստուցին զԴանիէլ ի յատեան: Եւ որպէս սողոմոն արար դատաստան Բ (2) կանանցն, սոյնպէս եւ Դանիէլ<sup>7</sup> ասէ.

Մեկնեցէք զդոսա ի միմեանց: Եւ ասէ. Այ՛ ճնացեալ ատրք չարութեան, ընդ որո՞վ ծառով տեսեր: Եւ ասէ՞ Ընդ հերձեալ ծառովն: Եւ ասէ. հերձէ զքեզ հրեշտակ Աստուծոյ: Եւ հրեշտակ Տեառն եհար զնա հրե-

<sup>1</sup> A քան:

<sup>2</sup> B չիք իւրոյ:

<sup>3</sup> A չիք վերայ:

<sup>4</sup> B դարձեալ չիս. Դանիէլ:

<sup>5</sup> B ընդէ՞ր... զիրաւն (ուղղմանն Աշանով լուսանցքում):

<sup>6</sup> B միտս:

<sup>7</sup> չիք սոյնպէս եւ Դանիէլ:

դէն սրովն: Եւ ասէ ցմիւսն. Այ հնացեալ աւուրք չարութեան, որ-  
դի Քանանու եւ ոչ Յուդայ, ընդ որո՞վ ծառով [հասեր առ դոսա միւսչդեո  
խաւսէիմ ընդ միմեանս]: Եւ նա ասէ. Ընդ սղոցեալ ծառովն: Եւ ասէ. Սղոցէ  
զքեզ հրեշտակ Աստուծոյ (ԺԳ 51-59).

Եւ հրեշտակն սղոցածեւ սրով կիսամահ արարեալ զնոսա: Եւ  
ասեն՝ ծառն էր հերձատէրեւ բոլոր, եւ սղոցածեւ տերեւ երկայնե-  
նի<sup>1</sup>: Դարձեալ հերձեալ էին եւ պատուաստեալ եւ այլք, թէ զգաւս  
ծառոյ ծայրս կտրեալ էին:

Եւ ժողովուրդն ի ձայն մեծ ետուն փառս Աստուծոյ, որ ոչ է  
թողեալ զնոսա ի ձեռաց ի գերութեան ժամանակին: Եւ ամենայն  
ժողովուրդն քարկոծ արարին զնոսա, եւ գուրք, զոր փորեցին, ին-  
քեանք<sup>2</sup> լցին: Զոր լուեալ Նաբուգոդոնոսոր եղ զնոսա ի սան  
պղնձի եւ տապակեաց ի հուր, եւ վայթեցին ի հող, ըստ բանին  
Տեառն, զոր խաւսեցաւ ի ձեռն Երեմիայ մարգարէին: Եւ եղեն  
յանէծս, զի նոքաւք անիծանէին զվիճակակիցսն ասելով. «Արաս-  
ցէ քեզ Աստուած որպէս արար Բ (2) ձերոցն Աքիաբա եւ Սեդե-  
կիայ»<sup>3</sup> (Երեմ. ԻԹ 22): Եւ փոխեցան արտասուք նոցա եւ ամալթ  
հաւր եւ մաւրն Շուշանայ ի խնդութիւն եւ յուրախութիւն: Եւ  
բացան<sup>4</sup> բերան նոցա ի փառաբանութիւն Աստուծոյ եւ յաւրհանու-  
թիւն եւ հաստատեցան ի հաւատս եւ ի գործս արդարութեան: Եւ  
մեծացաւ Դանիէլ յաչս ամենայն մարդկան, որ մեծ էր առաջ քան  
զլինելն աշխարհի, Յովակիմն առաջին ի գիրս Դանիէլի եւ Յովա-  
կիմն առաջին<sup>5</sup> ի տնաւրէնութիւն Տեառն հայրն<sup>6</sup> սուրբ կուսին  
Մարիամու<sup>3\*</sup>. փա՛ւք Աստուծոյ Հաւրն երկնաւորի. ամէն:

Տեսիլ ասելն ի Դ(4) բաժանի. առաջին՝ պատմութիւն, Բ (երկ-  
րորդ)՝ Հոգւոյն Աստուծոյ յայտնութիւն տեսիլ ասի, Գ (երրորդ)՝  
երազ թագաւորին, Դ (չորրորդ)՝ տեսիլ ասի գերութիւն:

Երկրորդ ճառն. Նաբուգոդոնոսոր թագաւորն որդին Նաբու-  
բալսարա գնաց յԵրուսաղէմ յԲ(երկրորդ) ամի թագաւորութեան

<sup>1</sup> Ե երկայն:  
<sup>2</sup> Ե ինքեանց:  
<sup>3</sup> Ե Սեկեդիայ:  
<sup>4</sup> Ե բացաւ:  
<sup>5</sup> Ե չիք ի գիրս... առաջին:  
<sup>6</sup> Ե մայրն փխ. հայրն:  
<sup>3\*</sup> Վարդան 245բ:

իւրոյ: Եւ գերեաց զիսրայէլացիքն եւ Գ (3) որդի թագաւորին Յովակիմայ՝ զԱնանիայ, որ ասի շնորհք, Ազարիայ՝ համարձակութիւն, Միսայէլ՝ շաւշափումն, եւ զԴանիէլ հաւրեղբաւր որդիք նոցա: Եւ եղ անուանս նոցա Սեղրակ, Միսակ, Աբեղնագով, Դանիէլի, որ կոչի դատաստան, եղ անուն Բաղդասար զանուն Աստուծոյ իւրոյ<sup>4\*</sup>: Եւ ետուն Յասփանէս ներքինապետ, զի սնուցանէ զնոսա, եւ վարժին քաղղէական գրով, եւ ուսուցին զամենայն լեզուս: Եւ այլ բազում գերիսն յորդոցն գերութեան: Եւ վերակացու նոցա եղին զայր ոմն Ամելասագ անուն՝ Գ (3) ամ սնուցանել զնոսա եւ վարժել ուսմամբն քաղղէացոց եւ ապա առաջի թագաւորին կացուցանել: Իսկ Դանիէլ եղ ի մտի ոչ ճաշակել ի պիղծ զոհից եւ ի սեղանոյ թագաւորին, եւ ոչ մանկանցն ետ թոյլ ճաշակել ոչ ի հացէ, ոչ ի մսոյ, ոչ ի գինոյ եւ ոչ յայլ կերակրոց, այլ միայն ընդով շատացան, որ է սիսեռն, ոսպն, ոլոռն, բակլայ եւ հատիկ ցորենոյ: Եւ զսահմանեալ կերակուր թագաւորին վերակացուքն ուտէին: Իսկ յորժամ Գ (3) ամն լցաւ, Հոգւոյն Աստուծոյ իմաստութեամբն լցան բնական գիտութեամբն եւ՝ շնորհական, եւ՝ ստացական, եւ փառաւորեալ վերին աստուածային իմաստութեան եւ գիտութեան: Եւ զէմք կերպարանաց նոցա եղեն իբրեւ գերեսս հրեշտակի իբրեւ զՄովսէսին եւ զՆախավկային մինչ զի ամենայն քաղղէացիքն զարհուրեալ դողային: Եւ բազում բանս իմաստութեան հարցին եւ ամենայնի պատասխանի ետուն: Եւ կացոյց զնոսա թագաւորն ի վերայ տանն թագաւորութեան եւ ամենայն աշխարհին, զի Աստուած զփառաւորիչս իւր փառաւորէ, զի ասէ մարգարէիւն. «Որ զիսն սիրեն սիրեմ զնոսա» (Առակ. Ը 17), եւ «զկամս երկիւղածաց եւ աղաւթից նոցա լսէ եւ կեցուցանէ»: «Եւ Աստուած փառաւորեալ է ի խորհուրդս նոցա»: Զի զսեղան թագաւորին անարգեցին եւ զգարչելի կերակուր նոցին: Վասն որոյ Աստուած պատուեաց զնոսա՝ աստ մարմնաւոր մեծութեամբ եւ ի հանդերձեալն պատուին յԱստուծոյ հոգեւոր մեծութեամբ եւ ի սեղան երկնաւոր թագաւորին բազմին եւ զաստուածային կերակուրն ճաշակեն, որ է նորա վարդապետելն եւ մեզ ուսանելն: Եւ դարձեալ Աստուծոյ ակրհնութիւն, որ ասէ. «Եկայք ակրհնեալք Հաւր իմոյ» (Մատթ. ԻԵ 34), եւ Դաւիթ ասէ «տացես նմա ակրհնութիւն յաւիտեանս յաւիտենից, ուրախ արասցես զնա»

<sup>4\*</sup> Վարդան 246բ:



(Սաղմ. Ի 7): Եւ աստ նշխարք նոցա պատուեցաւ ի հաւատացելոց եւ յանհաւատից: Զի յորժամ Կիւրոս թագաւորն կամ Ատտիկոս նահատակեաց զնոսա ընկալան երեք եղբարք զգլուխս ինքեանց ի գիրկս իւրեանց: Եւ Դանիէլ զերիսն յինքն ընկալաւ եւ եղ զգլուխս նոցա առ մարմինս իւրեանց եւ հրամանաւ Արարչին կցեալ միաւորեցան ընդ իրար: Եւ տեսեալ բաբելացիքն կրկին եւ երեքկին աւրհնեցին զԱստուած: Իսկ Դանիէլ այրն ցանկալի Աստուծոյ, հրեշտակաց եւ մարդկան իւր մահուամբ վախճանեցաւ եւ եղաւ ոսկի տապանաւք ի գանձատուն թագաւորին: Իսկ Մաւրիկ թագաւորն յունաց խնդրեաց զնշխարքն Դանիէլի ի Խոսրովու արքայէն պարսից, որ էր որդեգիր նմա: Եւ նորա եղեալ ի ջորոջ եւ բազում գանձ ընդ նմա: Եւ առ ժամայն Բ (2) գետքն Եփրատ եւ Տիգրիս ցամաքեցան եւ ամենայն աղբերք աշխարհին ընդ նմա: Եւ Շիրին թագուհին ազգաւ ասորի ժողովեաց զամենայն բազմութիւն հաւատացելոցն յեկեղեցիսն, եւ ուժգին գոչմամբ եւ արտասուաւք պաղատեցին առ Աստուած եւ առ սուրբն Դանիէլ: Եւ առ ժամայն դարձան ջորիքն ի քաղաքն, եւ ջուր գետոցն եւ աղբերացն վաղվաղակի բղխեցին ի յաղաւթից եւ ի ջեմեռանդ հաւատոցն Շիրին թագուհոյն եւ ամենայն քրիստոնէիցն: Եւ ուրախացան ամենայն<sup>1</sup> քաղաքացիքն հաւատացեալք եւ անհաւատք: Եւ Աստուծոյ աւրհնութիւն ի բարձունս առաքեցին անճառելի եւ անպատմելի խնդութեամբ: Եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. Ամէն:

<sup>1</sup> Եւ չիք քրիստոնցիցն... ամենայն:

## Բ

Երրորդ տեսիլ եւ պատմութիւն.

Յամին երկրորդի թագաւորութեան Նաբուգոդոնոսորայ արքայի ետեւ երազ եւ մոռացաւ զերազն եւ յիմարեցաւ<sup>1</sup> ոգի մորա, եւ քունն հատաւ ի մնանէ (Բ 1).

*Եւ կոչեցին զամենայն իմաստունս քաղղեացոցն, զգէտքն երազոյ, զմոզն աստեղաբաշխք, որ ի փորոտիս կենդանեաց, զկախարդքն, որ յարմատս ծառոց եւ ի ձայնս թռչնոց դիւթէին, իղձքն աղաւթարարք եւ ոչ կարացին մեկնել: Եւ հրամայեաց սպանանել զնոսա: Իսկ Դանիէլ ոչ գիտէր զսպանումն նոցա, էհարց ի յԱրիովք դահճապետն: Եւ նա ասաց. Թագաւորն երազ ետես եւ մոռացեալ է: Ոչ եւ գերազն գիտէին եւ ոչ զմեկնութիւն: Եւ աղաչեաց Դանիէլ մի՛ սպանանել: Եւ առանձնացեալ երեք մանկամբք աղաւթեցին<sup>2</sup> առ Աստուած: Եւ Աստուած յայտնեաց Դանիէլի զձածուկ խորհուրդս: Եւ աւրհնեաց Դանիէլ զԱստուած եւ սկսաւ գոհանալ զԱստուծոյ: Եւ ասէ. Քո է իմաստութիւն եւ գիտութիւն, եւ ոչ անտես արարեր զիս, փա՛ռք Քեզ, Տէր իմ յազազս ամենայնի: Եւ կացոյց առաջի թագաւորին: Եւ ասէ Դանիէլ զթագաւորն. Աստուածն իմ, արքայ, յայտնեաց զերազն քո:*

Դու, արքայ տեսանէիր պատկեր մեծ եւ ահագին յոյժ. զլուխն ոսկի, ձեռքն եւ բազուկն եւ լանջքն արծաթի, մէջքն պղնձի, սրունքն երկաթի, ոտքն կէսն յերկաթոյ եւ կէսն ի խեցոյ: Եւ ի լեռնէ հատաւ վէմ մի առանց ձեռին եւ փշրեաց զպատկերն: Եւ վէմն, որ էհար զպատկերն, եղեւ լեռոն մեծ եւ ելից զամենայն երկիր (Բ 32-35): *Այս է մեկնութիւն սոցա. նախ եւ առաջին, ասէ Դանիէլ. Դու եւ զլուխն ոսկի (Բ 39) եւ ահագին եւ պատուական, որ զամենայն թագաւորութիւն ետ ի ձեռս քո: Ձեռքն արծաթի, որ յետ քո, յարիցէ Մարաց, որ ոչ կարաց արգելել զԴանիէլ ի գբոյ առիւծոցն գազանացն: Մէջքն պղնձի՝ Կիւրոս պարսիկ, որ էառ զմարաց եւ պարսից եւ զքաղղեացոց թագաւորութիւն, զի պղինձն հատանէ զարծաթն, եւ սա ազատեաց զամենայն գերիսն*

<sup>1</sup> B գերազն եւ յիմարեցաւ (ուղղման մշակում լուսանցքում):

<sup>2</sup> A եւ աղաւթեցին:

Ե (5) բիւր մարդիկ ի ձեռն Սամանասայ Հանդերձապետին Իսրայէլի Դանիէլ Դ (4) անաւթ արծաթի: Եւ սա աւծեալ կոչեցաւ ի մարգարէէն: Ասէ Տէր ցաւծեալն Կիւրոս, «որոյ թագաւորութիւն տիրեաց մինչեւ ի Դարեհ, զոր սպան Աղեքսանդրոս»<sup>5\*</sup> տիրեալ ամս ԼԵ (35): Սրուք եւ բարձուք երկաթի Աղէքսանդրն է Մակեդոնացի, որ ԺԸ (18 ամաց թագաւորեաց ի վերայ ամենայն աշխարհի, եւ ԲԺ (12)-ան ամ թագաւորեաց եւ դեղակուր եղեալ ի դայեկ որդոց իւրոց, մեռաւ ի Բաբելոն: Եւ թագաւորեցին Դ (4) դայեկ որդիքն՝ Սելեւկիոս, Դեմետրիոս, Պտլոմեոս, Փիլիպպոս, որոյ ծնունդքն ապականեցին զերկիր, եւ ի սոցանէ պիղծն Անտիոքոս զԵրուսաղէմ եւ գտածարն Սողոմոնի:

Ուրքն եւ մատուցն կէսն ի յերկաթոյ եւ կէսն ի խեցոյ (Բ 42). զհռոմայեցւոց թագաւորութիւն ասէ յառաջէն գալստենէն մինչ ի յերկրորդ գալուստն Քրիստոսի երբեմն զաւրաւոր, երբեմն տկար, եւ վերջինն նեռն ի նոցանէ է<sup>1</sup>:

Իսկ վէմն, որ հատաւ առանց ձեռին ի սուրբ լեռնէն, Քրիստոս է, զի առանց սերման եւ ամուսնութեան ծնաւ ի սուրբ Կուսէն<sup>6\*</sup>, եւ փշրեաց եւ եբարձ գամենայն թագաւորութիւնս աշխարհի, եւ թագաւորեաց ի վերայ երկնաւորաց եւ երկրաւորաց, եւ ելից քարոզութեամբ առաքելոցն գամենայն ծագս աշխարհի հաւատով աստուածապաշտութեամբ եւ գործով առաքինութեամբ: Դարձեալ նշանակէ պատկերն այն զկուսապաշտութիւնս ամենայն աշխարհի, որ սոյնպիսի նիւթոցս երկիր պագին եւ Աստուած ասացին: Եւ վէմն, որ հատաւ առանց ձեռին նշանակէ զՔրիստոս, որ հատաւ ի բնութենէս առանց սերման եւ<sup>2</sup> խորտակեաց գամենայն կուսապաշտութիւնս աշխարհի: Դարձեալ պատկերն այն նշանակէ զԷ (7) մահու չափ մեղքն, որ բարձաւ մինչեւ յերկինս բանսարկուին խաբէութեամբ: Ահագին դէմքն՝ զհպարտութիւն սատանայի, ոսկի գլուխն՝ զնախանձն, արծաթն՝ զբարկութիւն, պղինձն՝ զծուրկութիւն, երկաթ<sup>3</sup> միջացն՝ զագահութիւն, խեցին խառն ընդ երկաթոյ՝ զորովայնամուրկութիւն եւ զբղջախոհութիւն պոռնկու-

<sup>5\*</sup> Վարդան, 249բ:

<sup>1</sup> Ե չիք է:

<sup>6\*</sup> Վարդան, 249բ-250ա:

<sup>2</sup> Ե չիք եւ:

<sup>3</sup> Ե երկաթի:

թեան, զի խառն են սոքա ընդ միմեանս: Իսկ վէճն՝ Քրիստոս փշրեաց զպարտութիւն հեղութեամբ, զծուլութիւն՝ արիութեամբ, զազահութիւն՝ ողորմութեամբ, զորովայնամոլութիւն՝ պարկեշտութեամբ, զպոռնկութիւն՝ կոսութեամբ: Դարձեալ պատկերն այն նշանակէ զամենայն թագաւորութիւնս աշխարհի. ահագնութիւն զիմացն՝ զբռնաւորս, ոսկի գլուխն՝ զփարթամսն ընչիւք, արծաթն՝ զիմաստունքն, պղինձն՝ զգեղեցիկսն զիմաւք, երկաթն՝ զզաւրեղքն եւ զքաջքն<sup>1</sup>, երկաթն եւ խեցին՝ զզաւրեղքն եւ զտկարքն: Վէճն հրաման Արարչին, որ ասէ. «Հող էիր եւ ի հող դարձցիս» (ԾԱՆԳ. Գ. 19): Երթ ի գերեզման եւ տես երր<sup>2</sup> եւ փոշի են ամենեքեան: Այսքան առ այս:

<sup>1</sup> Եւ զիս երկաթն... զքաջքն:

<sup>2</sup> Եւ երրորդ փխ. երր:

Գ

ՉՈՐՐՈՐԴ ՏԵՍԻԼ

Յամին ութնետասաներորդի Նաբուգոդոնոսորայ արքայի արար պատկեր ոսկի (Գ 1)։

Գիտելի է, զի խաբեցին ղիւթքն եւ կախարդքն, թէ հայրն քո Բէլ քանանացի ապստամբեալ յԱստուծոյ շինեաց զաշտարակն եւ ի բաժանել լեզուացն չաստուած անուանեցաւ թաքուցանելով ի նմանէ զչարամահ լինելն ի Հայկայ յաբեթեան։ Եւ կուրացեալ հոգևոյ աչաւք եւ ի պատրանաց մեծութենէ Կ (60) կանգուն պատկեր կանգնեաց եւ Զ (6) լայնութիւն։ Եւ կոչեաց զամենայն ազգ եւ զլեզու յերկրպագութիւն պիղծ պատկերին։ Եւ եկին զաւրավար եւ զաւրագլուխ կուսակալք, որ էին կողմնակալք, գործակալք եւ բռնաւորք։ Եւ արարին փողս եւ քնարս սրինգս եւ ծնծղայս, զոր չարն սատանայ ուսոյց սկսեալ ի դատերաց եւ յորդոցն Կայենի արբեցութիւն առնել ականջին, եւ այնու գերել զմիտս բնականին, յԱստուծոյ հանել եւ իւրն առնել երկրպագուս<sup>7\*</sup>։ Կ(60) Զ (6) տասն է եւ Ժ(10) վեց, զոր իմանալին Նաբուգոդոնոսոր զվեցաւրեա արարեալ մարդս ջանա խաբել Ժ(10) զգայութեամբ մարդոյս ի Զ(6) շարժումն գայթաղեցուցանել ի վեր եւ ի վայր յաջ եւ յահեակ ի դիմաց առաջոյ, եւ ի թիկանց յետոյ ի վեր ոչ տայ հայել յԱստուած երկիւղիւ այլ հայհոյութեամբ ի վայր յերկիր միայն հաստատել զգարչապարս ի տղմի այսքան ախտից երկրպագելս ի յաջ կեղծաւորութեամբ ի ձախն ձախողակի չարեաւք եւ զարշութեամբ։ Իսկ քաղղեացիքն չարախաւս եղեն վասն Գ(3) մանկանց, եւ ասեն։

Արքայ, զդիս քո ոչ պաշտեն եւ պատկերին ոսկոյ երկիր ոչ պագանեն։ Ասէ թագաւորն. արդարեւ ճշմարիտ է, զդիս իմ ո՞չ պաշտէք եւ պատկերին ո՞չ պագանէք։ Բայց արդ, պատրաստ լերուք իբր թէ զառաջինն թողեալ եմ ձեզ։ Եւ թէ ոչ պագանէք երկիր անկանիցիք ի մէջ հնոցի հրոյն բորբոքելոյ (Գ 12-15)։

<sup>7\*</sup> Վարդան, էջ 251։

*Ասեն ցարքայն.* Է մեր /Աստուած/ յերկինս, զոր մեք պաշտենք, կարաղ է փրկել զմեզ ի հնոցէ հրոյոյ բորբոքելոյ եւ ի ձեռաց քոց, արքայ<sup>1</sup>, ապրեցուցանել զմեզ: Ապա թէ ոչ այս ինչ յայտնի լիցի քեզ, արքայ, զի զդիս քո մեք ոչ պաշտենք եւ պատկերի ոսկոյ երկիր ոչ պագանենք: Յայնժամ Նաբուգոդոնոսոր լի եղեւ արտամտութեամբ եւ բարկութեամբ, եւ ասէ. Ջեռուցէք զհնոցն, զի մինչեւ ի վախճան այրեսցին: Եւ արք թիմոզ գորաորք զարութեամբ կապեցին զնոսա՝ զՍեդրակ, զՄիսագ եւ զԱբեդնագով՝ արկանել ի հնոց հրոյն բորբոքելոյ (9. 17-20), *նշանակէ զԵ (5) զգայութիւնս մեր, որ կապէ սատանայ ի սէր աշխարհիս:*

Որ եւ կապեցան պատմունքանաւք, վարտեալք բարձիցն հանդերձիւք եւ արտախորակաւք (9. 21), *խոյր ի գլուխն՝ նշանակէ պատուոյ:* Զանկապանաւք, *խոնջանաւք: Արտախոյր դարձեալ զարդարեալ զստափոկով: Ոչ մերկացուցին զսոսա, այլ երկաթի կապանաւք կապեալ արկին ի մէջ հնոցին: Իսկ հուրն պատկառեալ ի նոցանէ հալեաց զերկաթն: Եւ նոքա յարուցեալ սկսան աւրհնել զԱստուած ասելով.*

Արհնեալ եւ Տէր Աստուած հարցն մերոց, արհնեալ փառաւորեալ է անուն քո (9. 26):

*Եւ հասեալ մինչեկայն տեղի, որ ասէ.* Արհնեալ եւ դու Տէր Աստուած հարցն մերոց. բացաւ կամարն երկնից եւ էջ Բանն Աստուած բազմութեամբ դասուք հրեշտակաց, եւ իջեալ ի մէջ հնոցի բորբոքելոյն զհուրն ի ցաւոյ փոխարկեցաւ: Եւ Սուրբ Հոգին քաջալերէր եւ ասէր. Ես ընդ ձեզ եմ յաւիտեան: Եւ հրեշտակք պարառեալ ի բարձունս աւրհնէին զԱստուած: Եւ հուրն բարձրանայր իսթ (49) կանգուն եւ ի վայր խոնարհեալ այրէր զքաղդէացիսն՝ երկնչելով ի յանուանցն Աստուծոյ, որ կայր գրեալ ի վերայ ահանցն, որ ի վակաս Ահարոնի տախտակացն էր դրոշմեալ: Եւ նոքա ի վեր հայեցեալ տեսին զարարիչն Աստուած հրեշտակաց դասուք վերուստ ի վայր իջեալ: Եւ էջ Բանն Աստուած ի մէջ հնոցին աստուածային փառաւք: Եւ հուրն ծաւալ առեալ զերկրպագութիւն Բանին Աստուծոյ տայր: Եւ նոքա ի<sup>2</sup> ձայն մեծ սկսան աւրհնել զԱստուած: Եւ զարհուրեալ թագաւորն եկն եկաց մերձ

<sup>1</sup> B չիք արքայ:

<sup>2</sup> A չիք ի:

Հնոցին, եւ տեսանէ զՈրդին Աստուած, ի ձայն բարձր աղաղակեաց եւ ասէ. Եւ ես աւրհնեմ զԱստուածն ձեր, արի եկայք, ծառայք զԱստուծոյ: Եւ ելին արտաքս ի Հնոցէն: Եւ ամենեքեան գոռհ տուեալ եկին ի տեսութիւն աստուածասէր մանկանցն: Եւ տեսին, զի մագ մի ի հերաց ոչ էր պակասեալ: Ե՛ւ հրեայք, ե՛ւ հեթանոսք փառաւորեցին զարարիչն Աստուած, զամենաուրբ զերրորդութիւն յաւիտեանս. ամէն<sup>8\*</sup>: Եւ կացոյց զնոսա իշխան եւ վերակացու ի վերայ ամենայն քաղղէացոցն հրէից եւ հեթանոսաց Ճ (100) եւ Ի (20) կուսակալացն: Գիտելի է, զի Կ(60) կանգուն պատկերին Կ (60) ծունր կրկնէին քաղղէացիքն եւ զՀԲ (72) ազգ լեզու ի փառաբանութիւն Բելա կոչէին: Իսկ Գ(3) մանկունքն զԿ (60) անգամ ծունրն Աստուծոյ ի բարձունս կրկնեցին, եւ զՀԲ (72) լեզուաց աւրհնութիւն Աստուծոյ ի բարձունս եւ ի Հնոցին ետուն: Դարձեալ Կ(60) տուն սաղմոսաց մանկանցն Ե(5) Ե(5) բաժանէ: Ուսուցանէ մեզ, թէ ԲԺ (12)ան գնդիւք հրեշտակաւք եւ կրկին ԲԺ(12)ան մարգարէիւքն գուշակութեամբ, եւ ԲԺ(12)ան առաքելոցն քարոզութեամբն, եւ ԲԺ(12)-ան վարդապետացն ճշմարիտ դաւանութեամբ միշտ եւ հանապազ զԱստուած Բանն, որ իջաւ ի մէջ Հնոցին, աւրհնեսցուք:

<sup>8\*</sup> Վարդան, 253բ:

## Դ

## ՊԱՏՄՈՒԹԻԻՆ ԵՒ ՏԵՍԻԼ Ե (5)րդ

*Անասելի եւ անպատմելի են խորք ողորմութեան Աստուծոյ առ իւր արարածս<sup>1</sup>: Եւ զայս յայտ է տեսանել ի Նաբուգոդոնոսոր, որ ետես եւ լուաւ զհրաշս եւ զսքանչելիս զոր արար Աստուած երից մանկանցն: Եւ նա զամենայն մոռացաւ, եւ սկսաւ հպարտանալ եւ ամբարտաւանալ երբեւ սատանա<sup>2</sup> <sup>9\*</sup>: Եւ բարերարն Աստուած տեսեամբ երազոյ կամեցաւ կեցուցանել զնա, զի թերեւս ճանաչէ զԱստուածն ամենայնի: Տեսանէ երազ Նաբուգոդոնոսոր.*

զի ծառ մի տնկեալ էր ի մէջ երկրի եւ բարձրացաւ մինչեւ յերկինս եւ լայնացաւ մինչեւ ի ծագս երկրի, տերեւն գեղեցիկ, պտուղն բազում, գազանք եւ թռչունք յոստս<sup>3</sup> նորս հաճոյքէին, եւ ի մտանէ կերակրէր ամենայն մարմին: Եւ ահա զուարթունք երկնից իջին եւ ասեմ. հատէք զծառոյ եւ քշտեցէք զոստս դորս, թաւթափեցէք զտերեւս նորս եւ զպտուղս դորս ցրուեցէք: Ծարժեսցին գազանք ի ներքոյ դորս եւ թռչունք ի յոստոց դորս: Բայց զշառաւիղ<sup>4</sup> եւ զարմատն թողէք երկաթապատ եւ պղնձապատ, ի դալար վայրի եւ ի ցաւոյոյ երկնից դարդասցէ եւ ընդ գազանս եղիցի բաժին դորս, սիրտ գազանաց տացի նմա: Եւ Է(7) ժամանակք փոխեսցին ի վերս դորս (Դ 7-13).

*Եւ կոչեցան իմաստունքն բաբելացւոց եւ ոչ կարացին զերազն մեկնել: Կոչեցաւ եւ Դանիէլ, եւ տրտմեցաւ յոյժ Դանիէլ եւ հիացաւ իբրեւ ժամ մի: Եւ ասէ Դանիէլ.*

Երազն ատելեաց քոց եւ մեկնութիւն թշնամեաց քոց (Դ 16):

*Ասէ. Ծառն դու ես, արքայ, զի մեծացար եւ ելեր մինչեւ յերկինս, զի առեր զերկնաւորին Աստուծոյ զքաղաքն Երուսաղէմ եւ զամենայն երկիր. զգազանաբարուք՝ հպարտք եւ թռչունք՝ հաւատացեալք ի ներքոյ հնազանդութեան քո կան: Եւ դու ոչ ճա-*

<sup>1</sup> A արարած:

<sup>2</sup> A չիք սատանայ (տեղը բաց):

<sup>9\*</sup> Վարդան, 255ա:

<sup>3</sup> B յոստ:

<sup>4</sup> B զշառաւեղ:



նաչեցեր<sup>1</sup> զԱստուած բարձրեալն, եթէ նա ետ քեզ զայդ ամենայն: Այլ հպարտացար ի վերայ Աստուծոյ իբրեւ զսատանա: Եւ հրեշտակք Աստուծոյ հրամանաւ նորին իջանեն եւ քշտեն զծառու եւ բռնանան զթագաւորութիւնդ: Եւ փոխեսցիս ի գազանաց կերպարան. առաջ քո զուարակի, զի պղծասէր ես, հեր անձինդ առիւծու, զի շաղրակեր ես: Եղնկունք<sup>2</sup> եւ ոտք առիւծոյ, զի հպարտ եւ անբարտաւան ես, սիրտ մարդոյ, զի բանական մարդ ես: Եւ է(7) ամ անասուն շրջիս, եւ ըստ բաբելացւոցն Գ(3) ամ եւ կես, զի զմի ամն նոքա երկուս բաժանեն: Իսկ յորժամ ճանաչես զբարձրեալն Աստուած, դարձեալ վերստին թագաւորես: Բայց խրատ մի տամ քեզ. զմեզս քո ողորմութեամբ քաւեսցես եւ զանաւրէնութիւնս քո՝ զթովք տնանկաց: Եւ արար ողորմութիւն ըստ խրատուն Դանիէլի զԲԺ(12)ան ամիս: «Եւ դարձաւ յետոյ ի խակութիւն եւ յամբարտաւանութիւն: Եւ ի ճեմելն ի վերայ արքունեաց տաճարին ասէ.

Ո՞չ այս այն Բաբելոնն է, զոր ես շինեցի (Դ 27): Զոր ասեն նմա զԺԵ(15) աւր Գ(3) կրկին պարիսպ ածեալ էր Բաբելոնի՝ իբր թէ ասել՝ ո՞ կարէ հանել զիս աստի: Եւ մինչդեռ բանն ի բերանն էր, լուաւ ահեղ եւ զարհուրելի ձայն. Քեզ ասեն, Նաբուգոդոնոսոր երեքանձնեայ Աստուածութիւն, որ կազմեաց զքեզ ի հոգւոյ եւ ի մտաց եւ ի մարմնոյ, զոր ոչ իմացար զճշմարիտ Աստուածն քո իբրեւ զմարդ, վասն որոյ հալածիս ի մարդկանէ, ի բնութենէ, ի բանականութենէ մարդկան, եւ ընդ գազանս եւ ընդ անասունս լինիջիր, զի նոցա նմանեցեր: Եւ առժամայն հրեշտակք Աստուծոյ հալածեցին յանկարծակի եղեալ առաջին կողմն արջառոյ, վարսք առիւծոյ, ճիրանունքն արծուոյ դատաստանաւ, զի ցանկասէր էր իբրեւ զարջառ, խրոխտ իբրեւ զառիւծ, հպարտ՝ իբրեւ զթռչուն, վասն որոյ դադարեաց ընդ նոսա եւ բնութիւն մարդոյ: Եւ խելքն կորեաւ, եւ խոտ ուտէր ի կարեաց սովոյն, եւ ներկաւ մարմին ի գոյն արեան արիւնասէր գոլով, եւ ցաւալից լինէր բացաւթեա եւ խնամաւքն Աստուծոյ ոչ լինէր ծախեալ ի գազանաց: Եւ ոչ այլ ոք նստաւ յաթոռ թագաւորութեան նորա մինչեւ ի լնուլ է (7) ժամանակաց: Եւ ապա ի քնոյ զարթոցեալ հայեցաւ յերկինս խոստովանութեամբ, թէ նա միայն է կարող առնել զամենայն

<sup>1</sup> Բ ճանաչեցիր:

<sup>2</sup> Բ եղնկուն:

զինչ եւ կամի եւ խնամէ զազգս մարդկան: Եւ իշխանքն խնդրեցին զնա եւ զտին յառապարին ի հասակ մարդոյ եւ ի զգայութիւն եկեալ: Եւ բերեալ նստուցին յաթոռ թագաւորութեան որպէս ի մեռելոց հրաշիւք կենդանացեալ: Ջարմացաւ երկիր ամենայն, եւ բերեալ գանձս, եւ յուովք հնազանդեցան քան թէ յառաջագոյն եւ յաւելաւ մեծութիւն նորա: Եւ զկատարած նորա ոչ ասէ Դանիէլ, այլ այլք ասեն, թէ սպանաւ ի պատերազմի եւ անթաղ մնաց զի նորա, որպէս սպառնացաւ նմա Աստուած ի ձեռն Երեմիայ մարգարէի, զի դարձաւ նա իբրեւ զշուն ի փսխածն յառաջին անաւրէնութիւն: Եւ այլք ասեն, թէ մահուամբ իւրով մեռաւ: Եւ զթագաւորութիւն առեալ Իլմարովդակ<sup>1</sup> 10\* եւ էհան զՅեքոնիայ ի բանտէն, զոր փեսայ ասեն եւ այլք՝ որդի, եւ ապա՝ Բաղդասար ամս երիս<sup>11\*</sup>:

Եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փա՛ռք յաւիտեանս. ամէն:

Պատմէ մարգարէն Դանիէլ. եւ յայսմ վայրի զանգիտութիւն եւ զլրբութիւն Բաղդասարայ արքայի որդւոյ Նաբուգոդոնոսորայ: Յետ Նաբուգոդոնոսորայ թագաւորեաց եւ արար ընթրիս հազար առն, եւ եդ առաջի նոցա գինի: Հրամայեաց բերել զսպասք տաճարին, զոր հայր նորա բերեալ էր եւ եդեալ ի տան գանձի իւրոյ: Եւ հանեալ անտի կերան եւ արբին եեւի կոոցն գոհացան: Եւ ոչ գոհացան յԱստուծոյ եւ ոչ աւրհնեցին զճշմարիտն Աստուած իբրեւ զպիղծն Հերովդես, որ սպան զՅովհաննէս, այլ կոոցն ետուն զերկրպագութիւն եւ զգոհութիւն՝ փայտեղինի եւ քարեղինի:

Ի մի՞ն ժամու ելի՞ն մատուցք ձեռնի մարդոյ եւ գրէի՞ն հաճեալ գնդի՞ն ի վերայ բռնելոյ որմոյ տաճարի՞ն (Ե 5):

Եւ տեսեալ թագաւորն Բաղդասար զարհուրեալ դողաց եւ գոյն երեսացն հատաւ, յաւրքն լուծան: Եւ եկին ամենայն գէտքն եւ իմաստունքն եւ ոչ կարացին<sup>2</sup> ընթեռնուլ: Եկն մայր նորա եւ ասէ. Արքայ գոյն երսաց քոց մի՛ եղծցի. է այր մի Դանիէլ անուն, յորում գոյ ի նմա Հոգի Սուրբ Աստուծոյ, եւ դու ոչ ճանաչես<sup>3</sup> զնա: Ապա ածին ի ներքս զԴանիէլ, եւ ասէ. Դո՞ւ ես Դանիէլ յորդուցն գերութեան:

<sup>1</sup> B Իլմարոյ:

<sup>10\*</sup> Վարդանի մոտ Մարովդաք:

<sup>11\*</sup> Տե՛ս Վարդան 256-257:

<sup>2</sup> B կարաց:

<sup>3</sup> A ճանաչես ոչ:

Լուայ զքե՛ն, թե՛ Հոգի Սուրբ Աստուծոյ գոյ ի քեզ (Ե 13-14), *եւ կարող ես մեկնել զգիրդ: Եւ թէ՛ մեկնես զգիրդ զայդ՝* ծիրանիս զգեցցիս եւ երրորդ թագաւորութեան իմոյ կայցես: Եւ ասէ Դանիէլ. Պարգեւ քո քեզ լիցի, բայց զգիրդ եւ ընթերցայց եւ զմեկնութիւն դորա ցուցից քեզ (Ե 17): Եւ ասէ. Այս ինչ է գիրդ, որ գրեալ է. Մանէ, Թեկէլ, Փարէս: Եւ այս է մեկնութիւնն բանիդ. Մանէ՝ չափեաց Աստուած զթագաւորութիւնդ քո եւ վախճանեաց զնա: Թեկէլ՝ կշռեցաւ ի կշիռս եւ գտաւ պակասեալ: Փարէս՝ բաժանեցաւ թագաւորութիւն քո եւ տուաւ Մարաց եւ Պարսից: Եւ հրաման ետ Բաղդասար եւ զգեցուցին ճմա ծիրանիս եւ մանեակ ոսկի արկին ի պարանոցի նորա, եւ քարոզ կարդայր առաջի նորա լինել իշխան երրորդի թագաւորութեան նորա: Եւ ի նմաին գիշերի սպանաւ Բաղդասար արքայ քաղ-դեացոց (Ե 25-30).

*Եւ գիտելի է, զի Աստուած չափով եւ կշռով բաժանէ զշնորհս, եւ զպատճառն ինքն միայն գիտէ, զոր եւ թարգմանէ. չափ եւ վախճան<sup>1</sup> ասէ, զի զանչափն<sup>2</sup> զաւրութիւնն ոչ ածէր զմտաւ եւ զանվախճան, վասն այնորիկ վճարեցաւ քոյդ. Թեկէլ՝ կշռեցաւ, գտաւ պակաս յարդարութենէ. չափ՝ մարմնոյ մեղքն եւ կշիռ՝ մտաց եւ խորհրդոցն: «Իսկ Դանիէլ յանձն էառ զծիրանիսն եւ զմանեակսն ի փառս Աստուծոյ եւ յամալթ սնտեացն, զոր նոքա աւրհնէին ի խրախուլթեանցն զպիղծ կուռսն, զոր Բաղդասար իրաւ կամեցաւ ցուցանել զխոստումն: Այլ եւ կաշառեալ զԴանիէլ եւ շիջուցանել զցասումն վասն նախանձուն Տեառն, եւ զի ոչ զղջացաւ ի սրտէ եւ ոչ զսպաս սրբութեանցն ետ ի Դանիէլ, եւ մեղայ՝ ոչ գտաւ ի բերան նորա, այլ յուսացաւ ի զգուշութիւն իւր եւ ի խրատ դիւթիցն, զի է (7) դրան ներքոյ եմուտ ի սենեակ, եւ պահապանս կացուցեալ ի հաւատարմացն իբրեւ ջանայր հանգչել եւ ոչ կարեր յերկիւղէն, զի հատաւ քուն յաչաց նորա: Եւ գնաց տեսանել զպահապանս դրանն, զի ննջէին եւ՛ զառաջին, եւ՛ զերկրորդն թողեալ ի քուն մինչեւ ցէ(7)-րդն, զոր զարթոյց եւ կարգաւ սկսաւ զարթուցանել մի ըստ միողէ: Եւ յամբոխէ անտի զարթեան առաջինքն եւ սպանին զնա՝ կարծելով թշնամի ոք եկեալ սպանանել զթագաւորն. զի զԱստուծոյ վճիռն միայն ինքն եւ այլ ոչ ոք կարող է դարձուցանել, զի եղբայր ոչ փրկէ եւ ոչ մարդ ոք»<sup>12\*</sup>: Եւ Քրիստոսի փա՛ռք յաւիտեանս. ամէն:*

<sup>1</sup> Ե վաղճան:

<sup>2</sup> Ե զանչափ:

\* Թերեւս՝ մեղս:

<sup>12\*</sup> Տե՛ս Վարդան, 257-258:

Դարձեալ աստ շարագրէ մեծն Դանիէլ զառումն թագաւորութեան Բաղդասարայ, որ «էառ մարն Դարեհ ԿԲ (62) ամաց գոլով յիմաստութեան տիս հասակի եւ խնայելով ի ծերութիւն իւր կացուցանէր նախահոգակս<sup>1</sup> ՃԻ (120), զի այնքան գաւառք էին ըստ թագաւորութեան նորա: Եւ խորհրդակիցս արար ինքեան, յորոց մի էր Դանիէլ առաւել քան զբնական, որոյ բանն խրատու վճիռ<sup>2</sup> էր թագաւորին, զի Հոգին Աստուծոյ ի նմա կայր եւ գամենայն ճշմարիտ խաւսէր, իսկ այլքն՝ դիւական եւ ոչ մտաւոր իմաստութիւնք Հոգւոյն Աստուծոյ: Յաղագս որոյ «նախանձեցան շնչաւորքն եւ եղին որոգայթ իշխանքն», զի «նախանձ առն ի մերձաւորէ իւրմէ», եւ խնդրէին պատճառս եւ յանցանս եւ բաղայս դնել Դանիէլի եւ ոչ կարէին, զի հաւատարիմ էր թագաւորին»<sup>13\*</sup>: Բայց<sup>3</sup> ասեն, եթէ յաւրէնսն Աստուծոյ նորա դնիցեմք պատճառս միաբանութեամբ ամենեցուն: Յայնժամ հրամանատարքն եւ նախարարքն կացին առաջի թագաւորին եւ ասեն ցնա. Արքայ յաւիտեան կեաց<sup>4</sup>: Խորհուրդ<sup>5</sup> արարին ամենայն նախարարքն, զի ոչ ոք խնդրէ յԱստուծոյ եւ ի մարդոյ խնդրուածս յաւուրս Լ(30), բայց<sup>6</sup> ի քէն, արքայ, եւ թէ ոք յանդգնի՝ անկցի ի գուբ առիւծուցն:

Արդ, հաստատեալ գոխսն եւ գրեալ գիր, զի մի՛ եղծագիցի հրաման Մարաց եւ Պարսից, եւ հրամայեաց գրել: Եւ Դանիէլ գիտաց, եթէ կարգեցաւ հրամանն, եմուտ ի տուն իւր, եւ պատուհան Գ (3) ի բաց կային ի դէմս Երուսաղէմի (28-10):

«Եւ աշակերտեալ Հոգւոյն, որ ի Դաւիթ երիցս անգամ աղաւթս առնէր առ Աստուած՝ յերեկոյս, ի վաղորդայն<sup>7</sup>, ի հասարակ աւուր՝ գուշակելով Գ (3) պատուհանաւքն հանդէպ Երուսաղէմի եւ Գ (3) աղաւթիւքն զկատարումն տնաւրէնութեան Տեառն յԵրուսաղէմ<sup>8</sup>, ուր սկսաւ խորհուրդ եւ հաւատ երրորդական աստուածութեան յերիս անձինս եւ ի մի իսկութիւն երկրպագեալ<sup>14\*</sup>:

<sup>1</sup> Ե նախահոգակ:

<sup>2</sup> Ե վիճիռ:

<sup>13\*</sup> Տե՛ս Վարդան 258:

<sup>3</sup> Ե Որպէս *փխ*. Բայց:

<sup>4</sup> Ե կաց:

<sup>5</sup> Ե գխորհուրդ:

<sup>6</sup> Ե բաց:

<sup>7</sup> Ե վաղորդայք:

<sup>8</sup> Ե Երուսաղէմի:

<sup>14\*</sup> Վարդան, 258բ:

*Իսկ չարախաւսքն մատեան առ արքայ եւ ասեն.*

ո՞չ ուխ մի կարգեցեր, զի ամենայն մարդ ոչ խնդրիցէ յԱստուծոյ իւրոյ<sup>1</sup> խնդրուածս զաւուրս Լ(30): Եւ ասէ արքայ. ճշմարիտ է բանդ (*Ձ 12*):

*Յոյժ տրտմեցաւ թագաւորն եւ կամէր ապրեցուցանել զԴանիէլ, այլ ոչ կարէր, զի ոչ սեպհական ունէր զթագաւորութիւն, զարհուրեցաւ ի նոցանէ: Յայնժամ հրաման ետ արկանել ի գուբ առիւծոցն<sup>2</sup>, յուսալով թագաւորին ի զաւրութիւն Աստուծոյն Դանիէլի ապրեցուցանել զնա: Այլ մատանեաւ իւրով կնքեաց զգուբն, զի մի՛ արտաքուստ վնաս գործեսցեն նմա, զի առաւել չար էին քան զգազանսն: Իսկ արարիչն Աստուած փակեաց զբերանս առիւծոցն եւ կարծրացոյց զբնութիւն մարմնոյն իբրեւ զմխեալ երկաթ, այլ գեր եւ պարարտ կերակրոյ պահէին զանձինս: Եւ թագաւորն անքուն անցոյց զգիշերն ամենայն: Եւ յարուցեալ առաւոտուն եկն առ գուբն,*

աղաղակեաց ի ձայն մեծ եւ ասէ. Դանիէլ ծառայ Աստուծոյ կենդանւոյն, Աստուածն քո, զոր դու յաճախ պաշտէիր, կարա՞ց ապրեցուցանել զքեզ ի բերանոյ առիւծոցոյ: Ասէ Դանիէլ. Արքայ յաիտեան կեաց, Աստուածն իմ առաքեաց զհրեշտակ իւր եւ փրկեաց զիս ի բերանոյ առիւծոցն, զի ուղիղ գտայ առաջի Աստուծոյ եւ առաջի քո (*Ձ 20-22*):

*Յայնժամ հրաման ետ թագաւորն արկանել զգազրախաւսքն<sup>3</sup> կանամբք որդովք եւ դստերովք ի գուբ առիւծոցն, եւ վաղվազակի պատառեցին զնոսա:*

Եւ թագաւորն գրեաց առ ամենայն ազգս եւ ազիւնս. Խաղաղութիւն ձեզ բազմասցի, ամենեքեան երկերուք յԱստուծոյն Դանիէլի, զի նա է Աստուած կենդանի եւ կայ յաիտեանս, եւ արքայութիւնն նորա ոչ եղծանի: Եւ աշողէր Դանիէլի ի թագաւորութիւնն Դարեհի եւ Կիրոսի պարսկի (*Ձ 25-28*), զի Աստուած զփառաւորիչս իւր փառաւորէ:

*Եւ Քրիստոսի փա՛ռք յաւիտեանս. ամէն:*

<sup>1</sup> Եւ չիք իւրոյ:

<sup>2</sup> Ա առիւծոցն (*այսպէս եւ այլուր*):

<sup>3</sup> Եւ զչարախաւսքն *փիս*. զգազրախաւսքն:

## Է

Ես<sup>1</sup> Դանիել տեսանեի տեսլեան գիշերոյ, եւ ահա Դ(4) հողմք երկնից բախեիմ զծովն մեծ: Եւ չորք գազանք ելանէիմ ի ծովէ անտի այլակերպք միմեանց. առաջիմն իբրեւ զմատակ առիծ թեւաւոր եւ թեւք նորա իբրեւ արծաթոյ, եւ հայէի միմնէ թափեցան թեւք նորա, եւ ջնջեցաւ յերկրէ, եւ եկաց ի վերայ ոտից մարդոյ եւ սիրտ մարդոյ տուաւ նմա: Եւ ահա երկրորդ գազանն նման արջոյ եւ եկաց ի մի կողմն, եւ կողք Գ(3) ի բերան նորա ի մէջ ժանեաց նորա: Եւ այսպէս ասէիմ ցնա. Արի, կեր զմարմինս բազմաց: Եւ երրորդ գազանն իբրեւ զիմն, եւ Դ(4) թեւք թռչնոյ ի վերայ նորա, եւ Դ(4) գլուխ գազանիմ, եւ իշխանութիւն տուաւ նմա: Եւ չորրորդ գազանն ահեղ եւ զարմանալի, հզար առաւել: Եւ ժանիք նորա երկաթիք եւ մագիլք նորա պղնձիք, ուտէր եւ մանրէր եւ զմնացորդսն առ ոտն կոտորէր: Եւ Ժ(10) եղջիր ի գլուխ նորա, եւ եղջիր մի փոքրիկ ելանէր ի մէջ նոցա, եւ Գ(3) եղջիր ի Ժ (10) եղջիրն ի բաց խլէիմ յերեսաց նորա: Եւ ահա աչք էիմ իբրեւ զաչս մարդոյ յեղջերն յայնմիկ, եւ բերան նորա խաւսէր զմեծամեծս<sup>2</sup>(Է 2-8):

*Մեկնութիւն այս է. «Դանիէլ ասպնջական երկնաւոր<sup>3</sup> շնորհացն եւ աւթեւան<sup>4</sup> Հոգւոյն Սրբոյ նման երկնաւորացն ի բաց կացեալ յերկրաւոր խորտակացն»<sup>15\*</sup>, վասն որոյ իմանալի կերակրով կերակրէ զնա Աստուած, այսինքն՝ ծածուկ աստուածային գիտութեանքն: Նոյնպէս եւ ի նորա, որ անարգէ զերկրաւորս՝ բանս զաչս մտաց նոցա, եւ լինի յայտնիչ քարոզութեան սուրբ Աւետարանին: Գիտելի է, «զի Հողմն զկողմնապէտ հրեշտական ասէ<sup>16\*</sup>», որ պահեն զաշխարհս ի սատանայի չարեացն, որպէս ասէ Մովսէս, «Կացոյց սահման հեթանոսաց ըստ թուոյ» (Բ աւր. ԼԲ 8): Զի Հողմնեղէն<sup>5</sup> եւ հրեղէնք եւ լուսեղէնք են, եւ երկնից, զի երկնաւորք են, եւ անտի առեալ հրաման յԱստուծոյ բախեն զծով աշխարհիս, որ ի շարժման<sup>6</sup> ի ծփումն<sup>7</sup> եւ յալեկոծութեան կան մարդկան, եւս առաւել չար թագաւորք: Եւ գազան ասէ, զի գա-*

<sup>1</sup> B իսկ *փխ*. Ես:

<sup>2</sup> A մեծամեծս:

<sup>3</sup> B երկիր:

<sup>4</sup> B աւթովն:

<sup>15\*</sup> Վարդան, 260ա:

<sup>16\*</sup> Վարդան, 260ա:

<sup>5</sup> B հողեղէն *փխ*. հողմնեղէն:

<sup>6</sup> B շարժմանէ:

<sup>7</sup> B ի ծովումն *փխ*. ի ծփումն:

զանաբարոյք են թագաւորք եւ ապականիչք երկրի: Դ (4) գազանք Դ(4) թագաւորութիւնք ի վերա երկրի. Բաբելացոցն, Պարսիցն, Ունայն, Հռովմայեցւոցն: Առաջինն իբրեւ զմատակ առիւծ»<sup>1</sup> բաբելացոց թագաւորն էր Նաբուգոդոնոսոր, «մատակ առիւծ, զի յուով չարիս ծնաւ, թեւաւոր՝ բարձրամիտ նման արծուոյ եւ գիշխանն: Բ(2) թեւքն, զի ունէր Բ (2) թագաւորութիւն՝ զասորոցն եւ զքաղղեացւոցն: Թափեցան թեւքն՝ անկաւ ի թագաւորութենէն եւ եղեւ անասուն: Եւ սիրտ մարդոյ տուաւ, զի իմացաւ զգաւրութիւն Աստուծոյ, թէ մարդ եմ մահկանացու, եւ արծուոյ նման զաշխարհս երազութեամբ տապալէր: Եւ տկարացաւ թագաւորութիւն նորա առաջի տկար թագաւորութեան Մարաց»<sup>17\*</sup>:

Երկրորդ գագանն անան արջոյ<sup>18\*</sup> Դարեհ մար, որ ընդ սպանմանն Բաղդասարայ էառ զթագաւորութիւն բաբելացոց ի տանէն Նաբուգոդոնոսորայ, եւ ի նմանէ պարսիկք առին, զոր արգ<sup>19\*</sup> «կոչէ անհեղեղ եւ փաղաղող ատամամբք, ունգամբք եւ ոտիւք, որպէս եւ պարսիկք զագրագործք եւ աւերիչք երկրի»<sup>20\*</sup>»: Եւ եկաց ի կողմ մի եւ Գ (3) կողք ի բերանն անորա, զի նախ մի կողմանն տիրեաց Պարսից, եւ ապա տիրեաց բաբելացոց եւ Մարաց: Դարձեալ Գ (3) կացոյց իշխանս, եւ ինքն փափկանայր Դանիէլիւ: Նոյնպէս<sup>2</sup> եւ Կիւրոս Գ(3)կացոյց զաւրագլուխս. կամ զի թագաւորն եւ որդիքն եւ որդիք որդոց իւրոց, որ ասէին. Արի կեր զմարմնս բազաց, քանզի կոտորմամբ եւ ազահութեամբ կորուսին զամենայն ազգս թագաւորքն պարսից, եւ մինչեւ ց Դարեհ միապետեալ, զոր սպան Աղէքսանդրոս: Եւ ի մերում ժամանակիս ի նոյն պարսից թագաւորութենէն պիղծ կաղն Թամուր ի ՊԼԶ (1387) թվականիս մեր եկն ի յաշխարհս մեր եւ կոտորեաց զՎան քաղաք եւ արկ զմարդիկ ի բերդէն վայր մինչ զի այլ մարդիկ ոչ մեռանէին: Եւ դարձեալ ի ՊնԳ(1394) թվականին եկն եւ գերկիր<sup>3</sup> պատառեաց ի Սեբաստիայ եւ զմարդիկ<sup>4</sup> ի հողն թաղեր եւ ի բազում տեղիս զգլուխն բերդ կանգնէր: Եւ մին սա էր ի գագանացն:

<sup>1</sup> Ա չիք Բաբելացոցն... առիւծ:

<sup>17\*</sup> Վարդան, 260բ:

<sup>18\*</sup> Վարդան՝ առաջնոյ:

<sup>19\*</sup> Վարդան՝ յառաջ:

<sup>20\*</sup> Վարդան էջ 260բ:

<sup>2</sup> Ե Որպէս իիս. նոյնպէս:

<sup>3</sup> Ե երկիր:

<sup>4</sup> Ե մարդիկ:

Երրորդ գազանն *ահեղ իբրեւ զինձ<sup>1</sup> եւ Դ(4) թեւք թռչնոյ էր ի վերայ նորա, եւ չորք զլուխ գազանին եւ իշխանութիւն տուաւ նմա: Այս Աղէքսանդր Մակեդոնացին է՝ թագաւորն Յունաց: «Եւ ինձն ասէ վասն սրիմացութեան<sup>2</sup> եւ արագութեան եւ պերճութեան ամենայն յունաց»<sup>21\*</sup> Դ(4) գլուխն նշանակէ զբաժանումն չորից դայեկ որդոցն, որ էին Սելեւկիոս, Դեմետրիոս, Պտղոմեոս, Փիլիպպոս, որ սպանին զԱղէքսանդրս եւ տիրեցին ազգաց բազմաց ին (300) ամ, որպէս գրեալ է ի գիրս Մակաբայեցւոցն: Չորս թեւն, զի արագապէս տիրեցին ամենայն երկրի իբրեւ զթռչունս թեւաւոր: Դարձեալ Դ (4) գլուխն, զի երից գլխաւոր թագաւորութեանց եւ աշխարհաց տիրեցին՝ Բաբելացոց, Մարաց եւ Պարսից եւ զարեւմտիցն ինքեանք ունէին: «Դարձեալ ըստ ոմանց զպարսից<sup>3</sup> թագաւորութիւն ասեն զԿիւրոս, զԱրտաշէս, զԴարեհ եւ զմիւս Դարեհն, զոր սպան Աղէքսանդրս եւ առ զտեղի նոցա»<sup>22\*</sup>: Բայց ճշմարիտն այն է, որ ասացաւ ի վերոյ:*

Չորրորդ գազանն ահեղ եւ զարմանալի եւ հզար առաւել: Ժամիք անորա երկաթիք եւ մագիլք անորա<sup>4</sup> պղնձիք, ուտէր եւ մանրէր եւ զմնացորդսն առ ոտն կոտորէր<sup>5</sup>: Եւ ինքն առաւել այլակերպ էր քան զամենայն գազանս, որ յառաջ քան զնա: Եւ եղջիրք ժ(10) ի գլուխ անորա եւ հասնէ ընդ եղջիրս անորա: Եւ ահա այլ եղջիր փոքրիկ ելանէր ի մէջ անոց: Եւ Գ(3) եղջիրք յառաջանցն ի բաց խլէին յերեսաց անորա: Եւ ահա աչք իբրեւ զաչս մարդոյ յեղջերն յայնմիկ, եւ բերան անորա խաւէր զմեծամեծս: Չորրորդ գազանն ահեղ եւ զարմանալի<sup>6</sup>. զՀռովմայեցւոց թագաւորութիւնն նշանակէ ի սկզբանէ մինչ ի կատարած աշխարհի, զի զամենայն թագաւորութիւն ժ (10) ցուցանէ, որ երկաթի ասէ զատաման<sup>7</sup> եւ այլուր՝ գազան երկաթի, եւ յառաջ զսրունսն երկաթի եւ աստ զատամունսն եւ զժանիսն, զի յերկուց կազմին զենք եւ սուսերք պատերազմի՝ յերկաթոյ եւ ի պղնձոյ, որ ուտեն եւ մանրեն եւ

<sup>1</sup> Եւ չիք Երրորդ...զինձ:

<sup>2</sup> Եւ իմացութեան:

<sup>21\*</sup> Վարդան 261:

<sup>3</sup> Եւ չիք եւ զարեւմտիցն... զպարսից:

<sup>22\*</sup> անդ:

<sup>4</sup> Եւ չիք երկաթիք... անորա:

<sup>5</sup> Եւ կոտորէր:

<sup>6</sup> Եւ ահեղ ահեղ եւ զարաւոր չիս. ահեղ եւ զարմանալի:

<sup>7</sup> Եւ զատամունս:



զմնացորդան առ ոտն կոտորեն, զի ոչ տան թոյլ այլ ումեք յառնելն: Եւ ժ(20) եղջիւրքն ի նոյն թագաւորութեանցն յառնեն, որպէս եւ ի պատկերին<sup>1</sup> ետես Նաբուգոդոնոսորս ժ(10) մատուցն յերկաթոյ եւ ի խեցոյ երբեմն՝ զաւրաւոր, երբեմն՝ տկար եւ անմիաբան: Յորոց աւուրս Նեոն երեւի՝ փոքր եղջիրն: Եւ ի ժԱ (11) թագաւորութեանցն զերիսն ի բաց խլէ՝ զԵգիպտացին, զԱսիացին, զՊարսիցն, զոր այլք՝ զԵթովպացիսն, զՀնդկիսն: ԶԵգիպտացին յայս կոյս եւ յայն կոյս ծովուն սպանանէ ասեն: Եւ մեծամեծս խաւսի Հայհոյութիւն զԱստուծոյ եւ զինքն տայ Հաշտել: Եւ եղջիր ասէ զանուն, որ է խեթկիչ, խոցոտիչ եւ պատառիչ: Այլ եւ աչս ասէ ունել, զի զառաջինն պատուէ զԱստուած իբրեւ զմարդ քաղցրախաւս առնելով ուղիղ դատաստան կեղծաւորութեամբ: Եւ յետոյ ընդդէմ Աստուծոյ եւ եկեղեցւոյ եւ սրբոց մարտիցէ, որոյ<sup>2</sup> յարացոյց եւ աւրինակ էր Անտիոքոս, որ կուռեցաւ ընդ Մակաբայեցիսն եւ պղծեաց զտաճարն սուրբ:

Տեսանէի մինչեւ արօռք անկանէիմ եւ հիմ ատուրցն անտէր: Հանդերձ անորա սպիտակ իբրեւ զձիւն, եւ հեր գլխոյ անորա իբրեւ զար սուրբ, արօռ անորա որպէս զբոց հրոյ: Անիք կատաց<sup>3</sup> անորա որպէս զհուր բորբոքեալ: Եւ գետ հրոյ յորդեալ ելանէր ատաշի անորա: Հագարք հագարաց պաշտելիմ զնայ եւ բիրք բիրոց կայիմ ատաշի անորա<sup>4</sup>: Ատեան անտաւ եւ դպրութիւնք բացան, արօռք անկան, որ եդեալ կազմեցան արարչիմ, որպէս իրն է գիտելի (Է 9-10).

Նոյնպէս եւ ԲԺ (12-ան առաքելոցն, որ ինքն խոստացաւ առաքել. «Նստղիք յԲԺ (12)ն աթոռ դատել զագգն Իսրայէլի» (Ղուկ. ԻԲ 30) որք աղքատացան եւ Հալաճեցան վասն արդարութեան: Հիմ ատուրցն անտաւ, որ է անսկիզբն Հայր, որ Հնացուցանէ զաւուրս եւ զժամանակս: Դարձեալ հիմ ատուրցն Արարիչ է, յայսինքն՝ Զ (16) աւուր արարչութեանցն: Դարձեալ Գ (3) աւուրն, որ լոյսն լուսաւորէր զամենայն: Եւ ապա յետոյ արեգակն կազմեցաւ, լուսին եւ աստեղք: Զի ասէ սուրբ վարդապետն Եղիշէ. Ոչ նորոգի, զի ոչ Հնանայ, ոչ մանկանայ, զի ոչ ծերանայ, ոչ փոփոխի, զի անյեղեղուկ է բնութիւն Աստուծոյ, զի ասէ. Ես նոյն եմ մինչեւ յաւի-

<sup>1</sup> B պատկեր:

<sup>2</sup> B որ:

<sup>3</sup> B կատաց:

<sup>4</sup> A չիք Յագարք... անորա:

տեան (հմմտ. Եբր. ԺԳ 8), եւ թէ՛ «Դու նոյն ինքն ես, եւ [աթոռ քո ազգէ մինչեւ ազգ»] (Ողբ Ե 19): Նստցի հին աւուրցն, զի տեսանի յաջակողմեանն դասուց, եւ աւրհնեսցէ զնոսա՝ յասելն Որդոյ. «Եկայք աւրհնեալք Հաւր իմոյ ժառանգել զպատրաստեալ ձեզ արքայութիւնն» (Մատթ. ԻԵ 34): Իսկ հրով կազմել աթոռոյն եւ անիւք կառացն հրեղինաց, եւ գետք հրեղէն, քանզի ի հուր դատելոց է զամենայն երկիր, որպէս երբեմն ջրով:

Հազարք հազարաց պաշտէին զնա (Է 10). «զանթուական լուեղինաց դասս. հազարաւք նշանակէ»<sup>22\*</sup>, որ իջանեն յերկնից եւ սպաաւորեն Աստուծոյ ամենասուրբ Երրորդութեան<sup>1</sup>, զի «չեն կարաւտ հանգստեան անմարմին գոլով: Իսկ մարմնով յարուցեալքն հանգչին որպէս հանգուցիչն զիտէ մարմնով տանջելոյ սկիզբն ի նեռնէն լինի»<sup>23\*</sup> զի ասէ՝ Տուեալ լինի մարմին նորա յայրումն<sup>2</sup> հրոյ գեհնոյն, զոր Տէր Յիսուս սատակեսցէ այրմամբ յաւիտենական հրոյն (Հմմտ. Բ Թեսաղ. Բ 8): Եւ ի նմանէ խաբելոցն սակաւ ինչ ժամանակ տուեալ լինի ապաշաւանաց մինչեւ զայ Դատաւոն, ապա թէ ոչ անպատասխանիք կորիցեն:

Ատեանն անտաւ, զի դպրութիւնք բացան. «Եւ արդարքն հազիւ<sup>3</sup> կայեան»<sup>24\*</sup> 4, զի ամենայն ոք զգիր պարտուց իւրոց ընթեռնու եւ ոչ կարէ ասել. Եկայք ընթերցիք զգիր պարտուց իմոյ, որով յայտնի լինի արդարութիւն Դատաւորին:

Տեսանէի ի տեպեան գիշերոյ, եւ ահա ընդ ամպս երկնից իբրեւ գորդի մարդոյ գայր եւ հասանէր միգչեի ի հին աւուրցն եւ մատուցաւ առաջի նորա: Եւ իշխանութիւն տուաւ նմա եւ պատիւ եւ արքայութիւն, եւ ամենայն ազգ եւ ազգիւնք եւ լեզուք նմա ծառայեսցեն: Իշխանութիւն նորա իշխանութիւն<sup>5</sup> յաւիտենական, որ ոչ անցանի: Եւ թագաւորութիւն նորա ոչ եղծանիցի: Եւ սուկացաւ մարմին իմ յանձին իմում (Է 13-15):

<sup>22\*</sup> Վարդան 262:

<sup>1</sup> Ե Երրորդութեանդ:

<sup>23\*</sup> անդ:

<sup>2</sup> Ա այրումն:

<sup>3</sup> Ե հզաւրիւ *փխ*. հազիւ:

<sup>24\*</sup> անդ, 262բ:

<sup>4</sup> Ա կայան:

<sup>5</sup> Ե *չիք* նորա իշխանութիւն:

Եւ ահա ընդ ամպս երկնից իբրեւ զորդի մարդոյ գալղ մինցեւ ի հին աւտորցն, եւ մատուցաւ առաջի նորա. *յայտ է<sup>1</sup> սուրբ եկեղեցի, զոր մատուցանէ Միածինն ասելով. Ահա ես եւ մանկունք իմ, զոր ետուրցիք, որում տուաւ իշխանութիւն եւ թագաւորութիւն մերում բնութեանս, զոր ունէր Աստուածութեամբն, զի տացէ իւրոյ արժանաւորացն անդամոց: Ոչ թէ այժմ չէ տուեալ. այժմ տուեալ է<sup>2</sup> զաստուածային պատիւն, այլ յայնժամ յայտնի տայ, որք գիտենն եւ որք ոչն գիտեն: Յայնժամ անեղծ եւ անմահ ցուցցի<sup>3</sup> թագաւորութիւն նորա եւ որոց տացէ զանվախճան թագաւորութիւն: Վասն որոյ եւ մարգարէն սոսկացաւ ի տեսանելն զայս ամենայն, եւ մատեալ առ մի ոք ի հրեշտակացն՝ ուսանել ի նմանէ զամենայն խորհուրդ գազանացն. եւ զհին աւուրցն գալ եւ զՈրդոյն ընդ ամպս երկնից<sup>4</sup> գալն, եւ զՆեոին ներելն Աստուծոյ, որ ասէ. Ժամանակ, որ է տարի մի եւ ժամանակս, որ է Բ(2) տարի (Է 25) եւ վախճան լինի տեսլեանս եւ վախճանի աշխարհիս, եւ հատուցման արդարոց եւ մեղաւորաց: Զոր Տէրն ասաց. «Ոչ է ձեզ գիտել զժամս եւ զժամանակս, զոր [Հայր եղ յիւրում իշխանութեան]» (Գործք Ա. 7): Այլ յամենայն ժամ պատրաստ լինել:*

*Եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փա՛ռք յաւիտեանս. ամէն:*

<sup>1</sup> Ե յայտնէ *փխ.* յայտ է:

<sup>2</sup> Ե *չիք* այժմ տուեալ է:

<sup>3</sup> Ե ցուցանի:

<sup>4</sup> Ե *չիք* երկնից:

## Ը

